891.99
U-81

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

3 [illegible] [illegible]

[illegible]

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Է ՀԱՏՈՐ

ԲԺԺԱԾՆԵՐ

ՎԷՊ

ՏԱՃԿԱՀԱՅԵՐԻ ՆՈՐԱԳՈՅՆ ԿԵԱՆՔԻՑ

ԹԵՄԱԿԱՆ ԱՐԱԳԱՏԻՊ ՀԱՅՈՑ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ

[illegible]

[illegible]

1906

891-99
Կ-81
D 1 JAN 2009
19 NOV 2010

ՀԵՂԻՆԱԿԻ

Աշխատութիւններն առանձին տպագրուած կամ լոյս տեսած այլ եւ այլ պարբերական հրատարակութիւնների մէջ

ՎԻՊԱԿԱՆ

1. «Ալմաստ» Մոսկւայում 1892 թ. Բարխուդարեանցի տպ.
2. «Այծե-խանում» Տարազ Հանդիսի 1895 թ. № 31—35.
3. «Անհուն» Ձ. Հայր. Լրագրի 1902 թ. № 141—162.
4. «Անտիրական» Գործ լրագրի 1903 թ. № 1.
5. «Բերայի-Առաքել» Նոր-Նախիջ. 1899 Ասլանեան տպ.
6. «Երախտապահանջ» Աղբիւր հանդիսի 1897 թ. № 11.
7. «Դիմակներ» Չորս երգիծ. պատկերներ Թաւրիզ 1905 թ.
8. «Երախտիք» « « 1899 թ. № 1.
9. «Թուլումբաշիներ» Տարազ » 1893 թ. № 11-12
10. «Թոփչի» « 1904 թ. № 19-21
11. «Թոփխուզ» » » » 48-50.
12, «Ժառանգներ» Նոր-Նախիջ. 1898 թ. Ասլանեան տպ.
13. «Խառա-Խրխա» Տարազ հանդիսի 1893 թ. № 37-39
14. «Խեւ-Կարապետ» Մուրճ հանդիսի 1889 թ. № 5-8.
15. «Ծպտեալ-Սուլթան» Աղբիւր » 1898 թ, № 5-6
16. «Կաղ-Նազօ» Տարազ » 1893 թ. № 17-19
17. «Կարելի՞ է սիրել» Թաւրիզում 1905 թ.
18. «Հարազատներ» » » 1897 թ. № 11-13
19. «Ղարի» Մշակ լրագրի 1892 թ. № 70-71
20. «Ճարահատ» Թաւրիզում 1905 թ.
21. «Ճխնոց» Նոր-Նախիջ. 1898 թ. Ասլանեան տպար.
22. «Ոսկե-Որդին» Գաղափար հանդիսի 1894 թ. № 2.
23. «Պարտիք» Ձ. Հայր. լրագրի 1903 թ. № 162-176
24. «Ջաւահիր» Թաւրիզու 1904 թ. Թեմականի տպ.
25. «Սարբազ» Տարազ հանդիսի 1903 թ. № 2.
26. «Սեւ-քաղաք» » » 1898 թ. № 2-25.
27. «Սոֆրա» Մուրճ » 1893 թ. № 7-8.
28. «Վինակ» Թաւրիզում 1905 թ.
29. «Վիշապի-առագաստը» Աղբիւր հանդ. 1903 թ. № 10
30. «Վիշապ» Պատկեր Լումա 1905 թ. № 9-10
31. «Փաշա» Տարազ հանդիսի 1898 թ. № 38.
32. «Վիւքեալայի Գաղտնիքը» Տարազ հ. 1899 թ. № 2-25.
33. «Քօռ-Եղիկ» Թիֆլիս 1898 թ. Վարդանեանցի տպար.
34. «Քիւլհան-բէյի» Տարազ հանդիսի 1893 թ. № 14-16.
35. «Օրինական ժառանգ» Թաւրիզ 1903 թ. Թեմականի տպ.

ՉԱՓԱԿԱՆ.—ՈՂԲԵՐԳԱԿԱՆ

36. «Նուշան» Ողբերգութիւն 1890 թ. Պետերբուրգ
37. «Սառաֆ» » 1893 թ, Թիֆլիս
38. «Կուռք» պօէմա Աղբիւր 1897 թ. № 1-3

ՐԸ
ծ...
Ու...
քա...
ստ...
արե...
ռում
Խումբ.
բեց գու...
Նստատեղ
վրա, ա...

Ա.

ՊԱՐՏԻՔ

21 FEB 2013

ԱՐՏԱՏՊՒԱԾ Է

Զ. ՀԱՅՐԵՆԵԱՑԻ № 170

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека

3139-84

ՊԱՐՏԻՔ

ՊԱՏԿԵՐ

(Թիւրքահայերի կեանքից)

Ա

Կէս օրը անցել էր։ Արևի ջերմ ճառագայթները շողշողում էին ամէն կողմ, տօթը շնչառութիւնը ծանրացնում, թօքերին բաւարարութիւն չէր տալիս։ Ուռենիները չէին ճօճում, կենդանիները ներս էին քաշել իրենց բները, կեանքը հոգեվարքի պատկեր էր ստացել։ Կարսի ձորաբերանի ապառաժները կիզուած արևի ուղղածիգ ճառագայթներից, ջերմութիւնը սփռում էին ամէն կողմ և էլ սաստկացնում տօթը։ Խումբ խումբ կանայք յարկի տակից և ծածկուածքներից դուրս էին թափել, այս ու այն շուաքում պպզել, նստոտել սալ քարերի և ապառաժի սանդուխքների վրա, առօրեա գործերն էին կատարում իրենց չար ու

բարին միմեանց հաղորդելով։ Հովանաւոր անկիւններում յատակի—գետնի վրա ծերերն ու պառաւները քարի կամ կոճղի յենած մրափում էին։ Երեխաները ոտաբոբիկ, գլխաբաց, մի մի կարճ շապիկներով կոլոլուած, հողի մոխրի մէջ խաղեր էին անում, անվերջ քրքջալով և թոթովումներով։ Թուրքերը հեռու թաղերում էին ապրում, իսկ մէկ մէկ լծակով կամ իշով Զուխուր-Մահլէից ջուր կրողները ամայի փողոցները իրենց «չօ՜ չօ՜»յով չէին կարող կենդանացնել։ Հայ տղամարդիկ հազար քայլ հեռուն—շուկայում տքնում էին իրենց վզին դրուած հարկը և ընտանիքի ապրուստը ձեռք բերելու հոգսով։

—Թագո՛ւ, ասաց վերևը յիշուած կանանց խըմբակներից մէկում մի կին իւր խօսակցին, Տէր Մանուէլը այսօր շատ քնեց։ Երեխաներին թողել է արևի տակ անտէր, անտիրական, վարժատան դուռը փակել, ինքը ներս է քաշուել, ընկել է ու քնել։ Երկու ժամից աւելի է գոռում են, կռւշտում են, վրա գըլուխ պատռում և վազվզելուց թուլանում, որ կարդան, բան սովորին, մարդ դառնան, իսկ նա վեր է վարում, շատ պէտքն է, թէ իրար գլուխ են կոտրում։ Դաս տալ խօ չը կա, առաւօտից մինչև իրիկուն երեխաների գլուխները հեքիաթներով, պատմութիւններով է լցնում։ Տնաշէնը առասպելական քաջերով, հսկաներով դիւթել կապկպել է մեր զաւակներին, քաշում, հանում, արհեստի ենք ղրկում, թողնում, փախչում, գալիս բոլորւում են այդ խելագարի շուրջը։ Տես, տես, փոշու հողի մէջ կոլոլւել են, քրտինքի մէջ կորել, գորգռալուց ձայներն է խազւել, լող չը կա։

—Մարթա ջա՛ն, բան չունիս, երեխա են, գըլորուին էլ, ընկնին էլ, լան էլ. խնդան էլ։ Նրանց բարեբաղդ օրերն է։ Քանի տան ու տեղի հոգսը վզերը չէ փաթաթուած, թող քէյֆ քաշեն։ Վաղը մէկ էլ օրը, մի՛ արտօրալ, կը քաշեն կը տանեն բազար, վա՛յ կը գա իրենց գլխին, խանութի դռնից չեն կարող դուրս նայել, բերանները չեն կարող բանալ խօսել կամ խնդալ...։

—Վա՛յ իմ գլխի՛ս, վա՛յ, վա՛յ, Արտա՛շ, ձեռքդ կոտրուի, Արտա՛շ, Արտա՛շ, ասաց ու տեղից թռաւ Մարթան գուլպան ճաղերով գօտին խրելով և վազեց ուսումնարանի բակի կողմը, ուր խաղում էին Տէր Մանուէլի աշակերտները։ Թագուհին էլ նորան հետևեց և երկուսով գոռում էին անընդհատ.

—Արտա՛շ, թո՛ղ, Արտա՛շ, ձեռքդ քաշիր, Արտա՛շ, անխի՛ղճ, անհոգի....

Բայց Արտաշի աչքերը դարձած, արջի նման յարձակուել էր Վարդի վրա և անողորմաբար ծեծում էր. թէև վերջինս էլ ետ չէր ուզում մնալ իր հակառակորդից։ Վարդը ոչ միայն բռունցքով, ոտքով վերադարձնում էր Արտաշին հարուածների փոխարէնը, այլև բորբոքուած, թափում էր անասելի նախատինքներ հակառակորդի գլխին, այնպէս որ վերջինս կատաղած, աչքերը արիւնով լցուած, ոչինչ չէր լսում, ոչինչ չէր տեսնում և կատաղութիւնից ուզում էր սպանել, լափել Վարդին։

Մայրերը չկարողացան անջատել ծեծկւողներին, ընկերակիցները հնարք չը գտան նրանց զսպելու, իսկ աղմուկն այնքան սաստկացաւ, որ քահանան քնից ըռթափուած դուրս եկաւ, աշակերտներին ներս կանչեց։

Տեսարանը բորբոքեց վերապատուելին և չկարողանալով զսպել իւր զայրոյթը, ճիպոտով յարձակւեց կուողների վրա, բռնեց և քաշքշելով ներս տարաւ։

—Արտա՛շ, ասաց քահանան հևալով և մօրուքը ամբտմբացնելով, ինչի՞ վիրաւորեցիր Վարդի գլուխը։

Արտաշը լռեց։ Նա չը պատասխանեց վարժապետին, թէև հարցը մի քանի անգամ կրկնեց վերապատուելին։

—Վա՛րդ, ինչի՞ կռուեցաք, ինչի՞ գլուխդ վիրաւորեց Արտաշը, ասաց վարժապետը դառնալով միւս կողմը։ Բայց սա էլ լռեց։ Ոչ մէկը չէր կամենում բացատրութիւն տալ։ Երբ վերապատուելին բորբոքւած երկար ձողն առաւ ձեռքը և անխնա սկսեց հարւածել թէ մէկին թէ միւսին, ընկերակիցները սկսան փախչրտել դասարանի այս ու այն կողմը։ Վերջապէս պետագոգի հոգուն հասած, բռնեց Արտաշին և սկսեց նորից բարբարոսաբար ձաղկել և հարցնել.

—Ինչի՞ էիք կռւում, ինչի՞ չես խոստովանում, կոպիտ արարած։

—Ես Յուդա չեմ, ես մատնիչ չեմ կարող դառնալ, ասաց բորբոքւած՝ արձանի նման կանգնելով Արտաշը և թոյլ տւեց, որ վարժապետը շարունակէ իւր անողորմ հարւածները մինչև սիրտը հովացնելը։

—Չես ասել, չես բացատրել, անդադար կրկնում էր վերապատուելին ու ձաղկում Արտաշին։ Վերջինս բորբոքւած, առիթից օգտւելով բռնեց ձաղկիչը, խլեց վարժապետի ձեռքից ու դուրս փախաւ։ Տէրտէրի հետաքրքրութիւն էլ աւելի սաստկացաւ, նա մոլեգնած

դարձաւ Վարդի կողմը և զարհուրելի հայեացքով կըրկնեց.

—Ասա՛, ճշմարիտը խոստովանիր, ինչի՞ էիք ծեծկւում։

—Արտաշն ինձ վրա յարձակեցաւ....

—Արտաշը կեղտոտ տղա չէ, խելացնոր էլ չէ, նա առանց պատճառի չէր կարող այդպէս բորբոքւել։ Ասա ճշմարիտը, թէ ոչ կաշիդ կմաշկեմ, ասաց վերապատուելին, միանգամայն քթի տակը ժպտալով, որ իր ոգին ըմբռնելով, աշակերտները այդպիսի անգութ ծեծի տակ իսկ չէին գիջանում իրար մատնել։

Վարդը տասնևչորս տարւան պատանի էր. այնքան էլ թուլամիտ չէր, որ սոսկար վարժապետի սպառնալիքից։ Երբէք նա չէր գիջանել ընկերին մատնել, ստորանալով, թուլանալով տէրտէրի ձաղկիչի առաջ, որը բարեբաղդաբար Արտաշը փախցրել էր։ Վերապատուելին աննկատելի կերպով աչքերը շուրջն էր ման ածում, որ մի յարմար ձաղկիչ ձեռք գձի և գանի տակ Վարդի շրթունքներից դուրս կորզի կռւապատճառը, բայց Վարդը այդ շարժումը չընկատելու չափ ըթամիտ չէր, նա էլ իւր մտքում որոճում էր այն միտքը, թէ ինչպէս կարողանա դուրս սողալ դասարանից և հետևել Արտաշին։

—Անիծւածնե՛ր, թշւառականներ, ես ձեզ հազար անգամ ասել եմ, որ իրար սիրէք, իրար պաշտէք իրար համար կեանքերդ անգամ չը խնայէք, իսկ դուք գազանի նման իրար միս էք կրծում....

—Տէր հայր, քեզ յայտնի է, որ ես Արտաշին գլխիս չափ սիրում եմ, նա էլ ինձ պակաս չի սիրում։ Ես հաւատացած եմ, որ նա արդէն մոռացել է ամէն

բան և մեր այլևս ոչինչ չկա։

—Ախար, ինչո՞ւ պատճառը չես ասում... ամաչում ես, գնանք իմ սենեակը և խոստովանիր....։ Ի՞նչ ես արժանի նման կանգնել.... ասաց և սկսեց աշակերտներից մէկի քանոնով հարուածել Վարդին անխնայաբար։

Այս միջոցին ներս մտաւ մի ճանապարհորդ, որ եկել էր հիւսիսի կողմերից և ցանկանում էր ծանօթանալ տեղին ազգային վարժարանի վիճակի հետ։ Վերջինս ասաց վերապատուելուն.

--Խնդրում եմ, խնայեցէք, տէր հայր, բաշխեցէք, ներեցէք դրան....

Պատուելին իսկոյն թողեց իւր աշակերտին և հիւրին առանձնասենեակը հրաւիրեց։ Ճանապարհորդը ոչ շատ ընդարձակ դասարանի կարգն ու սարքը քննելուց յետո ասաց դուրս գալով.

—Վերապատուելի, ախար այժմ ամէն տեղ միջնադարեան ծեծը, պատիժները վերջացնում են, աշխատում են աշակերտների հետ քաղցրութեամբ վարւել յորդորելով զարգացնել և պատւազգածութեամբ առաջ մղել։ Ինչո՞ւ չէք փշրում դուք էլ ձեր միջնադարեան ճիպոտները։

—Եւրոպայում, Ամերիկայում, քաղաքակրթւած երկիրներում ես էլ ուրախութեամբ գուցէ աջակցէի մանուկներին գանակոծելը վերջացնելուն. բայց ողորմելի մարդիկ չեն նկատում, որ մենք տոկում ենք Իսլամի խալիֆայի լծի տակ։ Մահմեդականութեան ինկվիզիցիական կարգերի—շերիաթի տանջանքներին ենթարկւած ժողովրդի որդիքը, եթէ ֆիզիքական տան-

ջանքից սոսկան, մանուկ հասակից ճիպոտին և ձաղկիչին դիմադրելու չը վարժւին, մարմնի չարչարանքին չը տոկան, թրքական բանտերի, դահիճների և դատաւորների բարբարոսական մեքենայութիւններին մատնւելիս, ոչ միայն իրար կը դաւաճանեն, այլ մինչև անգամ իրենց կրօնն ու սրբութիւնները կուրանան։ Ահա թէ ինչ պաճառով արքայութեան դռնից իմ ձեռքս են տւել այս ձաղկիչը և երբէք չեմ զղջացել ու չը պիտի զղջամ որ ես էլ ամենադաժան կերպով գործ եմ դնում այդ։

—Բայց այդ ընթացքով դուք ուսման ծարաւի աշակերտներին կը փախցնէք այս Նւիրական տաճարի դռնից։

—Ընդհակառակը, ասաց ժպտալով Տէր Մանուէլը, իմ ծեծս ուտող և պատմածներս լսող և դասերս ըմբռնող աշակերտները երբէք չեն հեռանում ինձանից։ Իմ վռնդածներս անգամ աներես թախանձանքներով վերադառնում են։ Այդ Վարդը՝ ծեծւողը՝ տեսա՞ր, դա մի յայտնի գերդաստանի տղա է, որի ծնողները քանի՜ քանի՜ անգամ ծեծելով տարել են դրան իրենց կուսակից Գրիգոր պատւելու մօտ, բայց երեխան թողել, փախել, կրկին ինձ մօտ է եկել։ Եթէ դրա նման մի քանի տասնեակ աշակերտներ չը գային, չը կպչէին ինձ, ազգը այստեղի նախկին վարժապետին չէր հեռացնել վարժարանից և ինձ չէր յանձնել իւր մանուկների կրթութիւնը։ Սպարտան չէր տիրել ամբողջ Յունաստանին, եթէ նրա մանուկները մարզւած չը լինէին խիստ մարզիչների և դաժան ձաղկիչների ձեռքով։ Ձեր տարազը ինձ համոզում է, որ դուք ինձ հասկա-

նում էք։

—Մասամբ։ Բայց ինչ է ձեզ հետ կապում այս երեխաներին, որ այդպէս քու կողմդ են ձգւում։

—Իսկոյն, իսկոյն, ասաց պատուելին և հիւրին առաջնորդեց դասարան։

Այստեղ նա աշակերտներից մէկին պատմել տուեց, թէ ինչպէս մի խումբ Յոյներ Թէրմոպիլէի կիրճում դիմադրեցին Պարսկական միլիոնաւոր բանակին։ Մի ուրիշը նկարագրեց Գրաքեան եղբայրների ժողովրդի շահերի համար մեռնելը։ Մի երրորդը նկարագրեց Վարդանանց նահատակութիւնը։ Երբ հիւրը ոգևորուեց, վերապատուելին նշան տուեց և աշակերտները երգեցին «Ազատն Աստուած», «Թէ իմս ալևոր» և «Ի բիւր ձայնից» մեծ ոգևորութեամբ։ Ճանապարհորդը զգացած շնորհակալիքը յայտնեց և բարեմաղթութիւններ անելով հեռացաւ։ Իսկ պատուելին աշակերտներին ցրւեց և ինքն էլ գաւազանը ձեռին դուրս եկաւ վարժարանից։

Արտաշի հայրը տեղական սովորութեան համաձայն մութը չընկած, խանութը փակել տուն էր դարձել։ Վերապատուելին մտաւ նրանց տունը և բարեւելուց յետո նստաւ ծանր ու մեծ, առանց շրթունքները շարժելու։ Թագուհին ամուսնի նշանի համաձայն վերկացաւ, արագի շիշն ու մի քիչ աղանդեր մատուցարանով ներկայացրեց նրանց, ու գնաց խոհանոց ընթրիքի պատրաստութիւն տեսնելու։ Անտոնը բաժակները լցրեց և առաջարկեց տէր հօրը, որ ընդունի և օրհնէ, բայց վարժապետը, խաղաղութիւնը կորցրած, չը կարողացաւ համբերել ու ձայն տուեց.

—Արտա՛շ, Արտաշ։

Իսկ Արտաշը տանը չէր, որ պատասխանէր։

Վարժապետը և ապա Թագուհին մասամբ պատմեցին Անտոնին, Արտաշի հօրը, օրւա անցքը և նա սրտմտած դուրս եկաւ փողոց՝ որդուն գտնելու։ Շատ չանցած վերադարձան հայր ու որդի և որովհետև արդէն սեղանը պատրաստ էր, նստան ընթրելու։ Սեղանից յետո վերապատուելին երկար-բարակ խրատական խօսեցաւ և բացատրեց, թէ Արտաշը պարտաւոր էր խոստովանել նրան ճշմարտութիւնը։ Իսկ աշակերտը չը զիջաւ մի բառ անգամ աւելացնելու իւր նախկին պատասխանին։ Վարժապետի և ծնողների թախանձանքները և սպառնալիքները չը կարողացան Արտաշի սըրտից գաղտնիքը դուրս քաշել։

—Ափսոս իմ այնքան աշխատութեանը, ասաց հառաչելով տէր հայրը, ցանկալով վերջին փորձը կատարել և Արտաշի թոյլ զգացումները վիրաւորելով ստիպել նրան խոստովանելու, հազար ափսոս, որ զուր կորել է։ Ես ամբողջ հինգ տարի է, որ ձեզ քարոզում եմ Աստծու սէրը, դուք չոր ապառաժի նման անտարբեր մնացիք։ Եթէ եղբօրդ, դրացիդ, ընկերակցիդ չես սիրում, էլ Աստծուդ ինչպէ՞ս կարողես սիրել...

—Ես Վարդին անձիս չափ սիրում եմ, ես պարտքս կատարեցի հաշտուեցի նրա հետ և համբուրելով մոռացանք ամէն բան, ասաց Արտաշը և լռեց։ Տէր Մանուէլը ժպտալի և ուրախ հեռացաւ, աշխատելով հրճւանքը ծածկել և ամբողջ գիշերը խաղաղութեամբ քնեց։

Բ

Այս դէպքից յետո Արտաշը այլեւս վարժարան չը գնաց։ Արդէն տասնուհինգ տարին լրացած էր, ուստի ծնողները որոշեցին արհեստի տալ, որ ապրուստի ճանապարհը սովորի։ Անտօնը չարչի էր, թէեւ բազարում մի փոքր կրպակ ունէր, ճոթ էր ծախում, բայց տարուայ մեծ մասը գիւղերումն էր անցկացնում։ Այս իսկ պատճառով Թագուհին ձգտում էր, որ որդին արհեստ սովորի եւ պարտաւորուած չը լինի հօրը նման գիւղերը թափառելու։ Արտաշը մօրը մէկ հատիկն էր, այնպէս որ ծնողները նրան իրանց հոգու չափ սիրում էին եւ երբէք չէին կարող նրան աչքի տակից հեռացնել։

Անտօնը խօսելով իրեն կնքահայր Պետրոսի հետ, Արտաշին նրա մօտ աշկերտ տուեց։ Որքան ուշի ուշով հետամտում էր Արտաշը Տէր Մանուէլի դասերին, այնքան աւելի աչալրջութեամբ հետամտում էր արհեստին։ Այնպէս որ երեք ամիս չանցած՝ Ուստա Պետրոսը կանչեց սանահօրը Անտօնին ու ասաց.

—Մենք եղբայր ենք, աւելին, որ մեռոնով էլ կապուած ենք։ Ես այսօրուանից քեզ կանչեցի, որ ասեմ, թէ սանիկս արդէն կարգին վարժուեց։ Թէ մի տարուց, կամ երկու տարուց յետո իմ մօտից հանելու ես, այսօրուանից տար նրան, որ վերջը լաւ ու գէշ չը դառնանք։ Իսկ եթէ ոչ, երեք տարի ամբողջապէս թողնելու ես ինձ մօտ, որ արհեստը կատարելապէս սովորի եւ ապա իրեն համար առանձին արհեստանոց բաց անէ.

այն ժամանակ ես նրան կը պահեմ եւ տարեկան երկու հարիւր ղուրուշ կը տամ վարձ։

—Թո՛ղ երեք տարի ամբողջապէս մնա քեզ մօտ, քեզ մուրհակ էլ կը տամ, եթէ ուզում ես։ Դու ու քու խիղճդ, սորվեցրու ինչ հարկաւոր է։ Այժմ նա քու էլ զաւակդ է, արա՛, ինչպէս կամենում ես, ասաց Անտօնը յուզուած։ Իսկ վարձքը՝ այդ քու կամքն է, ուզում ես տուր, ուզում ես մի՛ տալ։

Պայմանը վերջացաւ։ Արտաշը այնպէս կպաւ արհեստին, որ գիշեր ցերեկ խելքը միտքը գործի հետ էր։ Նա բոպէն պարապ չէր անցկացնում. անդադար կարում էր, սեպում էր, կաշին սալի վրա թոխճում եւ երբէք չէր թոյլ տալիս, որ նկատեն թէ այս արա, կամ պարապ մի՛ մնալ։ Ուստա Պետրոսը անչափ ուրախ էր մի այսպիսի աշակերտ գտնելու համար, իսկ բանուորները նախանձում էին, որ իրենց վարպետը ոչ միայն նրան առաջ էր քաշում, այլ լիովին խանութը, դրամարկղը եւ ապրանքն էլ անսահման վստահութեամբ նրան էր յանձնել։

Արտաշը իւր վարպետի ո՛չ միայն գոյքը իւր սեփականութեան նման էր պաշտպանում, այլ մինչեւ անգամ թափթփուած անպէտ կաշու մանրուքն ու գերիլն էլ մինչեւ հատ հատ չը քննէր, չէր թոյլ տալ թափելու։ Արդէն արհեստանոցի բոլոր ծախսերը կատարում էր Արտաշը եւ այնքան աչքաբաց էր, որ տան համար կարեւոր նիւթերն էլ Պետրոսը նրան էր յանձնում գնել։ Այնքան անձնուէր դարձաւ Արտաշը Պետրոսին, որ կարծես նրա հարազատ զաւակը լինէր եւ վարպետը հայրական աչքով էր նայում իւր աշկերտ-սանին։

Մի օր երեք թուրք եկան խանութ՝ կօշիկ գնելու։ Պատրաստի որքան կօշիկ որ ունէր, առաջ բերեց ուստա Պետրոսը։ Կօշիկներից որը մեծ էր, որը փոքր, որը տձև, որն անպէտ կաշուց պատրաստած, որն էլ անճաշակ, այնպէս որ յաճախորդները ոչ մէկին չը հաւանեցան։ Այս խառնաշփոթութեան ժամանակ ներս մտաւ Մոլլա Մուսան, որը Կարսում յայտնի ծուռ ձեռք մարդ էր, թէև բաւական կարողութեան և անուան տէր։ Մոլլա Մուսան էլ միացաւ նախկին յաճախորդներին և սկսեց ջոկջկել կօշիկները։ Վերջապէս մի զոյգ կօշիկ գնելով, վճարեց և բոլորը միասին դուրս եկան արհեստանոցից։ Արտաշը պատրաստի կօշիկները իսկոյն տեղը շարեց և նկատեց, որ բացի ծախուած մի զոյգ կօշիկից, ևս մի ուրիշ զոյգ պակասում է։ Կօշիկները մի երկու անգամ արագ համրելուց և զննելուց յետո,—մի զոյգը գողացել են, պակասում է—ասաց ու դուրս թռաւ արհեստանոցից։ Ուստա Պետրոսը աշկերտի բնաւորութեան հետ լաւ ծանօթ լինելով՝ նրան ետ կանչեց, ասելով.

—Արտա՛շ, Արտա՛շ, ետ դարձիր...

Բայց Արտաշը այնքան արագ էր սլանում, որ մինչև անգամ վարպետի ձայնը չը լսեց։ Երկու երեք վայրկեանից Արտաշը հասաւ Մոլլա—Մուսային և նրա կանանչ չուխա աբայի փէշը բարձրացնելով՝ թևի տակը նկատեց գողցածը և ասաց.

—Աղա՛, չե՞ս ամաչում, կօշիկ ես գողանում արհեստաւորի խանութից, քու ատրճանիդ, քու այս դիրքիդ և փաթթոցիդ գողութիւն կը վայելէ՞։ Բաց թող, ասաց Արտաշը և Մոլլա—Մուսայի թևի տակից

քաշեց ու առաւ գողացուած կօշիկները։ Մոլլա—Մուսան սկզբում սաստիկ մոլորուեց, այնպէս որ այլագունած՝ խօսք անգամ չը կարողացաւ արտասանել, բայց երբ փողոցում միւսլիմանները մոլլայի հրապարակով անարգուելուցը բորբոքուեցան և սկսեցին անմեղ քրիստոնեա տղայի վրա յարձակուել անարգ հայհոյանքներով և սպառնալիքով, Մոլլա—Մուսան ուշքի եկաւ, պատիւը պաշտպանելու մտքով սկսեց նախատել, անարգել Արտաշին և մինչև անգամ յարձակուեց վրան՝ ծեծելու համար։ Արտաշը կօշիկները խանթի դռնից ներս շպրտելուց յետո ետ դարձաւ՝ իւր վրա յարձակուողներից պաշտպանուելու համար։

Մինչ այս՝ արդէն մի -երկու տասնեակ մուսլիման հաւաքուել էին և որը ձեռքի գաւազանով, որը մահակով սկսեցին գանակոծել անմեղ պատանուն։ Արտաշը սրա վրա սաստիկ բորբոքուեց, աչքերը այլևս ոչինչ չէին տեսնում, ամէն բան նրան կարմիր էր թըւում և նա յարձակուողների մէկի ձեռքից խլեց մի հաստ մահակ և անխնա սկսեց կոփել ու տապկեցնել պատահածին։ Թէև կարկուտի արագութեամբ հարուածներ տեղացին սկզբում պատանու գլխին ու թիկունքին, բայց նա անտարբեր սկսեց շարժել մահակը և համարեա թէ մի երկու րոպէում ցրուեց, փախցրեց բոլորին, այնպէս որ ընկճուած միւսլիմանները սկսեցին գոռալ՝ կոկորդները պատռելու աստիճան ուժգնութեամբ.

—Հիւմմէթի Մուհամմէդի բոզտի մի՞, (միթէ Մուհամմէդի համայնքը չքացա՞ւ), որ այսպիսի մի գեավուր տղա, լոյս ցերեկով, արձակ համարձակ յարձակւի ճշմարիտ հաւատացեալ կրօնականի վրա, իսլամի դէմ

ձեռք բարձրացնէ և սուրբ հաւատն անպատուէ։

Այս աղաղակները այնքան սաստկացան, որ իսկոյն հաւաքուեցին հարիւր—հարիւր յիսուն մարդ—միւսլիմաններ և աղմուկի տեղը իսկոյն վրա հասան զապտիէները (ոստիկաններ) որևէ աւար ձեռք ձգելու յոյսով։ Ուստա Պետրոսը նկատելով գործի դրութիւնը՝ իսկոյն խանութը փակեց, աշակերտներին ղրկեց քրիստոնեա խանութւորների կողմը, որ օգնութեան կանչեն և միջոցներ ձեռք առնեն իրենց գոյքի ապահովութեան համար։ Ուստա Պետրոսի օրինակին հետևեցին Ամբար—խանութները նստող բոլոր հայերը և մի քանի րոպէում կրպակները բոլորը կալուեցան։ Զաբտիէի—Եուզբաշի (ոստիկանական պաշտօնակալ) պարմագսըզ Ալի աղան Ուստա Պետրոսի հետ մի քանի խօսք փոխանակելուց յետո, մօտեցաւ ամբոխին ոստիկաններով և Արտաշին շրջապատելով՝ բռնեց և զաբտիէներով բոլորուած՝ ճանապարհ ընկաւ միւթէսարիֆի հիւքիւմէթը (պաշտօնատուն)։ Իսլամ ամբոխը աղմկելով հետևեցին ոստիկանութեան, հիւքիւմէթի դրանը սկսեցին գոռալ և կանչել.

—Հիւմմէթի Մուհամմէդի բադտիմի, մի գեավուր լակոտ, մի րայայի լաճ իսլամի բարձրաստիճան իւլէմին (կղերական) անպատուէ, մահակով միւսլիմանների վրա յարձակուի։ Կեանքը մեր շնորհիւ վայելող մի «Զիմմի», մեր կեանքին, իւր տէրերի անձին սպառնա։ Շէրիաթ ենք ուզում, վճիռ ենք ուզում, կախեցէք, քարկոծեցէք այդ խոզի ծնունդին։

Աղմուկն այնքան շատցաւ, ժխորն այնպէս տարածուեց, այնպէս գղրգացրեց միւթէսարիֆ Օսման—Բէյի

ապարանքը, որ վերջինս պարտաւորուած դուրս եկաւ պատշգամն և ասաց.—աղաներ, էֆէնդիներ, դուք ձեր գործին հետևեցէք, մեր մէջլիսը կը տա յանցաւորին Շէրիական պատիժը։

—Շատ ապրիր, փաշա, եաշա, գոռում էր ամբոխը և կրկնում,—խնդրում ենք որ շուտ և խիստ պատիժ սահմանուի այդ գեավուրի լակոտին, որպէսզի օրինակ դառնա բոլոր անօրէններին։

Միւֆթին, մէջլիսի անդամները իջան ժողովրդի մէջ և սկսեցին համոզել նրանց գլխաւորներին, որ հեռանան, ցրւին և ետ դարձնեն ամբոխին, խոստանալով որ իրենք խիստ պատիժ կը սահմանեն չարագործ տղայի համար։ Մի ժամւա ընթացքում հազիւ հազ կարողացան համոզել ամբոխին և ցրուել։ Իսկ Ալի աղան փաշայի խիստ հրամանի համաձայն Արտաշին գցել էր արնատէրների բանտը, մեծամեծ և խիստ շղթաներով կապկպել, թողել։

Քրիստոնեաներն էլ իրար էին խառնուել. բոլորը ժողուել էին առաջնորդարան և խնդրում էին Ոշտունուց՝ առաջնորդից, որ ճար անէ և դուրս բերէ բանտից խեղճ պատանուն։ Այս իրարանցման ժամանակ, որը լուր էր բերում թէ Արտաշին սպանել են, որն ասում էր թէ թլփատել են, որը կարծում էր, թէ կախաղան են բարձրացնելու և ամէնքը միաձայն աղերսում էին, թախանձում էին, որ իսկոյն առաջնորդը ձին նստի, գնա Միւթէսարիֆի մօտ և առանց տղային չը վերադառնա։

Առաջնորդը որ մի ծերունի, բայց անձնուէր մարդ էր, մանաւանդ որ Կ. Պոլսումն էլ Բարութչի—

3139-84

Բաշիների նման կռնակ ունէր, գնաց, պնդեց և Արտաշին մթանը առաջը խառնած՝ վերադարձաւ խուցը։ Մուխթէսարիֆը վախեցել էր. առաջնորդին երաշխաւոր ընդունելով, նրան էր յանձնել Արտաշին։ Երբ առաջնորդարանում ամէն կողմից յարձակուեցան Արտաշի վրա, նախատեցին նրա վարմունքը, անարգեցին բնաւորութիւնը, նա բորբոքուած ասաց.

—Ես իմ պարտքս կատարեցի. վարպետիս խանութից մոլլան կօշիկ գողացաւ, ես պարտաւոր էի ետ առնելու, ինձ ծեծեցին, ես անճարացած գլուխս փրկելու համար նրանց վրա յարձակուեցա....։

Գ.

—Զաւակս, ասաց մի շաբաթ յետո Ուստա Պետրոսը Արտաշին, տեսա՞ր, որքա՜ն թանկ նստեց մեր վրա մի զոյգ կօշիկը։ Դու որ ինձ լսէիր, մոլլայի ետևից չերթայիր, միայն մի զոյգ կօշիկով կազատուէինք, իսկ այժմ, գիտե՞ս, որքա՜ն զոհողութիւններ արինք, որքա՜ն տուգանքներ տուինք, որքա՜ն կաշառ կերան անօրէնները։ Միայն Ալի աղան երկու ոսկի կուլ տուեց, դեռ մի զոյգ կօշիկ է պահանջում կրկնակօշիկներով, հապա Ղադին, Մուֆթին, գրագիրները, ոստիկանները... դրանց տունը քանդուի, քանդեցին ինձ, թողին։ Մինչև անգամ հայ անդամները՝ մեր Կեսարացին ու Երզնկացին անգամ համտես արին։ Ամբողջ երեք տարի մենք բոլորս

այնքան չենք կարող վաստակել այս գործարանով, որքան նրանք տարին։ Իմ խօսքս լսեցէք և ձեզ վնաս չի հասնի։ Մի զոյգ կօշիկի փոխարէն հարիւր զոյգի արժէքը տուժեցինք....։

— Ախար ես ձեր վատը չէի կամենում, իմ միտքըս գողծունը բերելն էր, ասաց Արտաշը չը կարողանալով զայրոյթը զսպել։

—Ես հաւատացած եմ, որ դու միայն լաւ մտքով սկսեցիր, ինչ գիտենայիր թէ այսպիսի վախճան կարող էր հետեւիլ։ Բայց ես գիտեմ, մենք տեսել ենք գազանների բարբարոսութիւնները։ Դուք պիտի մեզ լսէք, որ դժբաղդութեան մէջ չը գլորուիք։ Խելքի արի, զգոյշ եղիր, մի՜ բորբոքուել, մի՜ բռնկիլ վառօդի նման։ Նրանք այնպէս են համոզուած, որ մենք իսլամի գերին, ստրուկն ենք և մեր վաստակը իրենց սեփականութիւնն է, մենք բողոքելու, պահանջելու իրաւունք բնաւ չունինք։ Դարերով մեր նախորդների ճանկից քաշել են նրանց բոլոր բարին, կարողութիւնը, լաւ ծժոյգը, մատեանը, մինչև անգամ աղջիկը, տղան ու կնիկը։ Այժմ մի քըսան տարուա ընթացքում խո չե՞ն կարող փոխուել, մանաւանդ որ նրանց կղերը այս քարոզը դարձեալ նրանց կարդում է ամէն օր....։

Պետրոսը հառաչեց և սկսեց ձեռքի կաշին ատամներովը ձգել, երկնցնել, որ կաղապարի վրա քաշէ։ Թէև նրան մեծ վնաս էր պատահել, բայց նրա սիրտը հովացել էր բաւական Մոլլա—Մուսայի պատժուելու առթիւ։ Տարեկան քանի՜ քանիները բռնի կամ քաղաքավարի կերպով տանում էին պատրաստի կօշիկները, հագնում, մաշում և աներեսաբար գալիս էին նորերը ապսպրելու,

առանց հների գինը վճարելու մասին մտածելու։ Գոնէ, մտածում էր Ուստա Պետրոսը, սրանից յետոյ ուրիշները կը քաշուին և ձրի կօշիկ քաշելու չեն մտնի արհեստանոց։ Արտաշին լեզւով յանդիմանում էր, բայց հոգւով պաշտում, որ աներկիւղ պահանջում էր ամէն մի պատահածից ապառիկ կօշիկների վճարը, և քչով, շատով գանձում էր։

Բայց ինչ անէր Արտաշը, բնաւորութիւնը այնպէս էր, որ կը բորբոքուէր, իրեն ջղերը, բազուկները էլ չէր կարող զսպել։ Ուստա Պետրոսը գիտենալով նրա զգայուն բնաւորութիւնը, ծայրայեղ բորբոքումները, աշխատում էր միշտ խրատել, զգուշութիւնների էր դիմում և յաճախ այլ և այլ պատրւակներով արհեստանոցից հեռացնում էր, որպէսզի անտեղի կռիւների առիթ չը դառնայ։ Արտաշն էլ անձի միտն ունելով, տանջւում, կրքերը զսպում էր, որպէսզի իր ընթացքով կրկին վնասների չենթարկէ իր վարպետին։ Բայց և այնպէս առիթը պատահելիս Արտաշը չէր կարողանում բնութեանը ընդդիմադրել, կրքերը սանձել և երբէք չէր կարողանում գիջանել, որ անտեղի կեղեքեն իր վարպետին կամ անարգեն անպատիւ խօսքերով։ Շաբաթ չէր անցնել, որ Արտաշի բազուկները չճմռէին, չը ճթրտացնէին քրդի, թուրքի և նոյն իսկ ոստիկանների ողնաշարներ։ Այնպէս որ փոխանակ Ուստա Պետրոսը Արտաշին թուլացնելու, ստրկութեան վարժեցնելու, վերջինս քիչ քիչ հաշտեցնում էր իսլամներին այն մտքի հետ, թէ գեավուրն էլ մարդ է, զգացում և ուժ ունի, չի կարելի նրան գրգռել եւ պէտք չէ նրա զայրոյթը բորբոքել։

Օրերը իրար ետևից գլորւում էին, ամիսները սահում, անցնում, բայց Արտաշը փոխանակ վարպետի, ծնողների խրատներին հետևելով փափկելու, մեղմանալու, էլ կրակոտւում էր, էլ դիւրաբորբոք էր դառնում։ Օր չէր անցնում, որ իրենց անարգողներին, կողոպտողներին և կեղեքողներին չը ստիպէր խոնարհելու իր թաթերի տակ։ Տասն եւ ութ տարեկան հասակում արդէն այնպէս հուժկու իրան ունէր Արտաշը, որ ըմբիշների նախանձն էր գրգռում, այնպիսի պինդ բազուկներ ունէր, որ դարբինների կրքերն էր շարժում, այնպիսի լայն թիկունք, որ բեռնակիրների մուխն էր մարում։ Թէև երեսի աղւամազն սկսել էր ածիլել, բայց դէմքի շողը և աչերի վարդակարմիրը գեղանի օրիորդների սրտերն էր թնդացնում, բաբախում և հոգիները քաշում։ Զը նայելով իր դիւրաբորբոքութեան, նա այնչափ սիրելի էր ընկերներին և այնքան բարեսիրտ, որ ոչ ոք նրա կատակից ու սրախօսութիւնից չէր վշտանում, և ամէնքը պատրաստ էին կեանքերը զոհել այդպիսի բարեսիրտ ընկերի համար։

Փորձանքները կարծես գլորւում, թափւում էին Արտաշի գլխին, կռիւներն ու վիճաբանութիւններն անպակաս էին։ Թուրք ոստիկաններից մէկը ապսպրել էր մի զոյգ կօշիկ, չը նայելով որ նախկին տարած կօշիկների գինը տարիներով չէր վճարել։ Ուստա Պետրոսը ինչ միջոցի դիմեց, որ գլխից ռադ անէ այդ ձրիակերին, բայց վերջինս վարպետի առաջադրած երկար ժամանակամիջոցը, թանկ գինը, ստոր ապրանքը, մի խօսքով ամէն պատճառաբանութիւններին գիջեց և ընդունեց, պատուիրեց պատրաստել։ Պետրոսը յիշեցրեց անգամ,

որ նախկին կօշիկների գինն էլ դեռ չէր վճարել և մինչև հին հաշւի մաքրելը, նա ձեռք չէր առնելու։ Զաբթիէն անճարայած խոստացաւ երկու զոյգի գինը միասին վճարել ռամազանի առթիւ ստանալիք ռոճիկից։ Մի քանի անգամ խոստացած ժամանակին մտաւ զաբթիէն Պետրոսի արհեստանոցը, եւ ամէն անգամին էլ այլ և այլ պատճառաբանութիւններով նրան ճանապարհ դրին։ Վերջապէս անճարայած և հաւատալով որ երկու զոյգ կօշիկի գումարը միասին պիտի վճարէ, ուստա Պետրոսը պատրաստեց կօշիկները։ Որոշւած օրը եկաւ զաբթիէն, առանց այլ և այլի, հաւանեց, հագաւ և աշկերտին տասը փարա բաշխելով՝ ասաց.

—Ուստա, այս հին կօշիկս էլ կարկատիր, հինգշաբթի կը գամ, կը վճարեմ փողերը ու կը տանիմ։

—Ախար ինձ խոստացաք, Օսման Աղա, ասաց վարպետը դառնացած, թէ այսօր փող էք վճարելու, իսկ այժմ կօշիկները հագած առանց վճարելու կրկին դուրս էք գնում։ Ձեր խոստման համաձայն, ես էլ խօսք տւի էվգաֆի միւդիրին (մզկիթների յատկացեալ կալւածների կալւածական տեսուչ) այսօր կրպակիս տարեկան վարձը տալ։ Եթէ դուք չէք վճարում, ես ինչ անեմ, ես որտեղից դրամ ճարեմ։ Ախար ես էլ մեղք եմ, ընտանիք, մանր երեխէք ունիմ, ինչ անեմ, առաւօտ ինձ կը տանին ու կը բանտարկեն կրպակի կապալագնի համար և ապրանքս դուրս թափելով աճուրդով կիսագնի կը ծախեն, ինձ կը կործանեն։

—Ո՛չ, ո՛չ, բան չեն կարող անել. շատ երկար մի խօսել, անպատճառ երկու օրից, հինգշաբթի օրը փողերդ կը բերեմ, ասաց զաբթիէն դուրս գալով։

—Կօշիկները բերէք, պիտի մօմւի, ասաց ուստա Պետրոսը, յետո փողերն որ բերես, կը գաս, կը տանիս, ասաց վրդովւած թշւառ արհեստաւորը։

—Մոմել պէտք չէ, գլուխս մի ցաւացնել, ասաց քայլերը փոխելով ոստիկանը։

Մինչ այդ՝ Արտաշը վերադարձաւ տանից և լսելով, որ զաբթիէն առանց վճարելու տանում է կօշիկները եւ չի լսում իր վարպետին, ասաց.

—Օլան Օսման, Օսման, չէս լսում, որ ասում է թէ պէտք է մոմել կօշիկները։ Դարձիր, հանիր, մոմեն, այա տար։ Այս ասելով ոստիկանի թևից բռնեց, ստիպեց ետ դառնալու։ Զաբթիէն գիտէր, որ եթէ ոտքից մի անգամ հանէր կօշիկները, էլ առանց փողի չը պիտի կարողանար հագնել, մի հարւած տւեց Արտաշին և ուզեց թևն ազատել։ Արտաշի աչքերը դարձան, նա էլ պինդ սեղմեց ոստիկանին, քաշեց ներս հրեց նրան, խանթի մէջ մէջքի վրա պառկեցրեց։ Մինչ այդ՝ Պետրոսը և բանւորները մօտեցան և ուզեցին բռնել Արտաշին։ Այս հանգամանքից օգտւելով զաբթիէն ոտքի ելաւ և սկսեց հայհոյել.—ես քու օրէնքդ, ես քու հաւատքդ, ես քու խաչդ...

Արտաշը վայրկենական արագութեամբ դուրս սողաց իրեն բռնած ձեռքերից, դուրս թռաւ ոստիկանի տակից, վրա հասաւ, սկսեց բռունցքով ոստիկանի գլխին, քթին, բերնին, քունքին այնքան խփել, որ արիւնլւա արաւ նրա վրան ու գլուխը։ Զաբթիէն կատաղած՝ էլ անարգ հայհոյանքներով նախատեց Խաչը, Եկեղեցին, օրէնքը և բոլոր սրբութիւնները։ Արտաշն էլ փոխադարձաբար նրա Ղուրանը, Քեաբէն սկը-

սեց հայհոյել ու թափել, միանգամայն կօշիկները ոտքից հանելով։ Ոստիկանը նեղն ընկած՝ դիմեց սովորական եղանակին եւ բոլոր ուժով սկսեց գոռալ.

— Հիւմմէթի Մուհամմէդի բատդի մի՜...

Րոպէական արագութեամբ թափւեցան ամէն կողմի մուսլիմանները։ Մինչ այդ՝ Արտաշը Օսմանի ոտքից նոր կօշիկները հանեց և գցեց արհեստանոցը։ Ոստիկանը սիրտ առած շրջապատող, օգնութեան վազող մուսլիմաններից, բոբիկ ոտքի ելաւ, սուրը քաշեց և յարձակւեցաւ Արտաշի վրա, որը նրա ձեռքից զէնքը խլեց և սկսեց դրանով ծեծել Օսմանին և պաշտպանւիլ իր վրա հասնողներից։ Արտաշը այնպէս էր սլացնում սուրը, որ ոչ ոք սիրտ չէր անում նրան մօտենալ, այնպէս որ սկսեցին քարեր տեղալ Արտաշի վրա, յարձակւել ուրիշ հայ խանութօրների վրա գոռգռալով։ Քրիստոնեաները իսկոյն կրպակները կապեցին, շտապեցին այս ու այն խանի մէջ կամ տներում պատսպարւիլ։ Արտաշն աներկիւղ, կրակ կտրած, անխնա հարւածում էր իրեն մօտեցողներին՝ շրջապատւած հարիւրից աւելի անօրէններից։ Թէև ույժերն անհաւասար էին, բայց դարձեալ մահակով, փայտով, գերանդիով ու սրով զինւած՝ թուրքերը չէին յանդգնում մօտենալ այդ խելագար հային, որի սրի շառաչիւնը ահարեկում էր նրանց հոգին ու սիրտը։

Ոստիկանական պաշտօնակալը՝ Պարմագորդ Ալի աղան՝ դարձեալ երեւցաւ և Արտաշին շրջապատող հարիւրաւոր մուսլիմանները, Ալի աղայի հետ նրան առաջնորդեցին հիւքիւմաթ, թէև Արտաշը մինչև վերջ ոչ անձնատուր եղաւ և ոչ զէնքը յանձնեց։ Իսլամ ամբոխը և կղերը

ճանապարհին ուզում էին գործադրել իրենց դատաստանը, տեղն ու տեղ քարհալած անել—սպանել գեաւուրի ճտին, համոզւած լինելով որ փաշան և նրա ստորադրեալները կաշառւելով կրկին սիրտ ազատ թողնէին այդ ըմբոստին։ Բայց ոստիկաններն այնպէս էին շրջապատել Արտաշին, որ ամբոխը հնարաւորութիւն չունեցաւ նրան մօտենալու։ Թէև Արտաշին էլ վիրաւորել էին մի քանի տեղից, արիւնը հոսում էր գլխից, թևերից ու սրունքից, բայց նա բոլորովին բորբոքւած, բան չէր զգում և չէր էլ ըմբռնում թէ ինչ էր կատարւում շուրջը։ Նրան հրելով, առաջ քշելով, գլորեցին իշու դրախտը։

Դ

— Ա՜յ խելագար, անհաւատ, ասաց ոստիկանապետը՝ Աբիշ աղան՝ Արտաշին նկատելու պէս, դու ինձ խոստացար որ էլ այդպիսի յիմարութիւններ չես անելու. այս ինչ է քու արածը։ Իսկոյն քեզ կապել կը տամ, այնքան կը թակեմ, որ կաշիդ միսիդ պոկւի. անօրէն, գեաւուր, լեզուդ վզակոթից կը հանեմ...

— Օլմն, օլմն Աբիշ, ասաց բորբոքւած Արտաշը, ես ինչ մեղք ունիմ, երբ քու զարթիէն օր ցերեկով գալիս մեզ կողոպտում է և ապա սկսում է հայհոյել կրօնս, խաչս, Աւետարանս...։

—Ձայնդ կտրէ, անզգամ։ «Օլա՛ն, օլան Աբիշ», ես քու օլա՛նդ եմ, ես քու ստրո՞ւկդ եմ...։

—Խաչին հայհոյելով ի՜նչ մեծ մեղք է գործել, — մէջ ընկաւ Ալի աղան — չորացած փայտի կտոր...։ Իսկ դու, անզգամ, խոզի ծնունդ, ինչպէ՞ս համարձակւեցար հայհոյելու երկնքի յայտնութիւնները, Ալլահի Ղուրանն ու Քեաբէն....

—Նա հայհոյեց իմ կրօնս. խաչս, Աւետարանս, ո՛չ թէ ես....

—Լի՛րբ, լռի՛ր, քեզ այստեղ կտոր կտոր անել կը տամ, ասաց կատաղած Աբիշ աղան և նշան արաւ, որ ոստիկանները մտրակելով զնդանը գլորեն թշուառ պատանուն, ձեռքից կտրւած սրի կտորը խլելով։

Ութ—տասն ոստիկաններ անողորմ հարւածներով վրա թափւեցան և այնքան մտրակեցին, այնպէս ձաղկեցին, որ Արտաշը թէև սկզբում երկար դիմադրեց այդ տանջանքին և մինչև անգամ մէկի ձեռքից մտրակը խլելով նրանց վրա յարձակւեց ու պաշտպանւեց և մի քանիսին այնպիսի հարւածներ տւեց, որ գլորւեցան, բայց անգութ դահիճները հաստ մահակներով, հրացանի կոթերով այնքան տւին, որ անզգայացած թմրեց, գլորւեց և մարած ընկաւ գետին։ Մութ զնդանի խորքում Արտաշը մռնչում էր առիւծի նման ամբողջ երեք օր, քաղցած, ծարաւ, ջարդւած և վիրաւոր։ Ոչ ոք նրան չէր լսում, ոչ ոք սիրտ չէր անում դուռը բաց անել, վիրաւորի հետ դէմ առ դէմ խօսել։ Արտաշի հարւածներին արժանացածները դեռ իրենց տներում պառկած տքում էին իրենց վէրքերի կսկիծից, իրենց ջարդ ու փշուր եղած մարմնի ցաւերից ու մրմռումներից։

Զաբթիէները քանի յիշում էին Արտաշի հրեշային դիմադրութիւնը բարբարոսական ծեծի տակ, կատաղի յարձակումները. արիւնալից աչքերը, բոցավառ դէմքը և ջախջախիչ հարւածները, նրանց թւում էր, որ պատանին հրեշային ծնունդ էր, ջիների կամ հուրի որդի. սոսկումներից սիրտ չէին անում մինչև անգամ զնդանի պատուհանին մօտենալ և ծակերից դիտել, թէ ինչ է կատարւում քաջորդին։ Կարծես արիւնկզակ գազան լինէր պատանին, այնպէս որ նրա շքից անգամ սարսափում էին։

Թէև մի քանի անգամ Արտաշի հայրը կերակուր էր բերել որդուն, բայց ոստիկանները չէին թոյլ տւել, որ ծնողները տեսնեն կալանաւորին։ Կերակուրը պահապաններն իրենք էին լափել, ցամաք հացը լուսամուտների ծակոտիներից ներս շպրտել էին Արտաշին, թափել էին ապականւած գետնի վրա։ Արտաշը բացի մարմնի վէրքերի և ջարդւածների կսկիծների տանջանքից, տառապում էր ստամոքսի դատարկութեան մրմուքով։ Ամբողջ օրը մենակ թաւալւում էր զնդանի հողատակի վրա, առանց ծածկոյթի և վիրակապի։ Դեռ այս բոլորը բաւական չէր, հեռուից պահապաններն ու ոստիկանները հայհոյում, անարգում էին Արտաշի նւիրական սրբութիւնները և նրան բորբոքելով զւարճանում։

Առաջնորդը, ազգային. քաղաքական ժողովի անդամները. Կոնսուլը՝ Ունջեվը՝ ինչ միջոցների ասես դիմեցին, բայց հնարքը չը գտան, չը կարողացան դուրս բերել Արտաշին բանտից։ Մեծամեծ կաշառներն էլ չը նպաստեցին. պաշտօնականները ստացան այդ ոս-

կիները՝ կերան, մարսեցին, խոստացան արձակել պատանուն, բայց զուր, իսլամի կղերը այնպէս էին բորբոքել, այնքան հեռագիրներ էին տուել Արզրումի վալիին, Կ. Պոլսի Սադրազամին ու Շէյխիւլիսլամին, որ միւթէսարիֆը չէր կարողանում զիջանել և արձակել իսլամի ամենանւիրական յայտնութիւնները հայհոյողին։ Մանաւանդ որ զալթիէն՝ Օսման աղան՝ սաստիկ տառապում էր վէրքերի բորբոքումից և մոլլաները ամէն տեղ քարոզում էին որ նա չի ապրի։

Իւլէմաները շէրիաթի համաձայն պահանջում էին, որ Արտաշի վզակոթից դուրս քաշեն լեզուն արմատից, հանեն շներին բաժնեն, որ գեավուրները սարսափին և ոչ ոք չը յանդգնի իսլամին երկնքից շնորհուած սրբութիւնները հայհոյել և իսլամ անհատների դէմ ձեռք բարձրացնել։ Թէև նոր օրէնսդրութիւնների մէջ մի այդպիսի ոճիր և նրա վճիռը չէր նախատեսուած, բայց իւլէմաները գոռում էին ամէն տեղ համարձակապէս, թէ—«Կառավարութիւնը, պետութիւնը իսլամի շէրիաթին է հպատակում՝ ոչ թէ կրօնքը պետութեան։ Երկնքից տրուած պատգամները բառ առ բառ գործադրուելու են»։

Կղերի քարոզներից գրգռուած իսլամ ամբոխը ամէն կողմ խումբ խումբ ժողովուած ցոյցեր էին անում հրապարակապէս և գոռում.

—Հիւմմէթի Մուհամմէդի բաղդի մի՛, մահ գեավուրներին։

Երեք օր անցնելուց յետոյ քրիստոնեաները բոլորովին յուսահատուեցին, վհատուեցան, էլ միայն մեռելային դէմքեր կարելի էր տեսնել փողոցներում։

Եթէ Արտաշի գլխին մի փորձանք բերէին, այլևս ոչ թէ միւսիլմանի կղերին, այլ նոյն իսկ ամենայետին մշակի առաջ էլ հարկ կը լինէր ստրկանալ և առանց մրմունջի կատարել նրանց բոլորի հրամանները։ Աբդ ուլ Մէջիդի եւ Աբդ ուլ Ազիզի օրով, կասէին քրիստոնեաները, այսպիսի սև օր տեսած չէին։

—Տղա՛ք, ասում էր մի ծերուկ հայ իրեն շրջապատողներին խանի մի անկիւնում, տղա՛ք, ենիչէրիները յարութիւն են առնելու։ Իսլամի հոգու խորքում քնած գազանը սթափւում է, շղթաները փշրել է կամենում։ Այս քայլերը, այս անսանձ մաքառումները, այս անսահման պահանջները յիշեցնում է ինձ ոչ շատ հին անցեալը, դեռ աչքիս առաջ կանգնած են ենիչէրիները իրենց պղինձներով, դեռ ղօղանջում է ականջումս նրանց աղաղակները և պահանջները, դեռ շողշողալով փայլում են օդի, մթութեան մէջ նրանց դաշոյնները, և դեռ կարծես հեղեղի նման հոսում են փողոցներով նրանց թափած արիւնները։ Սուլթան Մահմուդը ենիչէրիներին կոտորեց, բայց խեղճին չը թողին նպատակին հասնի, արգելքներ դրին և չը կարողացաւ իսկական ենիչէրիներին — սոֆթաներին ու մոլլաներին էլ ջնջել, միանգամայն երկիրը մաքրել, իստակել իսլամի բարբարոս բռնակալներից։ Այս անօրէնները երբէք չեն թողնելու, որ օրէնքն ու կարգը թագաւորէ և քրիստոնեայի զաւակների փորը իրենց հօր աշխատանքից փշրանք մտնէ։ Պասկևիչը լաւ էր փշրած այս գազանների ատամները, ռուսաց միլիցիայի սարսափը սոսկացրել էր չը ծնուած զաւակներին անգամ, բայց ի՞նչ օգուտ, Ֆրանսացիները և Անգլիացիները նորից սրեցին, մինչև

անգամ պողպատի ու մագնիսի ջրով կարծրացրին սրանց աղացած ազօրիքներն ու ժանիքները…: Զգուշացէք, գլխներդ փրկելու ճանապարհը մտածեցէք, թէ չէ….:

— Ի՞նչ անենք…. ի՞նչ կարող ենք անել…մըրմնջում էին շատերը:

— Քսան տարին լրացաւ և Ռուսաց թակը չը կոտրեց սրանց գլուխն ու թիկունքը, ասաց մի ուրիշը:

- Է՜հ, նրանցից էլ օգուտ չը կայ: Եւրոպացիք չեն թողնում, որ մենք իսլամի խալիֆի, մահմեդականութեան մեծ իմամի (առաջնորդի) ճիրաններից ազատուինք ու մարդ դառնանք:

Բացի յուսահատ հառաչանքներից, ուրիշ բան չէր լսւում ունկնդիրների շրթունքներից: Անորոշ վիճակը մոլորեցրել էր բոլորին:

Պետրոսը և Անտօնը առաւօտ իրիկուն չափչփում էին առաջնորդի դռնից մինչև Հիւքիւմաթը, այնտեղից էլ բանտը, բայց ո՛չ փաշան, ո՛չ մէջլիսի անդամները և ոչ էլ առաջնորդը մի յուսատու խօսք չէին ասում, մի վստահելի կնճիռ չէին արտայայտում: Թագուհին տանը սգում էր միակ որդուն, իսկ դրացիները ողբում էին թշուառ մօր անողոք վիճակը:

Արտաշը բանտի մէջ երեք օր և երեք գիշեր անցկացնելուց յետոյ, բաւական կազդուրուել էր, նրա կըսկիծները, մորմոքները մեղմացել էին, նրա վէրքերը չորացել էին, նա բաւական հանգստացել և լրջացել էր: Կտոր բրդուճ պահապանների ատամներից աւելցած հացի մանրուքով ստամոքսը լցրել, սկսել էր վիճակի մասին մտորել: Այդ օրը պահապանները նրան պատուհաններից բաւական հայհոյելուց յետոյ յայտնել էին, որ

Օսման աղան մահացել էր եւ իրան շուտով կախելու էին:

Այս լուրը շանթահարեց Արտաշին, նա զգաց վիճակի ծանրութիւնը, առաջը բացուած վիհը և փըրկուելու հնար սկսեց մտածել: Նա ծանօթացել էր իր որջի հետ, և անդադար քննում էր դռներն ու պատուհանները, նա կազմեց իր ծրագիրը, որը թէև վտանգաւոր էր, քանի որ ուժնաւոր և հրացանակիր զաբթիէները կարող էին նրան բանտի պատերից, պարսպից դուրս չեկած՝ գնդակահար անել, բայց անարգ կախաղանի պատկերը, ճարպոտ չուանը նրան հաշտեցրեց փախչելու, ազատուելու և կամ քաջի նման գնդակի հարուածի տակ ընկնելու մտքի հետ: Բայց այդ ծրագիրը գործադրելու համար դարձեալ մի գրպանի լծակի կարիք կար, որ գտնելու հնարը չունէր:

Արտաշի ընկերակիցները իրար մօտ հաւաքուելով տանջւում էին և չէին կարողանում մի ճար գտնել իրենց սիրելի ընկերոջը օգնելու: Պարագաներն աննպաստ էին, անձնազոհութիւնն էլ անօգուտ էին համարում: Վարդը հանգիստը կորցրել էր և չը նայելով որ իր հայրը որպէս պաշտօնական—Իդալէի մէջլիսի անդամ կարող էր նպաստել իրեն, որպէս կարողութեան տէր, կարող էր կաշառել բանտապետներին և թեթևացնել թշուառի վիճակը, բայց երկիւղից լսել անգամ չէր ուզում որդու թախանձանքը և սաստում էր նրան որ չը խօսի, չը մտածէ ընկերոջ վրայ: Հօր անտարբերութիւնը բոլորովին բորբոքում էր Վարդի սիրտը և սա մոլորուած չէր՝ իմանում ինչ միջոցով նպատակին հասնել: Երկար տանջուելուց յետոյ, Վարդը մտաւ մօրը ննջարանը նրա օգ-

նութիւնը խնդրելու, և մօրը բացակայութիւնից օգտուելով սեղանի վրա դրուած նրա կրծնոց ոսկիների շերտը վերցրեց ու տնից դուրս թռաւ։

Արդէն իրիկուն էր։ Մի քանի ոստիկաններ Ալէքի կազինօն մաստիքա էին խմում և նուագել տալիս երգիչների խմբին։ Վարդը առանց տատանվելու ներս մտաւ և մի սեղանի մօտ տեղ բռնեց։ Իդարէի անդամի որդու գրպանի ոսկիների համը տեսնելու յոյսով, իսկոյն նրան շրջապատեցին դիւանատան գրագիր էֆէնդիները և ոստիկանները։ Վարդը խմացնում էր ինչպէս գրագիրներին, նոյնպէս և զաբթիէներին, անդադար ուտելիք և խմելիք պահանջելով։ Ալէքը հրամայում էր վայրկենական արագութեամբ լրացնել Վարդի պահանջները և երգեցիկ խումբը ստացած ոսկիներից շլացած՝ թնդացնում էին իրենց նուագներով և շարգիներով կազինօն։ Հարբածները իրար ետևից հեռանում էին և նրանց յաջորդում էին իրենց պաշտօնակիցները։ Գիշերից մի ժամ անցել էր, բայց ոսկերիչների—բազարին տիրել էր նուագածուների ձայնը, թէև խանութւորները և փողոցի հասարակութիւնը արդէն վաղ ցրուել էին։

Ոստիկաններից մէկը, որ այնքան խմելու հետ սէր չունէր, որքան տանջւում էր Վարդի ոսկիներից մի քիչ բաժին ստանալու տենչով, նկատեց, որ Վարդն էլ այնքան ախորժ չունէր խմելու։ Հարբածներին քիչ քիչ հեռացնելուց յետո, երբ Ալէքն էլ պատրաստւում էր կազինօն փակելու, խոնարհաբար մօտեցաւ Վարդին եւ խնդրեց որ թոյլ տա երգիչներին արձակելու։ Վարդը խոր հառաչելուց յետո ասաց.

—Աշրաֆ, մութը պատել է, ուրեմն ժամանակ է տուն գնալու։

— Եթէ թոյլ տաք, բէգ, ասաց ոստիկան Աշրաֆը, ծառադ պատրաստ է լապտերը վառել և ձեզ տուն առաջնորդելու։

—Շատ լաւ ես ասում, բայց եթէ տնից խռոված լինիմ։

—Հրամայիր, բէգ, ուր որ ուզում էք, ձեզ առաջնորդեմ...

—Ուր որ կամենամ։

—Ձեզ ծառայելու համար գլուխս էլ պատրաստ է, ասաց Աշրաֆը, և Վարդը Ալէքի հաշիւը մաքրելուց յետո դուրս եկան կազինօից։ Մութ փողոցներից առաջ էին գնում Վարդն ու Աշրաֆը եւ Վարդը իրեն քիչ հարբած ձեւացնելով, ոստիկանի թևին յարած՝ առաջ էր գնում, խորասուզուած այն մտքով, թէ ինչ յառաջաբանով սկսի իր առաջարկը։ Երկուսն էլ լուռ և ծանր ծանր շնչելով առաջ էին գնում, երկուսն էլ իրենց նպատակին հասնելու ծրագիր էին կազմում, այն տարբերութեամբ, որ Աշրաֆը անտեղեակ էր Վարդի իսկական նպատակից, իսկ վերջինս գիտէր, որ սոված ոստիկանի հոգին ու զգացումները կեդրոնացել էին իր քսակի մէջ։

—Աշրաֆ, ասաց Վարդը ծանրութեամբ. գիշերս ազատ ես, ո՞ւր գնանք մի լաւ քէյֆ անելու։ Ես չեմ ուզում մեր տունը գնալ։

—Թէև կէս գիշերից յետո ես եմ բանտի դռներին հսկելու, բայց եթէ կամենաք, կարող եմ մի մէջիդ տալ մեր ողերքից մէկին որ ինձ փոխարինէ։

—Դէհ, որ այդպէս է, գնանք, ընկերիդ տես,

Նրան վճարէր և ապա երթանք։

—Ինչպէս որ ձեր կամքն է։

—Գնանք բանտ ուրեմն։ Աշրաֆ, Արտաշին բաց թողե՞ն թէ ոչ։ Ափսո՜ս, շատ ղոչաղ տղա է։

—Ոչ, բայց խելքս չի կտրում, թէ բաց թողնեն, մոլլաները կատաղել են։

—Ափսոս, ափսոս տղա էր....։

—Լաւ միտս ընկաւ, գնանք քիչ ուտելիք առնենք. միրգ առնենք, տանինք նրան։ Թող վերջին գիշերը լաւ անցկացնէ։

—Վնաս չունի, բայց մեր զաբթիէներին գիշերըս այնքան հարբեցրիք, որ, կասկածում եմ, կարող են մի աղմուկ բարձրացնել, կամ իրենք կը գլխուին, նրան բան չեն տալ։ Բայց և այնպէս փորձենք։

—Մի երկու շիշ մաստիք էլ առնենք զաբթիէների համար, թող լակեն։

Իսկոյն Աշրաֆը ետ դարձաւ Ալէքի կազինօն, խմիչք և կերակուրները վեր առնելով, եկան միասին դիմեցին Մուրտար—Առուի կողմը, Թօփալ—Մօլլի տները, որտեղ ժամանակաւորապէս գտնւում էր բանտը։ Աշրաֆը դռները բաց անել տուեց ընկերին, Վարդի հետ ներս մտան, խմիչքը զանազան թթուներով մեկնեցին ոստիկաններին և իրենք առաջ անցան Արտաշի որջի կողմը։

Վարդի ձայնից թնդաց կալանաւորը և նրան գրկելով սկսեց արտասուել։

—Արտա՛շ, դու արտասւո՞ւմ ես, դու թուլացե՞լ ես։

—Ես թուլանամ, ո՛չ, ո՛չ, ես ուրախութիւնից քիչ է մնում, խելագարուիմ։ Ամբողջ երկու ժամ է, քեզ

վրա էի մտածում և չը գիտեմ թէ ինչ հրաշքով ներս մտար։

—Աշրաֆը այնքան բարի եղաւ, որ ինձ թոյլ տուեց, Արտա՛շ, նստի՛ր, նստիր, կեր և կազդուրուիր։ Տես, ի՛նչ լաւ խորոված է արել Ալէքը քեզ համար։

Երկու ընկերները բաւական խօսեցան և Արտաշը կատարելապէս յուսադրուած ոգևորուեց և սկսեցին հեռանալ իրենց խօսակցութեամբ ճգնաժամի խնդրից։ Աշրաֆը մի երկու անգամ խնդրեց Վարդից հեռանալ, վախենալով որ մի գուցէ մեծաւորները քննութեան գան։ Վարդը խօսակցութիւնը վերջացրած՝ դուրս եկաւ Աշրաֆի հետ եւ Գող Մկօի մէյխանից մի բունջիկ ռոմ լըցնել տալով ուղարկեց բանտի հսկողներին և ինքը Աշրաֆի հետ նստաւ կրկին խմելու։

—Վէրքերս նորոգուեց, Աշրա՛ֆ, ասաց Վարդը, էլ չեմ կարող քէյֆի մասին մտածել. ընկերոջս վաղը միւս օրը կարող են կախել, էլ ես ի՞նչպէս քէյֆի գընամ։

Աշրաֆին ստիպմամբ մի քանի բաժակ իրար վրա ռոմ խմցնելուց յետո, հանեց երեք ոսկի վարձք տուեց և ասաց, որ ուզում է տուն դառնալ։ Աշրաֆը բորբոքուած որ որսը ձեռքից թռաւ, գնաց բանտ, իսկ Գող Մկօն Վարդին առաջնորդեց լապտերով դէպի տուն։

—Մկօ աղբէր, ասաց Վարդը երբ տուն հասան, դուռը թակելու պէտք չկա, հայրս կարող է զարթնել և զայրանալ։ Ես կը բանամ դրսից։ Շնորհակալ եմ, դու վերադարձիր։

Մկօին ճանապարհելուց յետո, Վարդը տուն մըտաւ, հինգ րոպէից յետո ենփունջիում փաթաթուած

դուրս եկաւ և գիմեց բանտ, բայց փոխանակ դռնից մտնելու, մտաւ Մուրտար—Աուուն եւ մութ գիշերին քարերը ճանկռտելով բարձրացաւ պատից։

Ե

Կէս գիշերից շատ չէր անցած։ Թագուհին իր մութ սենեակում անկողնի քով չոքած աղօթում էր ու աղօթում։ Թիթեղեա վառարանը՝ մայրի փայտի ճիւղերով լցրած՝ աղմկալի վառւում էր և պարբերաբար ճաթըրտում և կայծերը դուրս ցցում։ Թշւառ կինը անդադար նստած տեղից վեր վեր էր թռչում, տանը, դռանը, ծակ ու ճեղ նայում, այս ու այն անկիւնում կանգնում, ականջ կախում, բայց դրսից մի միայն գետի շաչիւնն ու քամու սուլոցներն էր լսում։ Անտօնը տանը չէր, Պետրոսի հետ աղաների և էֆէնդիների դռներն էր շրջում, որպէսզի հնար գտնեն ազատեն խելագար պատանուն դժոխային տանջանքներից և ազատւին թշւառ մօր ողբից ու արտասուքից։

Մութ գիշեր էր, երկինքը թանձր ու թուխ ամպերով պատած, փողոցներում ոչ ճրագ կար, ոչ էլ լուսամուտներից լոյսի նշոյլ էր փայլում։ Գերեզմանական հանգստութեան մէջ էր Կարսը և շներն անգամ, որոնք գիշերուա քաղաքային պահապաններն էին, ցրտից կուչ եկած՝ խորթում էին։ Այս միջոցին պատերի տակից, ծուռ մուռ փողոցներով, ոլոր, մոլոր ճանապարհներով, առաջ էր գնում մի ստւեր, անընդհատ քայլերը

փոփոխելով և ուշադրութեամբ շուրջը քննելով։ Նա մօտեցաւ մի տան, դռան բախիչը բարձրացրեց որ թակէ, բայց քիչ մտածելով՝ կամաց թողեց բախիչը, ետ դարձաւ ու փողոցը փոխելով գնաց դէպի պատիվեր։ Շատ չանցած բարձրացաւ երթիքները և առաջ գնալով պպզեց և մի երթից ցած գննելուց յետո՝ կամաց թղթւածքը չխչխացնելով ասաց.

—Աքա՛, Թագո՛ւ, ես եմ, երթէց դուռը բաց։

Երկու վայրկեանից Թագուհին գրկեց իւր որդուն և ներս տարաւ։

Մի քառորդ ժամ յետո կնքահայր և սանահայր տուն վերադարձան և Արտաշին իր մօր կողքին նկատելով մնացին ապշած։ Արտաշը մի քանի խօսքով պատմեց, թէ ինչպէս բաղդը նպաստել է, ոստիկանները հարբել են, ինքը մի փոքրիկ լծակով բանտի լուսամուտի կողքից երկու քար թափելով Մուրտար—Աուուն՝ կարողացել է դուրս սողալ և փախչել։ Այս նկարագրութիւնը շւարեցրեց բարեկամներին, որոնք ուրախութիւնից չէին իմանում ինչի վերագրել այդ բարեպատեհութիւնը։ Թագուհին անդադար փառք էր տալիս և կրկնում.

—Ես այնպիսի սուրբի փեշից էի բռնել, որ նա անպատճառ իր սպիտակ նժոյգով մտաւ բանտ և դուրս բերեց իմ զաւակին։

—Բայց, ասաց քիչ խորհելուց յետո Պետրոսը, Արտաշը անպատճառ հեռանալու է Կարսից։ Առաւօտ կը գան և նոյն իսկ մեր թաղերում նրան կը բռնեն։ Գիշերս Արտաշը պէտք է քաղաքից դուրս գա։ Նրա յանցանքը այժմ ծանրացաւ։ Եթէ գնա մի երկու տա-

րի մի ուրիշ երկիր, թէ բորբոքուած թուրքերը կը սառչին և թէ ոստիկանութիւնը կը մոռանա ամէն բան։ Ժամանակ կորցնելու չէ, եթէ մի անգամ էլ Արտաշը նրանց ձեռքն ընկնի, էլ փրկութիւն չի կարելի յուսալ։ Պէտք է այս գիշեր անպատճառ սրան ճանապարհ գցել։

Անտօնն ու Թագուհին մնացին սառած, միակ զաւակից ինչպէս կարելի էր բաժանուել։ Դրութիւնը սոսկալի էր, պէտք էր խոնարհուել։ Երկար տատանուելուց յետո Անտօնն ասաց.

—Թագուհի՛, դու գնա՛, մի երկու տարի Ալէքսանդրապոլ՝ հէրանցդ, ես վստահ եմ, որ նրանք քեզ մի սենեակ կը տան ապաստանելու։ Ես այս կողմից կաշխատեմ ձեզ պէտք եղածն հասցնելու։ Արտաշին էլ կը տաս մի լաւ կօշկակարի, քիչ թէ շատ նա էլ կօգնէ։ Ռուսի հողը գնալուց ապահով տեղ չը կա մեր Արտաշի համար։ Այս կողմը ուր որ երթանք, զաբթիէներից և մոլլաներից ազատուելիք չունինք։ Վառօդը պէտք է կրակից հեռացնել։

—Դրանից ապահով տեղ չը կա, ասաց Պետրոսը, պէտք է այս ժամին ճանապարհ գցել։

—Գնամ, ձիուս գարի տամ, ասաց Անտօնը և վեր կացաւ։—Թագուհի, շուտ տղի շորերը, լւացքը և պաշարը կապիր։

Նոյն գիշերը Անտօնն ու Պետրոսը Արտաշին տարան, քաղաքից դուրս հանեցին, սրտերը դողդողալով նրան ընկերացան մինչև Սիւդ—Ղուլա գիւղը։ Ճանապարհին երկիւղներից ոչ ոք սիրտ չէր անում ձայնը բարձրացնելու։ Երբ բաժանուելու ժամը մօտեցաւ, հայրը մի կողմից, վարպետը միւս կողմից սկսեցին յորդորել

Արտաշին, որ իր կրքերը զսպէ, վերջ տա խելագարութիւններին։

—Մտածի՛ր, որդի, դու ո՞վ ես, ի՞նչ ույժ ունիս, քանի՞ հոգի ունիս, դրանց ո՞ր մէկի հետ պիտի գլուխ գլխի դնես։ Հերի՛ք է, մորդ մաշեցիր, ինձ հալեցիր, մեզ ողջ ողջ գերեզման մի՛ կոխեր։ Օսմանը մեռել է, ես վաղը ի՞նչ պատասխան եմ տալու, դու ի՞նչ պատասխան ես տալու խղճիդ։

—Ախար, հայրիկ, ես ի՞նչ մեղք ունիմ։

—Թրի կոթով մարդու ոսկորները ջարդել, փշրել, թողել ես, ասում ես թէ ի՞նչ մեղք ունիս, ասաց վրդոված Անտօնը։

—Նրանք առաջ ինձ զարկին....

—Զարկին, թո՛ղ զարկած լինէին, խո՛ հոգիդ դուրս չեկաւ։

—Թէ թողնէի, հոգիս էլ պիտի առնէին։

—Ինչի՞ դու նրանց գիրքն ու սև քարը հայհոյեցիր։

—Նրանք առաջինը ձեռք բարձրացրին, նրանք մեր սրբութիւնները հայհոյեցին նախապէս և անարգեցին, ինչպէս նախատում են ամէն օր, ի՞նչ եմ անում ես կեանքը, երբ իմ միակ պաշտելի խաչս արձակ համարձակ պիտի անարգեն, հայհոյեն և ես չը պիտի կարողանամ այդ մի սրբութիւն սրբոցի սիրուն զոհուել։ Ո՛չ, հայրիկ, ես իմ պարտականութիւնը կատարեցի, ես չեմ կարող թոյլ տալ, որ ինձ ոտքի տակ տրորեն և յոխորտան։ Խաչից բարձր էլ ի՞նչ սրբութիւն ունինք...։ Չէ՛, ես չէի կարող լսել և գլուխս խոնարհել։ Եթէ վախենում էք որ առաւօտ ձեզ նեղացնեն, ես ետ կը դառ-

նամ, փաշային էլ, բուշային էլ, մոլլային էլ, քոնձլոտ գզրթիէին էլ կարող եմ պատասխան տալ, մեռնիլ էլ, եթէ հարկը պահանջէ, խաչիս ու պատւիս համար։ Ես չեմ թոյլ տալ, որ ձեզ իմ պատճառով տանջեն, ես կարող եմ ազատ գնալ կախաղան և չւանը վիզս գցել։

— Ետ դառնիմ... մեծ մեծ մի խօսիլ, ասաց Պետրոսը, մոլլաները միաբերան պահանջում են փաշայից, որ լեզուդ վզակոթից հանել տա և իրանց յանձնէ։

— Ես այդ գիտեմ, ես չեմ վախենում տանջանքից։

— Գնա, գնա ճանապարհդ, էյ խելագար, ես գիտեմ, որ դու չը պիտի թոյլ տաս ինձ բնական մահուա զերեզման մտնելու։ Աստ ինձ, ասա, անմիտ, եթէ քեզ տանջեն, կախեն, ծնողներդ կարող են ապրել։ Առաջ մեր երկուսիս դու հօրիր, թաղիր, ապա գնա անձնատուր եղիր։

— Բայց առաւօտ կարող են ձեր երկուսին էլ ձերբակալել և պահանջել որ դուք ինձ գտնէք և իրանց յանձնէք։

— Ընդհակառակը, ասաց ուստա Պետրոսը, նըկատելով որ Արտաշը լրջութեամբ է խօսում և անպատճառ ետ դառնալու մտադիր է, առաւօտ մենք կը պահանջենք միւթեսարիֆից, որ հրամայէ քեզի մեզ ներկայացնելու։ Հակառակ դէպքում կսպառնանք և Կ. Պոլիս հեռագրեր կը տանք, կը բողոքենք թէ իբր փաշան կամ ոստիկանները կաշառւելով քեզ յանձնել են մոլլաներին և նրանք քեզ ողջ ողջ գցել են թոնիրը, վառել.... մինչև մի քանի հեռագիր չը տանք, մինչև սպառնալիք չը կարդանք, չեն մեզմանալ և գոր-

ծի վերաբերեալ բոլոր քննութիւնները չեն ոչնչացնել։ Ես վաղը և եթ փաշայից կստանամ բոլոր թղթերը և կոչնչացնեմ։

— Բայց և այնպէս, ասաց մտախոհ Արտաշը, եթէ իմ պատճառով որևէ մէկին ձերբակալեն կամ նեղացնեն, ես իսկոյն կը վերադառնամ և անձնատուր կը լինիմ։

— Մեծամիտ, խելագար... երբէք դու մարդ դառնալու չես, ասաց վրդովւած Անտօնը։ Միթէ աշխարհի վրա ուրիշ խաչագով չը կա, միթէ միայն դու մնացիր խաչի պատիւը պաշտպանող։ Ամբողջ Քրիստոնէի թագաւորները իրենց խաչը անարգող, հայհոյողի ոտքերն են լզում, իսլամի մեծ մահիկի և քրիստոնէութեան հալածողի աչքը մտնելու համար իրար գլուխ են կտրում, իսկ դու մի բուռ հող տեղովդ ուզում ես Մուսուլմանների ամիրի և մոլլաների առաջն ելնել և նրանց խոնարհեցնել։

— Ամէն մարդ իր պարտքն է կատարելու, իր խղճի թելադրութեամբ համարձակ առաջ է գնալու, ասաց ու մտրակեց ձին Արտաշը։

— Ձին վէս, աղան ամեհի, տեսնենք ո՞ւր է հասնելու դրանց վերջը, ասաց Անտօնը կանգնած տեղը, գիտելով որդու սրարշաւը։

Արշալոյսի շողքը արդէն երևում էր։

Հետևեալ առաւօտ միւթեսարիֆը, Աբիշ աղան և Ալի աղան շւարած մնացին։ Ամբողջ քաղաքը տակ ու վրա արին, գաւառները մարդ ուղարկեցին, բայց էլ որտեղ կարող էին Արտաշին գտնել, նոյն օրը կէս օրից յետո Դոշավանքի կողքով անցել էր Արփա Ջայը,

մտել էր Ռուսական Կարմիր վանք գիւղը։ Թէև Անտոնին ու Պետրոսին շատ տարան ու բերին, վախեցրին, սպառնացրին, գրպաններն ու խանութները դարտակեցին, բայց հաստատակամ առաջնորդի սև վեղարի հովանին նրանց պահպանեց, չը կարողացան ձերբակալել, խիստ միջոցների ենթարկել։ Ոստիկանական պաշտօնականները շատ ափսոսացին, որ չէին կարողացել ժամանակին կարգին օգտուել և այնպէս կսկուծ քամել գեավուրներին, որ ոսկորների ծուծն անգամ չորանար։ Բայց արդէն ուշ էր, թռչնակը թռել էր։

—Ա՜խ, ասում էր հառաչելով Աբիշ աղան, որքա՜ն յիմարացա, ինչի՞ ես այն հարիւր ոսկին էլ կուլ չը տայի, ինչի՞ ձեռքից բաց թողնէի Յովսէփ աղայի ներկայացրած կարմիր ոսկիները....։

Օրական չորս անգամ Ալի աղան (ոստիկանատան պաշտօնակալը) գնում էր Անտօնի կրպակը և կրկնում ժպտալով.

—Ծո՛ Անտօ՛ն, ծո՛ անխի՛ղճ, անհաւա՛տ, գոնէ բեր այն օրւա հարիւր ոսկուց տաս ոսկի տուր, իննսունը քեզ փէշքեաշ։ Անխա՛ր խանութներիս շինութիւնը ինձ քանդեց, կտոր գցեց, հիւսներն ու քարտաշները ինձ կործանեցին, մի տասը ոսկով էլ է ինձ օգնի՛ր, գոնէ փոխ տուր։

Բայց ո՞վ էր լսողը, — «չը կան» հային հազարաւոր վտանգից ազատել է։ Իսկապէս Անտօնն էլ, Պետրոսն էլ իրենց դրամագլուխը դրանց կերցնելուց յետո, պարտքի տակ էլ ընկան։ Թէև մոլլաներն ու կրօնամոլ ամբոխը շատ կատաղեցին, բայց ատամները չը կարողացան խրել անմեղների սրտի խորքերը։ Անտօնն էլ

անչափ զզւած ոստիկանների բռշայութիւնից, մանաւանդ ձանձրացած կնոջ թախանձանքից ու արտասուքներից, տունը տեղը ծախեց, պարտքերը վճարեց և Թադուհիին տարաւ որդու մօտ։

Պետրոսը պարտքի տակ տքալով կօշիկները կարում, ապառիկ հագցնում, ուրախացնում էր Իսլամի իւլէմներին, վարչական գրագիրներին ու պաշտօնակալներին, օրական հարիւր անգամ գլուխ խոնարհելով։

Զ

Թադուհին Ալէքսանդրապօլ գալու պէս, քոյրը, եղբայրը, ազգականները, բարեկամները հաւաքւեցան և ստիպեցին նրան, որ Արտաշին նշանէ։ Կարգէ, կարգէ, պրծի՛ր,—կրկնում էին միաբերան,—տղան խելքի գայ։ Գոգնոցը խելք կը բերէ, դրանից ազդու դեղ ու դեղտուր չը կայ։—Թադուհին հակառակ չէր, ինքն էլ երազում էր, փափաքում էր Արտաշի թագն ու պսակը տեսնել, բայց որոնում էր մի այնպիսի անարատ կաթնակեր, որ իւր կեանքի վերջին տարիները քթից—բերնից չը բերէր։ Միակ զաւակն էր, որից ոչ կարող էր բաժանուել, ոչ էլ ուրիշ միխիթարութիւն գտնել, ուստի զգուշանում էր, որ չը սխալւի, մի անզգոյշ քայլով չը թունաւորէ կեանքը։

Արտաշը արդէն քսանի մէջ էր, յաղթանդամ և մի հոկա։ Թէև միտք չունէր կարգուելու, բայց եթէ սիրտը կպչէր, չէր էլ մերժի։ Դէս դէն ընկան հօր-

քոյրը, մօրքոյրը, մամերն ու տալները և վերջապէս մի այնպիսի գեղանի, կայտառ, մառուլի պէս ժրագլուխ աղջիկ գտան, որին Արտաշը տեսնելու պէս խելագարուեց։ Թէև համեստ արհեստաւորի աղջիկ էր, Արղութեան ուսումնարանից, բայց ծնողները մերժեցին, առարկելով, որ տղան հաստատուն գործ չունի։ Այս մերժումից կրակ ընկաւ Արտաշի սիրտը, կորցրեց իր հանգստութիւնը, անդորրութիւնը և կատաղութիւնից չէր իմանում ինչ ընթացք բռնէր։ Բայց երբ մի քանի ծայրայեղ միջոցների դիմելուց յետոյ, նրան հերոսաբար դիմաւորեց սիրած աղջիկը՝ Սիրանոյշը՝ և համարձակ ասաց.

—Արտա՛շ, ո՛չ սուրդ, ո՛չ բազուկներիդ ոյժը, ո՛չ էլ բռնութիւններդ ինձ չեն կարող որոշումս փոխել տալ,—Արտաշը սանձւած, խոնարհած թոթովեց.

—Ուրեմն քու կողերի տակ սիրտ չի՞ բաբախում, քու ջղերդ պողպատից են...

—Չէ, իմ սիրտս էլ ջղերից է հիւսւած, շատ էլ թոյլ է, զգածւող, բայց բռնութիւնների դիմադրելու էլ տոկուն։

—Ուրեմն վրդոված ես իմ արարքից, չե՞ս զգում, թէ ի՞նչն է ինձ մղում այստեղ, այս յարկի տակ, ասաց խեղճացած Արտաշը։

—Կրքե՛րդ, ասաց խստութեամբ Սիրանոյշը։ Ամուսնացող մարդը մտածողութիւն պիտի ունենա, ընտանիք պահելու, զաւակներ կրթելու և խնամելու ճանապարհները նախ պիտի յարդարէ և ապա ամուսին փնտռէ։

—Ուրեմն ես աղքատ լինելով քեզ սիրելու ըն-

դունակութիւնից զրկւա՞ծ եմ։

—Ոչ թէ աղքատ, այլ անգործ ես։

—Եթէ գործ ունենամ և ապրուստ ճարելու միջոցը գտնե՞մ....

—Եթէ գտնես, այդ մասին այն ժամանակ կարող եմ պատասխանել, ասաց ու ճանապարհ դրեց Արտաշին Սիրանոյշը։

—Ուրեմն երթամ հաց վաստակելու ճանապարհը գտնեմ, ասաց նրա եռեւից Արտաշը և դուրս եկաւ Սիրանոյշենց յարկից։ Արտաշը մոլորւեց, չգիտէր. թէ ինչ ընթացք բռնի, որ սիրոյն հասնի։

1877 թւականի բարեկենդանի օրերն էին։ Ալէքսանդրապօլը լիքն էր զինւորներով։ Փոխարքան քաղաք եկել գնացել էր։ Լօրիսը հայերին միլիցիա էր գրում։ Արտաշը այս բոլորը նկատելով չէր կարող անտարբեր մնալ։ Նրա սիրտը եռում էր, բորբոքումէր էր. պատերազմը անխուսափելի էր երևում և պատերազմը պիտի մղւէր այն անօրէնների դէմ, որոնք օրական հարիւր հազար անգամ հրապարակով քրիստոնէական օրէնքը, սրբութիւնները հայհոյում էին...։ Կռիւը պիտի մղւէր այն միւսլիմանների դէմ, որոնք քրիստոնեայի վաստակածը, զաւակները, կինը խլում, յափշտակում, իւրացնում էին և յագեցնում իրենց վայրենի զգացումները և քաղցած, տկլոր, մուրացկան և անգործ թողնում հպատակ քրիստոնեաներին։ Միթէ Սիրանոյշը նրա առաջարկը կը մերժէր, եթէ Անտօնի կարողութիւնը կողոպտած չը լինէին իսլամի պաշտօնակալները։ Պատերազմը մղւելու էր քրիստոնեաներին իսլամի զարհուրելի լծից փրկելու համար, այդպէս էլ

յայտարարուած էր, այնպէս որ այդ սուրբ գործի համար կռուելը, մինչև իսկ զոհուելը, Արտաշի համար սրբազան պարտականութիւն էր…։

Այս միտքը Արտաշը նախ յայտնեց Սիրանոյշին, իր պաշտելիին, ապա մօրը, որոնք երկուսն էլ հաւանեցան։ Բայց ո՛չ ձի ունէր, ո՛չ էլ սարք։ Թագուհին ճակատի ոսկին տուեց որդուն, որ նպատակին հասնի։ Վերջապէս մի օր ձին նստած գնաց Լօրիսի բնակարանը միլիցիայի մէջ արձանագրուելու։ Յայտնի բան է, նրա նման պնդակազմ երիտասարդին չը մերժեցին և նա ամէն օր գնում էր վարժութիւններ կատարել ընկերների հետ։ Արտաշը միլիցիականի շորը հագնելուց յետո, թէև Թագուհին զղջաց, շատ արտասուեց և Անտոնը այնչափ թախանձեց, բայց զուր, Արտաշը իր վճիռը չը փոխեց։ Նրա սիրտը խոր վէրքերով էին խոցել, լեղին նրան կաթսաներով էին խմացրել, իսկ մի այսպիսի առթից միթէ կարող էր խոյս տալ և սուրբ պարտքը չը կատարել։

Հասաւ Զատիկը և վերջապէս Ապրիլի տասնևմէկը։ Արդէն սկսուեց պատերազմական գործողութիւնները և զօրքը սահմանը՝ Արփա Չայը անցաւ։ Արդէն վաղ կարգադրութիւն եղած էր, որ միլիցիան պատրաստ լինի, որպէս զի առաջ անցնի, ճանապարհ բանայ ուտելիքի և ուրիշ կարևոր նիւթերի մասին տեղեկութիւններ բերի, թրքական բանակն ու զօրքերը, գիւղերն, աւա՛ններն ու բերդերը լրտեսի։ Թագուհին գիտէր, որ նոյն գիշերը զաւակը անցնելու էր սահմանը, ուստի ողջ օրը չէր դադարել և սպասել էր Արտաշի ձի նստելուն։

—Որդի՛, ասաց խեղդուած ձայնով, երբ Արտաշը ձին նստեց, գնում ես, գնա՛, բան չունիմ ասելու, գնա՛, պարտքդ կատարէ։ Բայց զգուշացի՛ր, մի՛ գլորուի՛ր սրերի ու գնդակների մէջ, կեանքդ խնայի՛ր, պահպանի՛ր, թէ չէ…

—Ինչի՞ ես խելագարուել, ինչի՞ ես հեկեկում, մայրի՛կ, ինչի՞ ես արտասւում…։ Էլ ինչի՞ եմ գնում, մարդ խաբելո՞ւ, թէ պարտքս կատարելու։ Ո՞վ էր գլուխս թաս անցնում, որ անպատճառ գնամ…։ Ես իմ յօժար կամքով գնում եմ, որ պարտքս կատարեմ և սուրբ նպատակիս հասնիմ։ Թո՛ղ Կարսը, մեր ազգակիցները ազատուին իսլամի լծից, ի՞նչ վնաս, եթէ ես այդ ճանապարհի վրա զոհուիմ։

—Ա՜խ, ես գիտեմ, թէ դու որքան յանդուգն ես… կրակի մէջ ես միշտ գլորուելու…։

—Բայց եթէ թուրքերը Ալէքսանդրապօլ մըտնեն, քեզ էլ, Սիրանոյշին էլ, նրա նման հազարաւոր աղջիկներ ու մատղաշներ իրենց հարէմները գերի են վարելու և ամբողջ աշխարհը աղի արտասուքների և դառն հառաչանքների են մատնելու։ Սուրբ խաչը ոտքի տակ կը տան, սուրբ գրքերը և պատկերներն աղբանոց կը շպրտեն…։

—Դու ինձ խելառցրիր, որդի՛։

—Դու ինձ ծնել ես, լաւ էլ հասկանում ես. հերիք է ճանուր չալես։ Ասաց ու մտրակեց ձին՝ ընկերներին հասնելու։ Ամէնքը բարի ճանապարհ մաղթեցին և Արտաշը սրընթաց սլացաւ և փողոցներից անցնելով աներևութացաւ իրան հետևող աչքերից։ Նոյն գիշերը Արտաշը Քիշմիշեվի անձնական պահակում տեղ

բռնած, անցաւ սահմանը և մտան Շիրակի ընդարձակ դաշտավայրը։ Պէտք էր տեսնել թէ ինչ աստիճանի ոգևորութիւն էր տիրում միլիցիականների մէջ և որքան ուրախ մտրակում էին երիվարներին։ Բանակն օրից օր առաջ էր գնում և միլիցիաները մրջիւնի նման հասնում մտնում էին այս գիւղը, այն ձորը, միւս լեռը, ջրաղացը և փայլակի արագութեամբ կատարում էին մեծաւորի հրամանները։

Մի միւսլիման գիւղի խոտի դէզերում պահուած երկու կրօնամոլ սօֆթաներ Արտաշի վրա հրացան արձակեցին և սրունքից վիրաւորեցին, երբ միլիցիաները աշխատում էին գիւղացիների ծերերին ստիպել, ընդառաջելու Արծուի բանակին։ Արտաշը բորբոքուած առանց ձիուց իջնելու, մօտեցաւ դէզին կրակ տուեց և հրացանը ձեռքին՝ պահապան կանգնած՝ գոռաց. Եթէ դուրս գաք թագուստից, գնդակներս ուղղելու եմ ձեր կրծքին։ Զոր խոտի բոցերի մէջ խանձւեցին, խեղդուեցին և այրուելով մոխիր դարձան թակարդ մտածները։ Կրակի բոցերին զոհուածների ազգականներից մէկը մի գնդակ ևս հասցրեց Արտաշին, որի կողը ծակեց անցաւ, բայց այնքան արիւն էր կորցրել խեղճը, որ ուշքն անցաւ, չը կարողացաւ հրացանը դատարկել չարագործի վրա։ Արտաշի ընկերներից մէկը նրան հեռացնելու ճարը մտածելիս միւսը վրէժը լուծեց և ետ դարձան, մի սայլ լցնել տալով՝ վիրաւորին տարան հիւանդանոցի վրանները։ Վէրքերը այնքան ծանր էին, Արտաշը այնպէս ուժից ընկել էր, որ նրան տեղափոխեցին Ալէքսանդրապօլի հիւանդանոցը։ Թէև երկու Գէորգի խաչ էր ստացել Արտաշը, բայց տասնևհինգ օրից յետոյ անգամ ոտ-

քի կանգնելու, հագնուելու հնարաւորութիւն չունեցաւ, որ գոնէ կուրծքը զարդարող այդ նշանները Սիրանոյշին ցոյց տար, նրան հրապուրէր և խոնարհեցնէր, զիջանել տար առաջարկը ընդունելու։ Տասն և հինգ օր էր, որ գտնւում էր Ալէքսանդրապօլի հիւանդանոցում, բայց ծնողները, ազգականները բանից տեղեակ չէին։ Վերջապէս երբ վէրքերը բաւական լաւացան և Արտաշը կազդուրուելով, կորցրած արիւնը վերստանալով բաւական առուգացաւ, մի տոմսակ գրելով ծնողներին՝ կանչեց հիւանդանոց։

Ամբողջ մի ամիս գլխաւոր բժիշկը թոյլ չը տուեց Արտաշին հիւանդանոցից դուրս գալ։ Երբ արդէն առողջացած՝ սկսեց կանգնել, ման գալ, նրան թոյլ տուին որ ծնողների մօտ ապրի։ Յուլիս և Օգոստոս ամիսները Արտաշը մնաց ծնողների մօտ, ամէն օր գլխաւոր բժշկին ներկայանալով, դեղեր ստանալով և վէրքը կապել տալով։ Արտաշի բարձր հասակին, լայն կրծքին, բարակ մէջքին խիստ սազ էր գալիս արծաթ ֆիշանգլըղները, քամարը և սուրը։ Նա այդպէս զարդարուած՝ Սիրանոյշենց դռնից անցնելիս, նւազ չէր հետաքրքրում յամառ օրիորդին, որը պնդում էր պահանջի վրա։ Բայց օրէ-օրից աւելի հետաքրքրում էր Արտաշին պատերազմը. օրից օր նոր նոր զօրքեր էին գալիս և մտնում թշնամու հողը, իսկ այնտեղից անթիւ անհամար գերիներ էին բերում և վիրաւորներ կրում։

Այդ տեսարանները Արտաշին հոգւով սլացնում էին դէպի պատերազմի դաշտը, նրա խելքը միտքը ընկերակիցների և բանակի աղմուկների հետ էր։ Անտօնն ու Թագուհին ինչ միջոցի դիմեցին, որ նրա մտքից հա-

նեն պատերազմը, բայց նա ամէն րոպէ վերադառնալու մասին էր խորհում։ Աստուածածնի տօնին «եօթվէրաց» խոստացած մատաղը տալուց յետո, Արտաշը ճանապարհ ընկաւ։

—Որդի՛, ասաց Անտօնը, երբ Արտաշը ձին թամքած պատրաստւում էր դիմել դէպի բանակ, դու քու պարտքը կատարեցիր, դու այն արիր, ինչ որ խիղճդ քեզ թելադրեց և պարտքից ազատւեցիր։ Հերիք է, մի՛ սգացնել մեզ, մի լացացնել մօրդ, որի արտասուքը քո բացակայութեան ես ինչո՞վ սրտի ամոքեմ...։

—Ո՛չ, հայրի՛կ, ես խղճիս չեմ կարող խաբել։ Պատերազմը շարունակւում է և Կարսում Օսմանն ու Ալին կեղեքում, կողոպտում են և միջնաբերդից ցած են գլորում քու հօրեղբօր զաւակներին, ամէն օր հայհոյելով մեր Խաչն ու օրէնքը, մեր տոհմն ու ցեղը։

Արտաշը առանց ուշք դարձնելու սլացաւ։

Է

Արտաշը նորից մտաւ Քիշմիշևի պահակների շարքը և որպէս անվեհեր զինւոր, ամենավտանգաւոր յանձնարարութիւնները նրան էր տալիս նոյն ինքը միլիցիայի հրամանատարը։ Օրից օր ոչ միայն աներկիւղ գործավարութեամբ, քաջարի կռիւներով մեծաւորների աչքը մտաւ, այլ անշահասէր բարքով, մի միայն խոլամի կրօնական սոսկալի լծից եղբայրներին ազատելու անկեղծ ձգտումով, ընկերներին օրինակ դարձած անձնազոհու-

թիւններով բանակի մէջ պաշտելի մարդ դարձաւ։ Ամենավտանգաւոր յանձնարարութիւնները կատարելով, ամենակատաղի կռիւներին մասնակցելով բանակի հետ Կարսի պաշարման մասնակցեց, մինչև բերդին տիրելը։

Զարհուրելի էին յարձակման օրերը, թնդանօթների որոտումը, գնդակների օդի միջից սլանալով անցնիլը, ճաքճաքելը և ցրւիլը, հրացանների անվերջ որոտը, ծուխը և վառօդի սոսկալի հոտը տիրել էր քաղաքի սարերին ու մարտկոցներին։ Բայց էլ սոսկալի և էլ սրտաճմլիկ էին քաղաքի աւարի օրերը։ Կարսից հալածւածները, Թրքերի—մօլլաների հարստահարութիւններին, զրկանքներին և անգթութիւններին մատնւած բնիկներից քաջասիրտ հայերը մտնում էին հարուստ միւսլիմանների, մանաւանդ աստիճանաւորների տները և ինչպէս էին կողոպտում։ Եւ ի՛նչ թանկագին աւար էին տանում...։ Ինչպէս խարխալում էին տների կանանոցի թէ հիւրանոցի ամէն մի անկիւնը, ծակը—ճեղը և ընտրութեամբ յափշտակում թանկագինը և հազւագիւտը, արծաթն ու ոսկին, գոհարն ու մարգարիտը։ Կրակի բոցերի մէջ դարերով ճենճրթած թշւառները, ձեռք բերած առթից առատութեամբ և լիուլի օգտւելու տենչով հասնում էին, մտնում էին, ուր կարող էին ենթադրել թէ դիզւած կարողութիւն կա։ Տարիների ընթացքում խոլամի պաշտօնակալների, անգթաբար իրենցից կորզած և կաշիները մաշկելով գլլածների փոխարէնը ուզում էին ետ առնել այդ երեք օրում, դուրս քաշել էին տքնում, սրտերը հովացնելու և հանգստացնելու տենչով։

Աւարառուներից մի քանիսը հաւաքւել էին

Աբիշ աղաի՝ ոստիկանապետի դուռը, որոնց փակերն ու նիգերը չը դիմացան միլիցիականների սրերին: Վայնասունը ընկել էր կանանոցը, ամէն մէկը ողբում էր իր սև օրը: Սրտաճմլիկ էր տեսարանը, կանանց ողբն ու կոծը քարերին անգամ գութ էր ներշնչում, իսկ աւարառուները անզգայացած դուրս էին կրում ինչ որ թեթև էր քաշով և ծանր գնով: Միլիցիաները դաշոյնը դրած մատաղահաս թրքուհիների կրծքին, պատառում էին նրանց շորերը, մահ էին սպառնում և պահանջում էին, որ ցոյց տան գանձերի տեղերը: Թշուառ կանայք սարսափից, առանց վախենալու իրենց տէրերի և սկեսուրների սպառնալիքից, յանձնում էին միլիցիաներին իրար ետևից սնդուկներն ու արկղները, մետաքսեղէնն ու գոհարները:

—Անօրէննե՛ր, գոռում էր մի դաժանահայեաց միլիցիա, մենք ձեզ չենք ստիպում, որ թողնէք ձեր կրօնը և մերը դաւանէք, մենք չենք պարտաւորացընում որ գաք մեր տները գերութիւն անէք, ձրի ծառայէք, ձեզանից չենք խլում ձեր հարսներն ու աղջիկները, տղերքը, մատղաշները, այլ պահանջում ենք որ մեզ ետ դարձնէք այն հարստութիւնը, որ դիզել էք մեզ կեղեքելով: Ձերը ձեզի, մեզնից յափշտակուածները վերադարձրէք: Անգութնե՛ր, եթէ դուք Ալէքսանդրապօլի տիրանոյիք, խօ չէի՛ք խնայել մեզ, մեր աղջիկներն ու տղերքը մինչև Սթամբօլ, Մըսըր, Բաղդադ ու Մէքքէ գերի էիք վարելու, հարէմները ճոխացնելու:

Տունը կարգին մերկացնելուց յետոյ, ոստիկանապետից պահանջում էին միլիցիականները, որ գանձերը

յանձնէ: Բայց հոգի խո՞ չէր, որ Թուրք պաշտօնականը իսկոյն հանէր, յանձնէր: Ընկել էին այս ու այն կողմը ոսկու քսակները որոնում, բայց ահագին տան ո՞ր անկիւնում կարող էին գտնել: Սարգիսն ու Գոգորը դաշոյնները քաշած դրել էին Աբիշ աղաի ճարպալի փորին, մահ էին սպառնում, իսկ պորտաբոյծ պաշտօնականը մի կողքին ընկած, կատուի ճանկերի տակ սուս գանձերն էին պահանջում, սատկել ձևացնող մկի նման, ոչ միայն չէր պատասխանում, այլ ձևացնում էր թէ իբր ուշքն անցել, մարել է:

Այս միջոցին ներս մտաւ Արտաշը, որին նկատելու պէս մի կողմ քաշուեցին միլիցիականները: Չորս կողմը զննելուց յետոյ Արտաշը ասաց.

—Տղե՛րք, դուրս գնացէք, սրա դատաստանը ինձ թողէք:

Աբիշ—աղան, որ մինչ այդ չէր էլ շարժւում, Արտաշին նկատելու պէս օձի նման գալարուեց, սողալով փաթաթուեց նրա ոտքերն ու ասաց.

—Արտա՛շ, ոտքերդ եմ ընկել, մորթի՛ր, քերթի՛ր, ինձ էլ, զաւակներիս էլ, ի՛նչ ուզում ես արա, միայն թէ ինձ ազատիր այս մարդերից:

Արտաշը մի այնպիսի ձև արաւ, այնպէս դէմքը կնճռեց, որ բոլորը իսկոյն դուրս գնացին, հեռացան: Աբիշ—աղան արտասուքով թրջում էր Արտաշի ոտքերը և կրկնում,—քեզ եմ յանձնւում, արա՛ ինչպէս կամենում ես:

—Վե՛ր կաց, ոտք ելի՛ր. հաւաքի՛ր մանր ու խոշորդ, գնանք մեր տունը: Այստեղ կեանքդ վտանգի մէջ է: Այնքան մարդ ես լացացրել, որ վրէժխնդիրնե-

րիդ թիւը մօրուքիդ ու մազիդ թելերի համրանքից շատ է։

Արիշ — տղան կնոջը, հարճերին, զաւակներին առաջը խառնած, Արտաշի ընկերակցութեամբ գնաց ուստա Պետրոսի տունը։ Արտաշը նրա տան թանկագին իրերը և գանձերը նոյնպէս փոխադրեց վարպետի տունը և այնտեղ պահեց ութ-տասն օր, մինչև որ քաղաքը բոլորովին խաղաղուեց։

Չորս ամիս չանցած, արդէն խաղաղութեան դաշը կապուեց, Արտաշի միակ իղձը կատարուեց. Խաչը յաղթանակը տարաւ, Մահիկը խոնարհուեց, ընկաւ ոտքի տակ և Արտաշի ծննդավայրը՝ Կարուց բերդը իսլամի ճիրաններից ազատուելով, հազարաւոր քրիստոնեաներ միւսլիմների բռնութիւնից, կրօնական լծից, Ղուրանի ստրկութիւնից ազատուեց։ Անտօնը, Թադուհին շտապել էին իրենց որդու ետևից և բնակութիւն հաստատել իրենց հին բնակարանում, որը գնող թուրքը զիջաւ նրանց կիսագնի։ Մի առաւօտ Անտօնը առանձին գտնելով Արտաշին, խօսակցութեան ոճով սկսեց խրատել։

— Է՛հ, որդիս, ամէն բան վերջացաւ, ամէն բաղձանքդ կատարուեց, պատերազմի դաշտը, երկիրներ, մանգաղ, խաչ, մետալ, ռոճիկ, փող, ամէն բան առատութեամբ տեսար։ Այժմ պէտք է կարգի բերես գործերդ, որ ապագային չը զղջաս։ Արդէն խաղաղութեան դաշը կապուել է, այլևս միլիցիայի կարիք չը կայ, շուտով կը ցր-

ուին։ Իսկ մեզ նման արհեստաւորներին, օրավարձի ծառայողներին, ինչ կը յարմարի ռոճկով ապրուստի ձգտել։ Կամաց-կամաց արհեստանոցը կարգի բերելու է, որպէս զի ուրիշի օգնութեան կարօտ չը մնանք։

— Շատ լաւ ես ասում, հայրիկ, ես էլ քանի օր է միևնոյն բանն եմ մտածում, թէ պէտք է հրաժարական տալ, քանի որ պատերազմը դադարեց, մի լաւ խանութ բռնենք, գործիքներս սարքեմ և սկսիմ բանիլ։

Ինձ եթէ խորհուրդ հարցնես, մի ընկեր գտնելը շատ ձեռնտու է, ասաց Անտօնը, քանի որ նոր արհեստանոց բաց անելը առանց բանուոր աշկերտի, առանց սովորական յաճախորդի դժուար է։ Ուղիղ է, տարին յաջողակ է, լաւ գործ ունին կօշկակարները, և այնպէս ապահով և հիմնական գործի համար պէտք է հաստատուն բան սկսիլ։

— Ուղիղ է, հայրիկ, բայց այժմ ամէն մարդ յաջող գործ ունի, ոչ ոք չի զիջանիլ ինձ ընկեր ընդունիլ։ Բանուոր դառնալ էլ ինձ հաճելի չէ։

— Ես կարծում եմ, կնքահայրդ, ուստա Պետրոսը կը համաձայնի։

Արտաշը համոզուեց, որ Պետրոսը կը համաձայնի։ Երկար խորհելուց յետոյ, այն եզրակացութեան հասաւ, որ եթէ վարպետը հմտութեան առաւելութիւն ունի, ինքն էլ ժրաջանութեամբ կարող է փոխարինել, եթէ նա բնիկներից յաճախորդ ունի, ինքն էլ ծանօթ ծառայողներին, աստիճանաւորներին և վաճառականներին կարող էր ձգել իր կողմը և զուգակշռել վարպետի առաւելութեանը։ Երկար խորհրդակցելուց յետոյ, կանչեցին և յայտնեցին իրենց նպատակը Պետրոսին։

—Որդի՛ս, ասաց վարպետը, ես ոչ թէ համաձայն, այլ անչափ ուրախ եմ, որ կարողանում եմ քեզ հետ միասին արհեստանոց ունենալ: Այդ բանը շատ յաջող վախճան կունենա, եթէ դու թողած լինես նախկին գժուութիւններդ, եթէ իսպառ նրանցից հեռանաս: Եթէ խօսք կը տաս, այսօրւանից ընկեր ես, հաւասար կը կիսենք մեր վաստակը, միայն դու էլ այնքան դրամագլուխ բերելու ես, որքան ես ունիմ: Բայց եթէ երեք չորս ամիս յետոյ կրկին միլիցիա ես գրւելու, կամ թէ Օսմանի, Ալու փոխարէն Իվանին ու Անտրէին ես թակելու, գլուխնիս կրակի մէջ գցելու, աւելի լաւ է մի՛ մըտնել իմ արհեստանոցը: Օսմանլուի ժամանակ քաշած տուգանքները բաւական է:

—Կնքահա՛յր, մեզանից ո՞ր մէկը ջահել չէ եղել, չէ ունեցել իր խելագար շրջանը, չէ ապրել երևակայութիւններով: Անցածը մոռացիր և պայմաններդ կապեցէք:

Պետրոսն ու Արտաշը պայմանաւորւեցան: Արտաշը պատերազմի դաշտում վաստակածը դրեց արհեստանոցի կասսը և Մարտի սկզբից գործի կպաւ: Բայց Արտաշի սիրտը չէր խաղաղւում. գիշեր ցերեկ Սիրանոյշը նրա աչքից չէր հեռանում, տանը թէ արհեստանոցում երբ յիշում էր, այնպէս խոր սրտով հառաչում էր, որ կարծես կրակ ու բոց էր վիժում, դուրս ցայտում նրա բերանից: Արհեստանոցի գործերը շատ յաջող էին գնում, կարգին փող էին շահում, խաղաղ բանում էին, ոչ պարտք ունէին, ոչ էլ միւսլիմները գալիս ձրի կամ ապառիկ կօշիկներ էին դուրս տանում: Պետրոսը իրար ետևից երկու անգամ Արտա-

շին Թիֆլիս ուղարկեց կաշեղէն ապրանք բերելու և երեք չորս ամսի ընթացքում ծախեցին ու սպառեցին և Սեպտեմբերին նորից ճանապարհ ընկաւ դէպի Թիֆլիս ապրանքի:

Առաջին երկու ճանապարհորդութեան ժամանակ էլ Արտաշը հանդիպել էր Սիրանոյշին և յայտնել էր գործերի ընթացքը: Այս երրորդ անգամին օրիորդից կիսով չափ համաձայնութիւն ստացել էր և սլացել Թիֆլիս: Վերադարձին Անտօնը, Թագուհին դիմաւորեցին Արտաշին Ալէքսանդրապօլում, ուխտերը կատարեցին, Արտաշի Թիֆլիսից բերած զարդերով պաշտօնական նշան դրին և մի ամսից յետոյ եկան Ղարս տարան և հարսանիք արին: Սիրանոյշն ստիպեց Արտաշին իր առարջարկը կատարել, գործի կպչիլ և երբ համոզւեց, որ նա նստել ու աշխատել գիտէ, ինչպէս կռւի դաշտում աներկիւղ գործել գիտէր, ուրախ իր սիրտը տւեց երիտասարդին և հոգւով նրա հետ կապւեցաւ, որին վաղուց սիրել էր:

Ը

Ամբողջ երկու տարի հրաշալի գործ ունեցան Պետրոսն ու Արտաշը, տները կարգին պահելուց բացի, հինգ հարիւր րուբլի էլ կիսեցին: Բայց երրորդ տարին սովի հետ ճգնաժամն էլ վրա հասաւ, քաղցը ճիրանները

ցել էր ամէն տեղ, ամէն մարդ աշխատում էր ծախսերը կրճատել, կիսամաշներով, կարկատածներով եօլա գնալ։

Պատերազմին յատուկ առատ վարձերը—ռոճիկները անչափ խուզել էին, պաշտօնական աստիճանաւորները, զինուորականները համարեա թէ շռայլելու սովորած գրամի քառորդն անգամ հազիւ էին ռոճիկ ստանում և անճարացած հաշիւ էին բաց անել տալիս խանութւորներին և արհեստաւորներին։ Այս ընթացքից անհնար էր խուսափել, քանի որ ծառայողների մեծագոյն մասը նոյն հոսանքով գնում էին։ Մեծամեծ պաշտօնակալները մեծ ռոճիկ ստանալով՝ չէին կարողանում բաւարարութիւն տալ իրենց արտաքո կարգի շռայլութիւններին, մոլութիւններին և պարտաւորուած էին ձեռք մեկնել իրենց կառավարչութեան յանձնուած տնտեսական մթերքներին, գներից, քանակներից և որակներից անդադար զեղչումներ կատարելով։ Սրանց օգնականները իրենց դիրքի համաձայն հարստահարում էին պետական վարչութիւններին-նիւթեր մատակարարողներին, որպէսզի անխնա շռայլելուց չը զրկուին, իսկ էլ ստորադրեալները փոխառնութեան և ապառիկի անուան տակ կեղեքում էին խանութւորներին, ամէն տեղ գոռալով, որ իրենք հարստահարւում են խանութւորներից։

Այս վերջին հոսանքի մէջ էր Պոլիցեական թարգման Ղուլամ-Ալի-Բէգը, որը երեսուն հինգ րուբլի ռոճկով պարտաւորուած էր լաւ հագնուել, տան վարձ վճարել, կին և զաւակներ կերակրել, հագցնել, պախին պահել և ծառային էլ ամսական գոնէ ութը րուբ-

լի ռոճիկ տալ։ Դեռ մի պոլիցեական էլ քաղաքից ռոճիկ ստանալով՝ նրա տանը ծառայում էր։ Հացթուխն էլ, մսավաճառն էլ, նպարավաճառն էլ, մրգավաճառն էլ, դերձակն էլ, կօշկակարն էլ պարտաւորուած էին իրենց առևտուրը պահպանելու, յաճախորդների թիւը մեծացընելու յուսով՝ ապառիկ իրենց բարին բաց թողնել. իսկ երեսուն հինգ րուբլի գումարով ինչպէս պիտի լրացնէ այն ահաւոր պահանջը, որ պարտ էր մնում ամէն ամիս խանութւորներին։ Բայց և այնպէս Ղուլամ-Ալի բէգը հնարքը գտնում էր, որին փողէր տալիս, որին յոյս, որի գործն էր տեսնում, որին՝ օգնութիւնը խոստանում, որին էլ սպառնում և առատ բարիքների մէջ լըլումէր։

Մի անգամ Ղուլամ-Ալին մի զոյգ երկայնավիզ կօշիկ ապսպրեց Արտաշին տասնուչորս րուբլու, պատուիրելով որ որոշուած օրը տուն տանի և փողերն ստանա։ Արտաշը պատրաստելով ապսպրանքը ժամանակին տունը տարաւ. Թարգմանը նախ քիչ քըթմնջեց թէ կաշին լաւը չէ, կարճ է, սեղմում է ոտքերը և ուրիշ պատճառաբանութիւններ, որպէսզի կօշկակարին ճնշէ, ստիպէ իր պայմանը ընդունելու։ Բայց Արտաշը այդ դասերը Օսմանցուի աստիճանաւորներից այնպէս լաւ էր սովորել, որ, ըմբռնելով ապսպրանքը, տուողի հոգեկան աշխարհը, ամէն մի պատճառաբանութիւնը քառասուն փաստով էր հերքում։ Վերջապէս Ղուլամ-Ալին հագաւ կօշիկները և Արտաշի երեսի պնդութիւնից, կրծքի կրկնակի խաչերի ազդեցութիւնից խոնարհուած, ձեռքը գրպանը տարաւ և անճարացած քսակը հանեց ասելով.

—Արտա՛շ, հակառակի նման երէկ փողերս պարտատէրներիս բաժանեցի, ընդամէնը չորս ռուբլի ունիմ։ Առ՛, այս էլ քեզ, իսկ տասը ռուբլէդ ամսի քսանին։

—Ախար այսօր քսանումէկն է։

—Ձը գիտե՞ս, որ մեր ռոճիկը մեր գրպանը չը մտած ցրւում ենք պարտատէրներիս։ Իսկ ռոճիկս նորից ստանելուեմ գալ ամսի քսանին, կը գաս, կստանաս։

Թէև անչափ զայրացաւ Արտաշը, թէև ապառիկ առևտուրը իր սկզբունքին բոլորովին հակառակ էր, բայց ճարահատեալ ստիպւեց համբերել և զիջաւ, չորս ռուբլին ստացաւ և դուրս գալիս կրկնեց.

—Մենք ապառիկ գործ չենք կարող անել, բայց քու խաթեր, որպէս պատերազմի դաշտի ընկերակցի, մնա։ Միայն թէ անպատճառ ամսի քսանին վճարես, որպէսզի մենք էլ կառավարւենք։

—Անհոգ եղի՛ր, կտամ, անպատճառ կըվճարեմ։

—Մենք վաճառական չենք, ապառիկի՛ տումար չունենք, եթէ ապրանքը այդպէս բաց թողնենք, սոված կմնանք։

—Ոչինչ, մի կերպ եօլա գնա։ Արտա՛շ, ամսի քսանին...

Արտաշը չլսեց նրա վերջին խօսքերը, վրդոված դուրս եկաւ և ուղղւեց դէպ արհեստանոց։ Երբ Պետրոսին տեսաւ, համբերութիւնը կտրւած, ասաց տխրալի.

—Երբ պիտի ազատւենք մենք այս ձրիակերներից։ Ռուսն էլ եկաւ, էլ՞ չպրծանք այս անկուշտ թուրքերից։ Այս ինչ՞ վիճակ է....։

—Առանց ապառիկի, առանց վնասների գործ առաջ չի երթալ։ Համբերութիւն ունեցիր, թո՛ղ նա մեզանից ամաչէ, խեղճանա և գլուխը վար կախէ, գացող ամսի տասին վճարէ։

Որոշեալ օրը Արտաշը ներկայացաւ Ղուլամ-Ալիին նրա բնակարանում, կէսօրից յետո։ Ղուլամ-Ալին փոխանակ խնդրելու և անուշութեամբ վարւելու, սաստիկ բորբոքւեց։ Մանաւանդ որ տանը իր ընկերակիցներից ունէր, դեռ ուրիշ պահանջատէրներ էլ սպասում էին դրան մօտերքը։

—Էլ ո՞վ պահանջ չունի, էլ ո՞վ պարտք չունի միթէ՞ կարելի է մինչև սրահը ներս մտնել, այն էլ հիւրերի ներկայութեան։

—Ներողութիւն, ասաց Արտաշը, դրանք բոլորը ինձ ծանօթ են, միասին ծառայել ենք բանակում։ Իսկ եթէ քեզ պատիւ չի բերում իմ այցս, այն էլ պահանջս ստանալու համար, տո՛ւր, էլ այստեղ ինձ չես տեսնիլ։

—Այսօր գնա, դեռ փող չկայ, ես մի բան կանեմ և կբերեմ։

—Ես, հաւատացի՛ր, առանց փողի դուրս գնացողը չեմ։

—Այդ ինչ աներեսութիւն է, ասաց ու հրեց Ղուլամ-Ալին Արտաշին դէպի դուրս։

Արտաշը բորբոքւեց, բռնեց ոլորեց Ղուլամ Ալիին պառկացրեց, արծաթ գոտին, դաշոյնը — պատրոնները վեր առաւ և քայլերը ուղղեց դէպի դուրս։ Ղուլամ-Ալիի բարեկամները — թուրք ծառայողները, որոնք պատերազմի դաշտում իսկ տեսել էին Արտաշի

թևերի ույժը, բռնեցին Թարգմանին և Թույլ չտվին, որ նրա ողնաշարը ճմրտա Արտաշի Թաթերի տակ: Մի ժամ յետո, դրանցից մի աստիճանաւոր մտաւ արհեստանոց, վճարեց Ղուլամ-Ալիի պարտքը, եւ տարաւ քամարն ու դաշոյնը:

Բայց այս գանձումը էժան չը նստեց Արտաշին: Հաշտարար դատաւորը Ղուլամ-Ալիի բողոքի համաձայն, նկատի առնելով մեղմացուցիչ պարագաները, Արտաշին ենթարկեց 25 րուբլի տուգանքի և 24 ժամ պոլիցիական արգելքի: Այնպէս որ, այս *процентը* հարիւր րուբլուց թանգ նստաւ: Պետրոսը այդ բոլորից ընկճւած կրկնում էր, — Ահա քու տւած օգուտը, տասնի փոխարէն հարիւր վճարեցիր:

— Այդ հարիւրը ես ուրախութեամբ իմ քսակից կը վճարեմ, միայն թէ իմ աշխատութիւնս չլափեն այդ ձրիակերները: Մի թէ կարելի է թողնել, որ դրանք անսանձ կեղեքեն արհեստաւորներին: Ես չի բողոքեմ, ուժեղը չբողոքէ, խղճալին ինչ անէ, էլ ո՞վ պիտի պաշտպանէ թշւառի իրաւունքը:

Որպէսզի գործերը չկաղան, Պետրոսը հարկ էր համարում ապառիկ ապրանք ծախել կարևոր դէպքին, բայց որովհետև այդ հանգամանքից վէճեր առաջացան, Արտաշը պնդում էր ոչքի ապառիկ բաց չը թողնել, մինչև անգամ առանց փողերը կանխիկ ստանալու, ապրանքը արհեստանոցից դուրս չտալ: Այս մտքի հետ չկարողացաւ հաշտուել Պետրոսը և բանն այնտեղ հասաւ, որ ընկերութեան երրորդ տարին չլրացած՝ նրանք բաժանւեցան: Արտաշը իրեն համար առանձին արհեստանոց բացեց կամուրջի գլուխը, ամէն տե-

սակ ապրանք բերել տւեց գործարաններից, կարգի դրեց արհեստանոցը և սկսեց անկախ շարունակել իւր գործը:

Որպէսզի վէճ չունենա յաճախորդների հետ Արտաշը իրեն օրէնքը էր սահմանել՝ գործերն ընդունել առանց սակարկութեան և այդպէս էլ յայտարարել էլ խանթի թէ դրսի, թէ ներսի կողմը խոշոր տառերով: Որպէսզի կռւի չը բռնւի, նա արհեստանոցի ամէն մի կողմը, անկիւնը կախել էր զանազան, լեզուներով յայտարարութիւն՝ որ *[illegible]* չի ծախում և այնքան հաստատ էր այս երկու պարագայումն էլ, որ նրա յաճախորդները վարժւել էին: Բայց որովհետև անխարդախ և ամէնից էժան ապրանք էր ծախում, ամէն մարդ դիմում էր նրա արհեստանոցը:

IX

Իննսնական Թւականին, մի օր առաւօտը վաղ, Արտաշի արհեստանոցը մտաւ մի անծանօթ մարդ եւրոպական տարազով ու գտակով: Արտաշը նրան ոտքից դըլուխը գննելուց յետո, երբ անծանօթը ժպտած, Արտաշը տեղից թռաւ, գրկեց, համբուրեց ու ասաց:

— Վա՛րդ, Վա՛րդ, դու այս ո՞ր տեղերն էիր, ո՞ր երկիրներն էիր ման գալիս. որ ո՛չ հետքդ էր երևում, ո՛չ համբաւդ մեզ հասնում: Ա՜խ, իմ սիրելի Վարդս, այս ո՞րտեղ էիր, այս դու ինչպէ՞ս բուսար այս-

տեղ, որտեղի՞ց իջար։

—Ես հաւատացած էի, միշտ երևակայում էի, միշտ աչքիս առաջն էիր դու, Արտա՛շ, ճիշդ այն բնաւորութեամբ, ինչպէս տեսնում եմ, ճիշտ այն հոգւով, ինչպէս Տէր-Մանուէլի վարժարանում, միշտ պա՛րզ, միշտ անձնուէր…։ Տարիները ոչինչ չեն խլել քեզանից, թէև պեխդ, մօրուքդ թաւացել է, բայց սիրտդ, հոգիդ դարձեալ նոյն եմ տեսնում…։ Ա՜խ, որքա՛ն տարիներ է անցել։

—Որքա՛ն, շատ-շատ հինգ, վեց, եօթը…

—Այո՛, ճիշդ տասն և եօթը…

—Ծօ՛, վազիր, գնա՛ մի ղայֆա պատւիրիր, շո՛ւտ, ասաց Արտաշը աշկերտին և Վարդին իր մօտը տեղաւորելով բազմոցի վրա, ասաց.

—Դէհ, պատմիր, պատմիր, ինչպէ՞ս ես, ի՞նչ կա, ի՞նչ չկայ։ Առողջութիւնդ, վիճակդ չեմ հարցընում- տեսնում եմ, որ կարգին է։

—Շատ լաւ է, Արտա՛շ, ասաց հառաչելով Վարդը, շատ պինդ ու առողջ, ի՞նչ պէտի լինի աշխարհի վիճակը…

—Ասա՛, տեսնեմ, որտե՞ղ էիր այսքան ժամանակ, ի՞նչ էիր շինում։ Ինչպէս տեսնում եմ շատ ցաւ, շատ վիշտ ես կրել, մազերդ ճերմկել են, կնճիռներդ խորացել, այն ինչ երեսուն տարիդ դեռ չես անցկացրել։

—Է՜․ բան չունիս, դրանց էլ կհասնինք ժամանակ շատ կա։

—Է՜յ գիտի անուշիկ Վարդս, եթէ այն գիշերը քլունգը չհասցնէիր, ինձ մոլլաները կախել, լեզուս արմատից հանել, պրծել էին։ Ինչպէ՞ս ինձ փրկեցիր,

հրեշտակի պէս հասար, ազատեցիր բարբարոսների ճանկից։

—Թո՛ղ տուր, հոգիդ սիրես, մի՛ յիշեցնիլ ինձ այդ անցեալը։

—Մայրս մինչև օրս չի հաւատում, թէ դու ինձ փրկեցիր։ Նա կարծում է, որ Սուրբ Սարգիսը քու շորերով եկել ինձ ազատել է։ Այս նախապաշարուած կանայք ուղղելի չեն, երբէք չէք կարող իրենց սնոտիապաշտութիւնից հեռացնել։

—Բան չունիս, թո՛ղ այնպէս էլ հաւատան։

—Երբ քլունգն ու լծակը յանձնեցի մօրս և ասացի առաւօտ ձեր տուն զրկէ, նա դարձեալ կասկածում էր և որպէս երկնքից-սրբից ուղարկուած զէնքեր, համբուրում էր այդ գործիքները։ Էլ չգիտեմ ձեր տուն զրկեց, թէ ոչ…

—Այդպիսի քայլեր մաճկանացուն չի կարող անել, սովորական չլինելով, միշտ սնոտիապաշտութիւններ են առաջացնում։ Ես ինքս էլ զարմանում եմ, հաշիւ չեմ կարողանում տալ ինձ, թէ ինչ գերբնական ոյժ ինձ մղեց այդ գիշերը դէպի քու որջը։

Թո՛ղ, հոգիդ սիրես, անցեալն անցել է։ Այդպիսի քաղցր յիշատակի մասին միայն պէտի մտածել և ոչ թէ խօսել։

—Լա՛ւ, Վարդ, ինձ փրկելուց յետոյ ո՞ւր աներևոյթացար, որ այսքան տարիէ հետքդ անգամ չը գտա, տեղեկութիւն չստացա։ Գնա՛նք, գնա՛նք տուն, ինչպէս նկատում եմ յոգնած ես, գնանք հանգստացիր։

—Կերթանք, ի՞նչ ես շտապում։

—Ո՛չ, ո՛չ, որտեղ ես իջել, պայուսակդ ո՞ւր է։

Գնանք տուն, շտապենք, հիմի մայրս կարող է իմանալ և անհամբեր քեզ սպասել. ախ՜ Վա՛րդ, Վա՛րդ, քեզ այս որտե՞ղ գտա։

—Գիշերը ուշ հասա և Աղասարի հիւրանոցն իջա։

—Ամօթ չէ՞, ինչի՞ ուղղակի մեր տունը չիջար։ Գիտեմ, դու աղա ես, մենք էլ աղաի վայել սենեակներ, կարասի չունենք գնանք, մեր նահապետական տունը ոչնչով փոխուած չէ, միայն կինս է, մանր մժեղներս են աւելացել։ Մայրս առաւօտից մինչև իրիկուն նրանց գուրգուրացնելով է մթնեցնում։

Երկու ընկերները հիւրանոցից պայուսակն ու կապոցները մշակին տուին և դիմեցին տուն։ Երբ ներս մըտան, Արտաշը դառնալով մօրն ու կնոջն ասաւ.

—Ահա Սիրանոյշ, ահա այն մարդը, որն ինձ ազատեց գնդանից։ Եթէ սա մահն աչքի առած ինձ օգնութեան չհասնէր, լեզուս ծոծրակից էին հանել տուել սիւննի նայիբները։

—Բարով ես եկել, բարով Վարդ ջա՛ն, վրա հասաւ Թագուհին ու համբուրեց նրան, լաւ ե՞ս, առողջ ե՞ս, ինչպէ՞ս է մայրդ՝ Մարթան. քոյրերդ լա՞ւ են, ո՞ւմ էք տուել, փեսաներից գո՞հ է մայրդ։

—Շնորհակալ եմ, ասաց ձայնը նւազցնելով Վարդը, շնորհակալ եմ մայրիկ...

—Առողջ էք, լաւ էք, մայրդ ինչպէ՞ս է, Նուշանը, Նողակը։

—Նուշանին, Նողիկին սոֆթաները յափշտակեցին, մայրս էլ դառն կսկիծից ճլերքն ընկաւ, չորացաւ, ասաց *խեղդւելով* Վարդը, աչքերը գետին յառելով։

—Վա՛յ իմ գլխիս, վա՛յ ինձ, ասաց Թագուհին

խեղդուած ձայնով։ Վա՛յ գլխիդ, սև հողը գլխիդ, Մարթա՛, հազար վա՛յ...։ Երնէկ նրան որ մեռել է, ազատւել է։ վա՛յ մեզ, վա՛յ, որ դեռ ապրում ենք ու տանջւում։

Լռութիւնը տիրեց բոլորին, ամէնը մնջեցին և սուզւեցին իրենց ներքին աշխարհը։ Միայն աղեկեզ հառաչանքները երբեմն երբեմն ընդհատում էին այդ խորհրդաւոր լռութիւնը։ Բոլորի թախծալի դէմքից կարելի էր նկատել, թէ ներքուստ ինչ հոգեկան տանջանք էին քաշում, ինչպէս աստիճանաբար բորբոքւում և խոյս էին տալիս իրար հայեացքից, որ չլինի թէ խզեն տխուր մտածութիւնները։ Սիրանոյշն անգամ, որ բոլորովին անծանօթ էր նրանց հետ, միայն լսած էր պատմութիւնները, անչափ վշտացաւ։ Կարծես արկածը պատահած լինէր Անտօնի տանը, կարծես այդ թշւառները նրանց մայրն ու քոյրն էին և Սիրանոյշը ո՛չ նւազ վշտալի հառաչում էր։

Տխրութիւնը այնպէս համակեց բոլորին, որ Թագուհին թոռի օրօրոցն օրօրելու պատրւակով, կիսով չափ ծածկւում էր նրա ետևը, որ չնկատեն երիտասարդները նրա թախծալի դէմքը։ Աչօն, որ մօր առաջը կանգնած՝ զուգւում էր տօնական զգեստով, Վարդի այցի պատճառով, անդադար թաթիկներով շամռում էր մօր աչերը, որ նրան ծիծաղեցնէ, բայց երեխան զայրանում էր, որ մայրը չի համբուրում թաթիկները և չի խնդում։ Այդ տխուր թախիծը, այդ առանց արտասուքի ու ողբի սուգը, այդ սրտերի վշտակցութիւնը այնքան խոր թափանցեց բոլորի հոգու մէջ, որ շւարեցան, սառեցան և մինչև Անտօնի յանկարծակի մուտքը չսթափ-

ւեցան։

Անտօնի բարևը հազիւ ընդունած, Թագուհին հարսին դառնալով ասաց,

— Սիրանո՛յշ, գնա՛, սեղանը գցիր. Վերջը դառնալով Վարդի կողմը, աւելացրեց.— Որդի՛ս, այդ փորձանքը մենակ եթէ ձեր տունը ընկած լինէր, ես հաւատացած եմ, որ դու էլ և ազգականներդ էլ վիշտը տանել չպիտի կարողանայիք. բայց քանի որ աշխարհքով է, շատ շատերի գլխին է պատահել, չորս բոլորներս զննելով հաշտւում ենք կեանքի հետ, վարժւում ենք և մի ընդհանրական մխիթարութեան գալիս,.... Մի այնքան խոր խրւիլ վշտիդ անվերջ անդունդը, մի՛ մտրալ, կեանքդ մեղքացի՛ր, դու ինքդ կարող ես ձեռքէ ելնել։ Լայն սրտով խորհի՛ր, միտք արա, որ հառաչանքներով, անձիդ միսը հալելով ու մաշելով, ո՛չ մորդ կարող ես յարութիւն տալ, գերեզմանից դուրս բերել, ո՛չ էլ քոյրերիդ սօֆթաների ճիրաններից ազատել։ Խնայի՛ր քեզ և քու ապագայիդ համար մտածիր։ Դըժւար է մոռանալը, խօսքով չի մոռացւիլ, բայց խելացութեամբ մտքից վանելու հնարները պէտքէ մտածել։

Թագուհին համոզւած էր, որ խօսքերը. բառերը չէին կարող հանգստացնել, մեղմել Վարդի վիրաւոր սրտի կսկիծները, հառաչանքներն ու խրատները ոյժ չունէին մխիթարելու և սփոփելու վշտացածին, բայց և այնպէս չէր կարող չկրկնել սովորական դարձւածները։ Մէջ ընդ մէջ Թագուհին, Մարթան և երբեմն երբեմն էլ Արտաշը մի մի մխիթարական բան ասում էին, մտքերը ցրւելու միջոց էին ուզում դառնալ, բայց անվերջ լռում էին բոլորը և այդ լռութիւնը աւելի լաւ էր ար-

տայայտում զգացումները, քանթէ անմիտ բառերը և արհեստական ձայները։

Տասն ու հինգ օր աւել մնաց Վարդը Արտաշի մօտ, գիշեր ցերեկ նա որքան որ յիշեց գլխից անցածները, ընտանեկան արկածները քիչ քիչ պատմեց, ըսկսելով իւր Կարսից Երզնկա փախչելուց, մինչև ընտանիքով Երզնկա տեղափոխւելը և աւետրական տան հիմնարկութիւնը։

X

Երզնկա աւետրական տուն հիմնելուց յետո. մեր գործերն սկսեց պարզապէս ձախել, ասաց հառաչելով Վարդը։ Ինչպէս յայտնի է. համաձայն Ռէշիդ փաշայի Փարիզի կօնգրէսից յետո տրւած գաղտնի շըրջաբերականին, որով հրամայւում են երկրի բոլոր վալիներին, մութէսարիֆներին և դրանց աջակից բարձր պաշտօնակալներին, աստիճանաբար ուղղակի և անուղղակի միջոցներով քրիստոնեաներին ճնշելու. աւելի սանձարձակ առաջ գնացին այդ ընթացքով խալիֆի փոխանորդները վերջին 1877|8 պատերազմից յետո։ Սովորաբար բոլոր պետական ատեաններում. մանաւանդ վարչական և դատաստանական հիմնարկութիւնների ծառայողները այնպիսի ընթացք էին բռնում, որ քրիստոնեաներին խաբխբելով մեծամեծ կաշառներ էին ու-

տում Հայերին կատարելապէս կեղեքելու համար, նրանց ուրախացնում, դատաստանական առաջին ատեանից յօգուտ նրանց վճիռներ էին արձակում, իսկ երկրորդ ատեանում բեկանում էին վճիռը, օգուտ միւսլիմանի հաստատում գործը, հակառակ արդարութեան։ Վճռաբեկ ատեանում գործը դարձեալ բեկանում էին և նորից վերադարձնում էին քննութեան և նորից կաշառներ ու հարկեր ստանում։ Մանաւանդ կալուածական խնդիրների ընթացքում, տարիներով տանջում էին և վերջիվերջո հայի երկու - երեք հարիւր տարուան ժառանգական կալուածքը խլում յանձնում էին չէրքէզներին, կամ բումէլիցի գաղթականներին. Բանն այնտեղ հասցրին, որ ինչպէս գիւղական քրիստոնեա հասարակութեան կեղեքել էին տալիս միւլթէզիմների, միւբաշիրների - էղնամ մէմուրների, մուխտարների ու զաբթիէների ձեռքով, նոյն ձևով, դեռ աւելի ստոր միջոցներով, սկսեցին քաղաքացիներին կեղեքել։ Բոզուքները լցւեցան պաշտօնական զգեստով և ծպտեալ սրիկաներ, գողեր, աւազակներ, քսակահատներ և թուլումբաջիներ, որոնք առաւօտից մինչև իրիկուն որսկան բարակների նման որս էին փնտռում։ Երզնկայի փողոցներից անցնելիս առաւօտ-իրիկուն անհնար էր չը պատահել զարհուրելի տեսարանների։ Մէկին ծեծում էին, միւսին քաշէքաշ հիւքիւմաթ էին տանում, երրորդը քսակը դատարկում էր մի անկիւնում՝ մի ուրիշ սրիկայի բուռը. այն կողմը ոստիկանները սոսկալի աղմուկ բարձրացրած և ողբալի արտասուքի մէջ խեղդելով մի խղճալի այրիի, նրա տնակից դուրս քաշած պղնձալէն ու կարպետներն էին ծախում աճրդով. մի ուրիշ փողո-

ցում թշւառ արհեստաւորի խրճիթ էին ծախել և նրա մանր ու խոշորը՝ ընտանիքը մի քանի կտոր փալասով. ոստիկանները փողոց էին թափել և այնտեղ էլ հանգըստանալու արտօնութիւն չէին տալիս։

,, Մինչև անգամ պաշտօնականները յայտնի գողերին, սրիկաներին առաջարկում էին այս ու այն քրիստոնեայի տունը մտնել, կողոպտել, մագազինները դատարկել. աւազակներին զէնք էին ցրւում, ուղարկում՝ ճանապարհների վրա հսկելու—կարաւանները և հայ վաճառականների ապրանքները կողոպտելու։ Չի կարելի նկարագրել, թէ վաճառականները, կարողութեան տէրերը ինչ աստիճանի քայքայւեցան, թշւառացան և կործանւեցան։

" Քաղաքացիք երկիւղներից իրար անգամ չէին կարող վստահել և գանգատւել այդ զարհուրելի կացութեան մասին։ Բարեկամ—ծանօթի տուն երթալը, ազգականի և ցեղականների հետ հաւաքւելն անգամ, ոճիրների դասն անցաւ։ Այն վիճակի հասցրին, որ ամեն մարդ պարտաւորւած էր չէզոքանալ, յարաբերութիւնը հասարակութիւնից կտրել, ո՛չ ընկերութիւն, ո՛չ բարեկամութիւն, ո՛չ էլ դրացութիւն մնաց։ Մինչև անգամ առևտրով իրար վաճառատունը գնալը, լրտեսների ձեռքում զէնք էր դարձել՝ զոհերին կողոպտելու համար։ Լրտեսների թիւը այնքան ընդարձակւել էր, որ ո՛չ թէ միայն չէր կարելի դրանց մասին տեղեկութիւն ունենալ, այլ մինչև անգամ որևէ ծանօթ բարեկամի տւած բարևից անգամ կասկածում էին, որ չլինի, թէ նա էլ մատնիչների շարքն անցած լինի, ուզում է փորձել խոնարհութիւնը, հպատակութիւնը և քսակը։ Այն-

քան արագ-արագ պաշտօնի կանչւում և դուրս էին վռնդւում լրտեսները, որ մարդ շւարած մնում էր, թէ ինչ ընթացք բռնէ դրանց դէմ։ Այնքան արին, որ մարդկանց վրա հաւատս խախտւեց։

Էլ ճար չը մնաց, էլ կարողութիւնս սպառւեց, համբերութիւնս կտրւեց, որովհետև ամէն օր աչքիս առաջ տասնեակ մարդիկ բանտ, աքսոր և անյայտ վայրեր էին քշւում անդառնալի պայմանով։ Ամեն օր յայտնի վաճառականներին, կամ ունևոր հայերին միւթէսարիֆը, օրդու միւշիւրին (բանակի հրամանակալը) գաղտնի խորհրդի պատրւակով կանչում էին, սկսում էին նրանց ներկայութեան քննել, կամ տանջել ազգականներին, բարեկամներին և վերջը այդ խորհրդականներին իրենց առանձնասենեակը հրաւիրելով խնդրում էին, որ երեք հարիւր, հինգ հարիւր լիրա փոխառութիւն տան պետական խիստ ճգնաժամի ենթարկւած սնդուկին տասն և հինգ օր, մի ամիս ժամանակով։ Փոխ դրամ վերցնելը մի նոր դուռ էր բաց անում պաշտօնականներին, որոնք տւողներից երբէք չէին զիջանիլ ձեռք քաշել. իսկ մերժելը պետական դաւաճանութեան նշան էր համարւում, որով մերժողները յօժարակամ յանձն էին առնում բանտ նստել, արիւնարբու զաբթիէների բարբարոսական տանջանքներին ենթարկւել։ Ծծում էին մեր արիւնը ոչ թէ տզրուկի, այլ ջրհանի նման և արիւնաքամ շպրտում էին դուրս քամւածներին։

Երբ Երզնկայում կեանքն այսքան անտանելի դարձաւ և ինձ վրա խոժոռ հայեացքներ էին ուղղում միւսլիմանները, զաբթիէները, որպէս քիչ թէ շատ

ինտելիգենտ, եւրոպա պտտած մարդու, հայրս ստիպեց որ առժամանակ թողնեմ Երզնկան և Պոլիս փոխադրւեմ, որտեղ մշտական գործավարի կարիք ունէինք։ Թէև ակամա, բայց և այնպէս պարտաւորւած էի հեռանալ։

Իմ բացակայութեան՝ հայրս, որպէս հին մարդ, պապերի փորձնական ընթացքին հետևող մի յայտնի իմամի է ապաւինում, մտնում է նրա հովանաւորութեան տակ, որպէսզի փաշաների, զաբթիէների անտեղի յարձակումներից և կեղեքումներից ազատւի։ Իմամը կամաց-կամաց սկսում է ծծել հօրս կարողութիւնը տզրուկի նման։ Իմամի եօթը պորտը մեր կալից է կըշտանում։

„Իմամի հովանին սիրտ է տալիս հօրս և նա սանձարձակ կեղեքումներից ազատւում է, մինչև անգամ միւթէսարիֆին, բանակի հրամանակալին դիմադրում է և ամեն պարագային օգնութեան է հասնում իւլէման իւր դասով։ Հայրս իւր այս խելքից անչափ բաւական- հարևանների տանջանքը դիտելիս՝ ծաղրում է նրանց կարճամտութիւնը, բարեկամներին խորհուրդ է տալիս թևարկուներ գտնել։ Յայտնի բան է նրանք էլ ծիծաղում են հօրս վրա, այն էլ ներկա պարագաներում, քաներորդ տարի չէմքում։ Պարբերաբար տուժում են թշւառները և կարողութիւնները լցնում են զաբթիէների, պաշտօնականների և փաշաների գրպանները։

„ Հօրս հովանաւորը, բարեգութ իմամը, մի օր երեք չորս մօլլաների հետ մտնում են մեր վաճառատունը և յայտնում են, որ հարկաւոր է տեղի միւթէսարիֆի համար մի շնորհակալութեան թերթ ստորա-

գրել և սուլթանին ղրկել։ Փոքր եղբայրս՝ Մուշեղը Հօրըս ականջում յիշեցնում է, թէ պէտք չէ ստորագրել, առարկելով, որ փաշան կեղեքել ու սգացրել է ողջ քաղաքի հայ ազգաբնակութիւնը։ Հայրս աւելի վրդովւած եղբօրս անժամանակ ազգասիրութիւնից, ստորագրելով վաւերացնում է առաջարկւած հանրագիրը։ Սրա վրա բոլոր տեղացի քրիստոնեաների ատելին է դառնում և ամենքը նրան դաւաճանի տեղ են ընդունում։ Երեք չորս ամիս յետո էլ մի ուրիշ հանրագիր է ստորագրել տալիս յօգուտ բանակի հրամանակալի, բոլոր հայ վաճառականները երկիւղներից ստիպւում են հօրս հետևել և աւելի գրգռել ժողովրդին։

,, Իրանից յետո միւթէսարիֆը և բանակի հրամանակալը, զանազան պետական կարիքների պատրւակով, հօրից փոխառութիւն են անում։ Երբ իմամը առաջ է գալիս հօրս պաշտպանելու, որպէս իւր թևարկեալին, զօրաց տէրը՝ չէրքէզ Մուսա փաշան նրան սպառնում է, որպէս պետական դաւաճանի, աքսոր ուղարկել։ Կ. Պոլսից, Շէյխ-իւլ իսլամի դռնից յանդիմանութիւն է գալիս իմամին և երբ նկատում է, որ վտանգ է սպառնում իւր կլթանին, նա դիմում է հօրս և բացադրում է իրերի ընթացքը։ Երկար խորհրդակցելուց յետո, հայրս մի շաբաթւան ընթացքում ձեռքում ունեցած ապրանքը կոտր գնով ծախում է, կանխիկ դրամը կամ մուրհակները յանձնում է իմամին։ Իսկ բարերար և հովանաւոր իմամը կլանեց այդ բոլորը, հօրս թողնելով կեղեքողների ձեռքը։ Երբ միւթէսարիֆը և միւշիւրը նկատում են, որ հայրս դատարկւել է և սպառնալիքներով նրանից բան չեն կարողանում կոր-

զել, նրան, որպէս յեղափոխականների աջակցի, բանտարկում են։ Իմամի հովանաւորութիւնը ոչ միայն դադարում է, այլ նա հօրս թախանձանքներից ազատւելու համար վկաներ է ներկայացնում, նրա պետական դաւաճանութիւնները հաստատում։ Հայրս կաթւած է իջեցնում բանտի մէջ և մեռնում է։

Եղբայրս հօրս մահւան բօթի հետ ինձ յայտնեց եղելութիւնը և մինչև իմ Կ. Պոլսից դառնալս, իմամը, որպէս իւր ստրկի բոլոր կարողութեան տէրը, հօրից կորզած կալւածագրերով եկել, մտել էր մեր տունը, բնակութիւնը հաստատել։ Այնքան բարի էին եղել աւազակները, որ գաւթի միւս ծայրին ունեցածներս երկու սենեակ և մի խոհանոցը թողել էին մօրս և քոյրերիս տրամադրութեան տակ մի առժամանակ։ Իսկ եղբօրս, որպէս ըմբոստի, հայրական տունը դատարանի վճռի համաձայն չը յանձնելու և դատաստանական գործադիր մարմնին ընդդիմանալու համար, որպէս իշխանութեան ընդդիմադրի, բանտ են գլորում, ուտեղ տքում էր, մինչև իմ դուրս գալը։

,, Այսպէս հօրս սպանելուց, եղբօրս ողջ-ողջ գերեզման իջեցնելուց յետո, իմամի երկու զաւակները, որպէս տէր իմ հայրական գոյքի և կարողութեան, քաշում տանում են երկու քոյրերիս էլ իրենց կնութեան, մօրս թողնելով վշտի ծովի ալիքների վրա, որը այնքան ողբում է, կոծում, որ անզգայանում է։

XI

Շուշանի և Շողակի Սոֆթաների հարէմներում բանտարկուելը, նրանց դաժան կրքերին զոհուելը, Մուշեղի բանտում տառապելը իմանալուց յետո, Արտաշի խաղաղութիւնը իսպառ կորուեց և նա ընկաւ խոր վշտի ազդեցութեան տակ։ Արտաշը երբ լսում էր, թէ հայերը ինչ սոսկալի տանջանքներ էին քաշում իսլամական զնդաններում, շատ անգամ բորբոքւում էր, զայրոյթից ուշքը ցրուած, թողնում էր արհեստանոցը աշկերտ-բանուորներին, գնում էր ժամերով զբօսնում գետի ափը, ձորը, Ենիչարի-աղբիւր, բաց օդում թափառում էր, մտամոլոր նստում, կամ ման էր գալիս, կամ մի ժայռի կռթնած, ուշագնաց խորհում էր, թէ ինչ վախճանի է հասնելու այդ զարհուրելի կացութիւնը։ Այնքան յուզուած ծփում էր այդ դառն մտածութիւնների մէջ, որ պէտք եղած դէպքում աշկերտները մի երկու ժամ նրան որոնելուց յետո, հազիւ գտնում էին մի ժայռի տակ, կամ մի խրամատում և կամ մի այրում անզգա ընկած։

Լրագրներում կարդացած ամեն մի տխուր լուր, ճանապարհորդներից ստացած ամեն մի սև խաբար նրա սիրտը կսկծացնում էր, նրա կրքերը բորբոքում էր, նրա խաղաղութիւնը դադարում, նա տոչորւում էր,

ցնցւում է, բայց չէր կարողանում վճռել, որոշել, թէ ինչով կարող էր օգնել, գոնէ մի քիչ թեթևացնել այդ թշուառների զարհուրելի վիճակը և նրանց տկալու, դիմադրելու տրամադրել և յուսադրել։ Նա իսլամի ահաւոր ճանկերի և չանչերի հետ ծանօթ էր, Մահմէդի տեղակալի զինւորական զօրութիւնը կշռած էր. կրօնի անունով մարտնչողների գնդակների վէրքերի կսկիծը դեռ սրտից չէր դուրս եկել և ըմբռնել էր, թէ Լորիսի, Լազարէվի. Քիշմիշեվի նման մարդիկ, ահաւոր զօշունը հեծելազօրն ու միլիյեան ձեռքերի տակ, որքան դժուարութեամբ փրկել էին Կարսի բերդը։ Իսկ ինքը իր նման տգէտ և թերուս աշակերտներով, առանց կանոնաւոր ծրագրի բան չէին կարող շինել։ Երբ կշռում էր իրեն՝ իր նման 40—100 ընկերներով, առանց զէնքի ու մթերքի իսլամի բանակների հետ, շուարում, թուլանում, գլուխը ցած կախելով հառաչում էր և արձանանում։ Այս մտքերը ամբողջ տասն և հինգ տարի, վերջին պատերազմից յետո, անդադար, անվերջ յուզել էին նրան և զբաղեցրել նրա ուղեղը։

Արտաշը շատ վիճել, շատ կարդացել, շատ ընդդիմախօսել և վերջը հասել էր այն մտքին, թէ պէտք է սպասել պատեհ առիթի։ Նա չէր յուսահատւել, նրա յոյսը ապագայի վրա էր կենտրոնացած։ Արտաշը համոզւած էր, որ քսան տարին լրանալու պէս, արևելքի քրիստոնեաների պաշտպանը՝ ռուսական արծիւը նորից պիտի թևերը թափ տա, բոլորէ իւր հովանու տակ իսլամի լծի տակ տառապող կրօնակիցներին, պիտի հնչեցնէ դարձեալ փողերը և թնդանօթները պիտի որոտացնէ, որպէսզի ազատէ մնացեալ դարաքաշ րայաներին Ղու-

րանի շղթաներից։ Այդ ժամանակ նա — Արտաշը, նորից կը զինուի, կրկին կը նստէ իւր ձին և դարձեալ կանգնի բանակների առաջ, որպէսզի անօրէնների բռնակալութիւնից և հարստահարութիւններից ազատէ ժողովուրդն ու երկիրը։

Երբ լսում էր, որ տասնեակ հազարներով կոտորել էին, մորթել, խլամացրել էին, բանտերը, աքսորավայրերը լեցրել, նա քրքրւում, մաշւում, անձի միսն էր ուտում, բայց մորմոքում էր, վշտանում էր, քաշւում էր մի կողմ, ինքն - իրեն մտորում, սգում......։ Նա մռնչում էր, — Ի՞նչ կարող եմ անել, ինչ հնարաւոր է անել մի այնպիսի՜ զարհուրելի գազանական ոյժի դէմ ճանկերով.....։ Յաճախ նա մօտենում էր ինտելիգենտներին, այս հարցերով տանջուողներին և կրկնում. - Ասէք ինչ անեմ, ցոյց տուէք, ինչ կարելի է անել և ամէն անգամ նրանցից հեռանում էր յուսակտուր, լքւած, նրանց ծրագիրները, նրանց առաջարկները երբէք հաւատ, համոզմունք չէին ներշնչում։

Մուշեղի գնդանի տանջանքների բօթը, Շուշանի ու Շողակի սոֆթաների վանդակներում տանջուելը, Արտաշի աչքի առաջ մի ուրիշ աշխարհ բաց արաւ։ Նա մտածում էր, որ հազարաւոր ձերբակալուածներին նա չէր կարող օգնութեան հասնել, ազատել կախաղանից, կամ գնդակից, բիւրաւոր անմեղ քրիստոնեա աղջիկներին անհնար էր դուրս քաշել քուրդ բէգի, թուրք աղայի, արաբ շէյխի հարէմներից, դրանք կատարելու համար բանակի և ահաւոր ոյժի կարիք կար, իսկ մէկին, երկուսին, հինգին ազատելը այնքան էլ մեծ ոյժի և

ահաւոր զոհողութիւնների պէտք չունէր, այնպիսի պատրաստութիւնների կարիք չկար։ Ուրեմն եթէ նա մէկին, երկուսին, հինգին կարողանար ազատել, հինգին նորից կեանք տար, հինգին հեռացնէր իսլամի ճիրաններից, խո՛ հինգ հոգի տանջանքներից փրկած կը լինէր։ Եթէ իրեն նման տասը, քսան, քառասուն մարդ ձգտէին, քառասուն քաղաք ու աւան ցրւէին, կը կարողանային ամէն մէկը մի քանիսներին փրկել։ Այդ էլ արդէն մեծ բարիք էր ազատուողների համար, մեծ խրախոյս տանջւողների համար, մեծ յոյս լքւածների համար և կենդանի օրինակ գործելու հազարաւորների համար։

Այս միտքը որոճում էր, այս միտքը դատողութեան էր ենթարկում և բացի սրանից ուրիշ ելք չէր գտնում։ Եւ նա վճռեց այն միտքը գործադրել։ Բայց մի ներքին կռիւ ընկաւ Արտաշի սրտում, մի կողմից մութ գնդանից, խաւարային հարէմի որջերից մարած աչքերով, խամրած դէմքով և վշտաբեկ ցնցումներով, նրա օգնութիւնն էին հայցում Մուշեղն ու քոյրերը, միւս կողմից Սիրանոյշը և մանուկները վզերը ճուկ, աչքերը լցւած, տխուր, Արտաշի վրա յառած նրա քայլերն էին ուզում կաշկանդել։ Իսկ Թագուհին՝ մայրը կարծես Արտաշի վզին փաթաթւած՝ չէր ուզում թոյլ տալ տանից դուրս գալու։ Այս երկու ներհակ զգացումների տակ Արտաշը շւարած, ընկել էր սոսկալի անվճռականութեան մէջ, ոչ զաւակներից ու սիրելիներից կարողանում էր ձեռք վերցնել և ոչ էլ խղճից, բարոյական պարտքից, եղբօր, տոհմակցին օգնելու պարտականութիւնից։

Քանի որ աչքի տակով Արտաշը զննում էր Վարդի վշտաբեկ դէմքը, յուսահատ հայեացքը, զարհուրելի փոսն ընկած աչքերը, ջղային ցնցումները և սրտակեզ հառաչները, աւելի բորբոքւում էր և աւելի հակւում դէպի պարտքը դիմելուն։ Վարդին խրախուսելու, քաջալերելու և յուսադրելու համար նա գործադրում էր իւր բոլոր ույժը, իւր բոլոր զգացումները. բայց ո՛չ խօսքը, ո՛չ ժպիտը, ո՛չ գգւանքն ու փայփայանքը, ո՛չ յորդորը, ոչինչ, ոչ մի բան չէր ներգործում Վարդի սրտին, նրա հոգուն, նրա ջղերին. նրա շուրջը ամէն բան սառած, քարացած ու անզգայացած էր թւում։ Վարդի այս սոսկալի դրութիւնը աւելի էր մորմոքում Արտաշի սիրտը. այնպէս որ վերջինս բորբոքւած աչքերը ոլորում, չռում էր, ձագերը կորցրած վագրի նման թշնամուն էր որոնում, գիշատելու և լափելու համար։

Սիրանոյշը այնքան սրատես էր, որ չէր կարող չնկատել, թէ ինչե՞ր էին կատարւում Արտաշի սրտի խորքերում։ Մատաղահաս կինը որքան էլ որ կարեկցում էր Վարդին, վշտակցում էր սրա հոգեկան յուզերին, չէր կարող և չզայրանալ նրա տուն բերած թախծից ու տրտմութիւնից, որոնք օրից-օր աճելով հոգեկան տանջանքների էին մատնում Արտաշին, մաշում տնեցիներին։ Կարեկցութեան արժանի էին և հոգեկան վշտակցութեան կարօտ Վարդը և նրա հարազատները, բայց պէտք չէր մի ամբողջ ընտանիք յուզերի և հոգեկան տանջանքների մատնել այն աստիճան, որ մարդ ու կին, որդի ու մայր, հայր և մանուկներ իրար քաղցր հայեացքից խոյս տային։ Արտաշը

անչափ սիրում էր իւր զաւակներին, մանաւանդ չորս տարեկան Աշօին, որն իւր անընդհատ կատակներով և գուրգուրանքով անվերջ հրճւեցնում էր ծնողներին։ Այդ օրերը կարծես էլ անսահման կարօտով կապւել էր հայրն այդ հրեշտակատիպ աղջկա հետ և երբեմն դիտելով նորա անմեղ դէմքը, աչքերն ու վարդակարմիր շրթունքները, գորովալի հայրը մնում էր անշարժ ու մոլեգնած հայեացքով։ Կարծես թէ նրա երևակայութեան առաջ պատկերանում էր, որպէս թէ սւննի վայրենի կրքերին երկրապագու զաւակները յարձակւել, յափշտակել, առևանգել, խողխողել և կամ ոտքերի տակ տրորել էին այդ քնքոյշ մանուկին։ Յաճախ, այսպիսի երևակայութիւններից յետո, Արտաշը այնպիսի ա՜խ էր քաշում, որ Թագուհու և Սիրանոյշի սրտերը թնդիւնից բաբախում էին սոսկալի արագութեամբ։

Սիրանոյշը իւր կասկածներն ու նկատողութիւնները ուզում էր վանել, ցրւել. ինքն իրեն ուզում էր խաբել, Արտաշի արտասովոր բոլոր շարժումները իրեն հաճելի եղանակով բացատրել։ Բայց որքան որ ուզում էր խաբւել, որքան որ ցանկանում էր հեռացնել այդ զգացումները, այնքան աւելի նորանոր փաստեր նորան ստիպում էին կասկածանքների մէջ խրւել։ Կասկածներըն հաստատող խօսք չլսելու, ենթադրութիւններն իրականանալու առթիւ փաստերի չը դիմաւորելու համար, Սիրանոյշը խոյս էր տալիս ամուսնից, նա դեռ ուզում էր խաբւել, նա դեռ չէր ուզում յոյսը թաղել, չէր ուզում աչքերին և ներշնչումներին հաւատալ, սրտին, զգացումներին անսալ։

Արտաշն էլ շարունակ կռւում էր կրկին զգա-

ցումների հետ, կշռում էր մէկ այս կողմը, մէկ միւս, առաւօտ վճռածը կէսօրին փոխում էր, իրիկւան որոշածը՝ գիշերը հերքում. բայց ամբողջ ուշքն ու միտքը գրաւող խնդրի այնքան խորն էր թափանցել, այնքան լրջացել էր, հետզհետէ մելամաղձութիւնը հեռանում էր նրանից, հոգեկան հրճւանքը ժպտում էր նրա դէմքի վրա։ Այդ փոփոխութիւնը աւելի մաղձոտացրեց Վարդին, ուրախութիւն ներշնչելով Սիրանոյշին ու Թագուհուն։ Նա կարգին էլի շարունակում էր արհեստանոց յաճախել և զբաղւում էր խանութի հաշիւներով։ Զւարթ տրամադրութեամբ մի օր Արտաշը հարցրեց Սիրանոյշից։

— Հոգիս, մօրքուրդ քանի՞ որբով այրի մնաց։

— Եօթը, ասաց կինը, որոնցից մեծը տասներկու տարւան էր, իսկ վերջինը փեսի մահից երեք ամիս յետո աշխարհ եկաւ։

XII

Բաւական ժամանակ լռեցին ամուսինները, սուզւեցան իրենց ներքին աշխարհում։ Ննջարանում լըսւում էր երեխաների շնչառութեան մեղմ ձայնը, որոնք կարծես երաժշտապետի ղեկավարութեամբ իրարից քիչ բարձր ու ցած, ետ ու առաջ ներդաշնակ շնչում էին։ Արտաշի դէմքին պատել էր ուրախութեան քօղը,

այն ինչ Սիրանոյշը մտախոհ, աւելի ու աւելի սուզւում էր դառն մտքերի անյատակ անդունդը։ Ամուսիններն իրար դէմ նստած, սիրտ չէին անում խօսակցութիւնը շարունակել։ Երբ Արտաշը նկատեց Սիրանոյշի տխուր մտքերի մէջ սաւառնելը նորա կնճռոտ դէմքից, ուշքի բերելու համար ասաց.

— Այժմ մօրքոյրդ որքա՛ն հրճւում է, Սիրանոյշ ջա՛ն, որքան վսեմացել է ու խրոխտում է, որ իւր մեծացրած, կրթած զաւակը այսպիսի գեղեցիկ դիրք է բռնել քաղաքացիների մէջ։ Ամէնը թէև տգէտ ու անտէր է ծնւել հայրենակիցների մէջ, բայց իւր ջանքով առաջացել, բարձրացել և ամենքին սիրելի է դարձել, այնպէս որ այսօր նրա դիրքը միլիոնների որդիների նախանձն անգամ գրգռում է։

— Այո՛, շատ ուղիղ է ասածդ, բայց գնա՛, գնա՛ մէկ ուշի ուշով զննէ մօրքոյրիս, նրա նման երկաթի ու պողպատի կազմով կինը, մինչև դրանց մեծացնելը գլգլել է ու քայքայւել։ Թշւառ կինը ամբողջ քսան տարի պարտաւորւած է եղել սրա, նրա դռանը լւացք անելու, հաց եփելու, որ մատղաշներին կերակրէ, շահէ։

— Վերջապէս ինչ որ իւր պարտքը թելադրել է, այն կատարելով խօ հասցրել է զաւակներին այնտեղ, որտեղը բաղձանք է միլիոնատէրների և իշխանների համար։

— Հասցրել է, մեծացրել է… բայց մօտեցիր նորան, հարցրու,—կնիկ, արդեօ՞ք մի օր հանգստացե՞լ ես, մի օր խոստումներդ դադարե՞լ է, մի օր կարողացե՞լ ես առանց արտասուքի անկողին մտնել, մի օր կուշտ հաց կերել ես և փափուկ անկողնում քնել, հանգստացել։

—Այդ բոլորը շատ լաւ գիտեմ, հոգիս, այդ բոլորի մասին քեզանից շատ լաւ գաղափար կազմած եմ։ Իմ խօսքս այն է, որ մօրքուրիդ աշխատանքը երջանիկ պսակ ունեցաւ։ Նա եթէ մանր ու խոշորին երեսի վրա թողնէր, գնար նորից ամուսնանար, մինչև անգամ մի հարուստ և բարի մարդ առնէր, ինչ ես կարծում, խիղճը կը խաղաղէր, կամ այս հոգեկան հըրճուանքը կարո՞ղ էր զգալ, ինչ այսօր վայելում է իր ջանքի շնորհիւ։

—Այո՛, երբ մօտեցել է մահուան շէմքին, երբ արդէն այնպէս գլգլել է, որ ոչ մի վայելքից բաւականութիւն չի կարող զգալ, այդ ժամանակ ինչքը, կարողութիւնը, վայելքը ի՞նչ արժէք ունի, նա խո գերեզման տանելու չէ։

—Ուրեմն դու երիտասարդութեան մէջ լիառատ վայելչութիւն կը կամենայիր, իսկ ծերութիւնդ թշւառութեան մէջ անցկացնելով կեանքիդ վախճան տալ։

—Ծերութեան, պառաւութեան մէջ ինչ վայելք կարող է լինել։ Յայտնի բան է երիտասարդութեան ժամանակ հարկաւոր է կեանք վարել։ Ո՞վ է ասում, որ վերջին օրերը վատութեան մէջ անցկացնելը լաւ բան է, դու խօսքերը մի՛ ծռիլ, այլ վայելչութեան օրերը մթնեցնելու, սգացնելու չէ։

—Ուրեմն քո կարծիքով, նա, ով լիառատ չի ուտում, չի խմում, չի հագնում և չի զբօսնում, որի մարդը գլխին կանգնած չէ, նա կեանքից քաղցրութիւն չի կարող զգալ։ Միթէ կեանքի մէջ ուրիշ ազնիւ զգացումներ չկան, միթէ անընդհատ դատող արհեստա-

ւորը, աշխատաւորը կեանքի քաղցրութիւնները չի վայելում։ Մօրքուրդ իր ճակատի քրտինքով ձեռք բերածով՝ իր զաւակներին կերակրելիս ու հագցնելիս, միթէ աւելի մեծ բաւականութիւն չէր զգում, քանթէ մարդու - ամուսնի բերածից, որը դուցէ քթիցն էր բերում։ Ո՛չ, ո՛չ, Սիրանոյշ ջա՛ն, մօրքուրդ այսօր անչափ գոհ է իր վիճակից, իսկապէս նրա համար, որ այն որդիքն ինքն է հասցրել, իր անխոնջ աշխատութեան արդիւնքն են կազմում։

—«Անխոնջ աշխատութիւն»…. ասելը հեշտ է, բայց իրականութիւնը դառն է ու լեղի, կծու է ու կըսկծալի։ Եթէ շաբաթւա չորս օրը մի կին պարբերաբար օրական տասնուչորս ժամ լւացք լւա, սապոնի, չորերի, տաշտի հետ կռւի, մատների միսն ու եղունգը այնքան հարի, որ մաշի, ճեղճեղւի ու արիւն վազի, յետոյ էլ, չեմ կարող երևակայել, թէ ինչ գերբնական ոյժով երկու օր էլ իրար վրա հաց պիտի թխէ, կիսից հետ թոնդիր կախւելով, բարկ թոնիրի գոլորշիների մէջ խաշւելով։

—Ուրեմն մօրքուրդ ինչ անէր, պարտականութիւնները չկատարէ՞ր։ Թողնէ՞ր երեսի վրա զաւակներին քաղցած, պատռւած, խեղճ ու անտէր, գնար զւարճութիւններին անձնատուր լինէ՞ր…։

—Յայտնի բան է, մարդու գլխին փորձանք որ գա, ուզի, չուզի պիտի անէ։ Բայց տեսնենք ամենքին կյաջողի՞, ամեն կին ոյժ և այնպիսի պինդ կազմւածք կունենա՞, որ դիմանա, բաղդ կունենա՞, որ Արմէնի նման զաւակ հասցնի։ Միայն թէ մարդիկ անխիղճ են, իրենց կրքի, կամքի և մոլութիւնների համար կեանքերը և կարողութիւնները կփչացնեն, կթողնեն,

կերթան, կամ կմեռնեն, ամեն ծանրութիւն և տանջանք կանանց վզին թողնելով։ Եթէ փեսան չխմէր, չխաղար, այդ մոլի ճանապարհների վրա չփչացնէր կարողութիւնը, ինչ՞ մօրքոյրս իւր երիտասարդութիւնը կարօտութեան, տանջանքի և արտասուքի մէջ պիտի անցկացնէր։ Ինչ՞ նրա ընկերակիցները պիտի հրճուէին ամուսինների գրկում, առատութեան մէջ, իսկ ինքը ոտքը չարժողի դռներում բան անող պիտի դառնար։

—Բայց եթէ փեսան ազնիւ մարդ լինէր, ամբողջ կեանքում սիրէր, յարգէր և փայփայէր կնոջը և բաղդի բերմունքով յանկարծ ընկնէր, միթէ՞ մօրաքոյրդ պարտական չէր փոխադարձաբար ամուսնուն հետևել և նրա զաւակների հոգսը քաշել, մեծացնել, կարգի շարել։

—Այդ դէպքում խնդիրը տարբեր է, միայն թէ ինքը ինչքան էլ ձգտում ունենա, որքան էլ հերոսական ջանքեր թափէ. հօրը չի կարող փոխարինել։ Զաւակը հօր լծի տակ կարող է մարդ դառնալ։

Սիրելի մայրիկս.

Հոգեակս Սիրանոյշ.

Ձեզ սոյն նամակը հասնելիս, ես արդէն սահմանն անցած և գուցէ Կարինի դաշտն էլ հասած լինեմ։ Թէ ուր եմ գնում, այդ բոլորդ էլ լաւ գիտէք, ձեզ կրկնելու կարիք չկա։ Հազար ներողութիւն, որ ես հնարաւորութիւն չունեցա ձեզ գրկել և մնաք բարովս շրթունքներովս արտայայտել, գրով կատարում եմ պարտականութիւնս։ Դուք լաւ գիտէք, որ ես սրտաճմլիկ տեսարաններ չեմ կարող տանել, արտասուալից աչքերով չէի կարող բա-

ժանուել, շատ ուրախ եմ, որ այսպէս էլ դէպքը բերեց։ Երբ պարտքը կոչում է, երբ թշուառների ճիչը երկինք է հասել, երբ հալածուածների մորմոքը կարեկցութիւն է գտնում նոյն իսկ օտար աշխարհներում, տանը, սիրելիների շրջանում, ես չէի կարողանալ ձգուել ու հըրճուել և ձեզ հետ սեղան բոլորած ստամոքսիս ծառայել։ Ես դիմում եմ պարտքիս կողմը, յոյս ունենալով, որ կարող եմ մի քանի թշուառների արտասուքը ցամաքեցնել և մի քանի վշտացեալների հոգին խաղաղել։

Իմ խանթի գործս կարող է կառավարել հայրիկս, կամ Սիրանոյշ դու ինքդ անձամբ և եթէ լրջութեամբ հետամուտ գործին, կարօտութիւն չէք քաշիլ և օտարի օգնութեան, կամ աշխատանք գտնելու չէք դիմիլ։

Համբուրելով ձեզ բոլորիդ, շտապում եմ այն կողմը, որտեղից ազնիւ մարդը երբեք թէքելու իրաւունք չունի։

Ձեր Արտաշը։

Կարս — Ուրգան, Մայիսի 7-ին 1899 թ.

ՀԵՂԻՆԱԿԻ ԵՐԿԵՐԸ ԾԱԽՈՒՈՒՄ ԵՆ

ՎԻՊԱԿԱՆ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԽ

ՊԱՏԿԵՐՆԵՐ Տասը Պատ. Թրքահայերի կեանքից 1 ր. 5 ղռ.
ՎԻՐՔԵՐԱՅԻ ԳԵՂՋՈՒԿԸ „ „ 1 ր. 5 ղռ.
ԱԼՄԱՍՏ, 1 հատոր, „ „ 1 ր. 5 ղռ.
ԱԼՄԱՍՏ 2 „ „ „ 1 ր.—5 ղռ.
ՋԱԻՐԱՀԻՐ 77-78 թ. Ռուս Թուրք. կռւից արկած 1 ր. 5 ղռ.
ՎԻՊԱԿՆԵՐ Երկու վէպ. Թրքահայերի կեանքից 1 ր. 5 ղռ.
ԻՓՓԱԾՆԵՐԸ պատկերներ Տաճկահայոց կեանքից 1 ր.-5 ղռ
ԿԱՐԵԼԻ՞ Է ՍԻՐԵԼ պատմական վէպ 1 ր. 5 ղռ.

Ընտիր թղթի վրա իւրաքանչիւր հտ. 2 ր. 10 ղռ.

ԽԵՆ - ԿԱՐԱՊԵՏ. Թրքահայ. կեանքից „ 1 ր. 5 „
ՔՅՈՒ - ԵՂԻԿ „ , „ 30 կ. 30 շհ.
ՑԽՆՈՑ „ „ „ 30 կ. 30 շհ.
ԺԱԹԱՆԳՆԵՐ „ „ „ 30 կ. 30 շհ.
ԻԼԻՍԱԻ ԱԹԱՔԵԼԸ „ „ „ 25 կ. 25 „
ԹՈՒԼՈՒՄԲԱՋԻՆԵՐ „ „ „ 10 կ. 10 „

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ

ՑՈՒՑԱՆ Երեք արարուած. Թրքահայ կեան. 1 ր. 5 ղռ.
ՍԱՐՐԱՖ Հինգ „ „ „ 30 կ. 30 շհ.

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԽԱԼԻՖԱԹ Պատմական տեսութիւն. 30 կ. 30 „

Գտնել Թիֆլիսի Կենտրոնական և Գուտտենբերգ գրավաճառանոցները։

Գրավաճառները կարող են դիմել նոյնպէս.

TAURIS (Perse) ATRPET

Որոնց կը լինի սովորական 20 % զիջումն։

Բ

ՎԻՃԱԿ

ՎԻՃԱԿ

I

Սիրելի՛ք, ինձ շատ էլ հաճելի չէ, վիճակս ձեզ պատմելը· բայց որ պահանջում էք, պարտաւորուած եմ կատարելու։ Միայն թէ խնդրում եմ, ներողամիտ լինէք գռեհիկ լեզւի, դարձւածների համար, ուշք չդարձնէք անճաշակ դասաւորութեանս, որովհետև ինչ որ յիշեմ կարևոր դէպքում ձեզ յայտնելու եմ, առանց կանոնաւոր կերպով մտածելու և դասաւորելու։ Մի ձանձրանաք, եթէ ես սկսեմ իմ պատմութիւնը մի քիչ վաղ ժամանակից, յիշեմ մանկական օրերիս այն արկածները, որոնք մեծ ազդեցութիւն ունեցան ինձ վրա, իմ կեանքի ընթացքում։

Մենք ապրում էինք Զրիկում։ Այդ գիւղացի էինք չեմ ասում, որովհետև մեզնից խլել էր մեր բոլոր հողերը քաղաքացի մի Թուրք վաշխառու, որը մէկ քանի հարիւր ղուրուշով գրաւել էր մեր ամբողջ կալւածքը։ Գիւղացի - հողագործ էինք առանց մի թիզ գետնի տէր լինելու և ընտանիք պիտի պահէինք քսանը

երկու շնչից բաղկացած։ Վաշխառուն, որ նստում էր Մուշ, այնքան բարի էր եղել, որ մեզ մեր տնից դուրս չհանելուց զատ, բարեհաճել էր, որ իւր մեզանից գրաւած հողերը դարձեալ մենք մշակենք, վարենք, ցանենք, քաղենք, կալսենք և, իրեն պետական հարկերը տալուց յետո, մնացորդը կիսենք իրեն հետ, այսինքն *մարաքա* էինք։

Մեր տունը, մեր պապենական օջախում մենք վարձւոր էինք դարձել, մեր դարաւոր կալւածների վրա էլ վարձկան-մշակ։ Մշակ, այն էլ առանց օրականի, առանց որոշ վարձագնի։ Մեր տէրերի անասուններով, սայլերով, գութանով, արօրով և ուրիշ գործիքներով պիտի մենք տքնէինք ամբողջ ընտանիքով, քան երկու հոգով, տղամարդով ու կնիկմարդով և եկած արդիւնքից պիտի վճարէինք նախ պետական և հասարակական հարկերը, պաշտօնականների, աղաների և բէգերի բաժինները, յետո պիտի տայինք վաշխառուից վարձուվեր առած հողի, տան և գործիքների գնի տոկոսն ու մնացածը պիտի կիսէինք այդ վաշխառուի հետ, որպէս վարձատրութիւն մեր տանջանքների։

Թէ մեզ որքան բաժին էր հասնում, այդ չափերով չեմ կարող հասկացնել, բայց այսքան կասեմ, որ միշտ քաղցած ու մերկ էինք ամբողջ տնով-տեղով։ Հայրս մի կապոյտ վարտիկ ունէր, որի գոյնգոյն և պէս պէս կարկատանները միշտ աչքիս առաջից չի հեռանում։ Կապան սկզբում ինչ կտորից կարուած լինելը մարդ չէր կարող ըմբռնել, օձիքի երկու քովերը շալ գուլպից այնպիսի այլանդակ կարկատաններ էր գցած, որ կարծես ոտքերն ուսերին բարձրացրած լինէր։ Մօրս,

քրօջս, հարսների շորերից ո՞ր մէկն, որ մի օճառագործի պղինձն ընկնէր, կարող էր միջից բաւական ճարպ դուրս գալ։ Պապիս աբայի կարկատաններից եթէ մի թել քաշէին, ամբողջապէս ցնցոտիների կտորները ոտքերի տակ կթափուէին։ Տրեխները մեզ համար մեծ շռայլութիւն էր և միայն ձմեռը երբեմն երբեմն հայրս ծակծկուած կաշուի կտորներ էր ոտքերին անցկացնում, եթէ հարկ էր լինում տնից դուրս գալ և տեղ գնալ։

Գարի հացը մեր սովորական պարէնն էր, այն էլ խնայողութեամբ։ Մամս երեք օրը մի անգամ հաց էր թխում, այն էլ համրանքով-չափով, այնպէս որ թոնդրի շուրթը թափուած երեխաների ձայնը կտրելու համար, նա այրուած հացի սրկներից մատ մատ կտրում, շպրտում էր գոռալով—լակոտներ, *գլխունցէք, ձայներդ* կտրեցէք ու...։ Մանրներիս և կանանց բաժինը թոնդիր թափած և մոխրի մէջ կոլոլուած *կունջա* էին, որոնք փոշուց մաքրելով կտրտում ու լափում էինք տաք տաք...։ Պանիր, յայտնի բանէ երեսը քաշած չէչիլ պանիր ընկնում էր երբեմն ձեռքներս, տարին մի քանի անգամ, երբ դրացիներից բարեհոգիները մաս ու բաժին էին ուղարկում։ Իսկ այդ պանրից մաս մեզ մանրունքներիս չէր հասնում, պապը պիտի ուտէր, հօրեղբայրը պիտի ուտէր և կամ հիւրերը։ Եթէ մի բան աւելանար այդ պանրի փշրանքներից, կանայք իսկոյն աղջրի պուտուկը պիտի գցէին, որպէսզի տունը յանկարծակի հիւրեր գալիս՝ քիչ թէ շատ երես հանելիք բարի ունենան։ Մամս թուխս էր նստացնում. հաւ, հաւկիթ, ձագ ու վարեկ գտնւում էր տներս, բայց մենք միայն զատկից զատիկ ձուի համն էինք տեսնում

իսկ մնացեալները չարչիներին ու չորբաջիներին էր բաժին դառնում, որոնք հատ ու կտոր ապրանք էին տալիս կանանցը, թել, ասեղ, ապլուխ և երբեմն կըտաւ...

Տաք կերակուրներս սպասն էր։ Թան, գարու ալիւր և կորկոտ, այս էր մեր սպասի բաղադրութիւնը. և եթէ երբեմն երբեմն սոխ, համեմ ու ռեհան ձեռք բերէին ու մէջը գցէին, աւելի ախորժակով էինք ուտում։ Իսկ միս, մսի կերակուր, ոչ թէ մենք, գիւղում և ո՛չ ոք չէր գտնում. չտեսնուած բան էր։ Եթէ մենք մսի համն ու հոտն առնում էինք, եթէ բերնըփոխ մի համեղ կերակուր ուտում էինք, այդ էլ հերիսան էր։ Տօներին, նշանաւոր տաղաւարների ճրագալոյցին գիւղի համփաներից մէկը մի հորթ, կամ մի կով էր մատաղ անում և այդ մատաղի ամբողջ միսը գըցում էին մի պղնձում ու վրան կորկոտ լցնելով եփում։ Եփում էին ամբողջ գիշերը և առաւօտ ժամից յետոյ ամբողջ գեղի հասարակութիւնը բաժնում էր ու վայելում հերիսան։ Այդ ընդհանուր խառնակութեան մէջ մեզ՝ երեխաներիս, եթէ ճարպիկ լինէինք, բաժին հասնում էր, եթէ ոչ, ո՞վ էր մեզանով հետաքրքրւողը։

Գուցէ կարողէք երևակայել, որ չէինք աշխատում, չէինք վաստակում, որպէսզի մենք էլ բաժին ունենայինք վայելքներից.....։ Բայց շատ սխալւում էք, չարաչար վատ էք դատում, որովհետև մեր քսան երկու հոգուց բաղկացած ընտանիքի մէջ ինձանից փոքր չորս տղա կար, որոնցից միայն երկուսը անկարող էին դեռ ևս աշխատելու, իսկ միւս երկուսը հինգ և եօթը տարւան, արդէն Բօղարի ու Բասարի հետ գառներ էին

արածացնում։ Ծերունի պապս, որ ութսունը անցկացրած մի ալևոր էր, պարտաւորւած էր հորթերին արածել գետափում, կամ ձորակում։ Չեմ ասում հօրս, հօրեղբօրս, եղբայրներիս և հօրեղբօր որդիներիս, որոնք սար, ձոր էին տակ ու վրա անում, գետինը դարձնում, ցանում ու հնձում և կալերից թէճերով ցորեն ու գարի դուրս բերում.....։

Հէնց կրակն այդտեղ էր, որ աշխարհի բարին մեր ձեռքից էր անցնում, իսկ մենք դարձեալ թանի ու գարի հացի կարօտ էինք մնում։ Յայտնի բան է և՛ զարմանալի է և՛ անհաւատալի, բայց որ աչքերովդ ընկնէք մեր շրջանը, քննէք ու դիտէք, շատ բան կը սովորէք։ Պահածներս թէ կովերը և թէ ոչխարները մեր վաշխառու Մստօ-բէգին էին պատկանում։ Դեռ Ապրիլի մէջ այդ վաշխառուի մայրերը-երկու դահիճ քաւթառ գալիս էին ու սարերի լանջերի վրա խփում իրենց վրանները։ Վրանները, որոնց իւրաքանչիւրը մէկ մէկ տանից շատ ու շատ մեծ էր և յարմարեցրած բաժանմունքներ ունէր։ Մեր տան հարսն ու աղջիկ երկու դասի բաժանւած՝ ծառայում էին երկու վրանում, կովերն ու ոչխարները կթում, պանիր մերում, կաթը մակարդում, խնոցին հարում և ոչխարի բուրդը լւանում, մանում, ներկում. իսկ մենք էլ արածեցնում էինք կովերն ու ոչխարները։ Այդ բարիքից մեր տուն գալիս էր թան ու լոռ, որը մեր աշխատաւորների սնունդըն էր կազմում։ Դրանով էլ բաւականանում էինք, եթէ չխնայէին դժոխքի բաժին ջադու-պառաւները։

Տանն ապրում էին մամս ու մայրս, որոնք երկրը մշակողներին պիտի ուտելիք մատակարարէին,

տան տնտեսութեանը հսկէին, եայլաւորների (զօզան-ցիների) հացը թխէին և ագայի երթևեկ գործակատար-ներին շահէին, ճանապարհ դնէին։ Երիկ մարդ, թէ կին, ամենքս օրական քչից տասնուհինգ ժամ ոտքի վրա վազվզելու էինք, քրտնաթոր ձգտելու էինք, շշմած ընկնելու էինք, թէ ինչ է մի կիսափոր հաց պիտի ու-տէինք Մստօ-բէգի դռան փշրանքներից, այն էլ գարի հաց, մոխրախառն, մեծ մասամբ անալի և երբեմն էլ անեկ։ Եւ այդ հացը միշտ թռչւում էր մեր քրտինքի աղի կաթիլներով, յաճախ դառն արտասունքներով, ու մինչև իսկ ալ արիւնով.....։

Թ՛է տարեկան քանի օրավար հող էին ցանում ու քաղում մերոնք, ես հաստատ չեմ կարող ասել, ո-րովհետև ես երբէք յանձն չառի նրանց հետ երկիր մշակելու դառն աշխատութիւնը, ես միշտ հովուութեամբ անցկացրի օրերս։ Սկզբում ես գառներ էի արածացնում մինչև տասը տարեան լինելս, իսկ յետո ոչխարներ։ Հայրս երկու եղբայրներով, երկու մեծ եղբայրներս իրենց երկու հօրեղբօր որդիների հետ, եօթը հոգով ամսից աւելի միայն գութան էին լծում և դաշտից քառասուն, յիսուն օրով տուն չէին կարողանում դառ-նալ։ Մենակ գութան էին վարում, ճոխ գութան, երեք լուծ միայն գոմէշ էինք լծում։ Յայտնի բան է, այս բո-լորն էլ բէգին էր. աշխարհ, սար, դաշտ սևացնում թող-նում էին մերոնք բէգի գութանով

Սարի գագաթից ես ինձ ու ինձ մտածում էի, երբ նկատում էի մերոնց քաղած որանների դէզերը, ախ, եթէ այդ բոլորը մերը կլինէր, էլ մեզ ինչ կպակ-սէր։ Ամբողջ դաշտը Մուրադի ափերով շարան շարան

կանգնեցնում էին բլրի նման հնձւած ցորենի, գարու, կտաւատի ու կորեկի դէզերը, որոնք կարծես ծովի երեսին ծածանւող նաւերի նման ծփում էին մակարդակ հարթութեան մէջ և աշխարհի նախան-ձը գրգռում, իսկ մեզ, տանջւողներիս, այդ բարին վա-տակողներիս, կալի որքում մնացած կուտերից անգամ խնայում էին բաժին տալ։ Այդ անդադրում աշխա-տողներին ոչ միայն խնայում էին օրապահիկ հացը, իրանը ցրտից ու տօթից պաշտպանող հալաւը, այլ մին-չև անգամ կարգին գործիք էլ չէին տալիս, որ գոնէ նւազ տանջէին անդամները...։ Պէտք է տեսնել, անձ-նական աչքով զննել, թէ ինչ սոսկալի, ինչ կսկծե-ցուցիչ չարչարանքներով էին վաստակում այդ բոլորը, որպէսզի մարդ զգայ, ըմբռնէ, թէ ինչքան է նրա մաշկն այնպէս այրւել, սևացել, ու ոսկորին է կպել — չոր ու ցամաք ողնաշարին։

Մերկ ոտքերը, սրունքները մինչև ծնկները, մերկ բազուկները մինչև արմունկներն ու թևերը, մերկ գլուխը, վիզն ու կուրծքը մինչև պորտն արևի ու քա-մու դէմ, ձիւնի, անձրևի ու կարկտի տակ կռւում էին մերոնք, անընկճելի մարտնչում բնութեան խըս-տութիւնների, հողի ու ջրի դէմ, վաստակում. հաւա-քում, դիզում և ում համար։ Մստօ—բէգի համար, ի-րենց ագայի համար և այդ չարքաշ կեանքը նրանց այնպէս էր շշմացրել, այնպէս էր անզգայացրել, որ նրանք պարզ գրաստի դեր էին կատարում, առանց զգալու, որ իրենք ծախւած գերիներ չէին....։

II

Այս, մաճ բռնելը, լծկաններ վարելը, մանգաղ քաշելը, գերանդի շարժելը, խուրձ վերցնելը և ջւալ շալկելն ինձ համար անտանելի աշխատութիւններ էին։ Մանաւանդ աւելի ատելի, երբ այդ գործի ընթացքում ոչ թէ մարդ իր կամքով է ազատ շարժւելու, ոչ միայն հայրը, հօրեղբայրն ու եղբայրն է վրան խօսելու, այլ Մստօ—բէգի քնձրոտ չիբուխչին միշտ գլխին կանգնած հաճոյելու է, փոխանակ խրախոյս տալու,—Ցա՛ն լակո՛տ, ինչ ես կանգնել, իրիցու լա՛ճ, ինչի՞ ես տատանւում, շտապի՛ր, մութն ընկաւ, արեւը մայր մտաւ, տաք քամին հասաւ, ցորենի հատերը հասկերից գլորան. չգիտեմ էլ ինչ։ Ո՛չ, արեւս վկա, ո՛չ, ես ծոյլ ու թոյլ չէի, կ'ուզէք հիմի էլ տուէք սամարնոց ջւալը շալկեմ, այդտեղից մինչև կշեռքը տանեմ, մինչև Աւճալա հասցնեմ. պէտքս չէ, մենք սովոր ենք, բայց այդ չիբուխչու հրամանները լսելն ինձ սպանում էր, մէջքս միջից երկու կտոր էր անում....։

Մէհմէդ—աղա էր անունը, բայց ի՜նչ աղա, քոնձրոտի մէկն էր։ Տարեկան մի թաղար ցորենով էր ծառայում Մստօ—բէգի դրանը, բայց որ բերանը բաց էր անում, կարծես Սիփանի սարի ստեղծողն ու տէրը լինէր։ Հերիք չէր, որ մեզ շան ու խոզի ցեղակից էր անւանում, բաւական չէր, որ աղբակոյտերով էր հայհոյում ու քամահրում մեզ, դեռ աներեսութիւնով ու աննկարագրելի ազտեղութիւններով էր յարձակւում

մեր սրբութիւնների դէմ, ժամ, աղօթք, պահս խաչ ու պատկեր մեր երեսի դէմ միշտ անարգանքի էին մատնւում և մենք գլուխներս ծռած, պարտաւոր էինք լռել ու կուլ տալ ամէն նախատինք։ Այդ մարդը այնպէս էր դաղել իմ կուրծքս, այնպէս էր խայթել ու թունաւորել սիրտս, որ ես պատրաստ էի ամէն բանի, մինչև իսկ մահւան, ուրախութեամբ դիմաւորել, քան թէ դրա դժոխըմբեր դէմքը տեսնել։

Այդ իսկ պատճառով միշտ հօրս, հօրեղբայրներիս, բոլորին դիմադրել էի, մերժել էի նրանց խնդիրքը և հովւական ցուպը ձեռքիցս ցած չէի դրել։ Միայն չկարծէք, թէ այդ տեղ չկային վերևը յիշածս անարգանքները, տանջանքներն ու նեղութիւնները, ո՛չ, այդ տեղ էլ կային, այդտեղ էլ ունէինք մի խնլոտ Հասօ աղա (առանց աղա տէտղասի խլամ չկա), բայց տարբերութիւնը շատ մեծ էր։ Մանաւանդ որ այնտեղ Մէհմէդ—աղան առաւօտից մինչև իրիկուն գլխիցդ չէր հեռանում ու մարդ պարտաւորւած էր անվերջ նրա դաժան դէմքը տեսնել և խռպոտ ձայնը լսել. իսկ այստեղ ոչխարներիս կթել տալուց յետո, իսկոյն շւշւայնելով, կամ շւինս ածելով հեռանում էի դէպի սարերն ու ձորերը, հեռու մարդկային որջերից ու վրաններից, հեռու դաժանասիրտ աչքերից ու ականջներից, ինձ ու ինձ ապրում էի, թագաւորի նման իշխելով ոչխարներիս ու գամփռներիս վրա։ Վերջինները մի աչքիս հայեացքով ցատկում, թռչկոտում ու բզկտում էին գայլեր ու արջեր, մինչև իսկ երկոտանի քուրդ անասուններ։ Հէնց այս լեռների միջի բացարձակ իշխանութիւնիցս երբէք չէի ուզում բաժանւել և գնալ լծի

տակ անլեզու սորուկ դառնալ...։

Թէև վարդի փնջերի միջից չէր անցնում իմ ճանապարհը, թէև դալար ծաղիկներ չէին սփռուած իմ անցնելիք ուղիների երեսին, բայց ես ուրախութեամբ բոբիկ ոտքերով անցնում էի ապառաժուտ և խճոտ զառիվայրներից, չխկացած աւազուտներից, մացառոտ ու փշոտ սարալանջերից, քանի որ ետևիցս քայլերս դիտող աչք չկար, վրաս խօսող բերան, ճիւաղային հայեացք, դժոխային բառեր...։ Թէ սուր սուր քարերը ճեղքրտում էին ոտքերս, թէ փշերն ու թփերը ծակոտում ու խրւում էին կոշտացած ոտքերիս մաշկի մսի մէջ, թէ քարեր էին գլորւում, կպչում ոտքերիս ու սրունքներիս, վիրաւորում, կսիծացնում և արիւնաքամ էի լինում, բայց ուրախութեամբ տանում էի այդ բոլորը, որպէսզի ինձ չիջեցնեն դաշտը՝ Մէհմէդ-աղաին ծառայելու։ Պատրաստ էի գարնան ամենաբարձր սարերը հանել իմ խաշները, ամենախոր ձորերն իջնել ձմռան, նորանոր, անծանօթ արօտներում ճարակել իմ հօտը, կռւել գայլերի ու արջերի հետ, կեանքս ու արևս վտանգի դրած, մարտնչել աւազակ քրդերի դէմ և նրանց ո՛չ թէ սրին, գնդակին էլ կուրծքս դիմաւորել, բայց չիջնել դաշտ՝ լուծը շալակել։ Ամէն բանից պատրաստ էի բաժանւել, երբէք չէի ցանկալ այնալուիցս զրկւել, որով արջեր էի տապալում և աներկիւղ ամեն տեսակ գազանների դիմաւորում։ Զրկանքներս շատ շատ էր. բայց ամեն տանջանք տանելի էր ինձ համար, երբ աչքիս առաջ պատկերացնում էի դաշտում աշխատողների վիճակը։

Ամեն առաւօտ խլիկիս (թաղիքի ծածկոց հով-

ւական) վեղարում երկու հատ գարի հաց էր դնում քոյրս հառաչելով և այդ հացով պիտի ապրէի ողջ օրը։ Գարի հաց և հովւի չորքաշ կեանք, երբ կարող էի բաւականանալ....։ Մստօ—բէգի մայրերն իրաւունք չէին տալիս, որ մեզ կաթնից, մածնից, կամ կարագից բաժին տային։ Շաբաթական միայն մի անգամ, ուրբաթ օրերը մեզ լոռ էին տալիս։ Խեղճ քոյրս այնքան սիրում էր, այնքան ուզում էր ինձ, որ երբեմն երբեմն պանրի, կամ կարագի կտոր թագնում, գարի հացը ճեղքում, մէջն էր դնում, որ իւր եղբայրը բոլորովին ցամաք, անսնունդ չմնա և ես առանց խղճահարւելու լափում էի այդ պատառները։ Դրանով էլ չէի բաւականանում, ոչխարներից ամենակաթնատուին, երբ որ ցանկանում էի, կանգնեցնում էի և գառի նման ծծում կաթը մինչև յագենալս։ Այնպէս էի վարժւել, որ շատ անգամ իմ բաժին հացը բրդում էի գամփռներիս։

Ինչպէս հրացանս, նոյնպէս և փամփուշտները Մստօ—բէգին էր. հետևաբար ինչ էլ որ որսալի, նրան էի ուղարկելու։ Ամեն օր Հասօ—աղան խուզարկում էր իմ փամփուշտկալը և բանեցրածս գնդակների հաշիւը պահանջում։ Յայտնի բանէ աղւէսի կաշի, գայլի և արջի մորթիները ուղարկում էին Մուշ, որտեղ ծախւում էր Մստօ—բէգը և փողը դարսում իւր սնդուկը։ Քարայծ, կամ եղնիկ եթէ խփում էի, դրա միսն էլ առանց քերթւելու բաժին էր գնում Մուշի Ղայմաղամին ու Միւթէսարիֆին, իսկ թոքերը, սիրտն ու պլոճիկները խորոված էր անում Հասօ—աղան և խժռում Ֆաթմէ—խանումի հետ (Մստօ—բէգի մայրը)։ Փոխանակ շնորհակալ լինելու, Հասօ—աղան դեռ ինձ

հայհոյում էր, եթէ որ և է գնդակս ապարդիւն վատնէի, կամ թէ մի քանի օր առանց որսի ետ դառնայի։ Հերիք չէր իմ գիշեր ցերեկ անխնայ ուշխարների պոչի ետևից շրջելս, պարտաւոր էի որսած կենդանին շալակել և վրան հասցնել, ուշխարը կթելու համար՝ վրանների մօտերքը քշելիս։

Մոտօ--բէգը բնականից խելօք մարդ էր և նա իր կարողութիւնը սրամտութիւնով ու նենգամտութիւնովն էր հաւաքել։ Նա գիտմամբ իւր կթանները, կով թէ ուշխար, երկու մասի էր բաժանել և երկուսն էլ յանձնել երկու կանանց, որոնք իւր խորթ մայրերն էին, որպէս զի երկուսին իրար դէմ մրցման մէջ դնէ և աւելի մեծ արդիւնք ստանայ։ Քաւթառները գիշեր ցերեկ ամէն ջանք գործ էին դնում, որքան հնարաւոր է, խնայողութիւնով օրերն անցկացնել և աւելի բերք ձեռք բերել, որպէս զի աւելի մեծ տեղ բռնեն իրենց խորթ որդու սրտում։ Մոտօ—բէգը, որ երկու պառաւին էլ սարկաբար էր գործածում, օգտւում էր նրանց միամտութիւնից, այլ և այլ խորամանկութիւններով բորբոքում նրանց ջանասիրութիւնն ու աչալրջութիւնը։ Այդ պառաւներն ինչպէս ստրուկ էին իրենց որդու առաջ, նոյնպիսի ստրկական հնազանդութիւն և ծառայութիւն էին պահանջում ոչ միայն իրենց ստորադրեալ աղախիններից, բանւորներից ու հովիւներից, այլ մինչև անգամ իշխում էին Մոտօ բէգի կանանց վրա։

Այդ իսկ պատճառով մեր հարսն-աղջիկները, երեխաներն ու մենք, գրեթէ այս մարմնացած ժլատների ճանկում ոչ միայն ցամաք, այլ մինչև անգամ

պարտաւորւած էինք քաղցած ապրելու և այն անհատնում բարուց, որ գոյանում էր մեր ձեռքերի աշխատութիւնով, մենք զրկւած էինք։ Բաւական չէր որ կողպ ու կողպանքի տակ էր բարին, ամէն բան փակւած և ամէն գործ կատարւում էր Թաթիմէ—խանումի և Նունա—խանումի աչքի առաջ, նրանք անընդհատ կռւում էին մերոնց հետ, թէ գողանում էք, լափում էք, թափում էք, փչացնում էք բարին։

Հարսներս երկուսն էլ օրօրոցով էին տեղափոխւած եալլա և բացի իրենց չարքաշ աշխատութիւններից պարտաւոր էին կերակրել իրենց ծծկերներին։ Բայց թէ ցամքած երակներում դատարկ ստամոքսից որքա՜ն սնունդ էր գնալու, որ կաթ դառնար և երեխաներին կշտացնէր։ Քսանուչորս ժամում, չորս անգամ հազիւ միջոց կարողանային գտնել խեղճ հարսներն իրենց զաւակներին կերակրելու։ Այն ահագին կաթնի պղինձները լցւում, դատարկւում էին, տաշտերը պանրով, քուզները իւղով, ամէն օր սեր էր եփւում, քաղաք ուղարկւում, բայց այնչափ բարուց մի մի քարդան կաթ, կամ մածուն խնայում էին թշւառ դարաքաշներին։

Իսկ աշխատեցնելիս, չարչրելիս՝ երբէք չէին խնայում նրանց ձեռքերին ու ոտքերին։ Իւրաքանչիւր վրան երեք հարիւր գլուխ ուշխար և քառասունական կով ունէր կթելու, որոնց ամէն մէկն օրական երկու անգամ կթելու էին։ Հերիք չէր, որ խեղճ հարսն-աղջիկները առաւօտից մինչև իրիկուն դրանց կթելով, կաթը տաքցնելով, թանը հարելով էին զբաղւած, անգութ պառաւները նրանց ստիպում էին մնացեալ ժամերում թել մանել, գործել, ներկել և դեռ սար բարձրանա-

լով նախրի ման եկած տեղերից վառելիքի համար թիթէն ժողովել:

Հասօ—աղան, որ մի ընդհանուր վերակացու էր բոլոր գործաւորների վրա, անընդհատ ման էր գալիս ոտքով կամ ձիով այս վրանից այն վրանը, այս նախիրից այն հովւի մօտ ու հսկում, որ բոլոր գործերը կարգին գնան. Նա յանկարծակի հասնում էր, կթողների գլխին կանգնում և գոռգոռալով հրամայում, որ ըշտապեն, մինչև վերջին կաթիլը կթեն, հորթերին ու գառներին շատ չուտացնեն և կաթը չը թափեն, չը փչացնեն:

Երբէք չեմ մոռանալ. մի օր կովկիթը կաթնով լի վայր էր դրել մեր մեծ հարսը և ինքն հորթին էր ծծեցնում, երբ եղբօրս մեծ որդին, որ չորս տարեկան չկար, մօտեցաւ կովկիթին և սկսեց լկել ու խմել կաթը: Ես մի հարիւր յիսուն քայլ հեռաւորութեան վրա ոչխարներ էի կթել տալիս քրոջս: Յանկարծ տեսնեմ, որ Հասօ-աղան մօտեցաւ և մի կից տուեց խեղճ երեխին, որ գլուխն իսկոյն խրուեց կովկիթի մէջ, ինքը գլորւեցաւ ու կաթը թափւեց: Հասօ-աղաի կատաղութեան սահմանն անցաւ, քանի որ գիտէր, թէ Փաթմա—խանումն էժան չէր նստեցնիլ նրա վրա այդ մի քուղա կաթը. Նա ուղղակի առաջ վազեց և մի երկրորդ կիցով այնպէս գլորեց երեխային, որ նա գլոր գլոր գնաց, քթից ու բերանից վազած արիւնի և կաթնի մէջ կոլոլած...,:

III

Բոպէի չափ աչքս մթնեց և ես բան էլ չէի նկատում...: Այնպէս վրդովւեցի, որ մոլորւած տեղս մնացի: Շատ անգթութիւն տեսել էի Հասօ—աղաից, բայց այդ աստիճանի բարբարոսութիւն չէի տեսել: Այնպէս բորբոքւեցի, որ թևիս տակի կթան ոչխարի գլուխը բաց թողի և մահակս ձեռքս վազեցի այդ անգութ դահճի կողմը: Բայց քսան քայլ չարած՝ զղջացի ու ետ դարձա ...: Ի՞նչ կարող էի անել, ես ով, Հասօ աղան ով, ինձ հում-հում կուտէր, այսինքն՝ ես նրան ուժովս կարող էի խեղդել, ճմռել, բայց նա իր բանւորներով, ոսկով ու կառավարութիւնով մեզ տնով, տեղով կարող էր կրակին գնել տալ ու խորովել: Ի՞նչ կարող էի անել, քանի որ իշխանութիւնը (հուքիւմաթըն) իրենցն է: Քոյրս էլ խո յետևիցս կանչում էր, Լևոն, Լևոն, ո՞ւր ես վազում, ո՞ւր ես գնում:

Խեղճ աղջիկը գիտէր իմ բորբոքւած բնաւորութիւնս, իսկոյն գլխի ընկաւ և նա աւելի խելօք էր: Ես ետ դարձա և կրկին կթանը քշեցի տարա սարը: գնում էի, բայց ամեն մի թռչունի թռիչքը, ամեն մի սողունի սահիլը պատկերացնում էր աչքիս առաջ անմեղ երեխային կաթնի ու կարմիր արիւնի մէջ թաթախւած գլորւիլը և բորբոքում էր սիրտս: Ես շատ անգթութիւններ էի տեսել, անհամար բարբարոսութիւններ, բայց ոչ մէկը չէի կարող համեմատել այդ

մատղաշ երեխային պատահած դէպքի հետ:

Որքա՜ն հեռանում էի վրաններից ու բնակութիւններից այնքան տխրութիւնն ինձ տիրում էր և ես աչքերս մթնած՝ երբ անզգայութեան մէջ էի խարխափում, յանկարծ Բօղարիս ու Բասարիս որոտալի հաչոցով յարձակումն ինձ սթափեցրեց: Աչքերս բացի տեսա, որ մի բրդաթափ գայլ է մտել հօտը և մի ոչխար է քաշում տանելու: Շները նրան հալածեցին, բայց վիրաւոր ոչխարն ընկաւ: Թէև գնդակի գինը չարժէր, բայց ինձ արդարացնելու համար հրացանն ուղղեցի և գլորեցի գայլին ու անմիջապէս մօտենալով՝ դանակը քաշեցի վիրաւոր ոչխարի վզին:

Հրացանի ձայնի վրա ձիաւորւելով Հասօ-աղան եկաւ ինձ մօտ և երբ նկատեց ակլոր գայլն ու վիրաւոր ոչխարը, սկսեց հայհոյել ու նախատել ինձ, որ երբ ես անհոգ եմ, չեմ զգուշանում, ժամանակին չեմ վրա հասնում և ոչխարներս վտանգից ազատում և կամ զուր տեղը գնդակը փչացնում: Հայրս, մայրս, եօթը պորտս և նախորդներիս գերեզմաններում հանգչած ոսկորներն անգամ մաս ու բաժին ստացան Հասօի հայհոյանքներից, այնպէս որ ոչ տունն ու օջախը, ոչ ազգն ու կրօնը և ոչ էլ սրբութիւնները չը խնայւեցան: Այդ հերիք չէր, սկսեց ապտակները տեղալ իմ գլխին: Հասօն շատ էր կատաղել, սովորականից շատ էր չափն անցկացրել, իսկ ես չէի կարողանում պատճառը հասկանալ....:

Վերջապէս Հասօ—աղան վիրաւոր ոչխարը կապեց ձիու գաւակը, նստաւ ձին ու հեռացաւ, վերջին անգամ սիրտը հովացնելով անպատմելի ուշունցք-

ներով և ես ապուշի նման նրա ետևից դիտում էի ու-մտածում, թէ ինչն էր նրան այդ աստիճանի կատաղեցրել: Առաջին անգամը չէր, որ այդպիսի վնաս էր պատահում, հովիւների ճանկից գայլերը յաճախ են որս փախցնում և այդ բանը անսովոր կորուստ չէր, Հասօն շտապել էր վիրաւոր ոչխարին տանել քաղաք, սպանդանոցում ծախելու և գումարը Մոսո -բէգին յանձնելու, ինչպէս սովորաբար կատարում էր:

Հետևեալ առաւօտ նա վերադարձաւ Մոսո—բէգի մեծ որդու Իմօ—բէգի հետ, որն ինձ տարեկից էր և առանց ձիերից ցած գալու, նրանք եկան ինձ մօտ: Հեռուից դիտում էի նրանց, երբ դրանց ձիերը խրխընջալով մտան ձորը և սկսեցին զառիվեր բարձրանալ: Իմօ—բէգը ոտքից գլուխ շողշողուն զէնքերի և կարմիր ու կապոյտ մահուտի շորերի մէջ էր կոլուած: Իսկոյն նրանց ճանաչեցի և իմացա, որ մի արտասովոր անցքի համար էր նրանց այցելութիւնը, էլ առանց ուշանալու շւինս արի և ոչխարը քշեցի էլ բարձր, սարի լանջերից դէպի կատարը և այնպիսի ժայռերի ու փոսերի միջից էի ման գալիս, որ ոչ նրանք ինձ նկատեն և ոչ էլ ես նրանց դիմաւորեմ: Թէև հեռուից լսում էի նրանց ձայնը, շատ խուլ կերպով, բայց սաստկութեան տւած անդադար բարկանում էի:

Իմօ—բէգն ու Հասօ—աղան այնպիսի նժոյգներ էին նստած, որ ոչ յոգնել գիտէին և ոչ էլ զառիվերից երբեք կըթէքէին: Փրփուրի մէջ կորած՝ կէս ժամ չանցած նրանք բարձրացան սարը և մօտենալով Իմօ-բէգն սկսեց գոռգռալ ու հայհոյելով մտրակել ինձ: Անխընա նա տեղացնում էր հարւածները գլխիս, երեսիս,

կրծքիս ու թիկունքիս: Հարւածի տակ մորթս ու միսս կտրտում էր, սևանում և ցաւի տակ մղկտում էի: Թէև այս և այն կողմը փախչում էի, թէքւում ու կռանում, բայց նժոյգն խոլոյն կտրում էր ճանապարհըն և սոսկալի հարւածներն անխնա թափում էր գլխիս:

Դժոխային հայհոյանքների միջից այսքան միայն հասկացա, որ Էմօ—բէգը սաստիկ զայրացել էր նրա ձայնը չլսելուս և ոչխարը սարի գագաթը բարձրացնելուս համար, որով իրենց ձիերն այնպէս քրտնել ու փրփրել էին: Այդ մտրակի համը վաղուց փորձած լինելով, ես աշխատեցա խոյս տալ այդ օրը և ազատւել, այն ինչ աւելի սաստիկ տուժեցի: Երբ սրտի բորբոքն իջաւ, այս անգամ սկսեց բուն դատավարութիւնը, որի համար նրան Հասօ—աղան քաղաքից քաշ էր տւել ու բերել: Մեղքս ոչխարը գայլի ճանկը գցելն էր և գնդակը զուր փչացնելը...: Թէև Էմօ—բէգն ինքն էլ հասկացաւ, որ անտեղի էր Հասօ—աղաի բողոքը, բայց ծերունի գործակատարի սիրտը շահելու համար էլ մի քանի մտրակ իջեցրեց և ինձ բոլորովին ջարդ ու փշուր անելուց յետոյ դարձան դէպի վրանները:

Իրիկւան երբ ոչխարը տարի վրանները կթելու քոյրս ասաց.

—Լևոն ջան, երեսդ էդ ինչ է եղել, ինչի է կապտել:

—Բան չկա, ասացի, քոյրիկ, մեզ էլ այս է վիճակւած: Ի՞նչ պիտի անենք, քանի որ ինչպէս պապին ասում է, հիւքիւմաթն (իշխանութիւնն) իրանցն է, իրանք են տէրը երկրի...:

—Ջանիդ մատաղ, ապպէր ջան, այդ ինչ օրն

է գցել քեզ անհաւատի լակոտը: Քեզի մեռնեմ, Մշու Սուլթան, էլ երբ պիտի հասնես դու մեր հաւարին, քանի՜ մէկ պիտի թողնես մեզ էս անօրէնների ճանկը գերի:

—Մշու Սուլթանն ինչ կարող է անել, ասացի հառաչելով, քանի որ մենք Աստծու մեզ պարգևած շնորհից—խելքից չենք օգտւում: Պիտի իմանաք, որ շատ էլ յիմար չէի. ձեզ պէս գրող, կարդացող, մեծ ուսում չունէի, բայց արևուն մատաղ մեր վարժապետի, նա էլ ձեզանից էր, նա էլ Թիֆլիզցի էր, Սանդալ էր անունը. նրանից քիչ դաս էի առել, բայց շատ բան էի սովորել: Նա իմ միտքս քիչ թէ շատ բացել էր: Երանի՜ թէ բոլորովին բացւած չլինէր և ես գրաստի պէս, գործիքի պէս շարունակէի իմ դերս և այս դառնութիւնները չը տեսնէի: Չը տեսնէի, թէ ինչպէս երես են շուռ տալիս, թէքւում են ու անխղճաբար ճանապարհ տալիս ինձ իմ արիւնակից—ազգակիցները, որոնք մեծամեծ խոստումներ էին անում երկու տարի առաջ Սուրբ—Կարապետի դարպասում: Թողնենք այս կէտը:

—Հա՛, քոյրս վշտաբեկ սրտով համբուրեց երեսս, քաջալերեց ու ճամբեց ինձ և ես սովորականի համաձայն բարձրացրի ոչխարս սարի լանջը, ուր և գիշերելու էի հօտիս հետ: Սոսկալի տանջանքներով անցկացրի այդ գիշերը: Ամբողջ ոսկորներս ցաւում էր և մորմոքեցնում սիրտս: Հակառակի նման այդ գիշերն էլ քիչ անձրև եկաւ և թէև խլիկս վրաս էր, բայց նա այնպէս մաշւած էր, որ ամբողջ շորերս թրջւեց: Շորեր եմ ասում, չը հասկանաք ձեր պատւական լաթերը, ոչ

գուլպա ունէի ոտքերիս և ոչ տրեխ: Մի վարտիկ ունէի, որ հասնում էր մինչև ծնկներս: Իսկ շապկիս և կապտիս ծակոտիներից ոչ թէ մատներս, այլ թևերս էլ ազատ կարող էին մտնել ու ելնել: Այն է որ սովորած էի մանուկ—մատաղ հասակից, պապերս, պապի պապերս այդ օրով են մաշել իրենց մարմիններն ու մենք դիմանում էինք:

Լուսադէմին սաստիկ դողացնում էի, ատամներս կճրտացնելով դիմաւորեցի արևածագին, բայց, մինչև ոչխարը սարից մօտեցրի վրանները, տաք քրտինքը վերաս թափեց և ես առողջացայ, ինչպէս Բինգեօլից դուրս եկող ծերունի արջերը թարմացած ու կազդուրուած: Սովորականի համաձայն՝ վրանների մօտ, քուղաները թևերին ինձ չը դիմաւորեց քոյրս, որը միշտ ընդ առաջ էր եկել ինձ, դեռ սպասել մի քիչ մինչև իմ հօտի մօտենալը: Այդ բանը իսկոյն կասկած ծընեցրեց գլխումս, մանաւանդ որ երբ ես հիւանդ էի լինում, կամ վշտացած, նա չէր կարողանում հանգիստ քնել ու էլ վաղ էր գալիս նստում մի տեղ և իմ դարձիս սպասում: Համբերութիւնս կտրուեց և ես աղաղակ բարձրացրի ու գոռացի:

—Լուսի՛կ, Լուսիկ ջա՛ն, ո՞ւր ես, շտապի՛ր, ոչխարը կթի՛ր, ուշացայ....:

Բայց Լուսիկը չկար, հարսն-աղջիկներ, ամէնքն իրենց գործին էին, մարդ ինձ չմօտեցաւ, իսկ Էմօ—բէգն, Հասօ—աղան վրանի դռնում առաւօտեան նամազն (աղօթք) էին կատարում: Երբ կրկին անգամ ձայնս բարձրացրի, ներսից դուրս եկաւ Ֆաթմա—խանումն ու գոռաց խռպոտ ձայնով:

—Էդ ոչ ու փուչը ո՞ր կողմն է մնացել, որ օրը կիսուեց նա դուրս չէ եկել ոչխարը կթելու. Լուսի՛, Լուսի՛, շա՛ն աղջիկ, տէրտէրի աղջի՛կ, գետինը բշտիս, ո՞ւր ես, որտե՞ղ ես, ասաց ու սկսեց վրանի ներսը, դուրսը, այս ու այն կողմը որոնել: Բայց աղջիկը չկար, իսկ աղօթողներն ամենայն սառնասրտութեամբ, առանց շուրջ ածելու իրենց հայեացքները, չոքում, ծնրադրում բարձրանում էին:

—Բայց այս աղջիկն ո՞ւր կորաւ, կրկին գայլացած գոռաց պառաւը և Լուսի՛, Լուսի՛, գոռգռալով՝ սկսեց աւելի հեռուները գնալ, կանչել ու նախատել. իսկ Լուսիկը չէր երևում: Վերջապէս Հասօ—աղան աղօթքը վերջացրած նստեց ծալապատիկ և չիբուխը սարքելով ասաց:

—Փուչ արևը, երէկ մի լակոտի հետ փսրտում էր, անշուշտ գիշերս փախած կլինի:

—Ու դուն նրան շան սատակ չարի՛ր, ասաց Էմօ—բէգը Հասօին պատասխանելով, չը կարողացար դիակը փռել:

Այս խօսքերի ձևն ու տօնն ինձ մէջ կասկածներս սաստկացրին, նկատեցի, որ երկուսն էլ նախօրօք պատրաստուած ոճիր էին: Իսկոյն խլիկս վար թողի և մահակս ձեռքս մօտեցայ հարսներին, որոնք նշաններով ինձ հասկացրին եղելութիւնը. գիշերս Լուսիկիս տուն է ընկել անօրէնի լակոտը՝ Էմօ—բէգը և թէ քաշէ քաշ ո՞ւր է տարել, նրանք չեն կարողացել իմանալ: Իսկոյն ընկա այս ու այն կողմը և Նունո—խանումի վրաների տակ, ձորակում, ջրակի կողքին գտա նրա դիակն արիւնաներկ, ըլկուած ու յօշոտուած: Բոլորովին

կասկած չունէի, որ այդ խաղը խաղացել էին Էմօ—բէգն ու Հասօն, բայց փաստ, ո՛չ մի փաստ չկար։

Կամ թէ փաստ էլ, որ ունենայի, ի՞նչ կարող էի անել. մի՞թէ այդ առաջի՞ն բարբարոսութիւնն էր առաջի՞ն անարգանքն էր, որ կատարւում էր մեր տանը։

IV.

Գիւլիս տրաքում էր ցաւից։ Ամբողջ օրը աչքիս առաջից չը հեռացան այդ սոսկալի տեսարանները։

Նոյն օրը ճաշից յետո Հայրս տէրտէրի հետ եկան գոգան և քրօջս ու եղբօրս որդուն տարին հօրեցին ապառաժի տակ։ Գերեզմանը եղբայրս էր փորել, հօրեղբայրս էլ մանկիկներին հորը գլորել և հողել։ Ես ոչխարն էի տարել, չէի կարող յուղարկաւորութեան ներկա գտնուել։ Մերոնք էլ միայն մի երկու ժամով եկել, հորել, շտապել, դարձել էին։ Շատ ցաւեցա, որ հօրս չկարողացայ տեսնել։ Ամիսներով տնեցիներից ոչ ոքի երես չէի տեսնում, բացի հարս-աղջիկներից, որոնք մեզ հետ վրաններումն էին ապրում և Թաթմային ու Նունային ծառայում։

Լուսիկի սպանման խնդիրը փակեցին նրանով, թէ նա անզգամաբար ուզեցել էր սիրականի հետ փախչել, փախցնողները նրան անպատուել, լլկել ու սպանելով թողել, փախել էին։

Խեղճ աղջկան Էմօ-բէգն իւր չար կրքերին զոհելուց, բարբարոսաբար տանջելուց, յօշոտելուց յետո, մի անարգ անուն էլ կպցրեց վրան, մի կեղտոտ առասպել էլ հիւսեցին ու մարսեցին։ Հասօ աղայի վրա էլ շատ ոխակալւեցանք, բայց ոչ ոք վրէժխնդրութեան դիմելու սիրտ չարաւ։ Հէնց նոյն օրն էլ մեր դրացի Մխէի աղջկան՝ Նազուկին բերին կանգնեցրին քրօջս՝ Լուսիկի տեղ և իմ արածեցրածս ոչխարները նա պիտի կթէր։

Նազուկը քրօջս հասակակից և նրանից էլ գեղանի ու բարեսիրտ մի հրեշտակաբարո աղջիկ էր։ Բարձրահասակ, սև-սև աչքերով ու մազերով, վարդից ու խնձորից կարմիր թշերով, ձիւնի նման սպիտակ մարմնով և ոչ գեր, այլ թխլիկ մի գեղջկուհի էր։ Մանկութեանս ընկերն էր և միասին շատ էլ խաղացել էինք, թէև նա ինձանից մի երկու տարով փոքր էր։ Լուսիկիս տեղը չէր կարող բռնել, բայց Լուսիկիս չափ խընամք էր տանում ինձ վրա և աշխատում էր հոգով քրօջս փոխարինել։ Տխրութեանս փարատիչն էր Նազուկը իւր կատակներով և ուրախութիւններով, ցաւերիս ամոքիչը իւր կարճ, բայց ազդու մխիթարանքներով։ Հէնց գալած օրից նա գիւթեց ու գրաւեց սիրտս և ինչպէս կարօտում էի Լուսիկիս սարերի գագաթի վրա, աւելի շատ սիրտս ուզում էր շուտ շուտ վերադառնալ Նազուկի մօտ։

Կեանքս փոփոխութիւն չկրեց, էլի նոյն կըթանը, նոյն գամփռները, նոյն մահակն ու այնալին, նոյն սարերն ու վրանները, բայց իմ մէջ մի ինչ որ արտասովոր փոփոխութիւն էի նկատում։ Կերակուրս նոյն

գարի հացն էր և կթանների լիք-լիք ամբինքները. բայց ես սկսեցի օրից օր նիհարել, օրից օր մտախոհ, թախծալի դառնալ և ամբողջ ժամանակը վիճակիս մասին, ապագայիս մասին խորհել։ Հազիւ տասնուեօթը տարւան լինէի, բայց արդէն դառնութեան լեղի մրուրը քամել էի մինչև յատակը և սիրտս ու հոգիս թունաւորել...։

Վրաններից մի հիսուն քայլ հեռանալուց յետոյ, տխրութիւնն ու թախիծը պատում էր սիրտս և որքան սարերը դէպի վեր էի բարձրանում, այնքան սաստկանում էին սրտիս վրա ծանրացած վշտերը։ Մի կողմը՝ դաշտում միշտ աչքիս առաջ սփռւած էին ահագին տարածութեան վրա տարածւած գիւղերն իրենց բերքով ծածկւած դաշտերով, միւս կողմը սարերն ու ձորերը, որոնց մէջ վխտում էին ոչխարների ու գառների հօտերը, կովերի նախիրները և ձիերի ջոկերը։ Սարերի լանջերի ընդարձակ վանքերն աւերակ ու կիսականգուն, իսկ Մուրադը, արծաթափայլ և շողշողուն Մուրադ գետը, կարծես սգազգեստ հարսի նման լալագին և մեռելային քայլերով առաջ էր գնում, հոսում էր, սահում, չցանկանալով բաժանւել իր սիրասուն ու թշւառ ափերից։

Այդ բոլորն ինձ յիշեցնում էին իմ թշւառ, մեր ստրկալի վիճակը։ Առաւօտից մինչև իրիկուն, գիշերը մինչև զօր, անդադրում տանջւում, աշխատում և աշխարհին կեր ու կերակուր էինք պատրաստում, իսկ մենք քաղցած, զրկւած, մերկ ու բոբիկ մորմոքում էինք։ Ամբողջ Մշի դաշտի բարին, սարերի ու ձորերի անասուններն ու այգեստանները մեր քրտինքների

արդիւնքով կերակրում էին քաղաքացիներին ու լեռնականներին, փաշաներին, աղաներին ոստիկաններին, տէրտէրներին ու վանականներին, քրդի լեռնական բէգերին ու հովիւներին, տռզեցնում էին դրանց ամենին, որոնք կերածներն ուտելուց յետոյ, մնացածները ոտքերի տակ տրորում ու փչացնում էին, իսկ մեր սովալլուկ մատղաշներն ընկնում էին Հասօ-Աղաների ոտների տակ ու սպանւում...։

Ջուխերից վազող ամեն մի նապաստակի ոստոստիւն, սարից գլորւող ամեն մի քարի շարժում ինձ յիշեցնում էին եղբօրս մատաղ զաւակին կաթնաշաղախ և արիւնլւա։ Երկնքում թռչկոտող ամեն մի թռչնի ծլւծլւոցը, թփերի ու ծառերի միջից լսւած թռչնակների երգերն ինձ յիշեցնում էին Լուսիկիս „լէ լէ նէրն“ և ես ուշագնաց ընկնում էի գետին բերնքսիվայր, այնքան մնում, մինչև որ Բօղարս, կամ Բասարս մի ինչ որ առթիւ գալիս լիզում էին երեսս ու ձեռքերս և ինձ ուշքի բերում։ Իսկ այս բոլոր վշտերս մոռանում էի, առժամանակ հեռանում էին ինձանից, երբ ես հօտս առաջս խառնած մօտենում էի վրաններին, որ ինձ դիմաւորում էր Նազուկը կապոյտ սգաւորի կապայով, ալ ֆասով, կանանչ կրծկալով և ծաղկուն զարդարած գոգնոցով...։

Մէկից մինչև երկու ժամ էր տևում իմ արածեցրած երեք հարիւր գլուխ կթանի կթելը։ Ես միշտ պիտի գրկէի ամեն մի ոչխարի գլուխը, որպէսզի Նազուկը կթէր և իր կատակներովն ինձ ծիծաղեցնէր, խնդացնէր և խանդակաթ մօր նման գուրգուրար ինձ վրա։ Այդ ժամերիս մխիթարութիւնը, զգացածս բաւակա-

նութիւնը, քաղցրութիւնը մոռացնել էր տալիս առժամանակ իմ վշտերը, կեանքիս դառնութիւնները և ես մեքենա դարձած՝ վրաններից արօտները, արօտներից վրանները դառնալու և ոչխարներս արածելու և կթելու տանելու պաշտօնս, արքայական գահի ու թագի հետ չէի փոխիլ...։ Կարճ ասեմ, ես սիրահարուած էի և այդ սէրն ինձ դիւթել էր, ինձ կուրացրել էր և ես ստրկացել էի, կուռք էի գտել և այդ կամովին գերութիւնս Բէգի դրան ստրկութեանս հետ համեմատութեան չէր կարելի դնել։

Բայց բաղդը այդ էլ շատ տեսաւ հայի լաճին։ Նրան վայելքներից ընդմիշտ զրկել է անողորմ ճակատագիրը, ասում էր մի նախապաշարուած վարժապետ, և յաւիտենական տանջանքի դատապարտել։ Որով ես էլ, որպէս լաճ այդ դարաքաշ հասարակութեան, իմ կեանքի դառնութեան կարասի մրուրը կուլ տալիս, պիտի չունենայի կեանքումս ուրախ վայրկեաններ, մխիթարիչ հայեացքներ, սփոփիչ համբոյրներ և գուրգուրացող սիրտ....։ Ինչ երկարացնեմ, թէ տանջանքներս մանրամասն բացատրեմ, ոչ թէ այս գիշեր, այլ այս շաբաթ ամբողջապէս դուք պիտի պարտաւորուէք այս յարկից դուրս չգալ, որով թէ մեզ հիւրընկալողին և թէ ձեզ պատժած կըլինեմ, որն իմ նպատակից դուրս է։

Էմօ-բէգը, այն արիւնարբու գազանը, ո՛չ, այդ բառերը չեն կարող ամփոփել այն միտքը, որով ես նրան ուզում էի ներկայացնել, բայց ինչ անեմ, որ դրանից էլ զօրեղ բառեր չեմ գտնում, այն վավաշոտ անասունը, առաջին բարբարոսութիւնը մարսելուց և

մեզ վրա կուշտ ու կուռ ծիծաղելուց յետո, բռնաբարեց և լլկեց ու թողեց Նազուկիս էլ...։

Այո՛, այն վարդը, որ ես ո՛չ թէ չէի համբուրել անգամ, այլ մօտիկից խնայողութեամբ ու ժլատութեամբ էի հոտոտում, նա տրորեց, գլորեց ոտքերի տակ, կոխրճեց ու անցաւ...։

Լրբութիւնն այնտեղ էր հասցրել, սանձարձակ վայրենութիւնն այնպէս էր յանդգնել, որ Էմօ-բէգը մինչև անգամ աներկիւղ, հարկ անգամ չէր տեսել իւր չար կրքերին յագեցում տալուց յետո աղջկան յօշոտել, ինչպէս ծակծկոտել էր քրոջս...։ Ուղղակի մարած, նուաղած քցել էր վրանի մի կողմը, մինչև անգամ չարագործութեամբն ընկերակիցների քովն ազատ պարծենալով...։

Դէպքի հետևեալ առաւօտը, երբ ես միամիտ մօտեցա հօտներիս հետ վրաններին ու ինձ չդիմաւորեց թշուառ աղջիկը, իսկոյն կասկածներս նորոգւեցան և ես երբ բորբոքուած այս ու այն կողմն սկսեցի կանչրտել ու փնտռել հոգույս սիրածին, մի քանի նախատինքներով հայհոյեցին ինձ ու վրա տուին Էմօ-բէգի մարդիկը, որ ինձ թակեն։ Երբ ինձ պաշտպանելու համար դէս ու դէն էի վազվզում, վրանի ետևը տեսնեմ բրդի թելերից պարան է չինել Նազուկը, վիզը գցել, ինքն իրեն խեղդել։

Մտրակի հարուածներն ու մահակի կոպտոցը չէին ազդում ինձ վրա։ Ես բերնքսիվայր ընկա Նազուկի կիսամերկ կուրծքի վրա, համբուրում ու մորմոքում էի։ Փաթման, որ գնահատում էր աւելի, քան թէ որ և իցէ մէկն աշխարհի վրա, իմ ծառայութիւնս, խղճաց ինձ

վրայ, եթէ կարելի է այդ բանը խղճալ համարել, քանի որ նա չէր կարեկցում ինձ, այլ իմ գործունէութեանս կարիքը թելադրեց նրան կեանքս պաշտպանել, ստիպեց, որ դադարեցնեն այդ հարուածները և ազատեց ինձ գանակոծութիւնից։

Շուտով հաւաքուեցին մեր հարսները և ես ըստիպուած թողի Նազուկիս գլուխը և մահակս ձեռքս առած՝ կթաններն առաջս խառնեցի սարը բարձրանալու։ Բայց այս կորուստս սովորական դէպքերի նման անտարբեր չանցաւ։ Ես թէև գնում էի, բայց ծնկներս ծալւում էին, սիրտս մորմոքում, ետ դառնալ էր ուզում, աչքերս մթագնել էին և ամբողջ մարմինս դողի մէջն էր։ Անընդհատ ետ-ետ էի դառնում. հայեացքս ուղղում էի վրանների կողմը, կանգնում էի, բայց խորհել, դատել չէի կարողանում։

Վերջապէս ես ինքս ինձ մտածում էի, էլ ինչ՞ ապրեմ, ինչ՞ եմ ապրում, էլ ինչ նպատակ կար ինձ համար ....։ Քանի՞ մէկ պիտի ես մեքենայի դեր կատարեմ ուրիշների համար...։ Քանի՞ մէկ պիտի ես դիմաւորեմ այսպիսի սոսկալի տանջանքների ...։ Քանի՞ մէկ բողկի ու բանջարի պէս իմ հարազատներին պիտի տրորեն, փշրեն և ես քարի, ապառաժ քարի նման համբերեմ... Համբերելուց ջոկ դեռ դրանց ստրկաբար ծառայեմ, դեռ նրանց մահակի ու մտրակի տակ դողամ, դողդողամ ու սոսկամ...։

Այս մտքերը չգիտեմ որքա՞ն ինձ տանջել էին, ու ապշեցրել, երբ ես յանկարծ Բողարիս լեզուի տակ սթափուեցի։ Աջ կողքիս պառկել էի մի ապառաժի վրա, ձորի բարձունքում, որտեղ արածում էին կթաններս։ Յանկարծ նկատեմ, որ Էմօ-բէգն է գալիս իմ կողմս, ատրճանակը ձեռքին։ Նրա շարժումներից նկատեցի, որ միտքը չար է։ Իսկոյն քարի ետևն անցա և հրացանիս գնդակը նրա գլխին ուղղեցի, արձակեցի, գլուխը փշրեցի և ըղուղը ցրուեցի։

V

Իմ կրքերն այդ արկածից յետո միայն, քիչ խաղաղեցան...։

Է՛լ կթանների մօտ ես չէի կարող մնալ, էլ Մստօ-բէգի ծառայութեան մէջ չէի կարող ապրել, էլ մեր գեղում ինձ ապաստանարան չկար, էլ յայտնի մարդկանց մէջ ես շրջել չէի կարող...։ Իսկոյն թողի ոչխարները, առի հրացանս և փամփուշտներս ու սարերի կողմից Սասնո ճանապարհը բռնեցի։ Դաշտում ոստիկանութիւնն ու թուրքերն ինձ չէին թողնիլ քայլերս փոխելու, միայն Սասնո ձորերում և բարձունքներում կարող էի պատսպարուել։

Քաղցած, զրկուած ու տանջուած՝ աւելի լաւ չէ՞ր, որ ես անօթի, պատառոտած և չարքաշ ապրէի Սասնո բարձունքում ազատ ու անկախ, քան թէ Մշի դաշտում, այն էլ Մստօ-բէգի նման գազանի դռանը...։ Սիրտս խաղաղել էր, վրէժս մասամբ լուծուած էր, բայց մտածում էի Հասօ-աղայի և Մէհմէդ-աղայի մասին,

որոնք որպէս թունաւոր իժեր, մէկը դաշտում, միւսը սարի բարձունքում թունաւորում, աղուլում ու ապականում էին հարազատներիս։

Երկար մտածելուց յետոյ, ասում էի, դրանք ինչ մեղք ունին։ Դրանցից ամեն մինը մի փոքր հացի համար էր ծառայում և այդ հացից չզրկւելու համար, սրկաբար, ամենայն ճշտութեամբ կատարում էին իրենց մեծաւորի հրամանները։ Եթէ այդպէս չվարւէին, կարող էին այդ կերած հացից էլ զրկւել, որոնց կարող էին յաջորդել վատթարագոյնները։ Ամեն բանի մէջ մեղաւոր մնում էր Մստօ-բէգը, որը մի երկու հարիւր ղուրուշ փոխարինութիւն անելով՝ տիրել էր մեր պապենական կալւածներին և մեզ ստրկացրել։ Իմ հայրս ինչի այդ օրն ընկնէր, ինչի՞ պարտ ունէր և այդ տնօրէնի ճանկըն ընկնէր….։

Վերջապէս միայն իմ հայրս չէր պարտքի տակ ընկել, միայն մեր կալւածները չէին օտարացել….։ Քանի՜ քանի՜ մեզ նմաններ կային, քանի՜ քանի՜ Մստօ-բէգեր կային Մշու դաշտում, Խնուսում, Օվայում, Դերջանում ու Քղիում։ Միթէ Բիթլիսն ու Վանը, Էրզրումն ու Երզնկեանը նոյն օրում չէին։ Երբ այդ բոլորը բարձրանում էր աչքիս առաջ, իսկոյն յիշում էի պապիս խօսքը.—Ջայներդ փորներդ քաշեցէք, ինչ կարող ենք անել, քանի որ հիւքիւմաթն (պետութիւնը, իշխանութիւնը) այդ անօրէններին է։ Տազ արէք ու սքլեցէք….։

Դաշտեցոց բաժին էր ընկել տազ անել, սքլել և իրենց գլուխը ծածկող ձեռքերը համբուրել, իրենց ու իրենց զաւակներին տրորող ոտքերը լիզել….։ Ով որ

դաշտի բարիքը ցանկար վայելել, պէտք այդ ստրկական լուծը—մարաբայական վիճակը վիզն առնէր, պէտք համաձայնէր անվերջ կուլ տալ դառնութեան թունալի բաժակը։ Բայց ուրիշ էր լեռնականների կեանքը. Նրանք մրգով, բոյսով, արմատներով էին ապրում, ցորենը պարտաւորւած էին գնել, նեղութիւնների մէջ տնքալ, բայց աղաներ չունէին, ոստիկանների և անկուշ լեռնական քրդերի կշտացնելու կարիք չունէին, հարկեր չէին վճարում և ղայմաղամի, միւթէսարիֆի ու վալիի իշխանութեան չէին հպատակւում։ Այնտեղ և ոչ մի պաշտօնականի ու դատաւորի թևը չէր հասնիլ, որ հային պառկեցնէր ու ոչխարի նման անդանակ մորթէր։ Ուղիղ է, լեռնցին համարեա միշտ ցամաք էր ապրում և քաղցած գրեթէ մթնեցնում օրերը, բայց դաշտեցի հայի էլ ձեռքը բան չէր մնում, որ կշտանար։

Քաղցած խօ քաղցած, մտածեցի ճանապարհին, աւելի լաւ չէ, որ գնամ Շէնիք պապոնցս տունը և այնտեղ թրքի ու զաբթիէի երկիւղից ազատ ապրեմ։ Ես հաւատացած էի, որ շուտով փնտռելու էին Էմօ-բէգին, իսկոյն ոստիկանութիւնը խուզարկութեան ենթարկելու էր մեր տունը և ինձ հետամտելու, վճռեցի դիմել Շէնիք պապոնցս տունը։ Թէև Շէնիք բոլորովին էլ ապահով չէր կեանքը, բայց գոնէ հարկին կկարողանայի մի երկու ժամում բարձրանալ Սասնո խորքերը և ապաստանել Դալւորիքում։ Երկու-երեք ժամից սարն անցա և մտա Շէնիքի սահմանը։ Հրացանն ուսիս, փամփուշտները կրծքիս շարած, ինքս ինձ ազատ սարերի տէր երևակայելով՝ աներկիւղ ձայնս արձակեցի, բոլոր ույժով հնչեցուցի „վայ լէ, վայ լօլէ“, հանդարտ

քայլերս առաջ մղելով։

Շէնիքում երեք օրից լսեցի, որ եկել խուզարկել են մեր տունը, հօրս, հօրեղբօրս և եղբօրս տարել Մուշ, բանտարկել են և ինձ են որոնում։ Մստօ-բէգը կատաղել էր, երդուել էր իւր հօր՝ Շէյխ-Իբօի գոռով, որ մինչև ինձ կախաղան հանել չտա, կանանցից ոչ մէկին իւր ննջարանը չէ ընդունելու։ Հակառակի նման դէպքը պատահեց Յունիսի սկիզբներին, այնպէս որ, այդ հեր բանող ձեռքերի բացակայութեան ժամանակ, մեր դաշտի գործը բոլորովին պիտի կաղար, հետևաբար ձմեռը գարի ալիւր էլ չէին կարող գտնել, որ սովից փրկէին բազմանդամ գերդաստանը։ Թուրք ոստիկանները նոր պատճառ էին գտել, որ գիւղից գիւղ բոլոր հայ մշակների տները քրքրեն, խուզարկեն իմ պատճառով և իրենց տների ապրուստը կրզեն աղքատ ու թըշուառ քրիստոնեաներից։ Ուր որ մտնէին, յայտնի բան է, դատարկ չէին դուրս գալ, քչից, շատից բաժին կը գտնէին և իրենց օրավարձերը ձեռքերին դուրս կը գային։

Բանը հասել էր և քեռուս ականջին. նա սաստիկ գայրացած ասաց.

—Հօրդ տունը-տեղը, քսաներկու շունչ մանըր ու խոշորին կրակ տուր ու փախիր, եկել իմ տունս ապաստանելու։ Հերիք չէ, որ հօրդ տունը կրակն առած լափում է, ուզում ես, որ պապոնցդ տունն էլ վառես, թողնես...։

Այս խօսքերը դանակի պէս սիրտս ծակեցին. կարծես թէ ես մեծ յանցանք էի գործել, մեծ մեղքի տէր էի։ Սիրտս այնպէս մորմոքեց, որ լեզուս չկարո-

ղացայ սանձել ու լցուած սրտով ասացի.

—Քեռի բանից տեղեկութիւն ունիս, որ խօսում ես, թէ ենթադրութեամբ ուզում ես թունաւորել հոգիս։ Ես ինչ եմ արել. ո՞վ չէր անիլ, ինչ ես պարտաւորուած էի անել։ Անօրէն վավաշոտը քրօջս պղծեց ու յօշոտեց, նշանածիս ըլկեց և ստիպեց կախուելու... և այդ բոլորից յետոյ, որպէս զի ինքն աներկիւղ ու անվախ ապրի, ատրճանակը ձեռքին վրաս էր գալիս ինձ էլ անշնչացնելու, որպէսզի աշխարհի երեսում իւր չարագործութիւններին ո՛չ վկա մնա ոչ էլ վրէժխնդիր...։ Բայց արդարութեան ձեռքը վավաշոտ ճիւաղի գանգը փշրեց...։ Թո՛ղ այժմ ինչ ուզում են, անեն, ինչ որ կամենում են, կատարեն իմ գլխին...։ Ես չեմ թողլ տայ, որ հօրս օջախը կրակ տան այրեն...։ Ես առաւօտ կգնամ ու անձնատուր կլինիմ...։ Ես իմ ոտքովս կերթամ Մուշ, թո՛ղ ինձ կախեն, մորթեն, ես իմ կեանքից ձեռք եմ քաշել, միայն թէ հայրս և հօրեղբայրս ազատուեն։ Ուզում ես դու ինձ կապոտիր և տար յանձնիր անօրէններին ու ազատիր ծնողներիս։

Ես կեանքից ձեռք էի քաշել, ապրել, այն էլ Մստօ-բէգի ոչխարներն արածելու համար, գարի հացով, մերկ ու բոբիկ, արևի, անձրևի, ձիւնի, քամու և ապառաժների մէջ, կեանք վարելու համար չարժէր։ Ինձ համար լաւ էր Թուրքի ճանկում մեռնել, քան թէ աղայի գործակատարների և քալթառների տաժանելի տանջանքներից մաշուել, հալուել և տանջանքով սև օրերը քաշ տալ։ Քեռիս ծնողներիս ազատելու և կառավարութեան բարի հայեացքը գրաւելու յուսով խնդիրս չմերժեց։ Ձիու բխովով ոտքերս ու ձեռքերս շղթա-

յեց, բարձեց բեռի նման իւր սև ջորուն, երկու կտրիճ եղբօր որդիներին ետևը գցած՝ ինձ տարաւ Մշու դաշտ և ինձ փնտռող ոստիկանապետին յանձնելով, միասին գնաց մինչև քաղաք։

Քեռիս իսկապէս ոչ թէ ինձ մատնելու, այլ հօրս, հօրեղբօրս և եղբօրս ազատելու յուսով ինձ զոհեց և յօյսն էլ իրականացաւ։ Ինձ բանտարկելու պէս, երբ ես խոստովանեցա, թէ ինքս էի սպանել Էմօ-բէգին, իսկոյն, Մոտօ-բէգի խնդիրքի համաձայն, Նրանք ազատւեցան, իսկ ինձ շղթայակապ գցեցին անդունդը։ Մոտօ բէգն աչքի առաջ ունենալով իւր դաշտային շահերը, անմիջապէս արձակել տւեց իւր ստրուկներին, իսկ ինձանից նա կամենում էր վրէժ լուծել, որպէս մի գազանից, որ յանդգնել էր տիրոջն յօշոտել...։ Նա ուզում էր անմիջապէս ձեռքովը դատաստան տեսնել, բայց բարեբաղդաբար ես արդէն Թուրքական դատաւորների ձեռքն էի ընկել։

Յայտնի բան է, դատաւորները բոլորովին ներողութիւն չկրեցին իմ արդարանալու փաստերս լսել, ոչ միայն չարձանագրեցին ոչ մի տեղ իմ յայտնածները Լուսիկիս և Նազուկիս գազանաբար բռնաբարելու և սպանելու մասին, այլ քանի անգամ, որ բերանս բացի խօսելու, ոստիկաններն ու պաշտօնեաները բռունցքներով ու մահակներով այնքան վզակոթիս տւին, որ պարտաւորւեցի ձայնս փորիս մէջ խեղդել։ Բաւական չէ, որ Մոտօ-բէգն իւր ծառաներից և գործակատարներից վկաներ էր բերել, որոնք միաբերան հաստատում էին, թէ Լուսիկն ու Նազուկը սպանւեցին իրենց համանիների ձեռքով, հայրս, հօրեղբայրս, աներս, զոքանչս

ու մայրս անգամ, եկան սուտ վկայեցին, թէ Էմօ-բէգը ոչ մի մեղք չունէր իրենց դստրիկների սպանման խնդրում...։

Դատաւորներն ինձ կախելու վճիռ արձակեցին երկու ամիս յետո, իսկ վճիռը դեռ Իսթինաֆից, Թէմիզից պիտի հաստատւէր, որ Սուլթանի հրովարտակը դուրս գար վճիռը գործադրելու։ Ես բանտի խորքերում, շղթայակապ, գրեթէ միշտ քաղցած անցկացնում էի օրերս։ Ո՛չ վճիռն էր ինձ սարսափեցնում, ո՛չ կախաղանը և ո՛չ մահը. ինձ սոսկացնում էր տանջանքը, բանտի նեղ պատերը, զարհուրելի ապականւած օդը և աննկարագրելի, անասելի գարշահոտութիւնը։ Համարեա ամեն օր ինձ վրա մի այնպիսի ուշաթափութիւն էր գալիս, որ ես ժամերով անշնչացած, անզգայացած թաւալւում էի աղբակոյտների մէջ։ Տարաբաղդաբար Յուլիսի և Օգոստոսի սոսկալի տօթ ամիսներն էին, որոնք այրում, խորովում ու թողնում էին...։

Վերջապէս անցաւ մի ամիս էլ, իմացա, որ դուրս էր եկել Սուլթանի հրովարտակը, որը գործադրելու էին, բայց ինձանից ծածկում էին դրա բովանդակութիւնը։

VI

Սուլթանի հրովարտակի համաձայն, հոկտեմբերի միջերքին ինձ բանտից դուրս բերին, շղթայա-

կապ, չորս հետի և զինուած զաբթիէներով և մի ձիաւոր ոստիկանական աստիճանաւորով։ Խեռ դաշտումը ծիւն չկար, բայց ցուրտն արդէն զգալի էր դարձել։ Ինձ միայն յայտնել էին, թէ վճռուած էր ինձ Կ. Պոլիս ուղարկել։ Ոստիկանութիւնից մինչև ոստիկանութիւն էին ինձ տանում յանձնում. օրական միայն չորս-հինգ մղոն ճանապարհ էինք գնում ու հանգստանում։ Սոսկալի կերպով ինձ տանջում էին դահիճ պահնորդներս։ Նախ որ անխնա ամեն մի հասարակ առիթի հրացանի կոթով այնպէս էին թիկունքիս և ուսերիս խփում, որ կապուտկում էր։ Ոտքերիս, թևերիս ծանր շղթաներն ինձ այնպէս էին տանջում, որ ման գալ չէի կարող, մանաւանդ երբ ճանապարհը քարքարոտ, խորդուբորդ և փոսիկներով էր։

—Քալէ, քալէ, ասում էին ու հրմրշտկում։

Թէ ինչ սոսկալի տանջանքներով ձգւում էի դէս ու դէն, որպէսզի չարժանանամ դահիճներիս հարուածներին, խուսափեմ մտրակներից, նկարագրել չեմ կարող։ Ո՛վ էր ինձ պաշտպանելու, տեղի, անտեղի, տեղացնում էին հարուածները։ Ո՛վ պիտի խղճար շանը, մանաւանդ այն ստոր գազանին, որի պաճառով հաւատացեալ իսլամները տանջւում էին, նրան քաղաքից քաղաք տեղափոխելով։ Որքա՜ն ստոր ծառայութիւն էին համարում զաբթիէներն իրենց գործը, որ պարտաւորուել էին մի գեավուրի համար հինգ հոգով մի ահագին ճանապարհորդութիւն կատարել, տանջւել և մինչև անգամ հօկել, որ այդ իրենց գազանաստիճան ստորուկը չը փախչի և իրենց գլխին փորձանք չը դառնայ։

—Օսման աղա՛, ասում էր զաբթիէներից մէկն իւր ընկերոջը, այն խոզին եթէ Մշում կախէին, կամ շանսատակ անէին, մեր դէօվլէթից (հարստութիւն) ինչ կպակասէր, Սուլթանն ինչ կորուստ կունենար։ Արժէ՞ր, որ մեզ այսքան տանջէին մի անհաւատ կռապաշտի զաւակի համար։

—Այդ ասա՛, Հասան աղա՛, այդ ասա՛... Իսլամն էլ աշխարհից վերցաւ, նրա աղիզ Շէրեաթն էլ...։ Այս ինչ կարգէ, որ հինգ իսլամի տանջէն այս ցրտերին, երկրից երկիր թափառեցնեն մի խոզի ձագի համար։

—Ալլահն էլ խօ գիտէ, եթէ մեր աստիճանաւորը մեզ չուղեկցէր, ես մի հարուածով գլխի գանգը կփշրէի, այս ստորութիւնից կազատուէի։ Ախար միթէ կարելի է մի հայհոյողի լակոտի համար ամբողջ ամսով թափառել...։ Բայց էլի իմ անելիքս կանեմ, մրմնջաց ընկերոջ ականջին։

Մազերս փշաքաղւում էին, երբ ես լսում էի այս բոլոր խօսակցութիւնը և անմռունչ, գլուխս կախած շարունակում էի քայլերս փոխել, սոսկալի կսկիծներն ու մորմոքները քաշելով։ Մեր ճանապարհորդութեան եօթներորդ օրը ես լսեցի, որ ինձ տանում են Սինոպ, տաժանակիրների աշխատանոցը։ Այդ բանը ես չէի գիտէր սկզբում, թէ ինչ բան է, վախենում էլ էի հարցնելու։ Այդ բանն էլ դեռ հաստատ չգիտէի, միայն զաբթիէներս իրենց բերանից հատ ու կտոր խօսքեր բաց թողին, որոնցից հասկացայ, թէ ինձ սպանելու չէին, այլ քսանը հինգ տարի աշխատելու էի այդ տաժանակիրների հետ։

Բայց ո՛չ այդ տաժանակրի աշխատանքը, ո՛չ այդ

քսանը հինգ տարին, ո՛չ աշխարհից անջատուած Սինոպի թանձրապարիսպ բանտերն ու աշխատանոցները և ո՛չ էլ ապագաին գլխիս գալիքները ինձ չէին հետաքրքրում։ Ուշքս ամբողջապէս ամփոփել էի, որ ճանապարհորդակից դահիճ պահապաններիս ճիրաններից ազատուեմ, տանջանքներից անձս պաշտպանեմ և մի անակնկալ հարուածով չգլորուեմ...։ Գաբրիէլիս՝ հոգէառիս նման շրջապատել էին ինձ և դրանց ճիրանների տակ, բանտի մթնոլորտից ազատուելուց յետոյ, կեանքն այնքան քաղցրացել էլ ինձ համար, որ ուզում էի ապրել, ապրել ինչ էլ որ պատահելու լինէր, ապրել, մինչև անգամ եթէ հարկ լինէր կրկին բանտ նստելու պայմանով, լոյս աշխարհից, թարմ օդից զրկուելու պայմանով անգամ։ Այդ բոլոր տանջանքների, թանձր ու պինդ որմերի, երկրի խորքերի միջից անգամ ազատուելու լոյս և կեանք վայելելու յոյս կա, իսկ մահուանից յետոյ...։

Մենք գնում էինք, բայց շատ դանդաղ, այն ինչ ցրտերն արագաբար սաստկանում էին և որքան բարձրանում էինք Բարձր-Հայոց կենդրոնական սարահարթը, այնքան խստանում և ցրտաշունչ քամին, մանաւանդ առաւօտ իրիկուն վառում, լափում էր։ Եւ որքան շատ էին նեղում դահիճներս ճանապարհի և բնութեան խստութիւններից, այնքան սաստկացնում էին իմ տանջանքներն ու հարուածները։ Գրաստի նման անմռունչ, պարտաւորուած էի տանել. հակառակ դէպքում ինձ սպառնում էր մահ...։ Մինչև անգամ մի օր զաբթիէներից մինն ասաց պաշտօնականին.

—Եթէ սրան սատկեցնենք, շղթաներն ու շորերը ետ տանենք միւթէսարիֆին և ասենք ճանապար-

հին գլորուեց ու սլճորեց, մեզ ինչ պիտի անեն, ինչ կարող են անել։

Լաւ էր, որ պաշտօնականը նոր-թիւրքերից էր և համոզուած էր, որ ինձ քննութեան են ենթարկելու, որով պետութիւնը մեծ գաղտնիքների տեղեկանալով, կարող էր ապագայում զգուշանալ և այդպիսի փորձանքներից պահպանուել։ Հէնց այդ նպատակով էլ նա ասաց զաբթիէներին.

—Մենք որքան որ լաւ մտածենք, Կ. Պոլսի գիտնականները մեզանից շատ լաւ կարող են ամեն բան նախատեսել և դրան քննութեան ենթարկելով, միւզիր (վնասակար) ների բոլոր գաղտնիքներն իմանալ։ Դրան որ առողջապէս պահանջել են, այդտեղ էլ մի խոր նպատակ կա, որ մեր հասկացողութիւնից բարձր է։

Այս որ լսեցի. սիրտս ամրապնդուեց և շանսատակ լինելու երկիւղից բաւական թեթևացայ, բայց և այնպէս կասկածները սրտիցս իսպառ դուրս չեկան, քանի որ գիտէի և համոզուած էի, որ բարկութեան ժամին թուրք ոստիկանը շատ բարակ բուրուկ բաներ չի մտածում, նա բնազդմանն է անձնատուր լինում և զգաստութիւնը կորցնում։ Երբ ես աստիճանաւորի խօսքերի իմաստի վրա էի մտածում, ոստիկանն ինձանից աւելի արագ եզրակացութեան հասաւ ու պատասխանեց իւր հրամանատարին։

—Է՜հ, Կ. Պոլսումն էլ կարգին բան մտածող չկա։ Թէ որ ճշմարիտ հաւատացեալներ լինէին մեր իշխանները (կղեր-գիտնական), երկնքի սրբազնասուրբ յայտնութեան (Ղուրան) համաձայն կը տնօրինէին, որ

մենք անխնա կոտորենք այս բոլոր բռյաներին, այս միւզիր (վնասակար) գեավուրներին, որով բոլորովին հանգիստ կապրէինք և ոչ մի տեղից երկիւղ չէինք ունենայ։

— Այդ էլ քո խելքի բանը չէ, ասաց զօրականը զայրացած, այդպիսի խօսքեր ձեր բերանից պէտք դուրս չգան, դուք պարտաւոր էք միայն ձեր իշխանաւորների հրամանները ճշտութեամբ կատարել։

— Ձեր ասածը շատ ճիշտ է, բայց...

Էլ չկարողացաւ, չհամարձակեցաւ շարունակել զաբթիէն ու ամենքը լռեցին։ Մենք շարունակեցինք ճանապարհը, բայց ամեն մէկս իւր վիճակից դժգոհ, ամեն մէկս քննադատելով ուրիշների կարգադրութիւնները և առանց համարձակւելու մեր ներքին աշխարհն իրար հաղորդելու, գնում էինք, գնում... խորհրդաւոր հրամանը գործադրելու համար։ Վերջին իրիկունը իջևանեցինք Տուզլաները, որտեղից հետևեալ օրը զաբթիէներն ինձ յանձնելու էին Էրզրումի Ալայ-բէգին (Ոստիկանապետ), որպէս զի կարևոր կարգադրութիւնն անէ։ Մենք պարտաւորւեցինք գիշերել Տուզլաների (աղահանք) կառավարչի տան տակի յարկում, որը մի ընդարձակ ախոռի նման խոյտառակ, անծեփ յարկ էր։ Լուսամուտները թէև բարձր ու մանր, բայց երկաթներ չունէին։ Ինչպէս յատակը գետին էր, հողով ու փոշիով ծածկւած էին պատերն ու առաստաղը։

Տուզլաները (աղահանք) կառավարւում էին պետութեան կողմից նշանակւած պաշտօնեաներն իրենց պահապանների խմբերով և գործաւորներով։ Այդ աղահանքերում աղ-աղբիւրներից հոսող ջուրը չորացնում և աղը

ծախում են ժողովրդին կառավարութիւնից նշանակւած որոշ սակագնով։ Ամբողջ գաւառներ խմբերով գալիս են աղահանք և օրերով սպասում, որ հերթով իրենց տան կարևոր քանակով աղը բեռնաւորեն իրենց սայլերին ու անասուններին և ճանապարհ ընկնեն։ Երբեմն քրդերը մեծ խմբով գալիս են և բռնութեամբ լցնում աղն իրենց ջւալներն ու առանց որոշեալ պետական հարկը վճարելու, տանում են։ Այսպիսի դէպքերում միշտ ընդհարում է պատահում աղահանքի ծառայողների, պահապանների ու քրդերի մէջ։ Մի այդպիսի ընդհարում պատահեց այդ գիշեր քրդերի և աղահանքի վարչութեան մէջ և այնքան նեղն ընկան վարչական պահապաններն ու պաշտօնականները, որ օգնութիւն խնդրեցին զաբթիէներից ու նրանց ստորճանուալից և վերջինս հաւատարմական նախանձախնդրութեամբ իւր զաբթիէների հետ միջամտեց կռւին. նախապէս ինձ իմ որջում կանոնաւորապէս փակելուց յետոյ։

Կռիւն ու աղաղակն այնքան սաստկացաւ, որ ես որոշ լսում էի ոչ միայն արձակած հրացանի ձայնը, այլ մինչև անգամ կռւողների աղաղակը, հայհոյութիւնները և մինչև անգամ սրերի շաչիւնը։ Կռիւը քանի գնաց սաստկացաւ և ոստիկաններն ու պահապանները պարտաւորւեցան քայլ առ քայլ քրդերին հետևելով հեռանալ բնակարանից։ Այս ժամանակ ես արդէն րոպէական արագութեամբ կազմեցի իմ ծրագիրը և սկսեցի բոլոր ճիգս թափելով աշխատել՝ նպատակիս հասնելու։

Աղահանքի գործիքները շարած էին իմ բանտի հարևան գոթում, որի դուռը բաց էր։ Իսկոյն մի բահի կոթը ոտքիս շղթաների մէջ անցկացրի և բահը պա-

տի քարերի արանքը բռնել տալով՝ երկու անգամ վեր ոստոստեցի ու կտրեցի։ Երբ մի ոտքս ազատեցի շըղթայից, իսկոյն թևերիս շղթայի կողպանքը կտրեցի և թևերս ազատելուց յետո, ազատ փշրեցի և միւս ոտքիս շղթայի օղակը։

Ես ազատ էի. բայց անծանօթ վայրում, բարձրացա լուսամուտի գոգը և սկսեցի լսել պահապաններին ու զարթիէ պահնորդներիս։ Քրդերը նրանց բաւական հեռացրել էին Ապահանքից։ Առանց երկար տատանւելու, երբ նկատեցի, որ հանքատան շուրջը պահապան չկա, լուսամուտից ցած իջա և ուղղւեցի ձորամիջով դէպի սարը։

VII

Արագ քայլերով, համարեա թէ վազելով, անցկացա ձորը և մագլցելով բարձրացա ապառաժուտներից դէպի սարը։

Բարձր, լեռների լանջերի վրայով թռչկոտում էի, ինչպէս արծիւն ամպերի միջով և սար ու ձոր, մարդ ու անասուն, գեռունների, մժղուկների նման մանր էին երևում աչքիս։ Ազատւել էի և անկախ, համարձակ առաջ էի գնում, խապառ բանտն ու շղթաները, պահապաններն ու զարթիէները մոռացած, իշխանական հայեացքով, արհամարհանքով շուրջս դիտելով։ Կտրել

էի բռնակալներիս ստրկական շղթաները և ապականւած բանտերի նեխւած օդից ազատւելուց յետո, մանկութիւնից սիրածս վայրերն էի ապաստանել, առանց երկիւղի նշոյլն անգամ ունենալու վայրենի գազաններից, գայլերից ու արջերից, որոնք անչափ բարեգութ են քաղաքային մոլլաներից, զարթիէներից.... և աւելի նւազ արիւնարբու։ Դեռ կէս գիշեր չկար, երբ ես մի որջ գտա մի ձորում, ապառաժի մէջ և առանց երկար տատանւելու ընկա, քնեցա։

Թէ որքան էի քնել, այդ ինձ յայտնի չէ, բայց մի ահագին վայնասունի աղմուկ ինձ սթափեցրեց խոր նիրհից։ Շունչս զսպած, առանց տեղիցս շարժւելու, առանց որ և է ծպտուն ու շշուկ բարձրացնելու, աչքերս չռած, ականջներս ցցած, բոլոր ուշադրութիւնս լսելիքներումս կենտրոնացած՝ լսում էի գողգողագին այդ աղաղակները։ Այդ աղաղակներն աստիճանաբար ինձ էին մօտենում, այնպէս որ սարսափս հետզհետէ սաստկանում էր։ Իրար ետևից զէնքերի պայթումը, գնդակների ահաւոր թնդիւնը, սուլումը, բոցն ու փայլն ինձ սոսկացնում էին։ Եկան մօտեցան ձորին և արդէն քայլերի և զէնքերի շաչիւնի ձայնը լսում էի։ Դրութիւնս զարհուրելի էր, կեանքի և մահի խնդիր կար առաջս և ես պատրաստւեցի վտանգաւոր բոպէում անձնասպան լինել և կրկին չընկնել այդ գազան դահիճներիս ճիրանների տակ։

Բայց բաղդս ինձ չմատնեց, դահիճներս եկան ձորի միջով անցան, կատաղի, գազանային աղաղակներով անցան ու բարձրացան դէպի սարը։ Մտածեցի որջս փոխել, կասկածելով որ կարող էին նոյն ընթաց-

քով ետ դառնալ և այրը գրաւելով՝ ներս մտնել ու ինձ կոտորել: Բայց այդ վտանգն էլ անցաւ, նրանք ուրիշ ճանապարհ բռնեցին և բոլորովին հեռացան իմ որջի բոլորտիքից: Այլ ևս քունը չմօտեցաւ աչքերիս և լուսադէմին նկատեցի, որ թուլացած, վհատուած ետ դարձան զապթիէներն իրենց ատրիճանաւորի հետ և պահապանները Տուզլուի կառավարչի հետ դէպի իրենց բնակարանը: Չորս կողմս լաւ քննելով՝ նկատեցի որ պահապաններ էին նշանակել այլ և այլ կէտերում, այնպէս որ պարտաւորուեցի քաղցած, ծարաւ մտնել որջիս խորքերը և սպասել մթնելուն:

Բայց քաղցն երկիւղից սոսկալի էր, ստամոքսիս տանջանքը մահուան տագնապի մէջ գցեց հոգիս: Նախորդ օրն արդէն շատ քիչ բան էի կերած, գիշերը դեռ ինձ հաց չէին տուած, որ պահապանների և քրդերի մէջ ընդհարումն սկսեց: Ամբողջապէս լքուած ստամոքսիս դէմ, ուզում էի քնել, բայց քունն աչքիս չէր մօտենում, պառկածս տեղը դադարումս կորւեց, շուռ էի գալիս այս ու այն կողքիս: Կարծես կրծոսկրիս տակ մի ինչ որ բորոլ կրծում էր ու կրծոտում, սիրտս ու թոքերս պատառում ու մաշմաշում: Քանի քանի անգամ փորիս վրա սողալով դուրս գնացի, այս ու այն կողմը դիտեցի, բայց սիրտ չկարողացայ անել, մինչև անգամ կանգնելու: Բարեբաղդաբար աղբիւրակը մօտ էր և շուտ շուտ ստամոքսս բեռնաւորում էի անապակ ջրով:

Թէ ինչպէս ողջ օրն անցկացրի, դժուար է ձեզ նկարագրել, միայն թէ մութն ընկնելու պէս՝ համբերութիւնս հատած՝ դուրս եկա որջից և բարձրանալով

սարի գագաթը, սկսեցի շուրջս զննել, փախուստիս ծրագիրը կազմելու համար: Ցուրտ էր և քամին կտրատում, ճեղճեղում էր մաշկս: Դալան-թէքեանի բարձրաբերձ լանջից կազմեցի իմ ծրագիրս: Քայլերս ուղղեցի դէպի Խնուս, հաւատացած լինելով, որ ինձ որոնելու էին Սասնո ճանապարհներին:

Ո՞ր հայ գիւղը մտնի ինձ նման մի ճամբորդ, որ օթևանի և պատրաստ սեղանի չարժանանայ: Ամբողջ տասն և հինգ օր թափառեցի գիւղէց-գիւղ, մաքուր սրտերի, անձնուէր հոգիների շատ պատահեցի: Ամեն տեղ ինձ ընդունում էին, մանաւանդ հասակակից պատանիներն ու երիտասարդները մեծ ոգևորութեամբ և ինձ ինչ որ խորհրդաւոր ճանապարհորդի տեղ էին ընդունում: Որքան պարզում էի ինքս ինձ և գլխիս անցքերը, նրանք աւելի հետամուտ էին լինում ինձանից բան իմանալու և այնքան ամրապնդւում էր նրանց մէջ իրենց կասկածները: Ամբողջ օրերս անձնազոհ ընկերների մէջ էի անցկացնում, նրանց դարդերը լսում, նրանց ցաւերին ցաւակցում և մխիթարում էի քաջալերելով:

Այդ տասնուհինգ օրւա մէջ ինչե՜ր չլսեցի, ինչե՜ր չիմացա և ի՜նչ բաներ չսովորեցի: Վերջապէս հաւաքեցի մէկ երկու կտոր անհրաժեշտ հագուստ ու մէկ մահակ ձեռքիս, ճանապարհ ընկա դէպի Սասուն, նախապէս վճռելով՝ երբէք Շէնիք չմտնել և չերևել ազգականներիս: Մշու դաշտում լսեցի, որ կառավարութիւնը ծնողներիս, ազգականներիս կրկին տարել, բանտն է լցել և եօթն օր յետո Մստօ-բէգի խնդիրքով արձակել է: Իսկ ատրիճանաւորն ու ոստիկանները

Տաճկական կառավարչի հետ մի պրոտոկոլ էին կազմել, իբր թէ ես փախչելիս՝ իրենք ինձ հետամտել են և ես անճարացած ապառաժից ցած էի գլորւել, խշրւել ու սատակել։

Այդ սուտն ինձ շատ նպաստաւոր էր, այնպէս որ պարտաւոր էի դեռ նրանցից շնորհակալ լինել, որովհետև այդ ստով ես ազատւում էի ապագա հետախուզներից։ Մանաւանդ որ արդէն ծնողներս ազգականներս ողբացել էին իմ մահն և ես անդառնալի կերպով նրանց համար աշխարհից անհետացել էի։ Այդ պարագաները չափից աւելի նպաստաւոր էին ինձ համար, ես էլ որպէս նոր աշխարհ եկած, նոր կեանք առած մարդ, մոռացա ծնողներս, հայրական օջախս և Մշու դաշտից, իմ սիրելի վայրերի կողքից որպէս օտարական, անցա, մտա Սասուն։ Բայց այլ ևս քայլերս չուղղեցի Շէնիք, այլ ուղիղ դիմեցի Դալւորիք։

Խելքս-միտքս ամբողջապէս կենտրոնացրած էր այն մտքով, թէ ինչպէս մի օր առաջ գտնեմ Արաբոին, որի մասին այնչափ պատմութիւններ էի լսել և որից դողում էին այդ ժամանակ ոչ միայն դաշտի քրդերը, զաբթիէները, պաշտօնականները, այլ մինչև անգամ սարի լամուկներն ու լեռնորդիք։ Հասա Դալւորիք։ Սուր սուր սարերը, խոր խոր ծերպերը, նեղ նեղ կածանները, ժայռերն ու մացառներն ինձ համար նորութիւններ չէին։ Խլէզի նման սողում, մողէսի նման սայթքում, ցատկում, բարձրանում էի սեպ սեպ սարալանջերով և թաքչկոտում համարձակ, անվախ դէպի վեր, դէպի բարձր, դէպի ազատ, անկախ Գաւառցոց աշխարհն, ուր ոչ բէգ կար, ոչ իշխան, ոչ թուրքի

զաբթիէ, ոչ էլ ղայմաղամ։

Հասա Դալւորիք։ Այդտեղ ես իմացա, ես զգացի, որ բոլորովին նոր եմ աշխարհ եկել և նորից ծնուել։ Ես այլ ևս հովիւ Լևոնը չէի, ես նոր մարդ էի։ Այլևս ինձ չէին շրջապատում իմ անլեզու ոչխարներս, կատաղի գամփռներս, ինձ լսում էին սրտատրոփ և քաջալերում մարդիք, որոնք ոգի և արիութիւն էին ներշնչում ինձ։ Արաբոն չկար, բայց նրան սպասում էին։ Վերջապէս մի գիշեր ուշ ժամանակ լուր բերին, թէ Արաբոն եկաւ, իջաւ Սանասարի տուն և անհամբեր ուզում է ինձ հետ տեսնուել։ Ուրախութիւնից այնպէս էր սիրտս բաբախում, որ ամբողջ մարմնովս դողդողում էի, երբ մութ գիշերին մի որմի տակ նրա հետ տեսնուեցի, գրկուեցի և համբուրուեցանք։ Դեռ կեանքումս սիրտս, ոգիս այդպիսի մի ուրիշ ուրախ բոպէով չէ զեղուել ու փղձկել, երեխայի նման քիչ էր մնում, որ լաց լինէի։

Մի երկու օրից յետո Արաբոի հետ թողինք ազատ Սասունը և կամաց կամաց անցանք քրդերի վրանների կողմերը։ Ոչ ձի ունէի, ոչ էլ կարգին զէնք, Մոտօ-բէգից փախցրածս թւանքն արդէն քեռիս ձեռքից խլել էր։ Արաբոն էլ մի կարգին ձի չունէր, թէև զէնքի կողմից հարուստ էր։ Իսկոյն ծրագիր կազմեցինք, անցնել Մշու-դաշտի կողմերը և մեր ինքնակոչ բէգի՝ Մոտօ-բէգի ջոկատից մի զոյգ ընտիր ձի կորզել։ Այդ բանը մենք երկու նպատակով որոշեցինք անել, նախ՝ որ մենք ընտիր մատեանների (մատակ ձիերի) պէտք ունէինք և նրա ջոկատն արդէն անուանի էր։ Երկրորդ՝ որ մենք ուզեցինք այդ արարքով նրան սոսկացնել

և ստոնյել, որ իրեն գոյն և չկեղեքէ ու չտանջէ դաշտերի թշուառ շինականներին։

Հէնց հետևեալ գիշերը մենք մեր ծրագիրը գործադրեցինք. ոչ միայն երկու ընտիր նժոյգներ բռնեցինք Մստօ-բէգի ջոկատից, այլ այդ ձիերի մերկ թիկունքին բարձրացած՝ մօտեցանք Մստօ-բէգի ամառանոցին և Արաբօն երկու ձիերի համէտներից բռնած սպասեց դռան մօտ, ես երթիկից ներս մտա նրա ախոռը և սէպքիւց իջեցրի երկու նոր թամբ, իրենց պարագաներով և երկու լաւ հրացան ու դուրս հանեցի։ Մստօ-բէգի դռան առաջից առանց հեռանալու, մենք սանձեցինք ու թամբեցինք ձիերը և հեծնելով սլացանք դէպի Խնուս։

Բայց մեր արարքը ոչ միայն չընկճեց Մստօ-բէգին, այլ, ընդհակառակը, նա կատաղած, սկսեց տանջել պատահած բոլոր հայ ճանապարհորդներին և դաշտի մէջ իրեն յայտնի ընտիր ձիաւորներին և ճարպիկ տուն կորողներին։ Ամեն օր նոր նոր լուրեր էր հասնում մեզ, ամեն օր նոր նոր մարդկանց ձերբակալման համբաւն հասնում էր Խնուսի գիւղերը և վրդովւում հասարակութեան հոգին։ Շատ տեղերում իրենք՝ հայերն իրենց վրէժը լուծելու համար, գնում, հակառակորդներին իրենց զրպարտութիւններով մատնում էին բէգին, որն օգտւելով հանգամանքից կեղեքում էր ամենքին։

—Ճար չկայ, Արաբօ, ասի մի օր ընկերոջս, բէգի դատաստանը մինչև չտեսնենք, մեր ժողովուրդը խաղաղելու չէ։

—Լաւ ես ասում, Լևոն,—ասաց Արաբօն մտախոհ,—բայց ասելը հեշտ է, կատարելը՝ դժւար...։ Բէգն այժմ շրջապատւած է անթիւ թիկնապահ քրդերով,

որոնք նրա անունով ազատ կողոպտում են ժողովրդին։ Նրանց ձեռքից ճողոպրելն այնքան էլ դիւրին գործ չէ։ Մանաւանդ քաղաքում՝ Մշում, ուր նրան ծառայում են անթիւ ոստիկաններ և աստիճանաւորներ։

—Այս-գործն ես յանձն եմ առնում, միայն թէ դու ինձ ընկերացիր մինչև խրամատը։ Ես այնտեղից ոտքով կերթամ, կմտնեմ նրա ապարանքը։ Եթէ ազատուեցի, կարողացա փախչել, լաւ, եթէ ոչ, դու կարող ես ձիդ մտրակել և հեռանալ։

VIII

Տատանեցաւ Արաբօն. ոչ համարձակ կարողացաւ առաջարկս մերժել և ոչ էլ աներկիւղ ընկերակցել։ Բայց ես որոշումս արել էի, պնդել,—մեռնել, կամ մեռցնել այդ անզուսպ գազանին, որը յենւած կառավարութեան և բազմաթիւ քիւրդ հրոսակներին, աներկիւղ հարստահարում ու մորմոքեցնում էր թշուառ հայ գիւղացիներին, յափշտակելով նրանց ոչ միայն հացահատիկներն ու անասունները, այլ մինչև անգամ մատաղ կոյսերն ու մատաղ տղերքը։ Այդ արարքով ես մեծ սարսափ կարող էի գցել ամբողջ դաշտում ապրող քիւրդ բէգերի ու շէյխերի վրա, որով կզսպէի նրանց ստորաքարշ կրքերը։ Վերջապէս Արաբօն ճարահատ պարտաւորւեցաւ ինձ հետևելու և ես կեանքս, նորից

գտած կեանքը վտանգի մատնեցի, մահն աչքս առած մօտեցայ նրա տանը, մինչև անգամ սիրելիներիս համար պատրաստակամ զոհուելու, և համարձակ կերպով ներս սողացի։

Մէջ գիշեր էր և Մստօ-բէգն առանձնացել էր իւր կանանոցը, որտեղ թշուառների թիւը փոքր չէր։ Նրա աչքերից քունը փախել էր և նա շրջապատուած մատաղահաս կանանցով, հարճերով, երգչուհիներով և նուագածուներով, չերբէթ էր ընդունում, քաղցրաւենիներ էր կուլ տալիս և ագահաբար ծխում մէկ նարգիլէն կլկլացնելով, մէկ էլ չիբուխը փափսացնելով։ Գրեթէ մերկ կանայքն ու հարճերը զանազան դիրք առած, տարածուած, նստած, պառկած կամ կանգնած, աչքերն իրենց դաժանադէմ բէգին յառած, անընդհատ սպասում էին նրա ակնարկի հրամաններին։ Իսկ նուագածուներն անվերջ ածում էին, գրգռելով երգչուհիների սիրտը, որոնք բոցակէզ հառաչանքներով, աղիողորմ ձայնով, ողբագին կլկլացնում էին և իրենց գայլայլիկներով լցնում կանանոցի ընդարձակ դահլիճը։ Նաժիշտներից մինը, որի ձայնը թագաւորում էր համերգի վրա, իւր սրտամորմոք երգերը վերջացնում էր հետևեալ տողերով.

Բժիշկ, ախպր ինչո՞ւ դուն
Միայն զարկերակս ես քննում,
Ինչի՞ կուրծքս չես ճեղքում
Եւ վիրալի սիրտըս զննում........

Ընդունարանի և կանանոցի մէջ եղած պարտիզից դիտում էի Մստօ-բէգի շուրջը կատարուած բոլոր տեսարանները, որոնք սոսկում էին ազդում ինձ։ Գեղանի, հրեշտակատիպ կանայք թախծալի դէմքերով, հիւծուած սրտերով և թոքերով, բոլորել էին դաժանասիրտ գազանին։ Երգում էին, բայց երգը լոկ իրենց սրտի վշտի ու թախիծի արտայայտութիւնն էր. նուագում էին, իսկ նուագը կարծես նրանց յուղարկաւորութեան տխուր չանուագն էր. ծիծաղում էին, իսկ ժպիտը դէմքերից նորանց վերջին արհամարհական արտայայտութիւնն էր, որ շպրտում էին գազանի երեսն իվեր։ Թշուառներն իրենց տանջանքների բովի մէջ պարտաւորուած էին բաղդաւորի դեր կատարել, թունաւոր ատամների և սուր սուր ժանիքների մէջ կեղծել, թէ իրենք սոխակի գայլայլիկների և վարդի թուփերի ըստուերի տակ հոգեզմայլած էին իրենց սիրահարի սիրավառ գրկում...։

Կանանոցի սրահը զարդարել էր Մստօ-բէգը թանգագին գորգերով, ընտիր թաւշեա վարագոյրներով, բեհէզներով և դիպակներով։ Բազմոցները ծածկուած էին վարդագոյն ատլասի փռոցներով, որոնք ամբողջապէս ասեղնանկարուած էին գոյնզգոյն ընտիր մետաքսէ թելերով։ Բարձերի երեսները պատրաստուած էին մութ կանաչ թաւիշից, որոնց վրա ոսկեթելով և արծաթթելով, հարթակարով և բարձրակարով ընտիր ընտիր բուսական կեանքից նկարներ էր բանուած։ Պատերը, առաստաղը, դռները, անկիւններն ու պահարաններն այնպիսի ընտիր քանդակներով և ծաղիկներով էին զարդարած, որ ակամա բերանս բաց արած, հրապուրուած դիտում էի, մի քանի րոպէով ուշքս կորցրած, դերիցս դուրս եկած, մոռացած ամեն բան, զմայլել էի Մստօ-բէգի առտնին կեանքով։

Ո՛հ, եղբայրներ, մեր տան չուլ ու փալասներից, Հայ շինականի պատառած, ճեղքած կտորներից ջոկ իմ աչքերն ի՜նչ էին տեսել, որ չզմայլէին այդ ընտիր արդուզարդի վրա։ Մի տեսնէի՜ք, թէ ոսկին ու գոհարը, ոսկեթելն ու մարգարիտը թանգագին կերպասների վրա ի՜նչ գեղեցիկ և ի՜նչ նրբաճաշակ զարդարուած էին, մի տեսնէի՜ք, թէ մերկ կուրծքերի, ուսունքների և թևերի վրա մանեակներն, վզնոցներն ապրջաններն ու բիլազուկներն ինչպէ՜ս էին շողշողում ու փողփողում անգին շղթաներով ու եաղութներով, մէկ տեսնէի՜ք թէ ի՜նչ ճարտար ոստոստիւնով պարում ու թռչկոտում էին գեղանի հարճերը և վարդագոյն բոցավառուած այտերով ու իրանով ալէծեր արձակում, ինձ չէիք մեղադրէլ, դուք ինքներդ էլ կմոլորուէիք, կշվարէիք...։

Բայց այդ բոլորն ինձ շուտով ընկղմեցին դառն մտքերի մէջ, ինձ բորբոքեցին և սթափեցրին. երբ սկսեցին մէջ գիշերին ընթրիքի պատրաստութիւնը տեսնել։ Ահագին սփռոց տարածեցին յատակի վրա, որ հացի և կերակրի փշրանքները չթափւին յատակի վրա և բերին տարածեցին խոնչան, որն յատակից հազիւ մի թիզ բարձրութիւն ունէր։ Եւ որքա՜ն արագութեամբ աղախինները բերում էին զանազան աղանդերներ, քաղցրաւենիներ, մրգեր և խմորեղէններ ու ի՜նչ գեղեցիկ կերպով դասաւորում այդ բոլորակ ընդարձակ սեղանի վրա։ Բարձր գրին և Մստօ-բէգն իր յատուկ տեղը նստելուց յետ, կանայքն ու գեղանի հարճերը շրջապատեցին սեղանը։ Եւ ինչպէ՜ս էին լափում և ինչպէ՜ս էին խմում սառը սառը վարդագոյն օշարականները...։ Իսկ այն կողմը, դաշտի մէջ, կամ սարերի լանջի վրա

Մահմադ-աղան ու Հասօ-աղան ինչպէս խլում էին գարի հացի պատառն անգամ իմ եղբայրներիս ձեռքից և մի պուտ կաթը մանուկների շրթունքներից ու նրանց գլորում գազանական կիցերով...։

Էլ չգիտեմ, թէ ինչ եղաւ, ինձ վրա ինչ հոգեկան ճնշում եկաւ և սիրտս ի՜նչ սոսկալի կերպով թրթռաց, որ ես համբերութիւնս հատած թռա ու ներս մտա, մերկացրած դամաս (դաշոյն) ձեռքիս։ Ի՜նչն էր ինձ այդպէս արագ ներս մղողը, ի՜նչ ույժ էր, որ ինձ վայրկենական արագութեամբ թռցրեց, ի՜նչ խիթան էր, որ ես ոգևորուած ու քաջալերուած, աներկիւղ, մենակ նրանց դէմ ու դէմն ելա, չեմ կարող բացատրել։ Սոսկալի վայնասունն ընկաւ, տիկիններն ու հարճերն այնպէս ճչացին ու գոռացին, որ կարծեմ ամբողջ թաղում ձայները տարածուեց։ Բայց Մստօ-բէգը տեղը տեղ շշմած մնաց. երբ ինձ նկատեց։

—Լևօն, Լևօն, ասաց ու լեզուն բռնուեց։

—Ես եմ, ես եմ, ասացի ու վրա վազեցի։

Սոսկալի ճգնաժամի մէջ էի, րոպէն, վայրկեանը շատ թանգ էր ինձ համար։ Մոլեգնած, աչքերս արիւնով լցուած, յարձակուեցա Մստօ-բէգի աղիքներին ու փորոտիքը մի հարուածով թափեցի ու դուրս թռա, մինչ հարճերի աղաղակների ձայնից ներս կխուժէին Մստօ բէգի դռանը լակողների մի ահագին խումբ. որոնցից ոչ մէկը սիրտ չէր անում կնանոցի պարտէզն անգամ մտնելու։ Մանաւանդ որ խստիւ արգելուած էր ծառաներին հարէմի մուտքը, և երբ նրանք մոլորուած մնացել էին և տեղեկութիւն չունէին, թէ ինչ էր կատարւում ներսը, ես մերկ դամաս ձեռքս մտա, նրանց

միջով անցա ու դուրս գնացի։ Այն բազմաթիւ հայկատակներից և ոչ մէկը չյանդգնեց առաջս կտրել և կամ յարձակում կեղծել։ Մինչև անգամ երկիւղներից ծպ-տուն անգամ չկարողացան բարձրացնել։ Երբ ես արդէն բաւական հեռացա տանից և կանանց ողբի ու կոծի ձայնը սաստկացաւ, նոր այդ վարձկաններն սկսեցին գոռալ, գոչել և ահագին աղմուկով սպառնալիքներ կարդալ ու հրամաններ արձակել։

Մինչ այդ՝ ես արդէն հասա Արաբօի մօտ և մենք ձիերս նստելով՝ սլացանք դէպի Մանազկերտ։ Այստեղ ապահով չլինելով մեր վիճակը, մանաւանդ որ Արաբօն միտքը դրել էր կրկին Սասուն դառնալ, գոնէ մի շաբաթով մենք ուղղուեցինք և իջանք Արաբօի սիրականի տունը։ Տաս, տասնը հինգ օր այդ տեղ մնացինք, անհամբեր դաշտից լուրերի սպասելով։ Մոսօ-բէգի կանանցից մէկն ինձ ճանաչել էր, մանաւանդ լըսելով բէգի վերջին մրմունջները—Լեւոն, լեւոն, նա ինձ մատնել էր դատաւորներին և կրկին ծնողներս, եղբայրներս արիւնակիցներս ձերբակալելով զետեղել էին Մշու բանտում։

Բաւական չէր իմ մտատանջութիւնը ծնողներիս մասին, բաւական չէր հոգեկան վշտերս, առօրեա ուտելիքի և ապրուստի հոգսը մեզ մաշում էր։ Հացը, ուտելիքը անտանելի կերպով սղել էր, չէր էլ ճարւում, դեռ այդ հերիք չէ, հալաւ ու կօշիկ մաշուել էին, իսկ փամփուշտներս, թէ հրացանի և թէ ատրճանակի, բոլորովին սպառել էինք։ Անփողութիւնը, մանաւանդ մեր վիճակում, սոսկալի կերպով տանջում էր մեզ և մենք վճռեցինք փող ճարելու հնարքը գտնել։ Իսկ միջոցներ

ձեւք բերելու համար կրկին պարտաւորուած էինք դաշտըն իջնել։

Յայտնի բան է վաճառականութեամբ, հողագործութեամբ, կամ խաշնարածութեամբ փող չէինք կարող վաստակել, իսկ անտառների ու շամբերի որսերս նոյնպէս քաղաք չէինք կարող տանել ծախելու։ Կամա, թէ ակամա, պիտի հեշտ աշխատանքի ետևից վազէինք։ Մոսօ-բէգի տան ճանապարհն ես լաւ գիտէի, Արաբօն էլ խօ չէր գլանում պահապան կանգնելուց, լրտեսելուց։ Կրկին մտա այն դահլիճներն ու կանանոցը և սնդուկները, արկղները դատարկելով դուրս եկա։ Ոսկի, մարգարիտ ու գոհարով բեռնաւորուած՝ մենք դաշտում մի հայ րէիսի (գիւղապետ) տանն ապաստանեցանք։ Րէիսն անամօթութեամբ մեր նուէրներն ընդունելով՝ իսկոյն քաղաք էր հասցրել և զաբթիէ պահանջել։ Անկողիններիս մէջ քնած էինք, երբ ոստիկանները տուն դուռ շրջապատած՝ ուզեցին մեզ կապոտել և քաղաք տանել։

Դեռ լոյսը բացուելուն մի ժամ կար, երբ լուսամուտից առաջին հրացանի գնդակը ներս արձակեցին զաբթիէները։ Իսկոյն սթափուեցանք և պատրաստուած էինք րէիսի ու նրա ազգականների հետ ըմբշամարտելու և դաշոյններս փորձելու։ Մի քանի թեթև վէրքեր և արեան կաթիլներ վայնասուն բարձրացրին տան մէջ։ Մինչ այդ՝ մենք ձիերը թամբեցինք, զինուեցանք (արդէն մենք երբէք քնելու համար չէինք հանւում) և դուրս թռանք։ Մթնում, դռան առաջ, ղամայով երկու ոստիկան թաւալեցրինք և երկու գնդակ էլ հասցրինք երթիկի մօտ գտնւող զաբթիէներին։ Նրանց աղաղակի ու վայնասունի մէջ թողած՝ ձիերս

հեծանք ու մորակեցինք։

— Այդ մատնիչին խնայելու չէ,- ասաց Արաբօն,- անպատճառ հրապարակով սատկեցնելու է, որպէս զի մատնութիւնից ձեռք քաշեն մեր հաստագլուխ անպիտան րէխները։

Հէնց այդ օրը ճաշից յետոյ հրապարակով ձիաւորուած՝ մտա նոյն գիւղը և մարտինիս գնդակով րէխին գլորելով՝ յայտարարեցի, թէ այդ է մատնիչների վախճանը և հեռացա։

IX

Րէխի սպանման լուրը սարսափ սփռեց Մշու դաշտում։ Ամեն տեղ խօսակցութեան նիւթը Արաբօն էր և նրա նոր ընկերը—Ջրիկցի Լևոնը։ „Մատնիչների վախճանը գնդակ պարգեցնելն է“ խօսում էին ամեն տեղ, ամենքն էլ զգաստացել էին և ուրախութեամբ պատրաստ էին զաբթիէների և թիւրք պաշտօնականների ամեն տեսակ նախատինքները, զրկանքները, արհամարանքները, հայոյանքները ու մորակները տանել, քան թէ դաւաճանել ու մատնել։

Էլ մենք ազատ ման էինք գալիս դաշտում և ամեն գիւղ համարձակ մտնում ու գիշերում։ Մանաւանդ որ մենք ոչ մի հայ գիւղացու վրա բեռ չէինք դառնում, այլ ընդհակառակը, մտնում էինք քրդերի

նախիրների մէջ. երկու-երեք ոչխար, կամ մի լաւ կով առաջներս խառնում, բերում էինք հայ գիւղերում, մորթել տալիս, խորոված անում, կամ հէրիսա գցել տալիս ու ապրում, ապրեցնելով մեզ հետ և թշւառներին։ Այնքան խեղճ հայ գիւղացու նախիրն ու խաշինքը տարել լափել էին քրդերը, որ մենք նրանց արածի հազարերորդ բաժինն անգամ ետ խլելու անկարող էինք։ Եւ այսպէս ազատ, համարձակ, դաշտի մի ծայրից միւսն էինք գնում և օրներս մթնացնում։

Հէնց այդ աներկիւղ վիճակը մեզ կրկին դահիճներիս ձեռքը մատնեց։ Ախ՛, ինչպէ՜ս ես պատմեմ, խելացնոր հայրս մեզ դաւաճանեց։ Մի օր ինձ լուր բերին, որ մայրս սաստիկ տանջւում է իմ կարօտով, հայրս փափագում է ինձ տեսնել։ Մենք էլ յիմարացանք, գնացինք։ Ո՞ւմ մտքից կարող էր անցնել, որ դա էր սարքած մեր դէմ և հա՛յրս, հա՛յրս ինձ իր ձեռքով դահիճներին էր յանձնելու։ Մշու միւթասարիֆը հօրս, ազգականներիս ազատել էր բանդից այն պայմանով, որ մինչև մի ամիսը լրանալը ինձ յանձնեն կառավարութեան ձեռքը։ Մեզ լաւ հարբեցրին ընտիր գինիով և քնացրին։ Գիշերը ձեռքներս, ոտքներս կապած՝ յանձնեցին զաբթիէներին, որոնք մեզ դիականացածներիս, կոճղի ու աղքարի նման սայլի վրա բարձեցին, կապկպեցին և մինչև լուսանալը Մշու բանտն հասցրին։ Ճանապարհին անգութ կերպով մորակելով, հրացանների կոթով գնքատելով։ Ամբողջ մարմիններս ծածկւել էր կապտած սպիներով, ոսկորներիս ցաւից շարժւել անկարող էինք և մեզ սայլից վար գլորելով-գլորելով բանտը հասցրին ու կողպեցին։

Սոսկալի կերպով տքում էինք, մորմոքալով այդ երկրային դժոխքում...:

Դարձեալ սկսւեց տանջանքները, բաժանեցին մեզ իրարից, սկսւեց ծեծը, նախատինքը, հայհոյանքն և քստմնելի մարմնական տանջանքները: Այն, ինչ որ կարդացել էք, լսել էք, պատմել են ձեզ, մի կարծէք, որ դրանով կարողացել էք մօտաւոր գաղափար կազմել: Ո՛չ, ո՛չ, ո՛չ, մի հարիւրերորդը, մի հազարերորդը հազիւ նկարագրւած լինի այդ ինկվիզիցիական տանջանքների: Լալա ու Ֆէյզուլլահ փաշա կոչւած շղթաները, համեմատութեամբ մեր քաշած տանջանքների նախանձելի էին: Մտրակ, լծակ, ձաղկիչ, ու մահակ տանելի մասն էին կազմում մեր անընդհատ չարչարանքի: Ամեն օր նոր նոր դահիճների և նորահնար տանջանքների էին մատնում մեզ: Որպէս զի մեզ ստիպեն, որ իրենց ծրագրածի համեմատ ցուցմունքներ անենք, իւրաքանչիւր օր սաստկացնում էին ու աճեղացնում մեր տանջանքները: Մինչև անգամ աքցաններով սեղմրտում ու կապուտ կապտացնում էին մեր մարմնի մսոտ տեղերը և կարթիկներով ճանկռոտում, արիւնլւա անում մեր անձը: Բաւական չէր, որ եղունկներիս տակից եղեգնեա սեպեր էին խրում մեր մսի մէջ, եղէգներ էին խրում նոյնպէս մեր արտաթորման անցքերում: Դեռ այս բաւական չէր, երկուսիս էլ գլուխը պսակեցին հրաշէկ պղնձէ թագերով, բայց տարաբաղդաբար Կ. Պոլսից եկած հրամանի համաձայն, չնստացրին այդ թագերը մեր գլխին, որպէս զի կեանքերիս վերջ չտան, այլ խանձեցին ու գաղեցին մազներս ու մաշկներս և երբ մենք նւաղած տարածւեցանք, նորից գլորել էին մեզ մեր

բանտ կոչւած որջը: Ահա, քննեցէք գլխիս այս լերկ սպիները, որոնց վրա անջինջ կերպով դրոշմւած են մեր յաղթանակների պսակի անփոխարինելի պատւանիշները:

Ո՜հ, ինչպէ՞ս պատմեմ այն նողկալի տեսարանները, ու բանտի ներքին կեանքի, մեր ուտեստի և խմիչքի սոսկալի ապականութիւնները: Հերիք չէին բանտային զաւթիչների, գարշելիների և ուրիշ ծառայողների անխիղճ արարքները, բանտարկեալները՝ քուրդ ու թուրք մեզ օրական մի քանի անգամ խաչ էին հանում ու իջեցնում իրենց զազանավայել ընթացքով: Մենք ոչ միայն որպէս պետական յանցաւորներ դատաւորների և որանց դահիճների ճիրանների տակ էինք տանջւում, այլ բանտի ամեն մի աւազակ, մարդասպան քուրդ թուրք մեր գլխին մի մի դատաւոր ու դահիճ դարձած՝ անզուսպ չարչարում էին մեզ: Այդ զազանաբարո եղեռնագործների ոչ միայն ամենաստոր ծառայութիւնները պարտաւորւած էինք կատարել, այլ մինչև անգամ բռնի կերպով մեզ ստիպում էին իրենց նողկալի կրքերին էլ բաւականութիւն տալ.....: Հինգ տասն հոգով, իրենց շղթաներով յարձակւում էին և սոսկալի հարւածներով գետին թաւալելով յագեցում էին տալիս իրենց ստոր բորբոքումներին....: Եւ այդ բոլորը մենք, որպէս անբան անասուն պիտի կրէինք ու լռէինք.....:

Ամբողջ ութն ամիս մեզ Մշում պահելուց, մեզանից մի որոշ պատասխան չկորզելուց յետո, Կ. Պոլսից եկած հրահանգների համաձայն՝ մեզ երկուսիս միասին տասներկու ձիաւորով ճանապարհ հանեցին դէ-

պի Սինոպ։ Մշու դաշտում օր ցերեկով հրապարակով բէխին մատնութեան համար սպանելը՝ այնպիսի սոսկալի արհաւիրք էր ազդել մարդկանց, որ ո՛չ միայն հայերից, այլ թրքերից ու քրդերից էլ մարդ չհամարձակուեցաւ մեզ դէմ վկայելու։ Մայրս հօրս սոսկալի արարքից վշտաբեկ, ընկել մեռել էր, իսկ հայրս մտատանջութիւնից մոլեգնել ու ցնորուել էր։ Ո՛չ միայն Մստօ-բէգի, այլ մինչև անգամ բէխի սպանութեան գործը չկարողացան ո՛չ մի փաստով մեզ վրա հաստատել։ Կասկածների և կարծիքների վրա հիմնուած դատավճիռը, մեզ կախելու համար, հարիւր ու մի տարուան բերդարգելութեան էր վերածել բարեխնամ Սուլթանը և մեզ տանում էին, որ Սինոպի տաժանակիրների հետ ցմահ աշխատենք խալիֆի նաւարանում...։

Այնքան խիստ հրամաններ էր եկել, այնպիսի սաստիկ հրահանգներ, որ մեզ ուղեկցող աստիճանաւորը և զաբթիէները առանց մի րոպէ մեր կողքերից հեռանալու, գիշեր ցերեկ փոխընդփոխ մեզ հսկելով, անընդհատ տարան մեզ, հասցրին Սինոպ և յանձնեցին տաժանակիրների նաւարանի բանտի վարչութեան ձեռքը։

Այդտեղ սկսուեց մեզ համար նոր կեանք։ Այդտեղ մենք ոչ միայն մարդկային բոլոր իրաւունքներից զրկուածներ էինք, այլ մինչև անգամ լոյս արեգակի ճառագայթների տեսքին էլ չէինք արժանանում։

Բանտ, տաժանակիրների բերդ, ահեղ ու սոսկալի մի ծովափնեա ամրոց։ Պատեր, որոնք կարծր սրբատաշ, կոկ, իրար հպած քարերով, կրով ու աւազով էին հիւսուած երեք արշին հաստութեամբ, որոնք ար-

տաքուստ և կամարների վրա ծածկուած էին տասն արշին թանձրութեամբ հողով։ Տխուր էր արտաքինով և սոսկալի՝ խաւարային ներքինով։ Երկաթեա դռներ, թանձր ու պինդ նիգեր, փականքներ, արգելանքներ և կապանքներ, որոնք մարդու սիրտն ու հոգին մռայլում են և խամրում։ Ապականութեամբ ծածկուած պատերը, բորբոսնած կամարները, մամռապատ նեղ ու աղօտ պատուհանները, գարշելի հոտերն ու գազերը մինչև շշմեցնելու աստիճան թունաւորում էին մարդու և ակամա ստիպում փակել աչքերն, պնդացնել զգայարանքները՝ նուազ տանջուելու համար։ Հապա հագո՜ւստը, ուտե՜ստը, խմի՜չքը, ջո՜ւրը...։

Մեր երկրի անապակ ակների ու աղբիւրների կենսատու, սառնորակ ջրի փոխարէն, պարտաւորուած էինք ծովի ջրի նման մի տեսակ դառն, աղի ջուր խմել, որի մէջ, փոշուց, ապականութիւնից ջոկ, վխտում էին այնպիսի զեռուններ, որ ակամա պապակած շրթունքներից պարտաւորւում էր մարդ ետ տանել դոյլը, որի արտաքինն իսկ զզուելի աղտեղութեամբ էր նախշուած։

Թէ ինչ էին տալիս մեզ հացի փոխարէն, ես նկարագրել չեմ կարող, նրան հացից ջոկ ամեն բանի կարելի էր նմանեցնել...։ Այդ ցեխի գոյն և նման գրնդիկների միջից ինչ բան չէր դուրս գալիս, ինչ համ չունէին այդ գնդիկները։ Բայց քաղցը, ստամոքսի ներքին բորբոքումն այնպէս էր ստիպում, որ թէև զզուելով, ամբողջ մկաններով ու ջիղերով գալարուելով և սոսկալի ցնցումներով, բայց և այնպէս պարտաւորուած էինք լինում կուլ տալ...։ Կուլ տալ արտասուքի խոշոր կաթիլներով այդ զզուելի պատառները թրջելով և մաղ-

ձերս թափելու ասուեղան սիրտներս խառնելով....:

Այն ասուեղանի անընդհատ աշխատութիւնից, ատաղձի, երկաթի, կուպրի ու կանեփի աՀագին բեռների տակ օրական տասն և վեց ժամ չարաչար տոկալուց յետոյ, գայլի նման սովալլուկ ստամոքսներս լցնելու, Հանգստացնելու Համար՝ նիւթերի քննութիւնն ու խորՀրդութիւնն անելու ճար չունէինք։ Օրական մի անգամ էլ մի տեսակ ճարպով ու կորկոտով եփուած շիլա էին տալիս, որն ագաՀաբար լափում էինք իրար ձեռքից խլելով և քանի չորս ժամ անՀամբեր սպասում էինք այդ եղկ ու մեղկ լակի բախշման մեծ ախորժակով...:

—Արաբօ, ասի մի օր ընկերոջս, այս ինչ սոսկալի սուր գազան ենք մենք, որ կեանքի, ապրելու Համար այսքան սոսկաքարշ անարգանքներ տանում ենք անտրտունջ:

Ես այլ ևս չեմ կարող տանել այս վիճակը։ Կամ մեռնել, կամ ազատուել այս նողկալի վայրից:

—Մեռնելը. այն էլ այս մռայլ անկիւնում, շատ էլ Հաճելի չէ, Լևոն՛, ասաց Արաբօն, բայց փախչելու Հնար չկա:

—Ես կգտնեմ, ես արդէն իմ ծրագիրը կազմել եմ, առաջի վճռական կերպով:

—Ի՞նչպէս, ի՞նչ ճանապարՀով:

—Սև ծովը խօ Մուրադից սոսկալի սաՀանք ու պտոյտներ չունի, Սիփանի լճից խօ կատաղի չեն սրա ալիքներն ու յորձանքները....:

X

Պառկած, տարածուած իրար դէմ, երբ Հանգըստանում էինք լուռ ու թախծալի, մտադրութիւնս գործադրելու Համար մի Հանգամանք ինձ կաշկանդում էր։ Որքան Հրճուանքով և ուրախութեամբ էի դիմաւորել առաջին անգամ ընկերոջս, այժմ պարտաւորուած էի նրան լքանել։ Միասին անՀնարին էր փախչել, մանաւանդ որ նրա լողանալու մասին գաղափար անգամ չունէր։ Երբ իրար դէմ նստած մռայլ ու մտախոՀ մնջած էինք, ես նորից խզեցի լռութիւնն ու ասի Արաբօին։

—Լող տալ գիտե՞ս.

—Գիտեմ, բայց չեմ Համարձակւում, տարածութիւնն ու ժամանակը, Հսկողներն ու բանդապետները դաՀճից դաժան են։

—Բայց այս կեանքը խո մաՀուանից սոսկալի է։

—Բայց և այնպէս քաջութիւն պէտք է, իսկ մենք բոլորովին ուժասպառ ենք։ վախենում եմ, որ ձկներին կեր գնանք։ Եօթն ամիս է, որ մեր Հիւթերը բոլորովին ծծեցին։

—Աւելի լաւ է ձկներն ուտեն իմ ոսկորներս ու մկաններս, քանթէ այս դժոխքում ցմքիմ ու կաշիս ոսկորիս կպչի։ Ես մնացողը չեմ, ինչ էլ որ պատաՀի, ես պիտի կծիկս գնեմ։

—Փորձի՛ր, թէ յաջողուեց, ես էլ կը հետեւեմ. ասաց յուսահատ Արաբօն:

Բաժանուելու վճիռս նրա վրա սաստիկ վատ ազդեց, այնպէս որ մռայլեց ու խռովեցաւ հոգին: Բայց ճար չկար, անտանելի էր Սինոպի ամբոխը, փախչելուց զատ փրկութեան ճանապարհ չկար: Թէեւ հէնց փախուստի առաջին քայլին կարող էին մի գնդակով գլորել, կամ ծովը թռչելուդ պահին կարող էր մարդ փշրուել ու ջախջախուել, հէնց լողալիս՝ պահնորդների գնդակով շնչասպառ լինել, բայց այդ բոլորն էլ ամեն մարդ կարող է յանձն առնել, եթէ դատապարտուած է իսլամի դահիճների ձեռքով Սինոպի տաժանակիրների մէջ թաւալուելու:

Էլ երկար չմտածեցի. նոյն օրն իսկ, երբ շալակս մի մեծ սնդուկ ապակիներ էի տանում նաւամատոյցի սանդուխներից մի վերանորոգւող նաւ, չնայելով, որ երեք մարդ ինձ օգնում էին, երկուսը ետեւից եւ մինը առաջից, այնպիսի մի ցնցում արի, որ բեռիս հետ իջայ ծովը, տասն եւ հինգ արշին բարձրութիւնից: Թէ ինչ պատահեց ինձանից յետո, այդ ես չգիտեմ, միայն թէ բաւական ժամանակ ծովի յատակում լող տալով, նաւամատոյցի ներքին սներից մէկի վրա բարձրացայ եւ առանց նկատելի լինելու, չորս-հինգ ժամի չափ այդտեղ դողդողացի, մինչեւ բոլորովին խաւարը պատեց: Երբ արդէն հաւատացած էի, որ բանւոր մարդիկն արդէն թուլացած, մրափելուն էին անձնատուր եղած, երբ համոզուած էի, որ պահապան զինւորները հրացանները ձեռքերին իրենց տաղաւարիկներում էին կուչ եկած, ես վրայիցս հանելով աւելորդ շորերս, ոտնակապերս

փշրեցի, շպրտեցի ջուրն ու իջայ ծովը: Բոլոր ճիգս ամփոփած ծովի յատակով մի լող տւի եւ մի ահագին տարածութիւն կտրելով դուրս եկայ շնչելու: Մի քանի այդպիսի լողերով ահաւոր նաւահանգստից դուրս եկայ եւ քաղաքից բաւական հեռու, ծովափում մի աւազուտի վրա դուրս գալով՝ պառկեցայ հանգստացնելու անդամներս, որոնք փայտի նման թմրւել էին:

Բայց այնպէս տանջւել, յոգնել էին, այնպէս ցաւում էին բոլոր ջղերս ու մկաններս եւ այնպէս քաղցն ինձ տանջում էր, որ ես չկարողացայ այդ դրութեանս մէջ խաղաղել: Սկզբում սոսկալի դող ընկաւ իմ ամբողջ մարմնի մէջ, ես դողացնում էի ջղաձգօրէն, քիչ յետոյ այդ դողիս յաջորդեց ջերմը, այնքան սաստկութեամբ, որ արդէն բոլորովին ես ուշքս կորցրի: Չգիտեմ թէ ինձ ինչ էր պատահել, միայն ութն օր յետոյ ես սթափուեցայ եւ սկսեցի չորս կողմս դիտել: Ես գըտնւում էի ինձ անծանօթ մի տան մէջ, օտարազգիների շրջանում: Աղքատներն ու չունեւորներն էին ինձ պատսպարել եւ խնամել: Դրանք ձկնորս բարեսիրտ յոյներ էին:

Մօտ մի ամիս մնացի դրանց հոգածութեան տակ, մինչեւ բոլորովին կազդուրւեցի եւ երբ արդէն զգացի նախկին առողջութիւնս, կամաց-կամաց ճանապարհ ընկայ դէպի Բաֆրա: Այդ տեղ չկարողացայ երկար ապրել սոսկալի օդի պատճառով, թէեւ ծխախոտի պլանտացեաներում ինձ լաւ օրավարձ էին տալիս, որով վրաս գլուխս շտկեցի ու ճանապարհ ընկայ դէպի Մարզուան:

Այդ ժամանակներն այնպիսի խռովութիւններ էին սկսել այդ կողմերը, որ ինձ քաղաք չը մտած

ճանապարհ դրին դէպի Եոզղատ։ Ուր որ գնում էի, քանի որ անցագիր և յանձնարարական չունէի, միշտ ահ ու երկիւղով էի ման գալիս և ամեն տեղից կասկածի նշոյլը նկատելիս՝ ճանապարհ էի ընկնում։ Վերջապէս հասա Երզնկա, որտեղից միտքս դրի անցնել Սասուն, բայց բաղդս այլ կերպ էր տնօրինած եղել, որ ընկա այս կողմերը։

Բայց ուր որ գնում էի, վիճակս չէր փոխւում։ Ո՛րքան փոքր քաղաքներ ու աւաններ էի մտնում, այնքան նկատելի էի լինում, իսկ մեծ քաղաքներումն էլ, քաղցած շների նման, իսկոյն ինձ շրջապատում էին հայ լրտեսները, որոնք վխտում էին։ Երբ արդէն մոլորւում էի և ապահով անկիւն չէի գտնում գլուխս հանգստացնելու, մի առաւօտ հիւրընկալս, մի ազնիւ վարժապետ, ներս մտաւ ու ասաց։

—Մեր տղա՛, Ռուսաստան գնացող մի երիտասարդ կա, արտաքուստ շատ բարի մարդ է երևում, արի հետը գնա։

—Կերթամ, ասացի, մինչև մի առժամանակ չհեռանամ, ինձ հանգիստ չեն թողնելու այս անիծւած լրտեսներն ու գործիքները, բայց ինչպէս անենք, որ նա տանի։

—Այս առաւօտ նա ինձանից մի հաւատարիմ, ղօչաղ ծառայող ուզեց, որ իրեն ուղեկցի մինչև սահման որոշ վճարով։ Քեզանից էլ ղօչաղ, եկ գնա, հետն էլ սահմանն անցիր։ Ես կերթամ նրանից էլ կխնդրեմ, որ քեզ տանի հետը մինչև Ղարս, այնտեղ մի ծառայութիւն, մի գործ կգտնես, կապրես, մինչև մի կերպ մեր աշխարհի խաղաղելը։

Ես համաձայնեցի և հետևեալ օրն իսկ ճանապարհ ընկանք դէպի Էրզրում։ Ես արդէն Ռուսաստանցու սպասաւորն էի, էլ ո՞վ կարող էր մեզ բան խօսել։ Մենք իսկոյն ճանապարհ ընկանք և եօթն օրից հասանք կարաւանի հետ Արզրում, որտեղ իջևանեցինք ճանապարհորդի բարեկամի տունը, Տաճարի փողոցում։ Արզրումն իմացել էի, բայց չէի տեսել, միայն թէ տեսնելու արժանի ոչինչ չգտա։ Մանաւանդ Թիֆլիսը տեսնելուց յետո։ Իսլամական, ասիական անշարժութիւնը Էրզրումին չէ թողել ո՛չ միայն առաջադիմելու, այլ մինչև անգամ իր նախկին շքից, ճոխութիւնից ու փառքից էլ մերկացրել է և ամբողջ դարեր քանդակալի աշտարակներով զարդարւած քաղաքի աւերակների վրա անշնորհ, անճաշակ և տգեղ շինութիւններ է բարձրացրած ծուռ ու մուռ, նեղ-նեղ փողոցների վրա, որոնք միջնադարն են յիշեցնում իւրաքանչիւր քայլափոխում։

Երեք օր մնացինք Արզրում և իւրաքանչիւր օր մաղձս բորբոքւելու առիթն անպակաս էր։ Առաւօտից մինչև իրիկուն փողոցներում պատահում էի կատաղած իսլամ խուժանի ներկայացուցիչներին, որոնք պատահած իւրաքանչիւր քրիստոնէին մի կերպ խայթում էին իրենց գարշելի հայհոյանքներով։ Դրութիւնը սոսկալի էր, որևիցէ պատասխան և ընդդիմութիւն հայի կողմից, համարւում էր պետական յանցանք, կառավարչական ընդդիմութիւն։

Քրիստոնէական և ազգայնական սրբութիւնները խօսքով անգամ պաշտպանելու յանդգնողի գլխին, իսկոյն հաւաքւում էին տասնեակ սրիկա-բաշիբոզուկ-

ներ և յանուն իրենց կրօնական սրբազնասուրբ պարտականութեան, սոսկալի կերպով նախ փողոցի մէջ գանակոծում և ապա առաջնորդում ոստիկանատուն քննութիւն սկսելու։ Քառասուն հոգով կանգնում և առանց ամաչելու, առանց խղճահարուելու գոռում էին, թէ հայը նրանց կրօնը, գիրքը անարգել է և ուշունց տուել մարգարէին։ Թէ իրենք վաղուց գիտեն, որ դա յեղափոխական ընկերութիւնների անդամ է և ծածուկ զէնքեր է բաշխում ջանֆիդաններին (անձնազոհ)։

Արիւնս եռում էր, կատաղութիւնից աչքերս կակաչի նման կարմրում էին, բայց ինչ օգուտ, միակս այն ահագին ամբոխի հետ ինչ կարող էի անել, ինձ ալիւրի նման կարող էին փշրել։ Բարեբաղդաբար շուտով անցագիրը վաւերացնել տուեց աղաս և մենք ճանապարհ ընկանք դէպի Նարիման։ Մենք ոչ թէ Ջիվին-Ղարաուրղանի վրայով Սարիղամիշից էինք գընալու, այլ Նարիմանից-մինէնէքով Օլթի պիտի մտնէինք։ Ոչ ես ճանապարհ գիտէի և ոչ աղաս. մենք միայն հարցնելով և ուրիշ ճանապարհորդների առաջնորդութեամբ առաջ գնացինք և երրորդ օրը հասանք սահմանագլուխ։ Աղաս անմիջապէս կարող էր անցնել իր պասպորտով, բայց նախապէս մինչև ինձ չանցկացնել տուեց սահմանից, նա չմտեցաւ ռուսական մաքսատան։

Անցա սահմանից, մտա ռուսական հողը և ազատուեցի հալածողներից։ Բայց վերադառնալս անհնարին է դարձել, շնորհիւ այս միջավայրի, որից ազատուելու համար պատրաստ եմ ամեն տեսակ զոհողութեան։

1898 թ. Դեկտեմբերի 24-ին

Նոր Նախիջևան

Գ

ՃԱՐԱՀԱՏ

Գ

ԾԱՐԱՀԱՏ

ՊԱՏՄՈՒԱԾՔ

I

Ով որ Ծորոխի ափերով ման չէ եկել, ով որ Մոսկիքեան և Պարխար լեռների նեղ ու մութ ձորերում չէ գիշերել, ձիթենի, նռնենի, թզենի, հունի, եղևնի և կաղնի անտառների քաղցրահոտ բուրմունքը չէ շնչել, նա կիսատ-պռատ գաղափար ունի Հայաստանի բնական սքանչելիքների մասին, նա դեռ անծանօթ է մեր հայրենիքին։ Զորս բոլորդ մշտադալար այգեստաններ, խաղողի որթեր գալարուած ու բարձրացած կաղնիների և հացենիների բնովը և տարածուած նրանց ճղներով գրգռում են մարդու ախորժակը։ Հայոց պտղատու պարտէզները, անտառները, սարերի լանջերի

քարքարոտներում թաւիշի նման կանանչների մէջ բացուած գոյնզգոյն ծաղիկների ցոլքն ու բուրմունքը խռ հարբեցնում են։ Հորիզոնը բռնուած-կտրուած է ամէն կողմից բարձրագագաթ լեռների սուր ու ապառաժոտ կողերով, որոնց խորշերում արծաթի նման փայլում է ձիւնի հատիկները։ Մարդու հայեացքը բարձունքը-կապուտակ երկինքը դիտելուց յետո, երբ խոնարհւում, ընկնում է անդնդախոր և սրակող ձորը, նկատում է պղտոր ու փրփրալից Ճորոխ գետի օձապտոյտ ընթացքը, որը մռնչելով, շշնջելով, ափերի ապառաժներին բաղխուելով սլանում է դէպի ծովը, սարսափ է զգում և փշաքաղւում է ողջ անձով։ Դաշտ ու դուրան, արտ ու հանդաստան, հարթ ու տափարակ այդ կողմերում չկա, սրագագաթ լեռները բրթոտ արջի նման ծածկըուած են խիտ անտառներով, ապառաժները դարևոր մամուռով, թէք լանջերը այգիներով ու պարտէզներով։ Այստեղ ազատ ապրում են ինչպէս քաղցրահամ որսական կենդանիները, նոյնպէս արիւնոզող գազանները, մի կողմից սլանում են պախրաները, քարայծներն ու նապաստակները, միւս կողմից մռնչում են գայլերը, մռմռում են արջերը և առիւծը գետի աջ ու ձախ ափերը թռչկոտելով պատառում ու լափում է ճանկած կենդանիներին։

Սարսափելի է Ճորոխի ձորը, մի սխալ քայլ եթէ փոխէ, կամ եթէ յանկարծ հաւասարակշռութիւնը կորցնէ, մարդ կարող է գլորուիլ անդունդի խորը, կտոր փշուր գազաններին ու ձկներին կերակուր դառնալ։ Մի անխոհեմ քայլ դէպի անտառները, մարդ կարող է հայդուգի (արջ) ճանկն ընկնել, որը ջարդ ու փշուր

կանէ ճանկածին, եթէ նա անզէն է, կամ ճարպկութիւնից զուրկ։ Եթէ ճամբորդը հոտառութիւն չունենա և չկարողանա չռած աչքերով զննել շուրջը, յանկարծ անտառի ծառերի բների ետևը թագնուած որ և է լազի գնդակը կարող է նրան խաւար զրկել արևի լոյսից։ Եւ լազը անչափ գոհ կմնա, եթէ կարողանա սպանածի գրպանից հարիւր փարա (15 կոպէկ) հանել, կամ նրա տրեխները տուն տանել։ Ոսկէ-աւազ բերող Փիսոնի (Ճորոխ) ձորի բնակիչների վիճակը անչափ դառն է, նրանց կեանքը անչափ վտանգների ենթակա, բայց ինչ օգուտ, հայրենիք է, ծննդավայր է, չենք կարող բաժանուել, հնար չունինք, պէտք է որ տանենք։

Այս երկար ու օձապտոյտ ձորի մէջտեղում, Ճորոխի ափից մի ժամի ճանապարհ հեռաւորութեան վրա, լեռնական լանջում շինուած է Արդվինը իմ ծըննդավայրը, Տայքի ոստանը։ Սքանչելի է քաղաքի դիրքը, շարք շարք մշտադալար այգեստանները բռնած են գետի խոր ափերը, սրանց վրա ապառաժներ, ապառաժների վրա կանանչ պարտէզներ, մէջերը սպիտակ շինութիւններ, նրանց վրա էլի ապառաժներ, էլի ծառաստաններ, էլի կոփածու շինութիւններ, ժայռեր անտառներ և այսպէս շարունակաբար մինչև երկինք մինչև ամպերին հասնող բարձունքը։ Օձապտոյտ զիգզագներով ճանապարհներից անդադար բարձրանում և իջնում են քաղաքացիները հետի, կամ ձիաւոր, էշի, ջորիի և ձիու կարավաններ դանդաղ քայլերով քաղաք են բարձրացնում իրենց բեռները և կամ սրընթացած են գալիս, կեանքը անընդհատ եռում է։ Այս

ժխորը, մանաւանդ մռնչող Ճորոխի շաչիւնները թէև ականջ են ծակում, բայց հաճելի են, քանի որ կեանք են արտայայտում, քանի որ սթափեցնում են մեզ և գրաւում են մեր զգայարանքները։ Պանդխտութիւնից տուն դարձող Արդվինցու համար, Հաջի-փաշաի կամուրջն անցնելով զառիվեր բարձրանալուց մեծ հրճւանք ու սրտի բաբախում չի կարող լինել։ Հապա մեր քաղաքի օդը, ջուրը, բուրմունքը, միթէ կարելի է գրչով ու խօսքով բացատրել. պիտի զգալ, պիտի վայելել, պիտի տեսնել գաղափար կազմելու համար։

Հապա՛ ժողովուրդը. առողջ, առոյգ, կայտառ, բարձրահասակ, լայն թիկունք ու ջղոտ բազուկներ կպաշարեն քեզ, ամէն քայլափոխիդ, եթէ մէջերն ընկնես։ Մանաւանդ իգական սեռը, բարձր են չինարի պէս, ձիւնից էլ սպիտակ, նռնից էլ կարմիր է նորանց շուրթները, այտերն ու ականջները։ Նորանց աչքն ու ունքը, ծամերն ու թերթիչները, դաստակներն ու թաթերն, մատներն ու եղունկները իրենց նմանը չունին ամբողջ աշխարհում, բնութիւնը իր բոլոր հրաշալիքները մեր քաղաքումն է թափել, որ մեր աշխարհի ամենագեղեցիկ փունջը կապէ։

Բայց ի՞նչ օգուտ. վարդն առանց փշի չի աճիլ, սքանչելիքները առանց հառաչանքի չի կարելի վայելել։ Ճորոխի ձորի բնիկները արտ չունին հացահատիկներ ցանելու, արօտ չունին անասուններ պահելու, իսկ հանքերն ու անտառները շահագործելու հնարաւորութեան մասին մտածող և կարգադրող մարզւած մտքեր, զարգացած գլուխներ դեռ պիտի պատրաստւին։ Մեր ժողովուրդի հացն էլ, միսն էլ, իւղն էլ,

պանիրն էլ, բուրդն ու բամբակն էլ շրջակա գաւառներից ենք գնելու։ Գիւղական ազգաբնակութիւնը Լազերն են (վիրախօս իսլամականներ), որոնք իրենց այգիների, կամ շրջակա անտառների, պտուղները, կեռասն ու կաղինը, նուշն ու ընկուզը, տանձն ու խնձորը, սալորն ու խաղողը էշերի վրա բարձած պիտի անվերջ տանեն մօտակա գաւառները. Գէօլա, Արդահան. Թախտ ու Շէօրագեալ, երեք չորս օր թափառեն, որ կարողանան փոխել հացի, իւղի, աղի, պանրի, ոչխարի ու կովի հետ։ Բայց ի՞նչ էք կարծում, ենթադրում էք, որ այդ թշւառները իրենք են վայելում այս նիւթերը, իրենց բերքի հետ փոխած բարին կշտացնում է իրենց մանր ու խոշորին...։ Ո՛չ, ո՛չ, նրանք այդպիսի շռայլութիւն կատարելու հնարաւորութիւն չունին, այլ այդ բոլորը ծախում են Արդվինի քաղաքայիններին և ստացած կանխիկ դրամներով հազիւ կարողանում են իրենց հարկերը վճարել, պարտքերը տալ և եթէ բան աւելանա, գնում են կտաւ, չիթ հագնելիքի համար։ Լազը գիտէ իրեն *ճաղր* (սիմինտրի հաց), *կեցի* (կաւէ խուփ) մէջ խմորը մի քիչ թրծվելուց յետոյ, տաք տաք ուտում են և գործի կպչում։ Ճորոխի ձորի ապառաժների մէջ, բացի սիմինտրը, ուրիշ հատիկներ հնարաւորութիւն չկա ցանելու։

Արդվինցին էլ թէև Լազից պակաս չէ, բայց նա հայ-քրիստոնեա է, նա առանց ցորեն հացի չի ապրի, առանց մսի, իւղի, պանրի նրա տունը եօլա չի գնալ, նրա մառանը լիքը պիտի լինի երշիկով, ապուխտով, տհալով, գինով ու արաղով։ Մենք Լազի նման հասարակ սև շալ չենք կարող հագնել, խամ կտուից

չապիկ մեր բանը չէ։ Մեր կիները մանուսա *ხაცუა* քթի չեն դնում, ղուԹնի ու ալաջա են պահանջում, տեղական կտաւից չապիկ չեն հագնում *ჩაბფიკ - ღა-ბარიდ* են պահանջում, *კლაპიტონ* ու *ღაბიტი* են պահանջում և այս բոլորի համար մեզ փող, փող, միայն փող է հարկաւոր։ Դեռ չեմ ասում ճակատի ոսկին ու մարգարիտը, ճտնոցի ոսկեշարանը, ականջի գոհար գինդերը, ոսկեձոյլ ապարանջանները, մանեակները, կոճակները, *ჩრთ და ჩიხტიკოპი*, որոնք ահագին գումարներ են սպառում և մեզ գցում են զարհուրելի տանջանքի տակ.....

Ի՞նչ գլուխը քարին տա Արդվինցին, որ ջուրն ընկնի ու խեղդուի, քանի որ ձորի բնակութիւնը աղքատ է, նոր, խմ համաքաղաքացիների ծակ գրպանները չի կարող խուզել և ապրուստ ճարել։ Նրա հայրական, պապական *ჩიქილა* է Արդվինում գործել տըւած կտաւն ու մանիսան, Շիկէնիխով ներկել տուած կարմիր չիլան ու շալը. Կորձուլ ներկել տուած կապուտ կտաւն ու զոգաքը բառնալ ձիուն, ընկնել շրջակա գաւառները և տարին տասներկու ամիս սար, ձոր անցնել դաշտ ու տափառակ Թափառել, գիւղ ու քաղաք մտնել, և սև փող ճանկել։ Փող վաստակել, վերադառնալ ծննդավայր մի քանի ամիս բարեկենդան անել ու էլի չուել, չքուել....: Արդվինցու մի ոտը Կարս ու Կարին է, միւսը Տրապիզոն, Կ. Պօլիս։ Նա Թէև Թափառում է, տանջւում, բայց դարտակ տուն չի վերադառնում։ Նա աշխարհ կողոպտում և տունն է զարդարում ու շինում։ Աշխարհի ամէն բարին, զարդն ու զարդարանքը նա մրջիւնի պէս տուն է կրում։ Ի՞նչ անէ չունեւորը, պէտք գլուխը կրակը գցէ, որ դրացուց ետ չըմնայ։ Թասիբն սպանում, Թողնում է։ Ի՞նչպէս կարելի է, որ դրացիդ տուն տեղ լցնէ, մետաքսի, ոսկեԹէլի, ոսկու ու գոհարի մէջ կոլոլէ իւր սիրեկանին, քրոջն ու հարսին, իսկ դու կարողանաս ձեռքերդ ծալած նստել ու հառաչել։ Միթէ որևէ զգացմունք ունեցող մարդը, որի սիրտը մորմոքեցնում է Թասիբը, կարող է արձանի նման անզգայանալ և, շուրջը տիրող եռացող գործունէութիւնը նկատելուց յետո, *ღაირათი* չգալ։ Արև ի ջերմութիւնը, անձրևների յորդութիւնը ապառաժներին ստիպում են մամուռ արտադրելու, իսկ կենդանի մարդը դրացիներին նկատելով միԹէ կարող է չցնցուե՞լ ու չբորբոքուել......

Բայց ի՛նչ օգուտ, հայրենի որջը հազիւ մեզ պատսպարում էր, դեռ կարկատանի կարիք կար, մի այգի ունէինք Շիկէնիխով, որի մէջ տարածուած տասը - քսան պտղի ծառերը չէին կարող տան ապրուստ մատակարարել, հող չունէինք, գործարանները վաղուց փլուած էր, սարքը ջարդուած, փշրուած, իսկ մենք ուտելիք էլ չունէինք, ո՞ւր մնաց հագնելիքն ու զարդարանքը։

Բայց բանն այնտեղ է, որ Ռուսը Կարսի և ԲաԹումի նահանգներին տիրելուց յետո Արդվինցու հացը բոլորովին ցամաքեց։ Թիֆլիսից, ՔուԹայիսից, Շուշուց, մինչև անգամ Արմաւիրից ու Մոսկուայից Թափւեցան կապիտալիստ վաճառականները իրենց չորչիներով և գրաւեցին մեր շուկան՝ ԲաԹումը, Ախալցխացիները՝ Արդահանը, Օլթին, Ալէքսանդրապօլցիները՝ Կարսն ու Կաղզմանը, Արդվինցուց խլեցին գաւառները, գիւղերն անգամ։ Մանաւանդ գիւղերում հաստատուեցին այնպի-

սի չարչիներ, որոնք կապւեցան գիւղացիների հետ և կտրեցին շրջիկների առուտուրը: Ինչ ուզում ես, ալա, հնար չկա հիմնաւորւած չարչիի ճիրաններից որս փախցնել: Դեռ եթէ մարդ լաւ քննէ, կնկատէ, որ գիւղերում բուն դրած չարչիները սարդի նման այնպէս են կապկպել ու շղթայել ապառիկներով գիւղացիներին, որ տիրացել են սրանց հոգիներին անգամ, նրանցից իրենց համար նախիր են կազմել և կթում են:

Տաճկահայաստանի Ալաշկերտի, Բասենի, Թորթումի ու Բայբուրդի գաւառներից կտրւեցաւ Արդըվինցու ոտը, պասպորտը թանկ ու կրակ, առնելը աւելի դժար: Օսմանցին էլ խո՛ժ ուղտի աչքով է մեզ վրա նայում: Առաջ ընկանք ազգով-տակով, առաջնորդով ու իշխաններով դիմաւորեցինք Կամարովին, թուրքի զօրքին հալածեցինք, խաչ ու խաչվարով ներս բերինք ռուսի զօրքը, որպէսզի կարողանանք ազատւել Լազի յափշտակութիւններից, աւազակութիւններից և արիւնահեղութիւններից, բայց ի՞նչ օգուտ, մեր կթան գաւառներից անջատւեցանք, ապրուստներս դժւարացաւ: Բանն այնտեղ հասաւ, որ մեր երիտասարդները պարտաւորւեցան Խրիմ, Ռուսաստան, Բեսարաբիա գնալ, Արդվինում պատրաստւած կօշիկները այնտեղ ծախել և սև փող բերել: Դեռ այնտեղերը արհեստանոցներ բացին, Տիկէնիխովի ու Կորձուլի խաղախորդների պատրաստած մորթիներից ու կաշիներից մաշիկ կարել մուժիկին և հաց բերել տուն: Բայց այս էլ ամէն մարդու գործ չէ, որ մարդ կարողանա տունն ու տեղը թողնել, երեք ամսւա ճանապարհ հայրենիքից հեռանալ, ապրուստ ճարելու համար խորդ մթնո-

լորդի մէջ ապրել և թոքերը թոքախտի մատնել: Լեռնական Արդվինցին դաշտային թանձր օդը ի՞նչպէս կարող է ծծել ու տոկալ գործարանի ծանր աշխատանքին: Քանի՛ քանի՛ անգամ ինձ աշկերտ ուզեցին տանել, մօրս տարեկան ութսուն րուբլի փող խոստացան, բայց ես յանձն չառի կաշի կրկտնել և մաշիկ կարել:

Հօրս առևտուրը պատերազմից առաջ Նարիման էր: Այն գաւառն որի կէսին պատերազմից յետո տիրեցին ռուսները, իսկ մնացորդը մնաց դարձեալ դարևոր իշխող Խալիֆի ճիրանում: Հայրս Ռուսական միլիցիայումն էր ծառայում և պատերազմի դաշտում, անօրէն մոլլաների ճիրաններից հայրենիքը փրկելու տենչով, կրծքից գնդակի վէրք ստացաւ ու մեռաւ: Ես այդ ժամանակ տասնումէկ տարեկան էի, չէի կարող հօրս յաջորդել ո՛չ միլիցիայում, ո՛չ էլ առևտրական—չարչիական ասպարիզում: Կարող էք ինքներդ էլ գուշակել, որ զգացումներին և կրքերին անձնատուր եղած մարդը, որ կամքը առաջ տանելու համար, թողել էր առուտուրը, միլիցիական էր գրւել, չէր կարող իր զաւակին ու այրուն փող թողնել: Խաղաղութիւնից յետո, երբ հօրս տոմարով գնացի Նարիման առնելիքները ժողովելու, գիւղացիները ինձ ծաղրեցին, արհամարհեցին և պարտքերն ուրացան: Միայն մի քանի բարեխիղճ մարդիկ իրենց պարտքի հաշւին ինձ քիչ իւղ, պանիր, մեղր, ոչխար և մի քուռակ տւին, որոնցով վերադարձա տուն, մօրս ուրախացնելու....:

Տարին սով էր (1880), Նովօրոսիյսկից և Օդէսայից ալիւր էին բերում Բաթում, Արդվին և պուդը

չորս բուքլեի ծախում։ Մորս ոսկիները հատ հատ կտրեցինք, կերանք։ Տանը թանկագին բան չմնաց։ Եթէ բարեկամներից մէկը ներս էր մտնում, ամօթով էինք մնում, այնպէս որ դարտկուել էինք։ Սկսեցի անտառ գնալ և փայտ բերել բազարում ծախելու, բայց այդ փայտի գինը հազիւ ձիուս կերն էր արտադրում, իսկ իմ աշխատանքս վրա էր գնում։ Օր քաղցած, օր կուշտ էինք, բայց թասիբը չէր թողնում, որ գաղտնիքներս դուրս տանք։ Մայրս ինձնից թագուն արտասւում ու ողբում էր մեր թշուառ վիճակը, որն աւելի բորբոքում էր իմ ղայրաթը, բայց ինչ կարող էր անել 13—14 տարեկան պատանին։ Երբ վիճակներս ծանրացաւ, մայրս սկսեց թախանձել, որ ձիս ծախեմ և ինքս նրա եղբօր մօտ դերձակ աշկերտ մտնեմ, բայց ես չզիջա։

—Եղբայրդ այսքան տարուան վարպետ է, ասացի մօրս, մի ասա տեսնեմ, ինչի է տիրացել, որ ինձ առաջարկում ես նրան հետևել։ Երեսուն տարի է իրեն համար առանձին արհեստանոց ունի, հազիւ հաց տուն է պահում։ Կարը կարելով աչքերը կուչ է եկել, կուզը դուրս է եկել, ես էլ, ցանկանում ես, որ նրա նման ասեղով գերեզմանս փորեմ,...։

Անտառից շալակով փայտ կրելը աւելի հեշտ էր, քան թէ պառաւ կնկա նման նստել ու կարելը։ Բայց սատկացած նեղութիւնը, կարիքը ինձ ճնշում էին գործ փնտռելու և հաց ճարելու։ Քաղցը մարդուն ճար չի մղում։ Մի առաւօտ վաղ *ձիկնս* ու *շալկարս* մաքրեցի, *ֆիշեկլուղներս* փայլեցրի, *ղաւղալաղս* սրբեցի, հօրս դաշոյնը կապեցի, մօրիցս թագուն զինուած դուրս

եկա, դիմեցի հիւքիւմէթ (ոստիկանատուն)։ Ճանապարհին շատ արագ էի ման գալիս, աշխատում էի խօսքի չբռնուել և հասա Միքէլ-բէգի՝ գաւառապետի տունը։ Թէև ծառաները չէին թողնում, բայց զօրով ներս մտա, անցքերից անցա, հասա սեղանատուն։ Միքէլ-բէգը չայ էր խմում, խանումն էլ մօտն էր։

—Ի՞նչ ես ուզում, հարցրեց,—որդի՛, ինչի ես եկել։

—Բէգ, ասի, ինձ հօրս տեղը միլիցի գրել տուէք։

—Հայրդ ո՞վ է, ասաց բէգը, աչքերով վերից վար հասակս չափելով։

—Բաշարաթենց Աշրափը, ասի, որ Արդահանի պաշարման ժամանակ ձեր ձիաւորների մէջն էր։

—Դո՛ւն մեր Աշրափի որդին ես, ասաց ծիծաղելով բէգը, առանց աչքերը բիբերիս վրա յառած հայեացքը հեռացնելու։

—Հրաման քեզ, ասի։

—Որդի՛, ասաց, դու դեռ երեխա ես, երեսիդ խաւ անգամ չէ բուսած, ես քեզ ինչպէս միլիցիա գրեմ։ Քանի՞ տարեկան ես։

—Տասնը-հինգ, ասի խեղդուած ձայնով։

—Տասնը-հինգ ասելով բէգը տեղից վեր կացաւ և ինձ մօտեցաւ և առաջս կանգնելով ասաց.-Մաշալլա՛, մաշալլա՛, քիչ է մնում, որ իմ *բօյիս* հասնես։

Միքէլ-բէգը ինքը շատ բարձր ու հաստ մարդ էր, բայց ես էլ պակաս չէի։ Նա ձեռքը ուսիս դրեց, թօթուեց ու կրկնեց ուժով կզակս ու այտերս շոյելով.

—Քեզ միլիցիա կգրեմ, բայց դեռ փոքր ես, մի

երկու տարի էլ համբերէ, յետո եկ ինձ մօտ։

Բարկութիւնիցս կրակ դարձա. աչքերս մթնեց, ձեռքս դաշոյնիս տարի, քիչ մնաց, որ քաշէի, հանէի ու փորի ճարպը դուրս թափէի, բայց չփոթւեցա, քարի պէս անշարժ տեղն ու տեղը մնացի։ Միքէլ-բէգը յուզումս նկատեց և սիրտս առնելու համար ասաց.

—Լա՛ւ, լա՛ւ, քեզ մելիցիա գրել կտամ, բայց մեր դռանը պիտի մնաս։ Մի երկու տարի քեզ գիւղերը՝ Լազերի մէջ չեմ կարող ուղարկել։

—Ինչի՞ց ես վախենում, տէր, ինձ համար Աջարայի Լազերի մէջ մտնել ու դուրս գալը ծանր բան չէ. երեք չորս տարի է, որ ես օրերս մթնացնում եմ անտառների և ապառաժների մէջ, արջերի ու ճանճերի կողքին։

—Ձի ունի՞ս, հարցրեց Միքէլ-բէգը մտածելով։

—Մի շատ լաւ յօրտակ ունեմ, տէր համարձակ, քանի որ իմ նժոյգի հատը չկա Արդվինում։

—Լա՛ւ, լա՛ւ, ասաց կրկին ուսս թոթւելով և թիկունքիս խփելով, ես այսօր կպատուիրեմ, որ քեզ ցուցակագրեն։ Գնա՛, ձիդ բե՛ր մելիցիոնների ախոռում կապէ։ Ստեփա՛ն, Ստեփա՛ն, կանչեց դուռը բանալով։

Երբ մելիցիականների աւագը ներս մտաւ, Միքէլ-բէգն ասաց.

—Սրա ձիուն տեղ տւէ՛ք ախոռում, կեր տւէ՛ք կազիոնի հաշւից։

—Գլխիս վրա ասաց աւագը։

—Ա՛յ տղա, անունդ ի՞նչ է, հարցրեց ինձնից բէգը։

—Բագրատ. ծառա եմ, բէգ։

—Դէ՛հ, գնա՛, Բագրատ, ձիդ բեր կապէ, դուն էլ արի, որ ինձ հետևես ուր, որ գնամ։

Դուրս եկա։ Ուրախութեանս չափը չկար. ես էի մտածել, ես էի խորհել և առանց միջնորդի կամ միննաթի գործի էի մտել։ Մի այնպիսի գործի էի մտել, որ տասնեակ խնդրատու միջնորդներով դիմողներից մէկին-երկուսին հազիւ էր յաջողւում։ Երեսուն րուբլի էլ ռոճիկ էին տալիս, որ ինձ համար փոքր գումար չէր, մանաւանդ որ ձիս էլ պիտի կերակրւէր գաւառի եկամուտից։ Մօրս ուրախութեան չափ չկար, նա հրճւանքից վեր վեր էր թռչկոտում և չէր իմանում, թէ ինչ միջոցով զգացած ուրախութիւնը արտայայտի։ Երբ զինւած, համարձակ ձիս քշեցի ճիրիդմէթ, ընկերներիս սիրտը քիչ էր մնում տրաքի նախանձից։

—Ո՞ւր, գոռում էր նրանցից մէկը.

—Միքէլ-բէգի տունը, պատասխանեցի արհամարհանքով ու անցա։

—Աշրափի որդին մելիցիա է գրւել, գոռում էին ամէն կողմից։

—Հօրը հացը գտաւ, ծաղրում էին միւս կողմից։

—Իսկ ես բբր չէի նկատում, ու անցնում էի քիթս ցցած։

III

Երեք-չորս տարի միլիցիական կոչուած Արդվինի ձիաւորների խմբում ծառայեցի: Սկզբի տարին էլի մի կերպ ապրում էինք, բայց հետևեալ տարին ռոճիկներս պակսեցրին, ամսական քսան ռուբլի էին վճարում: Երրորդ տարին աստիճանս բարձրացրին, ռոճիկս էլ քսանըհինգ ռուբլի հասաւ, բայց ծախսերս չէր ծածկում: Ուղիղը այդ պաշտօնից ես էլ զզւեցի, ուրիշների նման կողմնակի մուտքերով չէի կարող պարապել, իսկ վարձը այնքան աննշան էր. որ շատ խեղճ էինք ապրում: Այս վիճակի մէջ մայրս էլ զահլաս տարել է—Որդի, ասում էր, քեզ ուզում եմ նշանել, որդի՛ քիչ փող ետ գցի՛ր, ոսկի առ, ուզում եմ քեզ տնաւորել:

Ախար իմ ի՛նչ ժամանակս էր նշանուելու, դեռ տասնեօթը տարուան էի: Բայց արի ու այդպիսի յամառ կնոջը կոտրի՛ր: Յայտնի բան է նա մտքումը ինձ արդէն նշանել էր և հեռուից հեռու տեսակցութեան մէջ էր Վարդանենց Սառայի հետ, որի եօթը տարեկան աղջկա վրա աչք ունէր: Վիճակս ծանր էր, մայրս խօսք չէր հասկանում, իսկ տեղի սովորութիւնը դժոխային: Պէտք է եօթը տարի նշանած մնայինք, որ աղջիկը մեծանար, ամէն տաղուարի ահաւոր ծախսերի

պիտի ենթարկուէինք, զանազան նուէրներ պիտի ուղարկէինք—ստանայինք, մինչև որ այդ երկար ու ձիգ տարիները բոլորուէին: Որքա՛ն սրտմաշուք, որքա՛ն չարախօսութիւն, որքա՛ն բամբասանքներ պիտի տանէինք, մինչև մուրազի հասնելը: Ես որքան տատանւում և խոյս էի տալիս, այնքան մօրս մտատանջութիւնները սաստկանում, այնքան նորա հոգեկան աշխարհը մթնկալում էր:

Հակառակի պէս Միքէլ-բէգն էլ գործի տակ ընկաւ, ինչոր հին հաշիւներ էին պահանջում, դատի դատաստանի կանչեցին ու դուրս արին: Ինձ հետ էլ լաւ չէր փարւում նրա տեղը գալողը, բերին մի լազ դրին մեզի աւագ, որն ամէն պարագային կռիւ էր սարքում ինձ հետ: Լաւ էր, որ նրանցից եղաւ, ես էլ թողի ու դուրս եկա: Պարապ ման գալը ձեռք չէր տալ, անտառից փայտ կրելու ամաչում էի, քաղցից կոտորուելու խո՛ չէինք: Այս ու այն կողմն ընկա, վերջապէս Կոնջալ-*բիձի* հետ ընկերացա, փողը նրանից, գործելն ինձանից, նրա մալը, իմ կեանքը, ձիերս հեծանք, ճանապարհ ընկանք: Արդվինցուն ամսականով ծառայելը վայել չէ, մանաւանդ հիւքիւմէթի դուռը, ասինք ու հայրական *չարչիական* գաւազանի ծայրը բռնեցի:

Գնացինք Ալէքսանդրապօլ, հազար ռուբլու ապրանք գնեցինք, անցանք Փէնէք-Նարիման: Ռուսական Նարիմանի սահմանին և ազգաբնակութեան հօրեղբօրս որդիքը տիրել, յափշտակել էին հօրս մուշտարիներին (КЛІЭНТЪ), դրանցից հինգ տասը ծուխ հազիւ ճանկեցի: Կոնջալ-բիձի հետ երկար-բարակ խորհրդակցելուց յետո, անցա սահմանը, մտա Օսմանցու հողը: Ռուսա-

կան ապրանքը թէև թանկ էր, բայց Թուրքերը աւստրիական, գերմանական ու անգլիական ապրանքից լաւ բռնեցին, մէկն երկու գնով վեց ամիս ժամանակով տուինք։ Կոնջալին թողի Նարիմանի Վէքիլխաս գիւղը, ես մինակ չորս հարիւր բուբլիով վերադարձա Ալէքսանդրապոլ և հազար բուբլու նորից ապրանք տարի։ Վեց հարիւր բուբլի պարտք մնացի Ղարիբենց բայց այդ ապրանքն էլ երկու շաբաթում բաժանեցի Նարիմանի Թուրքերին ապառիկ։ Կալերը հասաւ, երկու հազար բուբլի առնելիք հաւաքեցի, այդքան էլ առնելիքներս մնաց։ Կոնջալ-բիձան այս որ տեսաւ խեւցաւ, նա կեանքումը այսպիսի առնելիք քաղած չէր։ Ես շտապեցա, նորից գնացի ապրանքի, իսկ Կոնջալը Վէքիլխասից չէր ցանկանում դուրս գալ։ Աշնան ապրանքը բերի, որը վեց ամսով, որը տարով բաժնեցի և բեռս կապեցի տուն դառնալու։ Կոնջալը չուզեց նոյնպէս տուն դառնալ, մեծ ապառիկ ունէինք Նարիմանում, ուստի տան վերաբերեալ յանձնարարութիւնը տուեց ու ինձ ճանապարհ գցեց։

Տասն ամիս մօրիցս հեռանալուց յետոյ, վերստին գրկեցի Նորան և համբուրուեցինք։ Նա անչափ կարօտել էր, նա անչափ տանջուել էր իմ բացակայութեանը, բայց ի՞նչ կարող էր անել, կարիքը մեզ բաժանել էր իրարից. իսկ պանդխտութիւնը Արդվինցու համար այնքան սովորական է և անբաժան, որքան շապիկը մարդուն, նա պանդխտութեան մասին, այնքան ուշանալուս մասին բոլորովին չտրտնջաց, նա կարօտից տոչորուելու մասին խօսք անգամ չարտայայտեց, այլ գանգատուեց մենակութիւնից։ —Գնա՛, որդի՛,

կտրիճը եօթը սարի էն կողմն է պէտք, նա տուն դառնա, ուրախացնէ, զբօսնի, հանգստանա, ու էլի պէտի գնա իրեն գործին, միայն ծերունիները կարող են օջաղի կշտին հանգիստ քնել։ Արի էլ, գնա էլ, ուշացի էլ, շուտ դարձի էլ, խօսք չունիմ. էդ քու կամքդ է, միայն թէ ես մենակ եմ, ես տանը ընկեր, խօսքընկեր չունիմ, որ կարողանամ խաղաղ քնել։ Մարդ է, օր կլինի լաւ է, օր կլինի հիւանդ, մէկը չկա, որ մի մալէզ եփէ, գնէ մարդու առաջ, կամ մի կուժ պաղ ջուր տա խմելու։

Էլ «աման-չամանի» չթողեց, խնդրեց, լացեց, թախանձեց, խօսք առաւ և տարեմտի օրերը նշան տարաւ Վարդանենց տունը և նրանց աղջկան՝ Մարգարտին ինձ համար ուզեց։ Հնար չեղաւ, պէտք էր խոնարհել, հնազանդել, կամ աւելի լաւը—քաշել, կրել այդ խաչը։ Բարեբաղդաբար հինգ տարի դեռ նշանուած էինք մնալու, որպէսզի Մարգարիտը տասնուչորս տարին մտնէր ու առաջնորդը հրաման տար մեզ պսակուելու։—Է՜հ, ասում էի մտքումս, հինգ տարուա ընթացքում, յայտնի բան է, կկարողանամ մի կերպ ապահովել տանս ապրուստը. մանաւանդ որ յաջող ճանապարհի վրա էի կանգնացրել գործս։ Ձեզ ի՞նչ պատմեմ, ամէնքիդ էլ պատահած է, նշանուեցի մի հարիւր յիսուն բուբլի ծախսի տակ ընկա, կեր, խում, ուրախութիւն, բարեկենդաններս վերջացրինք և մեծ-պահսի երկուշաբթին ճանապարհ ընկա դէպի Կարս։

Կոնջալը նորից չորս հարիւր բուբլի էր փոխադրել, գրանով ապրանք գնեցի և Զառկից առաջ հասա Վէքիլխաս։ Գործերս լաւ կարգին դրել էինք, երեք

տարի շարունակ ժամացոյցի մեքենայի նման պտտւում էր մեր վաճառատունը, յաջող ապագայի յոյս ունէինք և ուրախ սլանում էր մեր ժամանակը, երբ յանկարծ մի չարագործ տակն ու վրա արաւ իմ ու Կօնջալ-բիձի ծրագիրը։ Մի գիշեր աւազակները մտան մեր բնակւած տունը և երեք հարիւր ռուբլու ապրանքներս տարան։ Այդ դէպքի ժամանակ ես գիւղից բացակա էի, իսկ խեղճ ծերուկի՝ Կօնջալ-բիձի լեզուն կապւել, պապանձւել, մնացել էր փետացած։ Այս աւազակները խախտել էին ծերուկի առողջութիւնը, փոքրիկ կաթւած էր տւել աջ ոտքին ու թևին և յուսահատւել էր։ Նա չէր ցաւում տարւած երեք հարիւր ռուբլու ապրանքի համար, այլ նա վախենում էր կեանքից, քանի որ չարագործները նրան մահ էին սպառնացել։

Երբ բօթը լսեցի, հասա Վէքիլաս և Կօնջալին կազդուրելուց յետոյ, սիրտ տւի, քաջալերեցի, ուղարկեցի Նիխախ Ղայմաղամի (Գաւառապետի) մօտ գանգատի։ Նա ծեր է, մտածում էի, վրան կխղճան դատաւորները, մի կերպ աւազակներին կձեռբակալեն ու կպատժեն. այնպէս որ եթէ վնասներս ետ չստանանք, գոնէ դատաւորների ահից չարագործները կվախենան և ապագայում կազատւինք այդպիսի վտանգներից։ Բայց ոչ միայն ենթադրութիւնս չիրականացաւ, այլ ուղղակի ծուղակն ընկանք։ Ղայմաղամը գործը քննելուց յետոյ, երբ նկատել էր, որ մենք ռուսահպատակներս առանց անցագրի մտել էինք Նարիման և առևտրական տուն բացել, իսկոյն խեղճ Կօնջալ-բիձին կալանաւորել էր, տանջել և մարդ էր ուղարկել ինձ կալանաւորելու։

Հանգամանքներն ինձ պատմեցին։ Ես ունեցածս ապրանքը կապեցի, կնքեցի, տանս տիրոջը յանձնեցի, Կօնջալին հարկ եղած տեղեկութիւնները հասցնելուց յետոյ, կանխիկ փողերը մէջքս կապեցի ու ճանապարհ ընկա։ Ճանապարհին իմ ետևից գալող գալթիէներին (ոստիկան) կաշառեցի քնեցուցի, ձիս նստա և ուղղակի լեռնային անցքով սահմանից անցա, հասա Արդվին։ Մի շաբաթւա ընթացքում երկու պասպորտն էլ ստացա նաչալնիկից, ինձ ու Կօնջալ—բիձի համար, իսկոյն ետ դարձա Նիխախ ծերուկին ազատելու։ Ղայմաղամը կատաղել էր, որ գալթիէները ինձ չէին կարողացել կալանաւորել։ Իսկ երբ յայտնեցի, թէ անցագիրներիս ժամանակը լրացած լինելով, ետ էինք դարձել և ուշանալու պատճառով, պարտաւորւել էի գնալ ու բերել, կատաղեց գաւառապետը, քիչ մնաց, որ անձի միսն ուտի։

Բայց արդէն որսը ձեռքից փախցրել էր, կաշառ ստանալու այլևս միջոց չունէր, այն ինչ նա երազում էր, Կօնջալ-բիձի համար քառասուն յիսուն լիրա փրկանք ստանալ։ Ղայմաղամին ներկայանալու պէս առանց նրա ձեռքը տալու անցագիրները, հեռուից ցոյց տւի և խնդրեցի, որ իսկոյն արձակի Կօնջալ-բիձին, հակառակ դէպքում, սպառնացի, թէ կգնամ անմիջապէս Էրզրում և կգանգատւիմ Կօնսուլին։ Որքան թախանձեց, պահանջեց, այլևս անցագիրները գրպանիցս չհանեցի և ձեռս դաշոյնիս կոթին դրած զգաստ սպասում էի վերջնական պատասխանի։ Ղայմաղամը երկար տատանւելուց յետոյ, ինձ առաջարկեց դուրս գնալ դահլիճից և սպասել մէջլիսի

(ժողով) վճռին։ Երկու ժամ յետո եկան ինձ նորից կանչեցին։ Ես Հիւրնկալիս տանը նստած ճաշում էի։ Ղայմաղամի հրամանը լսելուց յետո, ասի.

—Ղայմաղամը, համաձայն մեր դաշնագրի, ինձ հետ գործ չի կարող ունենալ։ Եթէ ասելիք ունի, թող Արզրումի կօնսուլատի միջոցով ինձ յայտնի։ Յետո դարձա տանտիրոջս և ասի. —Որդուդ՝ Հասանին ասա, որ պատրաստուի ինձ հետ Արզրում գնալու։

—Նա միշտ պատրաստ է. ե՞րբ էք գնալու։

—Անմիջապէս, այս իրիկուն։ Պատուիրել եմ, որ ձիերի զարին կախեն. հացերս ուտենք ու ճանապարհ ընկնենք։

—Ղայմաղամին ինչ պատասխան տանեմ, կըրկնեց զաբթիէն, երբ ես նրա անպատասխան թողածբանակցում էի հիւրընկալիս հետ։

—Գնա՛, ասա՛, որ ես չեմ գալ նրա մօտ։ Թէ գործ ունի, կօնսուլատին յայտնի, նրանք էլ ինձ կարևոր հրամանները կգրեն։ Ես այս իրիկուն Արզրում եմ գնալու, որպէս զի գանգատ տամ, գողերիս բռնել տամ և Կօնջալ–բիձի տասնուհինգ օրւա բանտարկութեան մասին բաւարարութիւն պահանջեմ։

—Լաւ չես անում , որ չես լսում Ղայմաղամի խորհուրդը, նա ձեզ բարեկամ է և այժմ էլ խորհուրդ է կազմել ծերունին ազատելու։

— Էլ ուշ է, նա պէտք վաղ բաց թողած լինէր ծերունին։

—Էլ բան չունեմ ասելու. չորբաջի, ես կվերադառնամ, բայց դու քու ապագայի մասին չես խորհում։ Միթէ էլ չե՞ս ապրելու այս գաւառում...

Գնաց ոստիկանը։

Նրա սպառնալիքը թէև արտաքուստ արհամարհեցի, բայց մտատանջութիւնս սաստկացրեց։ Եթէ մինչև պասպորտի գնալս ու դառնալս Ղայմաղամը ինձնից տասը ոսկի պահանջէր, պարտաւորւած էի նրա քմահաճոյքին ենթարկւելու և ծերունին բանտի տանջանքից ազատելու համար պէտք զիջանէի, պէտք ստորանայի։ Բայց անցագիրը գրպանումս եփ դառնալուց յետո, միթէ կարող էին ինձ որևէ կերպով ընկճել։ Կօնսուլատը թիկունքիս կանգնած, Մոսկւաի գործարանների ապրանքը տարածում էի Թուրքիայում և մրցում անգլիական ու գերմանական կօմիսիօնէրների դէմ. էլ ո՞վ կարող էր ինձ կաշկանդել։ Մի քանի անգամ զննեցի գրպաններս և անցագիրներս, բայց ոստիկանի սպառնալիքը չէր կարողանում մոռանալ։ Գաւառապետը մտածում էր ինձ գցել ոտքերի տակ, ճըզմել ու քամել, բայց ես արդէն իմ անցագրովս նրան գցել էի իմ ոտքերի տակ։ Ինչ որ կարող է, թող անէ, ասացի ինքս ինձ, մի անգամ եմ հոգիս տալու, էլ ինչի տասըն անգամ մեռնեմ սրանց ճիրաններում...։ Բայց և այնպէս երկիւղս չփարատեցաւ, մտատանջութիւնս չըդադարեց և սև մտքերն ինձ պաշարեցին։ Հակառակի նման մի քանի հազար առնելիք ունէի գաւառում, որն անհնար էր գանձել մի քանի ամսում ,իսկ առանց այդ դրամի ծննդավայր դառնալս խայտառակութիւն էր։ Թև սեղանից դեռ չէի բարձրացած, թէև հացը ձեռիս էր, բայց չէի կարողանում պատառս ծամել։ Ինքս վախկոտ չէի, բայց վաճառականին պարտք ունենալու, անփող տուն դառնալու և գոյքը կորցնելու միտքը ինձ

կաշկանդել թողել էր։

Դեռ ճաշս չէի վերջացրել Կոնջալ-բիձան եկաւ, ընկճւած, արտասուքը աչքերին։ Խեղճի լեզուն կապւել էր, խօսելու ընդունակութիւնից զրկւել։ Վրգովս փաթաթւած անվերջ լալիս էր երեխայի նման։ Բանտի տանջանքները, դահիճների անգթութիւնները նրան ոգեսպառ էին արել, մէկէնիմէկ ծերացել էր։ Սիրտս առի, քաջալերեցի ու ամրապնդեցի, հանդարտեցրի։ Սեղան նստաւ և արտասուքով իւրաքանչիւր պատառը թրջելով կուլ տւեց։ Նա այնպէս էր հառաչում, սիրտը քաշում, կարծես թէ բոլորովին երեխայացել էր։ Ամէն մի շշուկ, ամէն մի աղմուկ նրան ցնցում էր և նա յուզմունքից դողում էր։

Երբ առանձնացանք, նա թոթովելով ասաց.

— Որդի՛, Բագրատ ջա՛ն, երեք տարի է, մենք սիրով ընկերութիւն արինք, ես քեզնից սրտանց շնորհակալ եմ, ոչ մի գէշութիւնիւն, կամ ընկերութեան սրբութեան դէմ ծուռութիւն չտեսայ։ Կեանքումս քեզ նման ճշմարիտ ընկեր առաջին անգամ գտայ։ Բայց, մինչև այժմ իմ բոլոր խարդախ ընկերները ինձ պլոկել ու թողել փախել էին, այժմ ես քեզանից բաժանւելու եմ, հեռանալու։ Է՛լ չեմ կարող համբերել. պիտի տուն դառնամ։ Թէ սրանից յետո մէկ երկու տարւա կեանք ունեմ, այնել անցկացնեմ հարազատներիս մօտ։ Հերի՛ք է, հազարս երեք հազար շինեցիր, Աստւած քեզ երկար կեանք տայ, քեզ եմ պարտական վաստակս։ Ես մենակ, կամ ուրիշ ընկերով երեք չորս տարւան մէջ չէի կարող այդքան փող վաստակել։ Ամէն բան քու կամքիդ եմ թողնում, արա՛, ինչոր կամենում ես։

Հնար չեղաւ, Կոնջալը չմնաց։ Նա հեշտութեամբ յուսահատւող մարդ չէր. այդ պատճառով ես մտածում էի, թէ արդեօք ինչ բան նրան այս աստիճանի փոքրհոգի շինեց։

— Բիձա, ասի, չլինի վրաս զայրացել ես, որ քեզ մենակ թողի, գնացի Արդվին անցագրի։ Գիտցի՛ր, որ ես շտապեցի նրա համար, որ ժամ առաջ քեզ տանջանքից ազատեմ։ Եթէ չերթայի, պասպորտները չըբերէի, երկուսիս էլ պիտի գցէին ծակը և այնքան պիտի տանջէին, մինչև որ կատարելապէս քամէին մեր գրպանները։ Ո՞վ է իմանում, թէ ուրիշ ինչ խաղ չէին գալու մեր գլխին։

Ամենևին, այդպիսի բաներ երբէք մի՛ մտածել, ոչ մտքովս է անցել և ոչ էլ երազովս։ Աստուած ինձ բարի որդով չէր ուրախացրել, քեզնով ուրախացրեց։ Մինչև երկինք քեզնից շնորհակալ եմ։ Ինձ հասանելիքը բաւական է ծերութեան օրերում առանց դժւարութեան ապրելու։ Ինձ ճանապարհ դի՛ր, ինձ հասանելիքը կարող ես տարէցտարի տալ, ինչպէս որ քէյֆդ ուզէ։ Ես մնացողը չեմ...

Կոնջալին վերադարձրի իւր հազար բուբլի դրամագլուխը, երկու հազարի էլ մուրհակ տւի երկու տարի ժամանակով, որ ապառիկներից գանձեմ- վճարեմ, նրան ճանապարհ դրի, և շարունակեցի գործերս։ Առուտուրս յաջող էր, բայց ընկեր չունենալը ինձ սաստիկ նեղութիւն էր պատճառում։ Կոնջալը թէև ծերացել էր, ձեռքից գործ չէր գալ, ոչ ապրանքից էր հասկանում, ոչ էլ յաճախորդին կարողանում էր համոզել բայց ես ապահով էի ինձ զգում, բացակայութեանս

ժամանակ նրա ներկայութիւնը արգելք էր դնում ուրիշ չարչիներին մեր սահմանն անցնելու և մեր ծխերը ծերուկի ահից չէին մօտենում ուրիշներին։ Բացի այդ, եթէ գիւղացին մի եզ, ձի, ոչխար, հորթ, կամ նոյն իսկ մի ուլ և մի փարչ իւղ ծախէր, նա լսում, գնում գլխին կանգնելով դրամները տուն էր բերում։ Բացի այդ ծերուկն էլի ընկեր էր, գիշերները միասին խօսակցում ժամանակ էինք անցկացնում, ցերեկը խորհուրդ էինք անում, նա միջամտում էր առուտուրին և հարցը վճռում, իսկ նրա բացակայութիւնը ինձ բոլորովին ընկճում էր։

Ապառիկներս թէև հաւաքում էի, բայց այս հաւաքումը հնարաւոր էր լինում միայն նորից ապառիկ ապրանք բաժանելով։ Գիւղացին ուրախութեամբ վճարում է պարտքը, եթէ յոյս ունի, որ նրա համար միշտ վարկ բաց ես թողնելու։ Երեք հազարից աւել ապառիկ ունէի, որը իմ չորս տարուան դառն ու վտանգալից աշխատութեան պտուղն էր։ Ապրանք ունէի, բայց դրա փոխարէն, բացի Կօնջալի պարտքը, Ալէքսանդրապօլում վճարելիքներ էլ ունէի։ Իմ դրական դրամագլուխս կազմում էին 30—40 գլուխ կթաններս, ութ—տասը մատեաններս, և երկու հարիւր գլուխ ոչխարս, բայց շնչաւոր, ոտաւոր անասունը ինչ հաստատ դրամագլուխ կարելի է հաշւել։

Անհրաժեշտ էր ընկեր գտնել, բայց դրամագլուխ ունեցողը չէր գիջանել կեանքը վտանգի դնել և Նարիման գալ, դատարկաձեռն ընկերից էլ օգուտ չկար, կարող էր գայլացած բոլէին թողնել ու հեռանալ։ Անվերջ նստում մատեանում հաշիւներս գրում, քննում,

հաշւում և օրերս մթնացնում էի։ Մեծ ուրախութիւն էր ինձ պատճառում, եթէ յաճախորդ, կամ որևէ գիւղական ծանօթ մտնում էր խանութս և ինձ զբաղեցնում էր։ Բայց աւազակների ապրանքներս տանելուց և Կօնջալին բանտարկելուց յետո, գիւղացիները ամօթից, կամ թէ Ղայմաղամի ահից խոյս էին տալիս ինձնից։ Օրէցօր վիճակս ծանրանում էր և Նարիմանում ապրելս դառնանում։

Անել վիճակի մէջ էի, նամանաւանդ աւազակների տարած ապրանքի հարցի առթիւ։ Երեք հարիւր րուբլու ապրանքը չէր ինձ տանջողը, այլ չարագործի անպատիժ մնալը։ Վստահ էի, որ եթէ չպատժւէին միևնոյն բանը շարունակելու էին։ Կեանքս անգամ վտանգի էր ենթարկւած։ Այս միտքը ուղեղումս մեխւած չէր թողնում ազատ դատելու, կամ գործելու և ինձ մաշում էր գիշեր ցերեկ։

Աւազակների հետքը գտել էի, բայց ինչ օգուտ, որ այդ գիւտս ինձ աւելի խռովեցրեց ու բորբոքեց։ Օսմանցու Նարիմանը փոքր գաւառ էր. ընդամէնը 84 գիւղ ունէր, որից թէև ութսունը միւսլիմներ էին, բայց հէնց միւսլիման յաճախորդներս էին գալիս ու զգուշութեամբ գործի մանրամասնութիւնները պատմում։ Բանը հոտած էր, Ղայմաղամի և զաբթիէ—իւզբաշու (ոստիկանական աստիճանաւոր) մատը խառն էր աւազակային գործում։ Բոլոր մանրամասնութիւնները ինձ բացատրել էին, թէ ինչպէս բաժանել էին ապրանքս և ո՛րտեղ ծախել ու ցրւել, մինչև անգամ նըմուշներ էի ձեռք բերել։ Բայց հնար չկար, չէի յանդգնում խիստ միջոցների դիմելու։ Գիւղացիները աւելի

դժգոհ էին, թէ աւազակներից և թէ նրանց պաշտպաններից։ Բայց ի՞նչ օգուտ, որ մոլորուած ոչխարների նման էլ ճանապարհը գտնելու մասին չէին մտածում անգամ։ Թշուառ գիւղացին «Ղիսմա՛թ» նախասահմանութեան վճիռ էր համարում ամէն չարիք, ամէն դժբաղդութիւն. իսկ ո՞վ կարող էր յանդգնել երկնքից թափուած կարկուտին ու կայծակին դիմադրել։

III.

Նենգաւորութեան խորամտութեամբ ուզեցի յաղթել. ոչ խիստ միջոցների դիմեցի, աւազակներին կալանաւորել տալու համար, ոչ էլ բոլորովին լռեցի։ Ամիսը մի անգամ ներկայանում էի Ղայմաղամին, թախանձում, որ միջոցներ ձեռք առնի ապրանքս գտնելու և գողերին պատժելու։ Երկու—երեք ամիսը մի անգամ էլ խնդրագրով դիմում էի կօնսուլատ և խնդրում էի, որ Թուրք կառավարութիւնից պահանջեն ապրանքս գտնել և աւազակներին պատժել։ Կօնսուլատից գրում էին Վալիին, վերջինս էլ գաւառապետին, իսկ սա էլ իբրև կասկածելի սրան-նրան ձերբակալում, ութ-տասն օր բանտարկում, կողոպտում և ազատ էր թողնում։ Գաւառապետը ինձնից անչափ գոհ էր, որ նրան հնարաւորութիւն էի տալիս սրան-նրան կալանաւորելով ապրուստ գտնելու։ Գաւառապետին յայտնի էին իր ընկերակիցները և նա համոզուած էր, որ ես ճա-

նաչում էի այդ աւազակներին և գիտէի, թէ ի՞նչ չափ բաժին իրեն էին հասցրել, բայց նա ձևանում էր, թէ ոչինչ չգիտէ, իսկ ես հնարաւորութիւն չունէի այդպիսի մերկացումներ անելու։ Բայց իմ պոլիտիկայով գոնէ ես կարողացել էի այնպիսի երկիւղ ազդել, թէ աւազակներին և թէ նրանց պաշտպանին, որ էլ ինձ մօտենալու չէին յանդգնում։

Առուտուրս կարգին գնում էր, մի կողմից հին պարտքը բերում էին, նորից ապրանք էին տանում յաճախորդներս, օրից օր պահանջիս գումարը ստուարանում էր, թէև անչափ տքնում էի ապառիկներիս մատեանը ոչնչացնելու։ Մշտական բնակարանս և վաճառատունս Նիխախ՝ հայաբնակ գիւղն էր, բայց ես հանգիստ գիշերելու և անվտանգ լուսացնելու համար պարտաւորուած էի միշտ շրջաբնակ Թուրքի գիւղերը, յաճախորդներիս տները դիմելու և նրանց յարկի տակ քնելու։ Զարհուրելի կեանք էր, ջղերս քայքայել էի անվերջ լարելով, ցնցւում, սրսփում էի ամէն մի շշուկից, բայց ի՞նչ կարող էի անել, կեանքը-ապրուստի խնդիրը ինձ աքսորել էր այս դաժան գաւառը դաժանակրի աշխատութեան։ Ի՞նչ կարող էի անել, երբ ծննդավայրում ամսական ստացածս քսանըհինգ րուբլի ռոճիկից էլ զրկուած էի, ստրկանական ստոր պահակի գործն էլ ինձնից խլել և մի լաճի էին տուել, որը օրական քառասուն տեղ կաշառւում և քառասուն կեղծիքներ էր սարքում, որ յետ մղէ հայրենակիցներիս։ Մանաւանդ առնելիքս—ապառիկներս այնպիսի գումարի էր հասել, որ սիրտս կոտրել էր, չէի կարող սոկ գալ այս վտանգալի վայրից։

Իննսուն թւականի ամառը մի օր, առաւօտ վաղ ոստիկան Շէրիֆը մտաւ բնակարանս, ապրանքներ ջոկեց և առաջարկեց ամէն մէկից տաս-քսան արշին կտրել: Գլխիցս ռադ անելու համար որքան թանկ գին առաջարկեցի, ինչ վատ-ստոր ապրանք ներկայացրի բոլորին էլ հաւանեց և համաձայնեց: Ինչ հնարի որ դիմեցի, նա ապուշ ձևացաւ և առաջարկեց չափել ու կտրել: Վերջապէս հոգուս հասաւ, ասացի.

—Շէրիֆ-աղա՛, փողը կանխիկ ես վճարելու, թէ ո՛չ.

—Ապառիկ չէ, ասաց, գալող ամսին Սուլթանի գահակալութեան պատճառով մեզ ռոճիկ են բաշխելու, այդ փողը ամբողջապէս յատկացրել եմ այս ապրանքին, դու անհոգ եղիր, կբերեմ և քեզ կյանձնեմ.

—Ուխա՛յ, ասացի ծիծաղելով, ձեր ռոճիկները մայիսի վարդի նման տարին մի անգամ են ծաղկում. ինչպէս կարելի է թագադրութեան բաշխուելիք ռոճիկի ենթադրութեամբ ապրանք ծախել: Այդպիսի դատարկ յոյսերով միթէ կարելի է կարմիր ոսկով գնւած ապրանքը ցրւել. Կալից, ցորենից, գառից ու մատեանից խօսիր, ասելիք չունիմ, բայց պետական գանձարանից դուրս գալիք ռոճկի վրա յուսալը յիմարութիւնից մի քանի աստիճան գերադաս է:

—Դու ինձ չես անպատւում, այդ բառերով մեր տէրութեանն ես նախատում...

—Ես տէրութեան անունն երբէք բերանս չեմ առել, իմ ինչ գործն է դրանով զբաղուիլը: Իսկ թէ պետական ծառայողներին տարին հազիւ մի ամսական են վճարում, այդ պարզ խնդիր է, աշխարհին յայտնի

և ես այդ կրկնելով ո՛չ մի մեղք չեմ գործել: Ասա՛, խնդրում եմ, Շէրիֆ աղա՛. ասացի, եթէ ամէն ամիս կանոնաւոր կերպով ձեզ ռոճիկ տային, ինչպէս ծառայողի, որի ապրուստը միայն այդ ռոճիկն է կազմում, ինչի դուք հինգ-տասն արշին չթի համար այսքան պիտի կարմրէիք ու դեղնէիք: Փողը գրպանում եթէ գտնէիք, միթէ ես ձեզ ուրիշներից արշինը քսան փարա պակասով չէի տալու: Ճշմարտութիւնը այնպիսի բոցափայլ լոյս է, որ աբայով նրա ճառագայթները չես կարող կտրել...

Ոստիկանը կտրուեց, գոյնը թռաւ երեսից, քթի տակ մրթմրթաց, զանազան հարցական նշաններ առաւ, կնճիռները այս ու այն կողմը ոլորեց, ուսը թօթւեց և ետ դարձաւ: Բայց ես վախկոտներից չէի, առևտրական պասպորտը գրպանումս, ռուսաստանից դուրս հանած ապրանքների ցուցակը արձանագրւած էր երկու պետութեան մաքսատներում, ինձ ինչ կարող էին անել: Եթէ կրկին անգամ կողոպտէին վաճառատունս, ուղղակի տոմարներս շալակած պիտի գնայի Մարոզովի ու Սիտինի մօտ և փողերս պիտի պահանջէի: Թող նրանք միջոցներ գտնեն ու ապահովեն մեր գոյքն ու կեանքն, քանի որ մենք մեր ամբողջ ջանքով վաստակածներս լցնում էինք նրանց գանձարանը: Շէրիֆ-աղան մի քանի վերացական խօսքեր մրմնջաց, որոնց հայհոյանքով պատասխանեցի ու վռնդեցի: Երբ նա հակառակած չէր դուրս գալիս և ետ դառնալով պատասխանեց իմ հայհոյանքներին, կրքերս չկարողացա սանձել, վրա գնացի, մի քանի ապտակ տալով դուրս հրեցի, փողոց հանեցի: Ոստիկանը բորբոքւած գուլ սուրը դուրս

քաշեց, որ աղիքներս դուրս թափէ, բայց երբ ռեւօլվէրս տեսաւ և շուրջը խռնուած ամբոխը նկատեց, փիս փիս հեռացաւ քթի տակ մրթմրթալով հայհոյանքների շղթան...

Այս անցքի տպաւորութիւնից տան տիրոջս սըրտին եղ կաթեց: Ոստիկանի մտրակի համին վարժուած գիւղացիների դէմքը զւարթացաւ, իսկ երիտասարդները չէին իմանում, թէ ինչպէս արտայայտեն իրենց հըրճւանքը:

Թէև Շէրիֆը հեռանում էր գիւղի սահմանից, բայց ոտքերը չէին գնում, սիրտը ճաքում էր, չգիտէր թէ ինչպէս վրէժ լուծի: Այնքան բազմութեան առաջ մի գեաւուրից այսպէս նախատւի, ծեծւի և դուրս վռնդւի: Գիւղացիները թէև հրճւում էին, բայց ես հետզհետէ աւելի ու աւելի բորբոքւում էի: Քանի հեռանում էին Շէրիֆի քայլերը գիւղից, այնքան սաստկանում ու մռայլւում էին մտքերս: Զգացի, որ այդ արարքս ինձ վրա շատ թանկ էր նստելու և չարաչար տուժելու էի:

Ի՞նչ մեծ կորուստ կունենայի, եթէ Կօնջալ-բիձաի նման, կամ ուրիշ առևտրականների պէս հինգ-տասը ռուբլի տուրանք տայի Շէրիֆին և այդ փողից բոլորովին ձեռք քաշէի: Չէ՞ որ նա յաւիտեան պիտի սարկանար և ես միշտ առնելիքս պահանջելու ձևերով միշտ պիտի կարողանայի նրան ինձ գործիք շինել: Թուցէ այս սովորութիւն դառնար և ես ամէն տարի այդքան գումարի նւիրատւութիւն, կամ կաշառ տայի Շէրիֆին, մի՞թէ մեծ կորուստ էր ինձ համար: Չէ՞ որ շնորհիւ այդ տասը ռուբլիին, ես նրան ոչ միայն կտրկացնէի,

այլ կստիպէի ապառիկներս գանձելուն օգնելու, կամ նրա միջոցով կիմանայի թշնամիներիս ծրագիրները և նրա երկիւղից այլևս ոչ ոք չէր յանդգնել վաճառատանս վրա յարձակւելու: Այո՛, կարող էի ես հանգամանքից օգտւել, բայց ինչ անեմ, որ ծնողներս ինձ ուրիշ կերպ էին դաստիարակել և վարժապետս՝ Տէր Անտօնը ուրիշ քարոզներ էր կարդացել, այնպէս որ ես սոսկում էի կաշառ տալուց էլ, ստանալուց էլ, ուրիշի ինչքին մօտենալուց էլ, ուրիշին գոյքս ուտեցնելուցն էլ: Այս արարքիս ներգործութիւնից երկար տանջւեցի, դեռ տանջւելու եմ, չգիտեմ մինչև երբ. բայց դառնանք պատմութեանս շարունակութեան:

Յայտնի բան է ոստիկանը ամօթից չէր կարող յայտնել գաւթէէին կերած ծեծի, նախատինքի խնդիրը, նոյն պէս ոխակալական թաթարական ինստինտքները նըրան հալումաշ էին ենթարկել: Ոխակալութիւնից հարբած, մոլեգնած նա չէր իմանում, թէ ինչպէս վրէժխնդիր լինի: Մտնելով Շէրիֆի հոգեկան տանջանքների ներքնանցքները, զգում էի, որ նա դարան է պատրաստում: Որպէսզի յանկարծակի չգլորւիմ, ես էլ նրան շրջապատեցի լրտեսներով, որոնք ինձ զեկուցում էին տալիս նրա ամէն մի ընթացքի ասմին:

Զանցաւ մի շաբաթ, նա գիշերով յարձակւեց բնակարանիս վրա. բայց ես այդ բանը վաղօրով նախատեսելով, եօթ-ութ երիտասարդներով պատրաստւել էի նրա առաջը կտրելու: Մենք նրան այնպէս հալածեցինք որ նա մոլորւած, չէր իմանում ուր փախչել: Նկատելով որ յարձակումից չի պիտի կարողանար օգտւել, նա սկսեց ճանապարհներս լրտեսել: Բարեբաղդաբար մի մա-

գազիմկա ունէի, որի հիւնարը, երկու հազար գայլի ու աղւէսի վրա կատարածս փորձերը, ամբողջ Նարիմանը տեսած լինելով, մարդ չէր յանդգնում ինձ մօտենալու։ Մանաւանդ բոլորը գիտէին, թէ երկու հազար քայլ հեռաւորութեան վրա ինչպէս էի ցրւում նապաստակի աղիքները, էլ կարող էր սիրտ անել և ասպարէզ դուրս գալ։ Բայց և այնպէս պարտաւորւած էի զգուշանալ, մանաւանդ ծառաստանների մօտից անցնելիս, կամ ձորերից, ապառաժներից անց կենալիս։

Ինձանից վրէժ չկարողանալով լուծել, սկսեց գիւղացիների արտերին ու դէզերին կրակ տալ, հանդից-արօտից կթանն ու ոչխարը տանել։ Ասենք այս քրոնիկական ցաւ էր էր Նարիմանցու համար, բայց սովորական թւից քառապատկեց աւազակութեան չափը։ Խեղճ հայ հովիւները մի մի քոռ դանակ էլ չունէին, իրենց մահակներով այնալուին ինչպէս դիմադրէին։ Օրէցօր վիճակս վատթարանում էր, գիւղացիների կրած վնասները կեղեքում էին սիրտս, բայց ինչ կարող էի անել։ Գիւղացիները գնում-գալիս խորհուրդ էին հարցնում, երիտասարդները գաղտնաբար զէնք էին պահանջում, բայց ինչ կարող էի անել, միակ հրացանիցս խո չէի կարող բաժանւել։

Մի կերպ աշունքը անցկացրի։ Երկու հազար րուբլէի չափ ապառիկներից գանձած ծննդկան տօներին հասա Արդվին։ Հազար մանէթ Կօնջալին տւի, որը ուրախութիւնից քիչ էր մնում արտասւէր։ Փողը արհամարհողներից չեմ եղել երբէք, միշտ հաշւով եմ ծախսել և նեղութիւններից ճնշւած և վախեցած միշտ դողացել եմ փողի վրա, բայց Կօնջալի արտասուքը

շատ վատս եկաւ, զզւանք ազդեց վրաս։ Ինչպէս գիտէք, չեմ կարող լռել և կեղծել, երբ ջղերս գրգռում են։ Բորբոքւած ասի.—Կօնջալ-բիձա՛, քու փողդ քեզ դարձնելը իմ պարտքս էր, բայց քու այդ աստիճան ստորանալդ ինչի համար է։ Կեանքումդ այնքա՛ն փող ես վաստկել ու կորցրել, արժէ՞ այդ ժանգի համար անարատ արտասուք թափելը։

—Որդի՛, ասաց ծերուկը, ես փողի համար չլացի, երբէք փողն ստանալուս համար էլ անչափ չուրախացա, այլ լացի նրա համար, որ յիսուն տարւան շրջանում հարիւրաւոր մարդի հետ գործ ունեցա և մի մաքուր մարդ միայն ծերութեանս ժամանակ գտա և այնպէս շուտով կորցրի։ Որդի՛, մարդու կեանքը փողն է, առանց այս ժանգի ո՛չ խաղաղութիւն կա, ո՛չ էլ անդորրութիւն ու ապրուստ։ Այդ պատճառով ամէն մարդ ստորանում, ապտաւորում է ձեռքերն ու սիրտը այդ ժանգի համար և մարդ չեմ տեսել, որ հոգին չծախէ փողի համար։ Դու կեանքի մէջ այնպէս շարժւեցար ինձ հետ, որ ես մարդերի վրա ունեցած վատ համոզումս փոխեցի և քեզ այնպէս շուտ կորցնելուս վրա լացի։ Քիչ էր մնում, որ ես համբուրէի քո ձեռքերը, բայց բնութիւնդ գիտենալով, քաշւեցա, չարի այդ բանը։ Բայց ես միշտ պիտի պաշտեմ այն ձեռքը, որ ժանգի համար չի ապականել սիրտը և իւր բարձրութեամբ տակ ու վրա արաւ սիրտս ու հոգիս և յեղաշրջեց համոզումներս։

„Արդեօ՛ք Կօնջալը չէր սխալւում,“ այս եղաւ այն հարցը, որ ինքս ինձ տւի երբ նրանից բաժանւեցա։ Արդեօ՛ք սիրտս չէի ժանգոտել, որ կպել էի

Նարիմանցու զարկերակներին և ծծում էի նրանց արիւնը, արդեօք ժանգը չէր, որ ինձ կապում էր Նարիմանի հետ...։ Բայց ինչ կարող էի անել, ապրելու համար ժանգ էր պէտք, առանց կարմիր ոսկու ոչ հաց, ոչ հալաւ, ոչ կեանք և ոչ էլ մահ հնարաւոր էր ձեռք բերել։ Արգվինու ապառաժներից ոչ եղ, ոչ մեղր, ոչ բուրդ, ոչ էլ բամբակ կարելի էր քամել ու քաղել. իսկ ստամոքսին, ցրտին, շոգին ինչպէս կարելի էր խօսք հասկացնել, եթէ մարդ չձգտէր այդ ժանգով գրպանները տուգել...։ Հապա առանց ոսկու ինչով զարդարէի նշանածիս...։

Նշանածս տասնումէկը լրացրել տասներկուսի մէջ էր մտել։ Մօրս ճանկն ընկնելու պէս հոգուս ջուր դրբեց — պսակւիր, հարսանիք անենք, հարսիս տուն բերենք, — առաւօտ, իրիկուն ուրիշ խօսք չունէր։ Ինչ արգելք որ առաջ էի բերում, չէր համոզւում։ Իսկ երբ ճարը կտրւում էր, դիմում էր կանացի ամենազօրեղ զէնքին, արտասւում, հեկեկում էր երեխայի նման։ Որքան խնդրում, թախանձում էի համբերել, չէի կարողանում համոզել, յամառել անպատճառ ուզում էր կամքն առաջ տանել։ Տանջում էր ինձ, տանջւում էր ինքն էլ և իրեն նպատակն էր դրել անպատճառ ինձ ընկճել և կամքն առաջ տանել։

Մարգարիտս էլ բաւական մեծացել ու զօրեղացել, արբունքի հասել էր, այնպէս էր գեղեցկացել, որ ինձ խելագարացնում էր։ Վերջին տարիները այնպէս էր բարձրանում, որ չէի կարողանում հաւատալ, թէ նա չորս տարի առաջուա փոքրիկ երեխան է։ Ձիւնի նման սպիտակ դէմքի վրա վառւում էին կարմիր այտերն ու

շրթունքները, շագանակագոյն մազերն և ունքերը ձիթագոյն խոշոր աչքերով նորան հրեշտակի կերպարանք էին տուել, իսկ նազենի և գրաւիչ շարժումներով նա ինձ նոր կեանք ու ոգի էր ներշնչում։ Անմեղ էր նորա թոթովանքը, դիւթիչ ձայնը, իսկ նորա ցանկութիւնները բաւականացնելու համար կարծես թեւեր առած կարող էի սլանալ դէպի կապուտակ երկինքը, ոսկեզեղուն աստղեր շորթել, բերել երկիր, սրանցով զարդարելու պաշտելուս ման եկած գետինը։

Վարդանենք խօ տնով-տեղով դողում էին Մարգարտի համար, նորան թեւերի վրան էին ման ածում։ Եօթը եղբօր մի պաշտելի քոյրն էր, այնպէս որ ամէն մէկի կորզած ազնիւ բարին ու պտուղը Մարգարիտի բաժինն էր։ Մարգարտիս միշտ զարդարում էին կոկոն ծաղկի նման, նա վարդի պէս քաղցր բուրմունք էր սփռում շուրջը, զեփիւռից ցնցւող ուռու տերևների առաջացրած շխշխոցի նման միշտ նորա նոր նոր շորերը խշխշում էին, երբ նա ման էր գալիս։ Նա հագնում էր Դամասկի արծաթաթել դիպակից կապա, ոսկեթելով թաւիշի վրա բանուած պօլսական մաշիկ։ Մէջքին կապում էր Տրիպոլեան մետաքսի գօտի, իսկ ծնկները ծածկում էր Քաշանի գոգնոցով։ Այնպէս պճնըւած թիթեռնիկի նման թռչկոտում էր պատշգամբից սանդուխները, իջնում էր պարտէզ, շրջում էր ծաղկոցում և նորից թռնում էր պատշգամբ։ Վարդանենց տունը Արգվինի ամէնից բարձր լեռնալանջին է կանգնած, իսկ Մարգարտիս չէին թողնում, որ չորրորդ գստիկոնի պատշգամբից ցած իջնի։

Յաճախ աչքերս փողոցից դարձնում էի Վար-

դանենց՝ տան կողմը, որը կարծես կապոյտ երկնքից կախուած մի սպիտակ դղեակ լինէր, ներքևից դալարներով պատած։ Մարգարիտը կարծես թէ առաւօտից մինչև իրիկուն ինձ էր հետևում, երբ էլ որ աչքերս ուղղէի Վարդանենց լուսամուտներին, Մարգարիտին պիտի նկատէի պատշգամբում, կամ լուսամուտի գոգում նստած, հայեացքը քայլերիս ուղղած, ժպտիցս խրախուսած ձեռքով կամ թաշկինակով ինձ հրաւէր էր կարդում։ Ուր որ գնայի, որ կողմն որ դառնայի քայլերս անզգայաբար աներանցս տան կողմն էին ուղղւում։ Վաթսուն եօթանասուն աստիճան սանդուխները մի շնչով էի բարձրանում, առանց ուշք դարձնելու զոքանչիս և նորա քոյրերի ծաղրն ու ծիծաղը, հրճւանքն ու բերկրանքը։ Քսանը մէկ տարիս նոր էր լրացել, երեսիս աղւամազը հազիւ նկատելի էր դարձել և երբ մայրս կամ զոքանչս —«Երեխէս» — էին ասում, զայրոյթիցս կարմրում էի, թէ ինչի՞ դեռ ևս ինձ երեխա էին անւանում։

Որքա՜ն հաճոյք, որքան բերկրանք էի զգում, երբ նա սանդուխի գլխից թևերը պարզած գիրկս էր ընկնում և վզովս փաթաթւում։ Միթէ մարդկային երևակայութիւնը դրանից քաղցր րոպէներ կարող է մտածել և զգալ։ Նա երեխա ժամանակից, ութ տարեկան հասակից այսպէս անմեղ կերպով վարժւել էր և տարիները նորա վրա ուրիշ ոչ մի ներգործութիւն չէին թողել։ Միթէ կարող եմ բառերով արտայայտել այդ րոպէներին կզգացածս երանութիւնն ու քաղցրութիւնն, երբ նորա շրթունքները հպում էին ճակատիս...։ Է՜հ, ինչի՞ ինձ ստիպեցիք, որ ես ձեզ

կեանքիս արկածները նկարագրելու համար պարտաւորւիմ թշւառութեանս մրուրի բաժակի լեղին նորից յիշեմ ու սոսկամ։ Մի՞թէ ես ստեղծւած էի, որ կեանքիս հրճւալի րոպէներից այս դաժան վիճակը փոխադրւեմ...։

Վարդանենց տան չորրորդ յարկը՝ ամենաբարձր դստիկոնը Մարգարտի բոյնն էր, նա միշտ այդտեղ էր առանձնանում, այդտեղ ո՛չ ոք սիրտ չէր անում ընդմիջել մեր երանելի ժամերը։ Ժամե՜ր, որոնք սահում էին վայրկեաններից աւելի արագ, ժամե՜ր, որոնք յիշելիս առիւծ եմ դառնում, ինքս ինձ մոռանում...։ Այնքա՜ն զբաղւած, գրաււած էինք իրարով, որ զոքանչս ակամա, մի քանի անգամ մեզ սեղանի կանչելուց յետո, պարտաւորւում էր մեր ճաշը մեզ մօտ բերելու։ Ո՛վ էր մտածում ուտելու մասին, բայց զոքանչի լեցրած բաժակը, առաջարկած խորտիկը ուտելով մարդ կարո՞ղ է կշտանալ։ Անընդհատ պատառներ էր, որ տալիս էր ինձ ու աղջկան և մենք ծիծաղով ու կատակներով ծամում ու կուլ էինք տալիս։

—Բագրատ ջան, ասում էր զոքանչս, մէկ տես, տես վառիկի սիրտը ինչպէս կարմրցրել եմ։ Կե՛ր այս սիրտը, որ սիրտդ զօրանա։ Էօ՛ֆ, էօ՛ֆ, այս ի՜նչ ճարպալի պոչ է, սրա վրա ի՜նչ կարմիր գինի կարելի է խմել։ Մէկ էս կարմրախայտից վերցրու, տես ի՜նչ համեղ է։ Եւ այսպէս անվերջ թախանձում էր թշւառ կինը, որ մեզ ախորժակի բերէ։ Այսպէս սիրւած, գուրգուրւած ամիսները սահում էին և օրէցօր մեր սէրը աճում ու խոր խոր արմատներ էր տարածում մեր սրտի, ջղերի և ուղեղի ու ոլոքների մէջ։

Երբեմն հաշտւում էի մտքումս մօրս առաջար-

կի հետ, մտածում էի օր առաջ պսակւել և յաւիտեան յարկիս ու թևիս տակ ունենալ սրտիս Մարգարիտը, բայց երբ նորա անմեղ հրեշտակային իրանը բազուկներիս մէջ սեղմում էի կրծքիս, երբ նրա մանկական քաղցրահնչիւն ձայնը ղօղանջում էր ականջումս, երբ նորա երեխայական շարժումները. խաղերը սիրտս լցնում էին բերկրութեամբ, զայրանում էի այդ մտքից և ցանկանում էի դեռ շատ ու շատ երկար տարիներ վայելել այդ երանութիւնը: Մարգարիտը իմս էր ու իմս, նորան ինձնից ո՞վ կարող էր բաժանել, իսկ այդ քաղցր վայելքից զրկւելը անգթութիւն էի համարում: Մանաւանդ որ, թէև Արդւինի կլիման շատ շուտ է հասցնում կոյսերին արբունքի, իսլամական լծի ճնշումներից սովորութիւն դարձած փոքրահասակ աղջիկներին ամուսնացնելը, դարերի ժառանգական սովորութիւնները նպաստել են վաղահաս զարգանալուն, բայց ես նկատում էի, որ կատարելապէս կազդուրւելու համար դեռ մի երկու տարի էլ պէտք էր: Մարգարիտս աճել էր, չքնաղացել, բարձրացել ու կայտառացել էր, բայց մի երկու տարւան կարիք ունէր, որ զօրանա: Վաղահաս ամուսնացածներից շատերի թառամելը նկատելով, զգուշանում էի նորան դեռ կոկոն հասակում ծանրաբեռնել ընտանեկան լծի տակ:

Մօրս թախանձանքից ու արտասուքից ազատուելու համար, գնացի եպիսկոպոսի մօտ և խնդրեցի, որ եթէ մայրս նրան դիմէ հրաման խնդրէ ինձ պսակելու, առաջնորդը թոյլ չտայ, մերժէ խնդիրը Մարգարտի տարիքի պակասութեան պատճառով: Բարեբաղդաբար այդ ժամանակները նորից կարգադրութիւն էին

ստացել կառավարութիւնից, չպսակել տասն-ու-չորս տարին չլրացրած օրիորդներին: Եպիսկոպոսը մկրտութեան տոմարը պահանջեց և երբ նկատեց, որ դեռ Մարգարիտը տասնըերեք տարին չէ լրացրել, ընդունեց խնդիրս և մօրս թախանձանքն ու կաշառները չօգնեցին:

Մայրս թէև պարտաւորւած լռեց, բայց նկատեցի, որ խիստ ցաւել էր կամքը կոտրած լինելու պատճառով: Թշւառ կինը կորցրեց զւարթութիւնը:

IV

Վերջապէս այդ բարեկենդանն էլ անցկացրինք, մտանք մեծ պահսի տաք ու պաղ օրերը: Ուզում էի վերադառնալ Նարիման, բայց սիրտս չէր գնում: Այս շաբաթ, գալողին ասելով պահսի երեք շաբաթը սլացաւ: Իրիկունը վճռում էի առաւօտ ճանապարհ ընկնել, ձիս չփում էի, մաքրում, գարին սովորականից աւելի կախում, բայց գիշերը անկողնիս մէջ քունս կորցնելով որոշումս փոխում—ետաձգում էի: Երբեմն առաւօտները տխուր երազներից սթափւած բարձրանում էի անկողնից, մռայլ էի նկատում երկինքը, ամպամած ու խոնաւ, որից օգտւելով ետաձգում էի ճանապարհորդութիւնս: Ընդհանրապէս տխրադէմ մայրս հառաչում էր ու կրկնում.—Որդի, էսօր էլ մնա, ամպերը հեռանան, օդը բացւի, յետո ճանապարհ ընկիր:

Ես էլ պատճառ էի որոնում, ձիս խնամելուց յետո, ուղղւում էի Վարդանենց տունը։ Այնքան կարճ էին թւում օրերը, այնքան շուտ էին սլանում, անցնում, որ ես ապշում էի, երբ կրկնում էին, — Վաղը կիւրակի է։ Եկաւ Ծաղկազարդը. մօրս հետ վճռեցինք զատիկն էլ անել և ապա ճանապարհ ընկնել։ Թէև Արգվին մնալս այնքան աւելորդ ծախսերի առիթ էր, բայց ո՞վ էր փողի մասին մտածում, ո՞վ էր խնայում։ Մանաւանդ այդ բոլոր ծախսերը, նւէրները, ուտելիքները, քաղցրաւէնիներն ու խմորեղէնները Մարգարտիս համար էին կատարւում։

Բայց Զատկական կարմիր ձուերի հետ ինչե՜ր չեկան Արգվին։ Ծառերը բոլորը դալարացան ու զարդարւեցան, լեռներն ու ձորերը կանանչեցին, այգեստանների ծաղիկների, կոկոնների բուրմունքը հարբեցնում էր մարդու, պարտէզների ծիլերը աչք էին գրաւում։ Վարդի թփերը կանանչ ու մոռ տերևներով, թխլիկ-կլոր կոկոններով սոխակի ուշքն էին գրաւել, որն այրած ու բոցբոց սրտով գիշերը մինչև լոյս իւր երգն էր գլգլացնում։ Թռչնիկները առաւօտից մինչև իրիկուն իրենց ճռուողումներով ջղեր էին ցնցում, մեռած հոգիներին անգամ հրաւէր էին կարդում աչքերը բանալու և հրճւելու բնութեան սքանչելիքներով։ Ծպուռն ու ճրճռն անգամ ոգի էին առել, փաթաթւել էին ծառերի ճղներին ու ոստերին և իրենց թռքերը պատառելով աւետիս էին տալիս կենդանի աշխարհին, թէ անհետացել է բուքն ու բոռանը, ձիւն ու սառնամանիքը և դարձեալ թագաւորել է քաղցրաշունչ գարունը դալարիներին բազմած։ Ամբողջ բնութեան

այդ վերակենդանութեան ժամերին ինչպէս թողնէի ես կեանքս ու հոգիս, գոհարս ու Մարգարիտս և դառնայի Նիխախի դաժանակրի որջս։

Վարդանենց վերի-Շիկէնիխօվի այգին խո իմ դրախտն էր, այգետունը՝ ապարանքս, իսկ այնտեղ տեղափոխւած Մարգարիտը՝ իմ ոգևորութեան հրեշտակս էր։ Զօրից սահող սրընթաց առուակների խշխշոցը, ջրաղացների աղօրիքների ղրղռոցը, չախչախների ճնկլտոցը խառնելով առաւօտեան մեղմ զեփիւռի սուլոցների հետ կազմում էին մեր համերգը։ Այս բոլորից ինչպէս բաժանւէի, քաղաք դառնայի, կամ ինչպէս բոլորը թողնէի ու Նիխախ վերադառնայի։ Բայց արդէն չափն անցկացրել էի, ոչ միայն նահապետական, այլ ազատամիտների սահմանից էլ անցել էի։ Գարուն ինձ այնպէս էր հարբեցրել որ դատողութիւնից էլ զրկւել էի, միայն աշխատում էի բնութեան սքանչելիքներով յագենալ և չէի կշտանում...։

— Տանը երկար մնալը տղամարդուն վայել չէ, ասաց մի օր մեծ աներձագս, ժամանակին Թաւիթ ունեցող մարդը պէտի իւր առւտուրի գլխին կանգնի, թէ չէ ետ կընկնի ու դրացիների ծաղրին կմատնւի։ Մարդ ղայրաթ պէտի ունենա և պէտի ջանա մրցակիցներից ետ չմնալ։

Թէև նա խօսքերը ուղղում էր փոքր եղբօրը, բայց հասկացա, որ այդ խօսքերը մասամբ ինձ էին ուղղւած և իմ մեղկութիւնս էր ակնարկում։ Այդ ակնարկները այնպէս վիրաւորեցին սիրտս, որ բոլորովին սթափւեցի, պայուսակս կապեցի, թողի Մայիսի սքանչելիքները Մարգարտիս, ձիս թամբեցի ու ճանապարհ

ընկա։ Չորրորդ օրը արդէն Ալէքսանդրապօլ էի։ Կարեւոր ապրանքները գնելուց յետոյ, բեռներս ճանապարհեցի ինքս էլ հասա Օլթի։ Առանց ապրանքիս հասնելուն սպասելու, անցայ սահմանը, ապրանքի հոգսը մտերիմներիցս մէկին յանձնելով։ Առանց ապրանքի Նիխախ մտնելս և այնտեղից Վէքիլտստ անցնելս շատ դուր չեկաւ գիւղացիներին, նրանք կասկածում էին, թէ ուզում էի մի կերպ ապառիկներս ժողովել և հեռանալ։ Այսպիսի ընթացքը միշտ անչափ տհաճութիւն է առաջ բերում։ Գիւղացուն մօրթիր, քերթիր, եղած-չեղածն քաշիր ձեռից — յափշտակիր, նա խոնարհութեամբ կհպատակուի, եթէ հաւատացած լինի, որ նա քեզ դիմելիս կկարողանա դարձեալ ապառիկ ապրանք ստանալ, կամ փոքրիկ փոխատուութեան դէպքում նրա խնդիրը չես մերժիլ։ Գիւղացին սարսափելի կերպով տանջւում է, եթէ յանկարծակի տունը մտած հարկապահանջին չի կարողանում բաւականութիւն տալ։ Այսպիսի դէպքերում եթէ նրանց օգնես, տանջանքից ու նախատինքից ազատես, նրանք բոլորովին կստրկանան։ Եթէ նկատեն, որ պիտի հեռանաս նրանց սահմանից, պիտի դադարեցնես նրանց վարկը, այլեւս քեզ չեն ճանաչել և հին պահանջները գանձելուց յոյսդ պիտի կտրես։ Ես իսկոյն նկատեցի նրանց քրթմնջիւնը և անմիջապէս առաջն առի։

Երբ մտերիմներս լսեցին, որ երկու հազար րուբլուց աւելի ապրանքս ճանապարհին է, միայն զգուշութեան համար ծածկում եմ, իսկոյն ուրախացան և ինձնից ծածուկ այս ու այն կողմն ընկան պարտատէրներիս ստիպեցին, որ եզ, կով, ոչխար, խոզ և ուրիշ աւելորդ

ապրանքները ծախեն և պարտքերը վճարեն։ Երեք-չորս հարիւր րուբլի հաւաքեցի և երբ իմացա թէ ապրանքս հասել է ռուսական Նարիման, իսկոյն սահմանն անցայ, փողերս պոստին յանձնեցի՝ Ալէքսանդրապօլ վաճառատան հասցնելու և երկու կտրիճ ընկերներով ապրանքս բեռնաւորեցի ու ճանապարհ ընկանք։

Մաքսատնից դուրս գալուց յետոյ, սուվարիների գլխաւորին ներկայացայ, մի փոքրիկ նուէր տուի և մի տոմսակ ստացայ ազատ Օսմանցու հողում ման գալու։ Սուվարի զինուորները որքան թախանձեցին և մի չնչին նուէր պահանջեցին, մերժեցի ու անցայ։ Այս հեծելազօրի ծառայողներին որքան շատ վճարես, չեն բաւականանալ և ոչ մէկին մարդ վճարէ։ Քանի՜ տեղ և քանի՜ անգամ ճանապարհը կտրում են, անցորդը քննում, ինչ է, մի բան կարողանան պոկել։ Ես էլ որ յամառած ցոյց էի տալիս սահմանապահ զօրականից ստացածս տոմսակն ու մտրակում էի ձիս, նրանց պահանջները մերժելով։ Ես յատկապէս այդպէս խիստ էի վարւում սուվարիների հետ, որ նրանք երկիւղ քաշէին և չյանդգնէին խուզարկել պայուսակներս։ Եթէ քննէին մեզ անպատճառ զէնքերս կգրաւէին, իսկ այդ ժամանակ պարտաւորուած պիտի լինէի ամիսներով գրագրութիւն, ծախք և հազար ու մի քննութիւն կառաջանար։ Բացի այս ես առանց զէնքի մի քայլ անգամ չէի կարող առաջ գնալ։ Այնտեղ արիւնս խմելու պատրաստ էին ոչ միայն աւազակները, ծխախոտի մաքսանենգ Լազերը, այլ մինչև անգամ թշնամիներս, Նարիմանի ղայմաղամը, ոստիկանները։ Իսկ Շէրիֆը երբէք չէր մոռանալ իւր քէնը, որը նրա հետ միայն գերեզման կա-

րող էր իջնել։ Այդ պայմաններում երբէք ցանկալի չէր վրէժխնդրութեան զոհ գնալ, ձեռքերս ծալած թշնամիներիս դիմաւորել։

Ուրախ-զւարթ գիշերով սահմանը անցանք և լուսադէմին սահմանից երեսուն վերստ հեռաւորութեամբ լեռան բաժակում իջևանեցինք։ Նոգին չուզեցանք ճանապարհներս շարունակել, ձիերս բաց թողինք արածելու, մինչև իրիկուն այդտեղ մնացինք։ Իրիկնադէմին ճանապարհ ընկանք, հասանք Վէքիխաս և ապրանքս տեղաւորեցի վաճառատունս։ Այդ օրը. երբ լեռան բաժակում էինք իջևանած, ընկերներս՝ որոնք Տէփէկցի էին, մօտեցան մի հովւի, կաթ բերին ուտելու. այնպէս որ թուրք հովիւը նրանց ճանաչել էր և հետերը երկար խօսակցել։ Իսկ դրանից երեք օր առաջ այդ կողմերին մի յայտնի թուրք աւազակ էին սպաննել, Ալի օնբաշի անունով, և ոստիկանութիւնը զինւած գաւառի չորս կողմն էր շրջում ոճրագործներին գտնելու։ Երբ մենք անցնում էինք գիշերով Նիխախի մօտով՝ «կանգնէ-կանգնէ» կապանով, հեռուից այդ ոստիկանների խումբը մեզ նկատելով սկսեց հետևել. բայց մինչև մօտենալը մենք հասանք մեր բնակարանը։

Առաւօտ վաղ դեռ ապրանքիս հակերը չքանդած, դեռ թէյս չխմած Շէրիֆ-աղան՝ ոստիկանը երեք ընկերներով ներս մտաւ վաճառատունս և ուղղակի առաջ գալով ասաց գոռալով վրաս.

—Գեավուր, վեր կաց, գնանք, քեզ կանչում է Հաջի էֆէնդին (գաւառապետը)։

—Հաջի էֆէնդիի հետ ես գործ չունիմ, ասացի, նա ինձ կանչելու, հրամայելու իրաւունք չունի։ Մեր

կոնսուլը Արզրումում է, թող նրան դիմէ, ապա ես մեր կոնսուլատի թարգմանի հետ կգամ նրա մօտ....

—*Քեաֆի՛ր*, ձայնդ կտրէ, առաջ ընկիր առանց բացատրութեան, ասաց ու ճչալով վրա եկաւ Շէրիֆը կատաղած։

Ինչի՞ ես հայհոյում, ինչ իրաւունքով տունս ես մտել և վրաս յարձակւում ես, չգիտե՞ս, որ ռուսահպատակի տունը անձեռնմխելի է, դուրս.....

—Ձայնդ կտրէ, ասաց, մտրակը բարձրացնելով, *խնզր՛ը*, լռիր ու առաջ ընկիր։

Երբ աշխատեցի պաշտպանւել, Շէրիֆը մի քանի հարւած տեղաց, ընկերները առաջ եկան հրացանի կոթերը թիկունքիս փորձեցին և օձիքիցս բռնած քաշէքաշ դուրս տարան։ Այնպէս յանկարծակի ներս մըտան, այնպէս յարձակւեցան, այնպէս շւարեցրին, որ ես ո՛չ կարողացա խոյս տալ, ո՛չ էլ պաշտպանւել։ Երեք զինւած ոստիկաններ Շէրիֆին աջակցելով, քաշկռտելով ինձ տարին։ Անդադար Շէրիֆը մտրակի հարւած էր տեղում թիկունքիս, մէջքիս, ազդրիս և անդադրում հայհոյում էր։ Փողոցում կուտակւեցաւ ահագին բազմութիւն, բայց ոչ ոք սիրտ չարաւ ոստիկանին աղերսելու, որ գոնէ անգութ կերպով չմտրակէ։ Հայերը ծակերն էին մտել, իսկ թուրքերը սիրտ չառին ինձ մօտենալու։ Երբ գիւղից դուրս հանեցին երկու թուրք ծերուկ՝ իմ կլիէնտներից առաջ եկան և ասին.

—Շէրիֆ աղա՛, անգութ մի՛ լինիլ, Հաջի էֆէնդին կանչում է, տարէք, բայց նա չէ պատւիրել, որ ճանապարհին սպաննէք։

—Թողէք, այս անօրէններին կոտրելու է,

ջարդելու է, մինչև որ կատարելապէս ընկճւին.....

—Ձեզ հետ Արզրումում կօնսուլատի միջոցով հաշիւներս կմաքրենք, ասացի սպառնալով։

—Ձայնդ կտրի՛ր, *գեաւո՛ւր*, ասաց մտրակով մի սաստիկ հարւած տալով վզիս, քեզ նման մի *քեաֆիրը* էլ ձեր Արզրումի կօնսուլն է, ձեր լեզուն մի մտրակով կարելի է կապել...։

Վերջապէս թևերս ետևից կապեցին, չւանի ծայրերը ոստիկանները բռնեցին, Շէրիֆը ետևից, միւսն առաջից շարունակեցինք մեր ճանապարհը։ Նրանք ձիաւոր, զինւած, իսկ ես շրջապատւած հետի։ Երկու ծերուկ թուրքերը ձիաւորւած մեզ հետևեցան, որպէսզի անօրէն Շէրիֆը ինձ չսպանէ ճանապարհին և ինձ առաջնորդեցին Նիխախ։ Աչքերս բարկութիւնից ու կսկծից մթնել էր, բորբոքւել կրակ էի դարձել, չէի լսում, զգում, թէ ինչ էր դուրս ժայթքում անօրէն Շէրիֆի սրտից ու բերնից։ Արդեօք քրիստոնէական սրբութիւն մնաց, արդեօք նւիրականութիւն մնաց, որ այդ օրը հարիւր անգամ Շէրիֆի հայհոյանքին, նախատինքին, անարգանքին չմատնւէր։

Հասանք Նիխախ։ Լուր տւին, Հաջի-էֆէնդին եկաւ հիւքիւմաթ (դատարան) և սկսեց քննութիւն (ոստիկանական)։ Առաջին խօսքով իմ ով լինելս յայտնելուց յետո ասի.-Առանց մեր կօնսուլատի լիազօրի ներկայութեան ես իրաւունք չունիմ ձեզ բացատրութիւն տալու, դուք էլ չէք կարող ինձ քննել։

—Ահա՛ քեզ իրաւունք, ահա քեզ լիազօր, անօրէն, անհաւատ, գոռալով վրա հասաւ, մի քանի հարւածներ իջեցրեց գլխիս, ուսերիս։

—Դուք հոգի չունի՞ք, դուք խիղճ չունի՞ք, դուք օրէնք չունի՞ք, գոռացի աչքերս մթնկալած, միթէ ճշմարտութիւնն ու արդարութիւնն իսպառ վերցել է այս երկրից։ Ես ձեզ վալիի մօտ ցոյց կտամ, թէ ինչ նշանակութիւն ունի գիւղի անկիւնում ռուսահպատակին տանջելը։

—Տւէք այդ շանը, ջարդեցէք այս անօրէնին, հրամայեց Հաջի էֆէնդին, ինքն էլ անխնա իւր փայտով հարւածներ տեղացնելով։ Այնպէս էի բորբոքւած, որ ոչինչ չէի զգում, միայն յիշում եմ, որ մինչև վերջը նրանց վրա գոռում էի, տարէք ինձ կօնսուլի մօտ, առանց կօնսուլի գիտութեան ես ձեզ չեմ պատասխանել։

—Զարկէք, այդ *քաֆիրին*, թող սատկի, գոռում էր Հաջի Էֆէնդին, հերիք չէ, որ Ռուսին առաջնորդեցին, մեր նահանգները բաժանեցին, յափշտակեցին, մեր զաւակներին ջարդել տւին, երկիրը աղքատացրին ու թշւառացրին, հիմի էլ Ռուսի անունով ուզում են մեզ վախեցնել։ Տո՛, դուք էլ խո՛ Ռուս չէք, մեր ռայաներն էք, մեր ստրուկները, ինչ անենք, որ Ռուսը բռնութեամբ տիրում է մեր գաւառները և ձեր ձեռքը մի մի կտոր թուղթ է տւել։ Չէ որ դուք մեր հինգ դարի ճորտերն էք։ Բաւական չէ, որ միւսլիմաններին ստրկացրել էք Ռուսի իշխանութեան տակ, ուզում էք այստեղ մեր գլխին պողպատէ կակալ կոտրել։ «Զարկեցէք, ջարդեցէք այդ քեաֆիրին, մինչև բոլորովին ընկճւելը»։

Երբ տեսան, որ ծեծով չկարողացան ինձ ստիպել, խօսեցնել, ուղարկեցին բանտ։ Բանտը մի մեծ

ախոռ էր, հող-յատակ տեղ-տեղ սալած, պատերն անծեփ, առիքը Սողանլուի անտաշ հաստ գերաններով ծածկած, լոյսն էլ դռնից էր ստանում։ Ոտքերս „Փէյզուլլա փաշա“ կոչուած հինգ արշին երկարութեամբ, հինգ լիտր ծանրութեամբ շղթայով կապեցին, որը մի ոտքիցս օձի նման փաթաթուելով ագդրիս, ուսիս, անցնում էր միւս ագդրիս, իջնում օղակւում միւս սրունքիս։ Վիզս գցեցին „Ղալա-փաշա“ կոչուած օղակը,, որը կցուած էր մի հաստ սիւնի, այնպէս որ ես արձանի նման այդ բեռան տակ անշարժ կանգնած մնացի, այնպէս որ եթէ շարժուէի, կարող էի խեղդուել։ Թէ „Ֆէյզուլլա-փաշաի“ այս սոսկալի շղթան և թէ „Ղալա-փաշաի“ այդ ինկվիզիցիական փողկապը հնարուած են այդ անունը կրող փաշաներից XVI և XVII դարերում, երկրում Սուլթանի դէմ ապստամբած աւազակային խմբերին տանջելու համար։ Այդ Նիխախի բանտն էլ նրանց ժամանակ շինուած էր, ուր դարերով տանջուել էին թշուառ ռայաները։ Պէտք է յիշել, որ այդ վիճակում նոյն դարերում ապստամբած երեսուն-քառասուն հազար հրոսակային խմբերը ամբողջ տասնեակ տարիներով սոսկացրել են իսլամի խալիֆին, անխնա կոտորել են Կ. Պոլսից եկած ենիչերական գնդերին և նրանց առաջնորդող վէզիրներին։ Իսկ ես քննելով այդ ապստամբներին զսպելու համար պատրաստուած դահճական գործիքները, չգիտէի թէ ինչ յանցանքիս համար արժանացել էի այդ աւազակապետների և հրոսակների վիզերի ու սրունքների թարախով պատած, արիւնով ներկուած շղթաներին, այն էլ քսաներորդ դարում, քաղաքակրթեալ պետութեան անցագիրը գրպանումս։ Հաւատացէք, ամբողջ

վեց ժամ մումեայի նման այդ արձանացած դրութեան մէջ մնացի։ Երբ մտածում եմ, թէ ինչպէս դիմացա, ինչպէս եղաւ, որ չխեղդուեցա, ինչն ինձ քաջալերեց, պահեց, պահպանեց, պատասխան չեմ գտնում։ Այս հարցը շատ ու շատ անգամ ինձ տուել եմ, բայց մինչև օրս անբացատրելի է մնացել։

Սկզբում ամբողջ մարմինս թմրեց, քարացած մնացի տեղից տեղ։ Երբ բաւական ժամանակ անցաւ և ես թմրից սթափուեցի, ուզեցի քիչ քիչ շարժել անդամներս, արձանացած դրութիւնից ազատուելու համար, մարմինս ամէն կողմից սկսեց ծակծկուել, կարծես ասեղներ էին խրցնում մսիս մէջ։ Վերջապէս մի սոսկալի քրտինք թափուեց վրաս, այնքան սաստիկ, որ ամբողջ շորերս թրջուեց։ Այլևս սրանից յետո ինչ պատահեց, չեմ յիշում, քունն էր ինձ տիրել թէ ուշքս էի կորցրել, չեմ կարող դրական բան ասել, միայն շղթաներս քակելուց, լալան վզից հանելուց յետո մի կերպ ինձ սթափեցրին կրկին և քննութեան տարան։

Այս անգամ երբ կանոնաւոր ատեան կազմեցին և միւսթէնթիք (քննիչ) Սիւլէյման բէգը սկսեց հարցաքննել։ Պատասխաններս միևնոյն էին, ոչ մի զիջողութիւն չարի։

—Ես առանց իմ պետութեան Արզրումի ներկայացուցչի, կամ նրա լիազօրի իրաւունք չունիմ ձեզ բացատրութիւն տալու։ Ուղարկեցէք ինձ Արզրում կամ կանչեցէք այնտեղից կօնսուլի լիազօրին, այն ժամանակ միայն կարևոր պատասխաններ կստանաք։ Կրկին տեղացին մտրակների և մահակների հարուածները, հայհոյանք ու անարգանք, բայց ես տարի այդ բոլորը

ուելի հաստատակամութեամբ։ Մանաւանդ որ քննիչն արգելեց, զայրացաւ ոստիկանների վրա և չթողեց, որ նրանք իրենց սրտի մաղձը գլխիս թափեն։ Վերջը ինձ դառնալով ասաց.

— Եթէ Ռուսաստանցի ես, ուր է անցագիրդ, ասաց Սիւլէյման բէգը, ինձ նեղը գցելու մտումով։

— Ահա՛, ասացի և ծոցիցս պասպորտի կարմիր տետրակի ծայրը ցոյց տւի վախենալով դուրս հանելու։ Գիտէի, որ եթէ յափշտակէին, կարող էին ոչնչացնել, որով ես բոլորովին զինաթափ պիտի մնայի դահիճներիս ձեռքում, թշնամիներիս ճանկում։ Զէնքերս թագցրած էի բնակարանումս, այնպէս որ ոչ միայն չկարողացա նրանցով զինւել, երբ Շէրիֆը տունս մտաւ, այլ չէի կարող թագստեան վայրը նրանց ցոյց տալ, քանի որ այնտեղ ուրիշ զէնք և բաւականաչափ փամփուշտ ունէի։ Ասլրանքս էլ այնտեղ էր, գրպանումս կոպէկ չունէի, այնպէս որ եթէ անցագիրս խլէին, այդ դէպքում գլուխս սոխի նման կարող էին մանրել։

— Տեսնեմ, ասաց քննիչը քաղաքավարութիւն կեղծելով։

— Ես անցագիրս ձեզ չեմ կարող տալ, թող ներկայանա կոնսուլատից լիազօրը և ստանա։

— Տեսնեմ, տեսնենք վրա հասաւ Հաջի-էֆէնդին և երբ ես պաշտպանողական դիրք բռնեցի, աչքով նշան տւեց, ութ-տաս զաբթիէ ու ջանդարմա վրաս թափւեցան, գետին գլորեցին, բռնութեամբ բաճկոնս պատառեցին և ներսի ծոցից դուրս քաշեցին, հանեցին անցագիրս։

— Այսպէս պասպորտ չի լինիլ, ասաց քննիչը

տետրակի թերթերը քրքրելով, եթէ պասպորտ է, ուր է մեր Շահբէնդէրի մակագրութիւնը։ Սա ով է իմանում ինչ տետրակ է, ինչ սատանի գիր է, դու սրանով ուզումես մեզ զբաղեցնել և խոյս տալ քննութիւնից։

— Դարձրէք, միջին երեսում Կարսի Բաշ-Շահբէնդէրը մակագրած ու գրած է, ասացի նրանց տաճկական կնիքը ցոյց տալով։

Հաջի էֆէնդին վերցրեց պասպորտս ասելով.

— Ես գիշերս քննել կտամ և ապա պատասխանը ժողովին կյայտնեմ։

— Կալտնաւոր, ասաց քննիչը, լաւ, Կարսի Շահբէնդէրը քննել և մակագրել է, բան չունիմ ասելու, այդ կիմանանք կարդալուց յետո։ Դու ինձ ասա՛, որտեղից անցար, որ կարանտինի կնիք չկա քու անցագրի վրա։

— Կա, ասացի, կա՛, տւէք ինձ անցագիրը և ես ցոյց կտամ։

Հաջի էֆէնդին զգուշութեամբ մօտեցրեց քննիչին անցագիրը, որը նկատեց թէ ռուսական և թրքական մաքսատան մակագրութիւնները և կնիքները։ Այդ ժամանակ ես գննեցի անցագրի վրայի կարանտինի թւականն ու թւահամարը, 15 Ապրիլի 1891 թւականի համար 1241։ Այս թւերը լաւ միտքս դրոշմւեց, այնպէս որ ցմահ չպիտի կարողանամ մոռանալ։ Երբ Հաջի-էֆէնդին անցագիրս ծոցը զետեղեց, զգացի որ զուր էր ետ պահանջելը, ասացի.

— Խլեցէք անցագիրս, դրա համար բոլորդ էլ պիտի տուժէք։ Ես կոնսուլից ու վալիից խնդրելու եմ

որ հեռագրեն և իմանան, թէ ճշմարիտ է, որ ես ապրիլի 15-ին սահմանից անցել եմ և այնտեղ 1241 համարով արձանագրուած է անունս։ Ուզում էք պատառեցէք անցագիրս, կտոր կտոր արէք, ինձ էլ մանրեցէք, բայց լաւ գիտցէք, որ այդ անցագրի մի թերթիկը, որ կտրուած և ուղարկուած է Քութայիսի նահանգապետին, իմ ժառանգներս այն թերթիկով պիտի հետամտեն և ձեզ պատուհասի ենթարկեն։

—Դու մի կասկածիր, քու անցագիրը մենք կուղարկենք վալիին, ասաց քննիչը. բայց այդ անցագրի տէրը դու չես, այդ քոնը չէ, դու յափշտակել ես Ռուսաստանից եկած ճամբորդից, որին սպանել ես «կանգնէ-կանգնէ» կապանում։

—Ամբողջ գիւղն ինձ և իմ տոհմս ճանաչում է, ես Բաշարաթենց Բագրատն եմ և այդ իմ անցագիրս է։

Ես պարտականութիւնս կատարեցի, դիմադրեցի մինչև վերջը, բայց մենակ բռնութեան դէմ ինչ կարող էի անել։ Արդէն ինձ բոլորովին զինաթափ զգացի, իսկ գրպարտութեան դէմ ինչ կարող էի անել։ Երբ իրենց հարցերին դարձեալ պատասխան չտուի, կրկնեցի նախկին խօսքերս, դարձեալ թակեցին, մինչև որ յոգնեցան և ինչպէս մի փալաս տարին գլորեցին բանտը։ Իրիկուն էր, «Փէյգուլա» շղթայով կապկպեցին, շպրտեցին մի անկիւն, առանց Լալաի, գետնի վրա տարածուեցի, կարծես մօրս հարթած փափուկ բրդէ դօշակը լինէր տակս փռած և բնբուլ բարձ գլխիս տակը դրած, հանգստացա և քնեցա։ Լռութիւն և հանդարտութիւն էի փնտռում, ո՛չ ոք չխանգարեց։

Դուռս փակեցին, ես էլ ընկա մռափեցի։

V.

Հետևեալ առաւօտ վաղ զարթեցայ։ Արևը դռան ճեղքից ներս էր սողացել և շողքերը տարածել էր որջիս շուրջը։ Սաստիկ ծարաւ էի, լեզուս բերանիս մէջ տապակուել, չորացել, չէր շարժւում։ Նախորդօրուանից բան չէի կերել, քաղց չէի զգում, բայց սոսկալի կերպով ցաւում էր ողջ անձս։ Ո՛չ մի տեղիս չէին խնայել, ամէն կողմս կապտուկած ու սևցած էր։ Վէրքերիցս վազած արիւնը տեղնուտեղ չորացել էր, թուլացել էի, տեղիցս շարժուել չէի կարողանում։ Պառկածս տեղից սկսեցի շուրջս գննել, ո՛չ մի բան չգտա, ոչինչ չկար, բացի խարխուլ պատերը, որմերի հիւսուածքի մէջ լայն լայն ճեղքերում փթած գարման, սարդի ոստայն որքան որ կարելի է երևակայել, փոշի և կղկղանք։ Քսանը չորս սիւն ունէր այդ բանդ-ախոռը հաստ գերաններից երեք կարգ շարուած, երկուսը երկու պատերին կից, հարաւային և հիւսիսային կողմերը, երրորդն էլ մէջտեղից։ Իւրաքանչիւր սիւնը միւսից երեք արշին հեռաւորութիւն ունէր և իւրաքանչիւր սիւնի վրա ամրացրած էր մի մի լալա։ Կլոր սիւները եթէ մի խոշոր մարդ գրկէր, չէր կարող մատների ծայրերը իրար հասցնել, դրանց նման հաստ էին առիքի կոճղերը։ Բայց երեք ամբողջ դար դրանց վրայի

փոշին ու ոստայնները չէին մաքրւած: Միջատները գշւրտում և կերակուր էին դառնում սարդերին, որոնք ամէն կողմը իրեց թակարդներից որսի էին սպասում:

Ահաւոր բանտում միայն ես էի, կարծես գաւառում ոչ մի ոճրագործ չկար, ես էի միայն արժանացել արնատէրների որջին: Երևում էր, որ վաղուց այդտեղ մարդ մտած չէր, իսկ այդ բարեբաղդութիւն էր ինձ համար: Ո՛չ միայն ինձ հաճելի չպիտի լինէր ոճրագործների ընկերութիւնը, այլ գարշահոտութիւնը էլ աւելի պիտի տանջէր ինձ: Լաւ էր որ որմերի բարձրից թողած էին մի թիզ լայնութեամբ և երկու թիզ երկարութեամբ պատուհաններ, որտեղից թէև շատ քիչ լոյս էր ներս թափանցում, քանի որ սարդերը վարագուրել էին այդ ծակերը, բայց գոնէ խոնաւութեան և նեխման ազատ ճանապարհ էին բաց թողել: Սրտիս նեղութիւնից զննում էի յատակը, առաստաղը, որմերը, շղթաները, լալանները. բայց հետաքրքրական բան չէի գտնում: Վերջապէս բարձրացա ու մօտեցա դռան ճեղքերին բակը և դուրսը դիտելու: Մարդ չկար ո՛չ պահապան, ո՛չ զինւոր, ո՛չ էլ ատրճանաւոր, ամբողջ բանտը թողնւած էր իմ իշխանութեան, միայն թէ դուռս դրսից փակւած էր, ամուր փականքով կողպւած: Համբերութիւնս կորցրի, մի քանի անգամ հեռւից անցորդներ նկատելով ձայն տւի, բայց և ո՛չ մի պատասխան չստացա: Րոպէները ժամից ծանր ներգործութիւն էին թողնում, սրտիս նեղութիւնից նստեցի դռան տակ, գոնէ ճեղքերից լոյս աշխարհը դիտելու:

Կէսօրւան մօտ եկան դահիճներս և ինձ նորից

տարին ատեան: Նոյն հարց պատասխանը, նոյն մարդիկը, նոյն խաբէութիւնները: Յայտնի բան է, ես ուրիշ կերպ չէի կարող վարւել, քանի որ որոշ օրէնքը ռուսահպատակին արգելում է ցուցումներ տալ թուրք դատաւորներին կոնսուլատի լիազօրի բացակայութեան: Նորից տեղացին հարւածներ, տանջանքներիս վերջ չկար, վէրքերս բացւեցին, արիւնս շարունակեց հոսել ու ներկել շորերս և ծեծելով, հրելով, հայհոյելով տարին գցեցին բանտ: Մի ժամ յետո ոստիկան Մամօն եկաւ, բացեց բանտիս դուռը և ասաց.

—Դու քաղաքական յանցաւոր ես. այն էլ օտարահպատակ, կառավարութիւնից քեզ չի կարելի հաց տալ, եթէ ուզում ես, փող տուր հաց բերեմ:

—Քովս փող չունիմ, ասի, բայց Նիխախի մուխտար (գզիր) Զաւօն ինձ փող է տալիք, գնա՛ նրանից կամ փող ա՛ռ, կամ իմ հաշւից թո՛ղ հաց ու պանիր տա, վերցրու բեր: Եթէ կարելի է, ասա՛, որ մի վարեկ խաշէ ու տա, բեր:

—Լաւ կլինի, ասաց ու գնաց: Կէս ժամ յետո եկաւ, յայտնեց թէ քննիչը իրաւունք չտւեց պանիրով ու վարեկով քեզ կերակրելու: Միայն ցամաք հաց ու մի փարչ էլ ջուր կարելի է տալ: Վարեկն ու պանիրը գրագիրը վերցրեց:

Արդէն ախորժակ էլ չունէի, սաստիկ տաքութիւն էր վրաս եկել. շղթաներով տարածւեցի գետին ու քնեցա: Մամօն հացն ու ջուրը քովս թողած, դուռը կրկին փակեց ու գնաց: Վերջալոյսի մօտ քնիցս սթափւեցի ստամոքսիս տանջանքից, քիչ ջուր խմեցի և սկսա հացը կրծել: Կրծեցի ցամաք հացս և յիշեցի

զօքանչիս, Նորա պատրաստած կերակուրները, կարմրցրած հաւերը, տապակած ձկները, կարկանդակներն ու գինիները, պատառներն ու թխաններն ու թխանձանքներն։

Բաւական չէր տանջանքներս, ցաւերս, գլխիս մէջ փոթորկւել էր այն միտքը, թէ որքան պիտի տանջւին մայրս, զօքանչս, Մարգարիտս, եթէ իմանան իմ կալանաւորւիլը։ Աւշքս, միտքս Արգվին էր, հարազատներիս և հոգեկիցներիս մօտ։ Հակառակի նման քունըս փախաւ ամբողջ գիշերը, ցերեկւա քունս գիշերային տանջանքս աւստկացրեց և ես վճռեցի էլ ցերեկը բոլորովին մորփէօսին անձնատուր չլինել։ Յաջորդ օրը առաւօտ վաղ դարձեալ տարին քննիչի մօտ, կէսօրին ետ դարձրին, հացս տւին և թողին առանձնութեան մէջ։ Տեսարանները, հայհոյանքները. նախատինքները և ծեծը նոյն էր, այնպէս որ կրկնութիւններով ձեզ ձանձրացնելն աւելորդ է։ Միայն երկրորդ օրից սկսեալ օրական երկու անգամ էին տանում, առաւօտ և երեկոեան։ Վիճակս էլ նոյն էր ութ օր։

Ես կարծում էի, թէ ինքս մենակ կալանաւորն եմ Հաջի—Էֆէնդիի բանտում, բայց ութերորդ օրը զգացի, որ բանտիս միւս կողմը մի ուրիշ գնդան էլ կայ, որտեղի կալանաւորները աղիողորմ կերպով լալիս էին։ Այդ գնդանի մասին բոլորովին գաղափար չունէի, չէի կարող երեւակայել, որ այնպիսի մի փոքրիկ գաւառում մի գիւղում կառավարութիւնը կրկնակի բանտ ունենայ։ Լացի ու ողբի ձայնը ինձ բոլորովին սթափեցրեց և ես մօտեցայ բանտիս դռան հակառակ որմին, որտեղից գալիս էր այդ ողորմելիների վայնասունը, երկար նստեցի և ականջ դրի, ուզեցի իմանալ, թէ ինչ մարդիկ են այդ թշւառները, և ինչի են տանջւում, բայց անհնար եղաւ մի խօսք լսել, շարունակւում էր սոսկ վայնասունի աղաղակները, որը բորբոքման ծայրահեղութեան հասնելուց յետո, աստիճանաբար իջաւ։

Այդ օրը ինձ քննութեան տարին. երբ ես նախորդ օրերի ասածիս վրա յամառեցա և ոչ մի բացատրութիւն չտւի, Հաջի Էֆէնդին հրամայեց ինձ կապեցին դատարանի բակի սիւնի վրա և սկսան մտրակներով ու ձաղկիչներով ձաղկել, դահիճներս այնպիսի ուժգին շառաչիւններով մտրակում էին թիկունքիս, ազդրներիս, որ մտրակի տեղերը կապուտկում էին և ես չդիմանալով կսկծին ուշքից ընկայ։ Ինձ պատկառակով էին բանտ տարել և այնտեղ սթափւելիս, ինձ թւում էր, թէ դեռ սիւնի վրա կապւած եմ։ Երբ բոլորովին զգաստացայ և աչքի առաջ բերի կատարւածները, ես համոզւեցա, թէ այդ օրը առաւօտ բանտարկեալներին գանակոծելուց յետո ինձ կանչելը և ձաղկելը կապ ունէր իրար հետ։ Զգացի, որ այդ մարդիկ իմ պատճառովս էին տանջւում. Այս միտքը էլ աւստկացրեց իմ հոգեկան տանջանքները։ Ի՞նչպէս կարող էի անզգայանալ և չմտնել այն անմեղների դրութեան մէջ, որոնք ոչ մի յանցանք չունէին և դահիճների ճանկն էին լոկ այն պատճառով, որ հայ էին և իմ յաճախորդները։

Սրանց վիճակը ինձ գարհուրեցնում էր։ Ես ուսսահպատակ, անցագիրը գրպանումս, յայտնի առևտրական, վաճառատանս մասին վաղուց տեղեկացրած էի կոնսուլատին և թուրքերը—գաւառապետից սկսեալ մինչև ամենավերջին ոստիկանը այս բոլորը շատ լաւ գիտենալով հանդերձ, ինձ հետ այնպէս գազանաբար

էին վարւում, հապա այն ողորմելիների հետ ինչպէս պիտի վարւէին և ինչ զարհուրելի տանջանքների չի-պիտի մատնէին։ Այս միտքը ինձ այնպէս ցնցեց, որ ես սթափւեցի, մոռացա կսկիծս ու ցաւս, կրկին մօտեցա պատին, լսելու պատկիցներիս ձայնը և իմանալ նրանց վիճակը։ Ոչ մի ձայն չկար, ոչինչ չէր լըսւում։ Մի ժամանակ սպասեցի, ամբողջ ուշքս կենտրոնացրի, բայց զուր, էլ այն ձայնը անհետացել էր։ Ենթադրեցի, թէ հոգեկան տագնապների մէջ ինձ թւացել էր, բայց իրականութեան մէջ ոչ մի ձայն չկա։ Բայց անչափ վրդովւեցի, որ սխալւել էի, կամ իսկապէս չէին ընկերակից—վիճակակիցներ։ Այս մտքից լքւած, երբ չգիտէի ինչպէս բացատրել նոյն օրւան ձայները և այսպէս իսպառ անհետանալը, Մամօն նորից բացեց վանդակս և ասաց.

—Քննիչ էֆէնդին քեզ կանչում է.

Շղթաներս բացեց և գնացինք։ Այս օրւանից սկսեալ օրական երկու անգամ սկսեցին տանել, ծեծել, տանջել, հայհոյել ու վերադարձնել, բայց այդ օրը ինձ մի նորութիւն ևս յայտնեցին, որը դարձեալ կասկածներ զարթեցրեց սրտումս, թէ ես մենակ չէի բանտարկւած։ Այդ օրը հակառակ քննիչի կամքին ու տաքտիկին, Հաջի Էֆէնդին հարցրեց. «—Ովքեր էին այն *բեռաֆիկները*, որոնք քեզ հետ իջևանել էին լեռնաձագարում։—»Յայտնի բան է, ես ուղղութիւնս չէի կարող փոխել, թէև դրանով կարող էի վնասել Շէփէկցիներին, որոնք ինձ ընկերակցեցան ապրանքս ապահովապէս Վէքիխաս փոխադրելուն։ Առանց տատանւելու աsի. —Բոլոր հարցերիդ պատասխանը կտանաք, երբ

ներկա լինի կօնսուլատի լիագօրը։

Հայհոյանք, ապտակ ու մտրակ տեղացին ամէն կողմից և ինձ տարին դարձեալ որջս։ Ճանապարհին աչքիս առաջ կանգնած և ինձնից անբաժան գնում էին այդ Շէփէքցի բարեկամներիս ստւերները։ Կարծես թէ աջ ականջիս Շէփէքցի Պօղոսը, ձախից Մադօն կրկնում էին.—Եղբայր, մեզ ինչի տարար ապրանքդ փոխադրելու։ Ինչպէս մեզի փորձանքի ու տանջանքի մատնեցիր, դէհ, առաջ անցիր և ազատիր։ Մենք ընտանիք ունենք, մեր կիներն ու երեխաները մորմոքում են մեզ համար, մեր ծնողները, քոյրերը ու հարազատները ողբում են մեզ։

Ո՛ւմ մտքից կարող էր անցնել, որ մեր ռուսաց սահմանում եղած օրը, սահմանից ետ դառնալուց երեք օր առաջ, սահմանից յիսուն վերստ հեռաւորութեամբ մի ձորում կատարւած Ալի-օն-բաշիի սպանութեան գործը պիտի բերէին ու փաթաթէին մեր վզին։ Ախար ինչ կապ կար իմ և Ալի-օն-բաշիի մէջ, ինչ առիթ կար Պօղոսի, Մադօի և այդ ոստիկանի մէջ, որ մենք ձեռ մխէինք մի թշւառ ոստիկանի արեան մէջ և նրա ընտանիքի քաղցը մշտնջենաւոր սովի փոխարկէինք։ Ես ունէի գրաւոր փաստ, անցագրիս թւականի մակագրութիւնը երկու մաքսային կարանտիններում, Օլթիի պոստի կտրոնը, որով նրանց չորսհարիւր րուբլի էի յանձնել Ալէքսանդրապօլ ուղարկելու՝ Ղարիբջանենց։ Կօնսուլատը այդ փաստերով կարող էր ինձ արդարացնել, ազատել, բայց ինչպէս ազատէի Պօղոսին ու Մադօին, որոնք թէև ինձ հետ էին բայց անցագիր չունէին, որպէս ջորեպաններս տարի ու

բերի. իսկ այս մասին արձանագրութիւն չկար։ Յայտնի բան է, թուրք մաքսաւորները պիտի ուրանային, իսկ ռուսական մաքսատան ծառայողները չէին կարող գալ Արզրումում վկայութիւն տալու, կամ ինչպէս պիտի կարողանային յիշել իմ ջորեպաններին։

Ես համոզուած էի, որ դատաւոր-դահիճներս բոլորն էլ հաստատապէս գիտէին մեր անմեղութիւնը, նոյնպէս ճանաչում էին Ալի-օն-բաշիին սպանողներին, բայց ինձ տանջում էին վրէժ լուծելու տենչով ու կրքով։ Մանաւանդ աւելի բորբոքւում էին, երբ ես նրանց սպառնում էի կօնսուլատով ու դեսպաններով։ Այս մտքերով տոգորուած մտա դժոխքս և նորից պրճնւեցա Ֆէյզուլլա փաշայի երկաթեա շղթաներովս։ Է՛լ ցաւ, ծանրութիւն, կսկիծ ու դառնութիւններս չէի զգում, ամբողջապէս ուշքս կենտրոնացած էր Պօղոսի ու Մագօի վիճակով։ Ուրեմն, մտածեցի այն տանջւողները անպատճառ դրանք պիտի լինէին, դրանց աղաղակներն էի լսել նախընթաց օրը և ուզում էի հաւատալ, որ այն աղաղակների ձայները անչափ նման, կամ բոլորովին ճշտապէս անմեղ ընկերակիցներինս էր։

Սովորական ճաշի հացս ուտում էի, քարդանի ջրով թրջելով, երբ նորից բարձրացան նախորդ օրուան աղաղակները։ Իսկոյն մօտեցա պատին հանդարտ քայլերով և ականջներս հպած ուզեցի ձայները որոշել։ Վայնասունն ու աղաղակը աստիճանաբար սաստկացաւ, այնպիսի հեծեծանք էի լսում, որ կարծես անդամահատուածների վերջին հառաչանքը լինէր։ Այնպիսի ողորմագին ձայնով էին աղերսում, որ քարերին անգամ կարելի էր զգացնել, բայց դահիճ ոստիկանների կրծքի տակից

դարերից ի վեր սիրտն ու կարեկցութիւնը դուրս էին քաշել, նրանց գութը մեռել էր, անհետացել։ Սարսափ եկաւ վրաս, լռիկ մնջիկ սպասում էի վախճանին, բայց գազանները դեռ չէին յոգնել։

Այդ մտմտունքի մէջ ակամա ձեռներս պարզեցի որմի քարերին, սկսեցի մէկ մէկ ցնցել, բայց այնքան ամուր էին, որ ոչ մի քար չկարողացա շարժել։ Ինչպէս նկատեցի, ոչ միայն շատ պինդ էր հիւսուած պատը, խոշոր տաշուած քարերով, այլ շատ էլ հաստ էր։ Ինձ զարմացնում էր այն միտքը, թէ ինչպէս այդ հաստ ու պինդ որմից ձայն էր գալիս։ Մտածեցի թէ անշուշտ մի ծակ, կամ մի պատուհան լինելու էր, ապա թէ ոչ անհնար էր լսել պատի միւս կողմից արձակուած ձայները։ Վերից վար ամէն կողմը գննեցի, ամէն անկիւն նայեցի, բայց պատուհան կամ ծակ չըգտա։ Սկսա քարերը մէկ մէկ շարժել։ Թէև քարերի շըջապատի շաղախը թափուած էր, ազատ ձեռքս մտնում էր նրանց արանքը, բայց ոչ մէկը չէր շարժւում։ Վերջապէս ամբողջ օրս զոհեցի և գտա այն հաղորդակցութեան դուռը, այն փոքրիկ ծակը, որը բացել էին իմ նախորդները և որից, ինչպէս թւում էր, շատ շատերը օգտուել էին։ Դա մի թզաչափ քառակուսի ծակ էր, որի քարը դուրս էր գալիս և տեղաւորւում էր շատ աննկատելի կերպով։ Այդ քարի կրկնակը նոյնպէս դուրս էր գնում միւս կողմը և կարելի էր աներկիւղ օգտուիլ, յարաբերութիւն կազմել և միաբանուիլ դահիճների դէմ։ Է՛լ կասկած չկար, որ ձայնը ծակից էր գալիս։

Հրճւանքիս չափ չկար, եթէ այդ բոպէին ինձ

արձակէին, գուցէ ազատութեանս համար այնքան չուրախանայի, որքան մեծ հաճոյք պատճառեց ինձ այդ գիւտս: Այդ գիւտն ինձ հնարաւորութիւն էր տալու, իմանալ շուրջս կատարուածները, թշուառ կալանաւորների վիճակը և նրանց բարոյական օգնութեան և խրախոյսի ճանապարհ էր բաց անում: Բայց եթէ կալանաւորների շարքին Թուրքեր կա՞ն, կամ հայ լրտես կա՞ թագնըւած...: Հարցեր, որոնք յանկարծակի մտան մտքումս և գերանի նման մեխուեցան հոգեկան աչքերիս առաջ: Այո՛, գուցէ կան. չէ՞ որ այդ դէպքում ո՛չ միայն ես պիտի հաստատէի, թէ կապ կար իմ և այդ բանտարկեալների մէջ, որով աւելի հնարաւորութիւն պիտի տայի թշնամիներիս ինձ հալածելու և թէ պատճառ պիտի դառնայի անմեղների նորանոր տանջանքների դատապարտման: Այս միտքն էլ բոպէական արագութեամբ վհատեցրեց ինձ այնպէս, ինչպէս կարող էր վհատանալ մի մանուկ, եթէ որսած թռչունը յանկարծ բռի մէջ շնչասպառ գլորուէր: Տատանւում էի մօտենալ և օգտուիլ գիւտիցս:

Աւելի լաւ համարեցի օգտուիլ անցքից յարաբերութեան մէջ մտնել թշուառ կալանաւորների և կեանքս անձս վտանգի մատնել, քան թէ տգիտութեան մէջ խարխափել և տանջուել: Միթէ սոված մարդը կողքը դրած հացին ձեռ չի՞ պարզել, մտածելով թէ ինքը դրա գինը չի վճարել: Զգուշութեամբ քարը ետ քաշեցի, շուրջը բացի, մաքրեցի և մի փոքրիկ ծակից ըսկսեցի զննել զնդանի խորքերը: Մութն էր, որոշ բան չէր երևում, միայն մեղմ խօսակցութեան ձայն էր լսւում: Շունչս կտրած, ամբողջ ջղերս լարած, ողջ

զգայարանքներովս ականջ դարձած լսում էի, լսում երկարատև: Խօսակցութիւնը հայերէն էր, խօսում էին խեղդւած ձայնով և հառաչանքներով: Բաւական երկար սպասելուց յետոյ, համոզւեցայ, որ այդտեղ Շէփէկցիներն էին բանտարկւած և Պօղոսի ձայնը որոշ ճանաչեցի: Խօսակցութիւնը աւելի կրճատ և ըմբռնելի էր, այնպէս որ միայն նրանք իրար լսում ու հասկանում էին, օտարականը բան չէր կարող ըմբռնել:

Այս բոլորից սխալւածէի ենթադրելու, թէ բանտում բացի Շէփէկցի հայերը Թուրքեր կամ Քուրդեր էլ կային, քանի որ հայերը այնքան մեղմ և մութ դարձւածներով, անհասկանալի ոճով և թերատ բառերով էին շարունակում իրենց խօսակցութիւնը: Երկար մտածելուց և անվերջ տատանւելուց յետոյ, յանկարծ անզգալաբար բարձր ձայնով հազացի, թէև անմիջապէս ըզգաստացայ և գլուխս ետ քաշեցի, բայց ձայնս անկասկած նրանց հասաւ: Անմիջապէս աչքերս մօտեցրի ծակին և սկսեցի զննել, թէ հազալս ինչ ներգործութիւն ունեցաւ վիճակակիցներիս վրա: Ո՛չ մի շարժում և ո՛չ մի ծպտուն էլ չլսեցի: Ինչպէս երևում էր նրանք սաստիկ վախեցել էին, ենթադրելով թէ ոստիկանները կամ պաշտօնակալները լրտեսում են նրանց բանակռիւը: Սիրտս ճաքում էր, այնպէս էին քարացել, անզգայացել, որ ո՛չ ոք սիրտ չէր անում պատիս մօտենալու:

Բայց այս սարսափը երկար չտևեց, տասը-քսան րոպէից յետոյ, նրանցից մէկ երկուսը համրաքայլ, թաթերի վրա ման գալով մօտեցան մեզ իրարից բաժանող պատին ամբողջապէս լարւած զգայարանքներով: Ե՛լ չկարողացայ համբերել և ձայն տւի:

—Պօղո՛ս, ես Բաշարաթն եմ.

—Բագրա՛տ աղբէր, այդ դու ե՞ս, ասաց Պօղոսը աւելի պատին մօտենալով.

— Ես եմ, մի՛ վախենա, ցած նստի՛ր և այս քարը ներս քաշի՛ր, ասացի նրան։

Իսկոյն քարը հրնդեցի և նա քաշեց իրենց կողմը։ Ազատ տեսա Պօղոսի երեսը և հարցրի.

—Բանտում թուրք կա՞, քուրդ կա՞.

Մարդ չկա, միայն մենք ենք, Տէփէկցիներս ենք, Տէր Գրիգորը, Գալօ քէհան և ուրիշները, բոլորս քսան երեք հոգի։

—Ձեզ ինչի՞ բռնեցին.

—Մենք չգիտենք, եկան գեղ. ծեծեցին, ջարդեցին, տանջեցին, կապկպեցին ու բերին։

—Առաւօտը ձեզ ձաղկեցի՞ն։

—Ութ օր է, օրական երկու անգամ մեզ տանջում և ստիպում են, որ մենք խոստովանենք, թէ տեսել ենք, որ դու քու ընկերներով սպանեցիր Ղազրիկի ձորում Ալի-Օն-Բաշիին։

—Դուք ինչ էք ասում, ինչ պատասխան տըւիք։

—Մենք ասինք, որ ոչինչ չգիտենք, չենք տեսել, չենք իմացել.

—Ուրի՞շ.

—Ես ասի, թէ ուրբաթ օրը, երբ սպանել էին Ալի-օն-բաշիին Ղազրիկի ձորում, դու Օլթի էիր, գնացել էիր ապրանքդ բերելու։ Այնտեղից դու գիւղ եկար միայն չորեքշաբթի օրը, իսկ սահմանը անցել ես երեքշաբթի օրը։ Հետեւապէս ինչպէս մենք կարող ենք

տեսել, երբ երկու տէրութեան սահմանային տոմարները այդ բանը կարող են հաստատել ու մեզ խայտառակել։

— Յետո՞.

—Յետո այն, որ այս խօսքիս համար վրաս յարձակուեց Հաջի-էֆէնդին և հրամայեց մտրակել։ Անգութները այնպիսի հարուածներ տուին, որ մէջքիս կաշին մաշկեցին, թողին։

—Տէրտէրին ինչի՞ են բերել։

—Այս գործի համար, ասում են,—Կամ Ալի-օնբաշիին սպանողին տուէք, և կամ վկայեցէք, որ Բաշարաթեանն է նրան սպանել։ Տէրտէրին ասում են,—Դու սրանց մեծն ես, գլխաւորն ես, խելքի արի, սրանց յորդորիր, որ ճշմարտութիւնը խօսին, մեզ յանձնեն չարագործին ու ազատուին.

—Տէրտէրն ինչ է ասում.

—Ասում է, տղերք, սրանք նենգութեամբ ուզում են մեր բերնից որևէ վկայութիւն դուրս քաշել և ապա մեր խօսքով և խոստովանութեամբ մեզ կրակը գցել։ Մինչի մահ ամէն տանջանքի պիտի դիմադրէք և բացի ճշմարտութիւնը, իսկութիւնը ուրիշ խօսք չպիտի թռչի ձեր շրթունքներից։—Շատ իրաւացի է տէրտէրի խրատը, նրանք ուզում են մեր վկայութիւնով մեզ կործանել, ո՛չ թէ քեզ—Բագրա՛տ։

VI

Խնդիրը շատ պարզ էր, Հաջի-էֆէնդին և Շէրիֆը պատրուակ բռնելով Ալի·օն-բաշիի գործը տենչում էին ինձ խեղդել։ Գործը ձևականացնելու համար կարևոր էին վկաներ, որոնք ստիպմունքով կարող էին անչափ վկա գտնել։ Իսկ հայերին կալանաւորելու պատճառն այն էր, որ նրանցից գուցէ հնարաւոր լինէր մի վկա ճարել և ապա ամբողջ գիւղի ինչքը յափշտակել, որպէս աւազակների ու չարագործների օթևան-ապաստարան հրատարակելով։

Բայց նրանք նպատակի չհասան, քանի որ հայերին խրատ էր դարձել դաչերի փորձը, նրանք համոզուած էին, որ դաւառապետն ու ոստիկանը միշտ աքնում են «եզի տակը հորթ փնդռել»։

Այս դառն մտածութեան մէջ մոռացա ինքս ինձ, տեղս և վիճակս ուշքս կենտրոնացրած թշնամիներիս անխղճութեան ծայրահեղութեան վրա, խորասուզւեցի նստածս տեղը թիկունքս պատին յենած։ Այս դիրքում որքան մնացի չգիտեմ, բայց յանկարծ սթափւեցի, երբ Մամօն աղմկալով բաց էր անում դռանս փականքը։ Իսկոյն դուրս հանածս քարը զետեղեցի տեղը և դիմաւորեցի դահիճիս դուռը բաց անելու պէս։ Իսկոյն շղթաներս քանդեց ոստիկանը և ինձ առաջնորդեց գաւիթը։ Քսան քայլից հասանք ոստիկանների պատշգամ-

բը, ուր մի անծանօթ թուրք մեզ մօտեցաւ, բարևեց և նստաւ։ Թուրքն այնպէս ձևացրեց, թէ վաղուց ինձ ճանաչում է և յարեց։

—Բագրամ չորբաջի, մեզի քիչ ապրանք է պէտք, չի կարելի, որ մի քանի տող գրես, տան տէրդ տա։

—Նախ ես ձեզ չեմ ճանաչում, սաի, բացի այդ ապրանքիս հակերը չեմ բացած, այնպէս կապուած կեցած է։ Տան տէրս խեղճ ու տգէտ մարդ է, ինչպէս կարող եմ նրան հաւատալ և թոյլ տալ, որ ապրանքս ցրւէ։ Մի քանի օր սպասիր, երբ կոնսուլատից գան ու ինձ ազատեն, այն ժամանակ կգաս և քեզ կարևոր ապրանք կգնես,

—Հարսանիք ունեմ, բան ու ման պակաս է, մենք էլ շտապում ենք ասաց անծանօթ այցելուս։

—Այս միջոցին մի ուրիշ թուրք ինձ լաւ գննում էր և երբ ոստիկանը իւր բերած մարդու հետ ներս մտան խօսակցելու, նա մօտեցաւ ու ասաց։

—Գիւղից լուր եմ բերել, ապրանքդ Շէրիֆը գիշերս բարձեց ու բերեց Հաջի-էֆէնդիի տունը։

Ես վստահութիւն չունէի, մանաւանդ ոստիկանական դռանը ազնիւ մարդը, բարեկամը հնարաւորութիւն չէր ունենալ ինձ մօտենալու. արհաւիրքն ու սարսափը բոլորին հեռացրել, մտցրել էր իրենց որջերը։ Ամէն մարդ ողբում էր իւր վիճակը, ամէնքը մոլորւել, չգիտէին թէ անողոք բաղդը ինչ է սահմանել նրանց համար, Խալիֆի արփանեակները ինչ դարան էին պատրաստում անմեղներին գլորելու համար։ Լրաբերս զգուշութեամբ հեռացաւ, իսկ ոստիկանը Մամօն եկաւ ինձ որջս տարաւ։

—Լաւ, ասաց, կարիք չկա շղթայելու, գնա՛ գործիդ։

Մնացի շւարած, թէ ինչ նոր թակարդ էին հիւսում ինձ համար։ Երբ դռան փակերը կապեց, փականքները կողպեց, հեռացաւ, մօտեցայ պատուհանին, որեւէ տեղեկութիւն ստանալու Շէփէկցիներից։ Բայց նրանք ոչինչ չէին իմանում, Վէքիլխասի հետ երբէք յարաբերութիւն չէին ունեցել։ Մինչ ես մտորած ծրագրում էի բռնելիք ընթացքս, նորից դուռը բացեց Մամօն և ասաց։

—Քննիչը քեզ կանչում է։ Գնանք։

Ես հետեւեցի։ Ժողովը, ատեանը և դատաւորները միեւնոյն էին, անփոփոխ։ Դարձեալ նոյն հարցերը և ես անփոփոխ մերժեցի նրանց պատասխանել։ Մի երկար ճառ խօսեցաւ քննիչը և բացատրեց, թէ ես պարտաւոր էի սկզբնական քննութիւնը կատարելու համար նրան օգնելու, կոնսուլատի բացակայութեանը, որպէսզի օր առաջ գործը ուղարկւէր Արզրում, այնտեղ պահանջէր կոնսուլատի միջամտութիւնը։ Քննիչին պատասխանեցի, թէ թո՛ղ իրենք նախ դիմեն կոնսուլատ, յայտնեն իրերի դրութիւնը, եթէ մարդ չուղարկեն և կամ իրանց լիազօրութիւն տան առանց դրագոմանի ներկայութեանը շարունակել քննութիւնը, այնժամանակ ես պատրաստ էի բոլոր կարեւոր բացադրութիւնները նրանց տալ։

Հաջի-էֆէնդին նորից բորբոքւեց, նորից հարւածներ տեղացին գլխիս և անթիւ հայհոյանքի ու նախատինքի արժանացայ։ Հաջի-էֆէնդին գոռգոռալով ասաց. մենք քեզ չենք կարող օտարահպատակի տեղ ընդունել,

դու էլ, քո հայրն էլ, քո պապն էլ մեր ռայան էք եղել, ինչ անենք որ Ռուսները բռնութեամբ յափշտակել են մեր գաւառները։ Մեր նահանգները մեզնից խլելուն նպաստեցիք, այդ դեռ բաւական չէ, ուզում էք մեր երկրում մեր գլխին կակալ կտրել։ Ետեւիցդ խնդրակ խո՛ չէինք ուղարկել, ինչի եկար Նարիման։

—Մենք դաշնագիր ունենք, որի հիման վրա ռուսահպատակը իրաւունք ունի մտնել ձեր երկիրը առեւտրական գործերով, ապրել այստեղ իւր կոնսուլատի հովանաւորութեան և հսկողութեան տակ։ Ինչպէս ձեր հպատակ միւսլիմաններ իրաւունք ունին գնալ Կովկաս-Ռուսաստան, բնակութիւն անել, չոլէների վրա քար կտրել և մասնակցել մեր բանւորների օրավարձին, իսկ մենք իրաւունք չունինք այստեղ առուտուր անելու։ Մենք խո՛ ձեր բանւորների օրավարձը չէ՞նք խլում։

—Զարդւին այն միւսլիմանները, որ գնում, ստրկանում և ռուսի ճանապարհներն են շինում, նաւահանգիստները լայնացնում, թէ ինչ է մի քանի ղուրուշ փող են աշխատելու։

—Փողն որ չաշխատեն, հապա պետական հարկերը ինչով վճարեն։

—Զայնդ կտրի՛ր, ասաց ու մի քանի հարւած նորից իջան գլխիս։

Երբէք հաճելի չէր, որ նրանց ներկայութեան երկրի աղքատութիւնը պախարակւէր։ Յանկարծ հարցը մէջ ընկաւ, իսկ ընդհատելն էլ դժւար էր։ Որպէսզի խօսակցութիւնը կտրւի, քննիչը ասաց։

—Շէրիֆ աղա՛, վկա Մէհմէդ աղաին կանչիր։

Անմիջապէս ներս առաջնորդեցին քիչ առաջ

գալթում ինձնից ապրանք խնդրողին։ Քննիչը հարցրեց։

—Դու ասացիր, թէ Ալի-օն-բաշիի սպանութեան ներկա էիր և տեսար, թէ ի՛նչպէս անօրէնները նրան կեանքից զրկեցին։ Ասա, խնդրեմ, կճանաչնա՞ս նրա սպանողին եթէ տեսնես։

—Այն օրը ձեզ յայտնեցի, որ թէև նա թաշկինակով դէմքը ծածկել էր, միայն աչքերն էր բաց թողել, բայց և այնպէս որտեղ էլ նրան տեսնեմ կարող եմ ճանաչել։

—Լա՛ւ, ես մի քանի կալանաւոր դուրս հանել կտամ, տե՛ս թէ նրանց մէջը չէ, ասաց քննիչը և դուրս տարին Մէհմէդ ագային։

Քիչ յետո Շէփէկցիներից վեց եօթը հոգի բերին քննիչի մօտ և և նորից ներս կանչեցին Մէհմէդ ագային։ Քննիչը հարցրեց,—Չկա՞ր արդեօք նրանց մէջ Ալի օն-բաշիին սպանող չարագործը։

Մէհմէդ ագօն նայեց այդ եօթը կալանաւորներին, զննեց, չորս կողմը լաւ քննելուց յետո, երբ յանկարծ ինձ տեսաւ և բորբոքուած դարձաւ քննիչի կողմը և ասաց

—Ի՞նչի էք մարդու փորձում. մի՞թէ կասկածում էք, որ միւսլիմանը խղճի հակառակ սուտ և Ալլահի համար պարտաւոր եղած վկայութիւնը ծռէ։ Ահա՛, Ալի-օն բաշիին կեանքից զրկողը, ահա մարդասպանը, ասաց մատը վրաս ուղղելով, յարձակւելու պատրաստ։

Սարսափեցի, սառն քրտինքը պատեց ճակատս ու կուրծքս։ Իսկոյն զգացի, թէ ի՛նչ զարհուրելի զրպարտութեան էի մատնուած։ Ոստիկանը բերեց մօտս ա-

պրանք առնելու, որ ինձ լաւ տեսնի ճանաչի և ապա այնպիսի ձևականութիւններով զրպարտէ։ Թէ ի՛նչ անցաւ այդ րոպէին դահլիճում, չեմ յիշում։ Այնպէս ուշքս թռաւ, աչքերս մթնեցին, որ բոլորովին կորցրի յիշողութիւնս էլ, դատողութիւնս էլ։ Վերջապէս վրա հասաւ այնպիսի մի ծանր րոպէ, որ ես սթափւեցի, նկատեցի ինքս ինձ Շէփէկցիների շրջանում կանգնած և մեր առաջը ինձ գաղտնի լուր բերողը, որն հաւատացնում էր, թէ Շէրիֆը ապրանքս Վէքիխասից բերել և Հաջի էֆէնդիի հետ բաժանել էին։ Այդ մարդը բռնեց չուխիս փէշից և ասաց.

—Հաջի՛ էֆէնդի, քննիչ բէյ, ահա այն անօրէնը-գեաւուրը, որ ինձ վիրաւորեց դաշոյնով, երբ Ալի-օն բաշիին սպանեց։

«Ամենայն ինչ կատարեալ է», մրմնջացի և ակամա աչքերս երկինք բարձրացրի։ Երկու վկա, ականատեսներ իմ չարագործութեան։ Ուրիշ ճար չկար պէտք էր գնալ կախաղան...։

Դարձեալ ուշքս կորցրի և չեմ յիշում, թէ ի՛նչ է պատահել նրանից յետո։ Միայն սթափւեցի բանտում, երբ խուլ ձայնով ինձ կանչում էին Շէփէկցիները։ Տեղիցս ուզեցի շարժւել, բայց անդամներս, ամբողջ մարմինս ցաւում էր, այդ րոպէին միայն զգացի, որ ինձ անխնա մտրակել էին ուշքս կորցրած պահին։ Ես Շէփէկցիներին պայմանական ձայնը տւի, որ սպասեն և լռեն։ Երկար չէի կարողանում ուղղւել և ոտքի կանգնել, բարեբաղդաբար շղթաներս չէին խփել, բայց առանց շղթայի էլ շրջելու հնարաւորութիւն չունէի։ Սողալով սողալով մօտեցա պատուհանին, ճանկա-

տեցի քարը դուրս հանեցի և ձայն տուի։ Նրանք կասկածանքով ու շփոթուած ասին։

—Բաշարաթ ջա՛ն, դու ես, մի դէմքդ մօտեցրու պատուհանին, տեսնենք։

—Ճար չունիմ, ո՛չ կարող եմ շարժուիլ, ո՛չ էլ խօսիլ։

—Փա՛ռք Աստծո՛, փառք Աստծո՛, ձայն տուին ամէն կողմից. ողջ է, չի մեռել։

—Շատ աներես ենք, անչա՛փ անաբուռ, որ այսքան տանջանքից յետոյ, էլի դիմանում ենք, երեսներս պնդացած դիմադրում...։

—Մի՛ յուսահատուիր, Բագրատ-աղա, ասաց Տէր Գրիգորը «Զի Աստուած ընդ մեզ է».

—Բայց ի՞նչ օգուտ, տէրտէր, ճիշտ է Աստուած մեզ հետ է, բայց մեզ յանձնել է գելերին, որ տանջեն ու փորձեն։

—Էլի «Զի Աստուած ընդ մեզ է»։ Դու տանջուիր համբերութեամբ, տա՛ր խաչդ սիրով, ամաչեցուր մեծահոգութեամբ դահիճներիդ, նրանք զինաթափ կլինին և կզղջան։ Չարութեան դէմ վրէժխնդրութեամբ զինուելը, չարութեան բորբոքման նպաստելն է։ Չարութիւնը միայն մեղմութեամբ և խոնարհութեամբ կարելի է յաղթահարել։ Այդ է մեզ պատուիրած մեր փրկիչը, Բագրատ ջա՛ն, տա՛ր խաչդ նրա ետևից և յաւիտեան տանջանքից կազատուես, այստեղ թէ յաւիտենականութեան մէջ։

—Այո՛, տէրտէր, դու խոնարհիր գլուխդ լծի տակ, եկ հետ գութանին լծուիր ու քաշիր, վարիր, ցանիր եթէ Շէրիֆն ու Մամօն գան կալը, կասածդ հատիկը բարձիր նրանց ջորին ու թո՛ղ քու տանդ մանր ու խոշորը սոված մորմոքի։ Ճիշտ ես ասում, տէրտէր ջա՛ն, ես գնամ, մուրամ, ճուրամ, Ալէքսանդրապօլից՝ Ղարիբջանից ապառիկ ապրանք բերեմ, տամ Շէրիֆը տանի հագնի մաշի, երեխաներն ու կիները զարդարի, իսկ ինքս հալուեմ, մաշուեմ, կարմրեմ ու դեղնեմ ապրանքատիրոջ առաջ։ Եթէ գան տնիցդ աղջիկդ քաշեն, կինդ յափշտակեն, թո՛ղ տանեն, պղծեն ու տանջեն, դու գլուխդ ծռած եկ մտիր Նիխախի բանտ, ոտքերիդ Ֆէյզուլլա փաշա, վզիդ Լալափաշա շքանշանները կապիր և գլուխդ կախիր, ձեռներդ կապիր, վիզդ երկարացուր, որ դահիճները թակեն — «Զի Աստուած ընդ մեզ է»։

—Այո՛, Բագրատ ջա՛ն, թո՛ղ անեն, դու մի՛ մտածել չարին դիմադրել, դու կուպր մի՛ լցնել հրդեհի վրա. նա ինքն իրեն կըռնկի, կբոցավառի ու կհանգչի։ Եթէ այդպէս չանէին մեր պապերը ամբողջ եօթը դար, այսօր հայրենիքում մի հայ էլ մնացած չէր լինի։ Եւ այս բոլորը, եթէ խոր մտածես ու քննես, պիտի համոզուես, որ Աստուած միշտ մեզ հետ է եղել, մենք մեր թշնամիներին յաղթահարել ենք մարդասիրութեամբ.

—Այո՛, սորվացել էք ու ապրել։ Յայտնի բան է միւսլիմանը իւր ծառայութեան, երկիրը մշակելու և կարիքները հոգալու համար ձեզ նման ռայաի կարիք ունեցել է և ունի։ Եթէ էշին պահում են, որ բեռը շալակի, ձին պահում են, որ տիրոջը քաղաքից քաղաք տանի, պէտք է ռայաին էլ պահէին, որ իրենց հացը պատրաստէր...։

—Մարդս աշխատելու համար է, որդի՛, ով չաշխատի, նա չի ապրի։ Մեր աշխատանքը նրանք իւրացրել և ծուլութեան մէջ անպէտքացել ու ծիւրել են։ Եթէ այս կէտն էլ մտածես, ի՞նչ անենք, թէ տանջւում ենք, խո՛ ապրում ենք և ապրուստ ճարելու համար անճարակ չե՛նք մնացել, ուրեմն էլ պիտի ասենք. «Զի Աստուած ընդ մեզ է»։

—Տէրտէր, ես գլուխ չունիմ, դու այնքան կրկնել ես այդ «Շնորհեան», որ գլուխդ բժժել է և հնար չկա քեզ համոզելու։ Իսկ ես հիւանդ եմ, ոսկորներս ցաւում են.

—Գիտեմ, տղերքը անիրաւների արարքի լուրը բերին. համբերի՛ր ցաւակս, շուտով քեզ պիտի ազատեն։ Արդէն քո խնդրագիրը տղերքը հասցրել են Արզրում Կոնսուլին, որը գրել է մանրամասնութիւնները Վալիին և հաշիւ է պահանջել։

—Ետ դարձել ե՛ն, ասացի՛ր տէրտէր.

—Այսօր գեղից հաց բերող պառաւը ասել է, թէ շուտով Կոնսուլը իր մարդը պիտի ուղարկէ։

Այս լուրը ինձ վերակենդանացրեց։ Ես կարծում էի, թէ խնդրագիրս չի հասել Արզրում, տանողները բռնել են և կամ քաղաքի պարսպի տակ նրանց ոստիկանները խուզարկել ու յափշտակել են բողոքագիրս։ Այդ մտատանջութիւնից ազատւեցա. յոյսս ամրացաւ և համոզւած էի, որ տէրտէրի ենթադրութիւնը կկատարւի։ Բայց անցաւ ութն օր ևս, իսկ պատասխան չկար ու չկար։

Ամէն օր տանում էին, տանջում էին, ծեծում էին և սպառնում, որ խոստովանեմ, թէ ինքս եմ սպանել Ալի-օն-բաշիին, բայց ի՞նչ խոստովանէի, որ ո՛չ միայն այդ արարածը կեանքումս չէի տեսել, գոյութեան մասին գաղափար չունէի, այլ չարագործութեան կատարւած պահին ես բացակա էի գաւառից։ Անցաւ մի ամբողջ ամիս, ո՛չ մի լուր, ո՛չ մի տեղեկութիւն կոնսուլատից, իսկ դահիճներիս անդադար Կարինից հրաման էր գալիս, մեզ տանջել և խոստովանութիւն ստանալ։ Մի օր քննութեան պահին եկան յայտնեցին, թէ Խոա ամառանոցում աւազակները սպանել են Սալէհ աղաին, նրա որդուն և մշակին։ Իսկոյն Հաջի-էֆէնդին, քննիչը ոստիկանների հետ գնացին սպանութեան տեղը քննելու օճիրը և կազմելու կարևոր արձանագրութիւնը։ Մեզ մոռացան, բանտում երեք օր ազատ առանց ծեծի և քննութեան թողին։

Երեկոյեան վերադարձան Նիխախ, ձիերից իջնելու պէս, քննիչն ու Հաջի-էֆէնդին ինձ քննութեան կանչեցին։ Ես ապուշ-ապուշ առաջ գնացի. թէև ոսկորներս սաստիկ ցաւում էին, բայց որպէսզի ոստիկանի հրացանի կոթի հարւածից խոյս տամ, շտապում էի հնար եղածից աւելի։ Դիւանատուն ներս մտնելուս պէս, ինձ հարցրեց Հաջի-էֆէնդին բորբոքւած։

—Սալէհ աղաին սպանող աւազակներն ո՞վքեր են։

—Հաջի-էֆէնդի, քննիչ-բէյ, ո՞վքեր են Սալէհ աղաին սպանողները, կրկնեցի՛ նրանց։ Յետոյ յարեցի.—Եթէ դուք ազատութեան մէջ, գնացիք քննեցիք, հարց ու փորձ արիք, չկարողացաք իմանալ, ես ինչպէս պիտի գիտենամ։ Միթէ ես Աներևոյթի հետ յարաբերութեան մէջ եմ և կարող եմ բացակայութեան մէջ

տեսնել ու իմանալ, թէ ինչ է կատարւում.

Պատասխանիս համար գանւեցա և ինձ լռեցընելու համար շառաչեցրին մտրակները։ Բայց արդէն զզւել էի կեանքից, քառասուն օր կապանքների և ծեծի տակ տանջւել, ապա գաւառում պատահած որևէ չարագործութեան էլ պատասխանատու լինել։ Մի ժպտաք, պարոններ, մի կասկածէք, ասածներիս մէջ մազաչափ չեմ շեղւում ճշմարտութիւնից։ Բացէք Արզուրումի քրէյական ատեանից իմ դատավարութեան գործը և կարդացէք, որ համոզւէք, թէ եթէ թուրք պաշտօնակալը թշնամանում է, նա ինչ յանդուգն զրպարտութիւններ է յերիւրում ու խանձում է հակառակորդին։

Յաջորդ օրը Հաջի-էֆէնդին նորից գնաց գաւառը շրջելու, հետն առնելով քսան հեծելազօր-ոստիկան։ Ինձ ամբողջ օրը հանգիստ թողին սև հացիս ու քարգանով ջրիս հետ։ Մի քանի անգամ տէրտէրն ու Պօղոսը ինձ կանչեցին բայց չուզեցի գնալ և „սև-ագռաւի“ կրկռոցը լսել։ Ինձ ողջ ողջ գերեզման էին իջեցրել, եօթը տարւան դառն աշխատութեամբ հաւաքած չնչին դրամագլուխս էին ցրւել, մօրս ու Մարգարտիս դառն արտասուքի և աղիողորմ հառաչանքի էին մատնել, գերեզմանիս մէջ օրական երկու անգամ աքցանով ջղերս էին քաշքշում, ոսկորներս էին փշրում, այդ դեռ բաւական չէ, ես դեռ նրանց սիրելու նրանց ներելու մեծահոգութիւն անելու եմ պարտաւոր եղել.........։

Ա՜խ, անխելք ազգաւներ, ցնորամիտ հովիւներ, մեզ ո՞ւր հասցրիք։ Մենք պարտաւոր ենք կապաներս

ուզողին բաճկոններս էլ տալ, աջ երեսին ապտակ խըփողի առաջ ձախն էլ պարզել...վե՜րջը...

Սալէհ-աղայի սպանութեան գործը մեծ փոթորիկ առաջ բերեց, մի անգամից երեք հաւատացեալ գլորւել էին, ինչպէս ենթադրում էին, հայի սրով։ Վալին բորբոքւած գաւառապետից չարագործին էր պահանջում, իսկ չարագործներին ինչպէս գտնէին, քանի որ սարի գլխին եայլայում մարդ չկա եղել, որ բերեն վկայութեան։ Սպանութեան տեղի շուրջը հայաբնակ գիւղ էլ չկար, որ Տէփէկցիների նման բերէին ու տանջէին, իսկ միւսլիման գիւղացիներին միշտ չէր կարելի դատաստանի ենթարկել. նրանց դէմ սուտ վկա չէին կարող կանգնեցնել։ Որպէսզի պատասխանատւութիւնից ազատւին, որպէսզի ինձ ընդմիշտ կորցնեն, վրէժները լուծեն և գոյքս մարսեն, Վալիին զեկուցումն էին տւել, որ, ինչպէս ես էի սպանել Ալի-օն-բաշիին, նոյնպէս ես իմ անձնւէր գործակիցներիս ձեռքով սպանել էի տւել Սալէհ-աղային, որպէսզի վրէժս լուծեմ գաւառապետից։ Որ ես խումբ էի կազմել, զինել, որպէսզի Նարիմանի գաւառը, Թուրքահայաստանի մի քանի նահանգների հետ բաժանեմ Խալիֆի պետութիւնից և նոր իշխանութիւն սահմանեմ։

Այս բացատրութիւնները Կարին հասնելու պէս, Վալիին Կ. պօլսից հրաման էր հասել, ինձ և Տէփէկցիներին Կարինի բանտը փոխադրել և գործը խստիւ քննել ու պարզել։ Որովհետև Կարինի ռուսական կոնսուլն էլ միևնոյն բանը պահանջել էր, իմ խնդրագրիս համեմատ, Վալին հրամայել էր մեզ անմիջապէս Արզուրում ուղարկել։

Այս պարագան անչափ վրդովեց Հաջի-էֆենդիին։ Նա երբէք չէր կարող նախատեսել, որ իւր դէկուցումներով իրեն պիտի զրկէին մեզ նման իւղալի պատառից։ Ինչպէս իմ ապրանքս բերել ու բաժանել էին իրենց մէջ, նոյնպէս Շէփէկցի բանտարկեալների գոյքի մեծագոյն մասը յափշտակել և նրանցից ահագին կաշառ էին վերցրել ազատութեան խոստումներով։ Մեզ Արզրումի քննիչին յանձնելուց յետո, ոչ միայն Հաջի-էֆենդին ու ընկերակիցները չպիտի կարողանային այլևս կթել բանտարկեալների ազգականներին, այլ մինչ այդ օրը իւրացրածներից մեծագոյն մասը պիտի յանձնէին Վալիին, օգնականին, Կարինի քրէական դատարանի նախագահին և քարտուղարին, որպէսզի կարողանային գոյութիւնները պահպանել։

Այս պատճառով սրտի մաղձն ու թոյնը մեր գլխին էր թափում Հաջի-էֆէնդին օրական երկու անգամի փոխարէն, երեք անգամ գանակոծելով։ Ամբողջ երկու ամիս այլ և այլ պատրւակներով մեզ պահեց և վերջապէս Կարինից յատուկ ժանդարմներ եկան իրենց սպաների հետ և մեզ փոխադրեցին Արզրում։

VII

Նոյեմբերի վերջերին մի տաղտկալի անձրև օր մեզ ճանապարհ դրին Նիխախից։ Ինձ հետ էին Պօղոսը, Տէր-Գրիգորը և նրա ծխերը։ Ի՜նչ սոսկալի տան-

ջանք քաշեցինք այն ցեխերի մէջ, ձեզ պատմելու կարիք չկա։ Այսքանը միայն աչքի առաջ բերէք, որ մի կողմից բարակ անձրևը անվերջ մաղում էր. ջուրը անցնում-թրջում էր մեր մարմինը, ոտքերս մինչև կոճերս խրւում էինք ցեխի մէջ, քրտինքը պատել էր ամբողջ մարմիններս, իսկ ժանդարմի սպան չէր համաձայնում քանդել մեր սրունքների շղթաները, կասկածելով, թէ մենք կարող էինք փախչել։ Բաւական չէր, որ մեր կռները կապած էին մեր թիկունքին, ամէն մէկի թևի ծայրի թոկերը բռնել էին երկու երկու ձիաւոր ժանդարմներ, որոնք լիք հրացաններով մեզ հետևում էին, դեռ երևակայում էին, որ կարող էինք փախչել, ու չէին համարձակւում սրունքներիս շղթաները արձակել։ Այս վիճակով երեք-չորս ժամ ճանապարհ գնալուց յետո այնպէս յոգնեցանք, որ առաջի կայարանը հասնելու պէս մեռելի նման տարածւեցանք ու պառկեցինք։

Ժանդարմների ձիերն էլ յոգնել էին, իրենք էլ անչափ տանջւել։ Քանի որ անձրևն էլ չէր դադարում, վճռեցին այդտեղ էլ գիշերել։ Եթէ առաջ գնայինք, գիշերը չէինք կարող կայարան հասնել, պաքտաւորւած պիտի դուրսը մնայինք, ուր գայլերը կարող էին ժանդառներին և նրանց ձիերին պատառել։ Հետևեալ առաւօտ վաղ ճանապարհ ընկանք։ Գիշերը ձիւն էր եկել, սառել էր գետինը, պարզել էր երկինքը և մենք ցրտից դողդողալով առաջ էինք գնում։ Այդ օրը կայարանում երկար չսպասեցին, շտապեցանք և երեկոյեան դէմ մտանք Արզրում։ Սարային-դուռը ոստիկանապետը մեզ դիմաւորեց, ինձ բաժանեց ընկերակիցներիցս, ու-

ղարկեց «Թիրախանէ» կոչուած բանտը։

Ես յոյս ունէի, թէ Կարինում իսկոյն կոնսուլատը կմիջամտէր և ինձ կազատէր այդ դժոխային կեանքից, բայց ոչ ոք հետաքրքրւող չկար, ում պէտքն էր, թէ Արգվինցի Բաշարաթենց Բագրատը տանջւում էր թուրքական դահիճների ճիրաններում։ Երբ ոստիկանների հետ գնում էի թէրս-խանէ, անդադար աչքերս դարձնում էի աջ ու ձախ, որևէ ծանօթ դէմքի կամ կարեկից աչքերի հանդիպելու, բայց բացի դաժան դահիճներից ոչ ոք չէր երևում։

Տարայի միջից անցանք, գաւիթը և բակը կտրեցինք, կանգնեցինք Թէրս-խանէի դռանը։ Գարդիանը չթողեց երկար սպասելու, իսկոյն փականքները բացին և ներս մտանք Թէրս-խանէի բակը, որը բաւական ընդարձակ էր։ Ընդհանուր բանտապետին կարևոր հրամանագիրը յանձնելու պէս, հրամայեց ինձ վերի յարկը առանձին կամերում փակել։ Հերիք չէր Նիխախի բանտում առանձնակի կեանքս, այստեղ՝ Արզուրումի Թէրս-խանէումն էլ առանձնակի ապրելու էի դատապարտուած։ Ինձ առաջ տարան, սանդուխներից բարձրացրին, մտա որջս, որի դուռը մեծ զգուշութիւնով, խոշոր փականքներով ամրացրին։ Եւ մնացի ես շղթաներիս, որջիս յամր պատերի հետ։ Զայրոյթիցս չէի իմանում ում հետ կռուել. փակարանիս դռան փեղկը մունջ ու անթափանց, ձայնս չէր կարող հասնել նրբանցքի պահապաններին, պատուհանս առաստաղին կից, չէի կարող այնտեղ բարձրանալ և երկինքը դիտել, այնքան էլ փոքր էր, որ գլուխս չէր հաւքել, շուրջս այնպէս աղօտ էր լոյսը, որ անհնար էր պատերի կազմն ու մասերը

զանազանել, յատակը այնպէս հողով ու աղբով ծածկուած, որ սիրտ չէի անում նստել կամ պառկել։ Մի քանի անգամ դէս դէն շրջեցի, բայց շղթաներիս ձայնը այնպիսի սոսկում պատճառեցին, որ դադարեցի և աչքերս չռած սկսա շուրջս զննել։ Անկիւնում մի խոտի խշտեակ կար մի բարձով, էլ չսպասեցի, տարածւեցի նրա վրա և սկսա մտածել, թէ ինչ միջոցով պիտի կարողանայի այս թակարդից խոյս տալ։ Այդ խոհերով էլ թմրել էի ու քնել սոված ու ծարաւ։

Աշխարհի էլ պէտքը չէր, թէ մի ինչ որ Բագրատ այսպիսի գազանային տանջանքների մատնուած, տքում էր թուրքական բանդերում։ Եւ քանի՜ հազար ինձ նման բոլորովին անմեղներ ինձ հետ հառաչում էին տաճկական զնդաններում և բողոքում էին աչքերը երկինք յառած, սրտերը թախծի ու ժահրի լճերում ալեծփած։ Միայն այս միտքն էր ինձ քաջալերում և համբեր ներշնչում, միայն այս պարագան էր ինձ մխիթար և յոյսի աղբիւր։ Հաւատացած էի, որ անմեղ կալանաւորուածների և տապակուածների ետևից ամբոխը իւր հասուն ու խակ խուժանով կռիւ էր մըղում և այդ կռւի մէջ յուսադրւած էի, որ բռնութիւնը պիտի ջախջախւէր, իսկ անմեղների հետ ես էլ պիտի կարողանայի լոյս աշխարհ տեսնել։

Հետևեալ օրը ինձ տարին քննիչին։ Նոյն հարց պատասխանները, ինչ որ որ կատարւել էր Նիխախում, տարբերութիւնն այն էր, որ այստեղ կողքից ու ետևից հարւածներ չէին տեղում, բայց հայհոյանքն ու նախատինքը, ատամների կրճտոցը աւելի սաստիկ էր։ Նիխախի վարչութեան արձանագրութիւնը սկսեցին կար-

գալ ծայրից ծայր։ Յայտնի բան է ես ոչինչ չկարողացայ անել։ Քննիչը, դատախազը, ոստիկանական գործակալը և զինւորական առեանի կցորդը զննում էին և հետամտում ընթերցման։ Երբ վերջացրին, իրար ականջ խօսակցելուց յետո, քննիչն ինձ դարձաւ և ասաց։

—Եթէ դու ռուսահպատակ էիր և անցագրով էիր ապրում, Նարիմանում ինչի՞ այդ բանը չյայտնեցիր։

—Ես իմ կալանաւորւելու րոպէից սկսեալ բողոքել եմ և ամէն անգամ քննիչին ու ղայմաղամին յայտնել, որ ո՛չ մի բառով նրանց հարցերին չեմ պատասխանել, մինչև որ մեր կօնսուլատից պաշտօնակալ ներկա չգտնուի իրենց ժողովում։

—Դու սուտ ես խօսում, եթէ ասած լինէիր, նրանք անմիջապէս կարձանագրէին այդ պարագան և քեզ կուղարկէին Արզրումում, ասաց դատախազը։

—Սուտը ձեր պաշտօնականներն են գրել, ասացի վրդովւած կեանքիցս ձեռք քաշելով, եթէ ես չէի բողոքել, հապա ի՛նչ պատճառով կօնսուլատից յայտարարութիւն գրեցին Վալիին, որը հրամայեց ինձ Արզրումում բերել և գործս այստեղ քննել։

Այս յայտարարութեանս համար պահապան զինւորը հրացանի կոթով թիկունքիս մի խիստ հարւածտւեց, բայց իմ խօսքերը աւելի սուր մխւեցան քննիչի ու դատախազի սրտում, որոնք իրար աչքերը զննեցին հարցական դարձած։ Քննիչը իսկոյն թղթերը քրքրեց և կօնսուլատի յայտարարութիւնը մեկնեց դատախազին։ Դարձեալ քրթմնջիւնն սկսւեց և քիչ անցնելուց յետո քննիչն հարցրեց։

—Քեզ ո՞վ ասաց, որ կօնսուլը մեզ *Թաւրիզից* է գրել, ինչի այդպիսի սուտ ես յօրինում։

—Սուտը ձեր առեաններումն են խմբագրւում, ասացի բորբոքւած, ես ինձ կալանաւորող զինւորներից երբ տեղեկացայ Հաջի էֆինդիի նպատակը, անմիջապէս բողոքեցի կօնսուլատին, յայտնելով անցագրիս թւականըն ու համարը։ Կօնսուլի *Թաւրիզի* առթիւ Վալիից եկած հրամանագիրն այնպէս էր բորբոքել Հաջի-էֆէնդիին, որ նա իր ձեռքով օրական երեք անգամ ինձ ծեծում և պահանջում էր խոստովանել, թէ ու՞մ ձեռքով եմ բողոքս հասցրել կօնսուլատ։ Նա կասկածում էր, թէ ոստիկաններն էին ինձ օգնել և բողոքագիրս հասցրել կօնսուլատ, ի՛նչ կարող էր երևակայել, որ ես յատուկ թղթատարով էի ուղարկել։

—Բայց ամէն մի պատահական բողոքի համար կօնսուլն ինչի պիտի թահրիր գրէր մեզ։

—Հաջի էֆէնդին կատաղած ոտքերը գետնից գետին էր խփում ու կրկնում, թէ քո բողոքագրի համաձայն կօնսուլը թահրիր է գրել և վալին խլում է մի այսպիսի գործ իմ ճանկից և տալիս է Արզրումի քննիչին։

Այս բացատրութիւնս նրանց սառեցրեց, բայց և այնպէս նրանք չընկրկեցան և քննիչը շարունակեց։

—Քանի որ մի այսպիսի յայտարարութիւն դու սկզբից չես արել Նարիմանի վճռական առեանում, այժմ ուշ է, ես չեմ կարող այդպիսի բացատրութիւն ընդունել։ Դու ինձ ասա, ո՞վ ես, ո՞ր տեղացի, քանի տարւան և ինչ գործով էիր ապրում Նարիմանում։

—Ինչպէս Նարիմանի առեանում ո՛չ մի բառ

չեմ յայտնել, նոյնը պիտի կրկնեմ, մինչև որ կանչել տաք իմ պետութեան կօնսուլատի թարգմանին: Միայն այն ժամանակ կստանաք ձեր բոլոր հարցերի պատասխանը:

—Բայց դու պատասխան տուել ես Նիխախում, այստեղ գրուած է քո խօսքերը:

—Այդտեղ շատ բան կարող է գրուած լինել առանց իմ հաճութեան, բայց ես երբէք պատասխան չեմ տուել:

Քննիչն ու դատախազը նորից քրքրեցին Նիխախի արձանագրութիւնը և վկաների ցուցումները: Այս միջոցին հրամայեցին ինձ բակը տանել, որպէսզի իրենք ազատ խորհրդակցեն: Երբ բակում նստած մտածում էի դատաւորներիս դահճային վարմունքի մասին, մի փէսւոր հայ եկաւ մօտս և ասաց:

—Ես զարմանում եմ քեզ վրա, բարեկամ, միթէ կարծում ես, որ Ռուսները քեզ կօգնեն: Ի՞նչիդ է հարկաւոր նրանց միջամտութիւնը, որը զայրացնում է դատաւորներին և բորբոքուած աւելի խիստ միջոցների են դիմում: Թո՛ղ Ռուսներին, ձեռք քաշէ, ընդհակառակը նրանք կթելադրեն, որ աւելի խիստ պատժեն: Դու եթէ աղերսականի դերի մէջ մտնես, ես հաւատացած եմ, որ անմիջապէս քեզ կարձակեն ու կդառնաս գործիդ:

—Ես նախապատիւ եմ համարում կօնսուլատի միջամտութեամբ ու գիտութեամբ կախաղան բարձրանալ, քանթէ թուրքերին աղերսելով ապրել, այդ յորդորներդ գնա՛ Օվացիներին կարդա՛, Պարխարի զաւակը ողորմութեամբ չի կշտանալ:

—Այդ յամառութիւնից ի՞նչ օգուտ. եթէ համոզուած ես, որ կօնսուլատի միջամտութիւնը դատապարտութիւնդ պիտի շտապեցնէ...:

—Թէ այդքա՛ն խելօք ես, նախ քեզ խրատի՛ր և ապա ինձ համոզելու նկրտի՛ր: Մենք վաղ ենք ճանաչել խալիֆի գործակալներին և նրանց փարփարին փորձել: Հայրս ռուսական միլիցիօնէրների շարքին արիւն է թափել Կարսի և Բաթումի նահանգների ազատութեան համար և մենք ազատուեցինք իսլամի ռայաթի երամակներից: Մեծ վնաս չի լինի, եթէ կօնսուլատի պաշտօնեաների անտարբերութիւնից ես էլ կախաղան բարձրանամ:

—Ես ի՞նչ գործ ունիմ, որ միջամտեմ ձեր դատին, ներեցէք, որ ձեզ վրա ցաւելով իմ համոզումս յայտնեցի:

—Այդ համոզումը քեզ համար պահի՛ր, ես գիտեմ, թէ դու ի՞նչ փշրանք ես փնտռում յատակը հոտոտելով ու լպստելով:

—Այդ էլ իմ բարութեանս փոխարէն, շնորհակալ եմ, ասաց ու հեռացաւ անկոչ փաստաբանս: Ես վաղուց ճանաչում էի թուրքական դատարանների շուրջը թափառող լրտեսներին, բայց այսքան աներեսին դեռ չէի պատահել: Ամսական հինգ ոսկի ռոճիկ ըստանալու համար որանք պատրաստ են ո՛չ միայն իրենց եկեղեցու սրբութիւնները անհաւատներին ծախելու, այլ հերթաբար իրենց ընտանեկան վարագոյրներն անգամ պատռելու: Դեռ նա չէր հեռացել, երբ մի թուրք ծերուկ ինձ մօտեցաւ ու ասաց:

—Ինչի՞ ես պնդում, որ անպատճառ քեզ որ-

պէս օտարահպատակի քննեն ու դատապարտեն։ Աւելորդ չէ՞ այդ ընդդիմութիւնդ։ Մենք լսել ենք, գիտենք, որ դու վաճառական մարդ ես, բոլորովին կապ չես կարող ունենալ դատարկաշրջիկ բաղդախնդիրների հետ։ Փոխանակ կոնսուլատի ոյժին դիմելու, որը քեզ անշուշտ կործանելու է, քսակիդ զօրին թէկն տուր և այսօրւանից ազատւիր։ Դու միայն ինձ խօսք տուր, ես քեզ ազատել տամ, գնա՛ Նարիման, առնելիքներդ հաւաքիր, գործդ կարգաւորիր և ապա վճարիր։ Մինչև անգամ, երբ գործդ կարգի բերած, ցանկաս վերադառնալ Կովկաս, այնժամանակ վճարիր։ Մեղք ես, կեանքդ խնայիր, հետևիր իմ խորհրդիս, չես զղջալ։

— Էֆէնդի՛, այդպիսի կակուղ բարձեր շատ են դրել քո պապերը իմ պապերի գլխի տակ, ապա խեղդել։ Ես քո խրատներին կարիք չունեմ։

— Դու անփորձ ես, լսի՛ր և օգտւի՛ր ծերուկիս, քանի դեռ ուշ չէ։

— Գնա՛ գործիդ, էֆէնդի՛, գնա՛ բանիդ, մենք Լազիստանցի ենք, բարի խրատիդ անսալու խելքից զուրկ։

— Մեղքը վզիդ, բայց եթէ ինձ լսէիր, աժան կարող էիր պրծնել։

— Այդ աժանները շատ թանկ է նստել մեր պապերին։ Էլ փորձի կարիք չունեմ, տասցի ու երեսս շուր տւի։

— «Յամառ — հայ» դարերից իվեր անուն են դրել, խո՛ չեն սխալւել։

Իբր թէ չլսեցի։ Բայց նա յամառած դեռ յուսալի սպասում էր։ Ես սիգարս փաթաթեցի և սկսեցի

ախորժակով ծխել։ Այս ժամանակ ներսից լուր բերին թէ քննութիւնը վերջացրած էր, հրամայեցին ինձ տանել որջս։ Անչափ ուրախացա, որ ազատւեցի խրատողներիցս և անվրդով մտա որջս։

Ոստիկանները թոյլ տւին ճանապարհին թուրքի խանութից մի քիչ մքլած պանիր գնելու և իրենք հաց առին ինձ համար։ Մի աման ջուր տւին, նստա խշտեակիս վրա և ախորժակով կերա։ Կերա՛ ու մտքով էլի գնացի Արդվին մօրս ու Մարգարտիս մօտ։ Երկու օր քաղցած էի մնացել, պանիր հացը զօքանչիս տապակած վարէկից ու կարմրախայտից աւելի ախորժակով կերա, իսկ ջուրը Գորդաի գինիից աւելի քաղցր տպաւորութիւն թողեց։ Բայց որքան որ աշխատում էի մոռանալ ծննդավայրս ու սիրելիներս, հնարք չէր լինում։ Թւում էր, թէ մայրս արտասուքները աչքերին չոքեչոք թափառում էր սրբերի ու պատկերների առաջ, օգնութիւն էր աղերսում, իսկ Մարգարիտս յուսաբեկ, վշտից ընկճւած, վիզը ծկած զննում էր Խարխանի ճանապարհը, իմ նժոյգիս քայլերն էր որոնում։ Խեղճը դուցէ չէր էլ իմանում, թէ իր նշանածը Արզրումի Թէրս խանէի գնդանում, տապկւում էր։ Այս երևակայութիւնների մէջ խորասուզւած, ուշքս կորցրած, թմրել էի ու տարածւել խշտեակիս վրա։

Կէս գիշերին մօտ որջիս փականքների բացւելու ձայնից սթափւեցի։ Սարսափը պատեց սիրտս։ Այդպիսի գիշերային անակնկալ այցելութիւնները զարհուրելի եղեռնագործութիւններով աւարտելու շատ վատ պատմութիւններ էի լսել մամիցս, այնպէս որ ես կարծեցի, թէ ինձ տանելու էին կառափնելու։ Զօրս զին-

ւած ոստիկաններ մի աղօտ լապտերով անմիջապէս ներս մտան, որոնցից մինը ոտքով ինձ բոթեց և ասաց։

—Գեավուր, վեր կա՛ց, քեզ Ալայ-բէյին կանչում է։

Ես երկիւղից հազիւ աչքերս բացի, նստա և ասի։

—Ինձնից ի՞նչ էք ուզում այս կէս գիշերին, թողէք գոնէ գիշերը հանգիստ քնեմ։

—Ձայնդ կտրի՛ր, վե՛ր կաց, շարժուիր, գեավուր, ասացին ու հրուածներ տեղացնելով ոտքի հանեցին։ Գնացինք։ Մեզ հեռու տեղ գնալու կարիք չեղաւ, ոստիկանների հրամանակալը բանտին կից վալիի սարայումն էր (ապարանք)։ Ալայ-բէյին առանձնացած էր և առաջնորդողներիս հրամայեց դուրս գալ. մնացի մինակ նրա ներկայութեանը։ Ծերուկ ոստիկանը երեսը խրել էր մի ինչոր գրքի մէջ, ակնոցները աչքերին, կարդում էր խիստ ուշադրութեամբ։ Ես սենեակի մէջ կանգնած մնացի։ Ալայ-բէյի առաջ դրուած գրասեղանի վրա կար լուսամփոփով մի լամպ, որի կանանչ լոյսը կանանչացրել էր սենեակի պատերն ու կարասին, որը շատ անճաշակ դասաւորուած էր։ Երբ ընթերցումն աւարտեց, երեսը շուռ տուեց իմ կողմը, ակնոցները հանեց, աչքերը թաշկինակով սրբեց, ինչ որ աղօթք մրմնջալով։

—Մօտիկ արի, աղա՛, արի՛ մօտս, նստի՛ր, ասաց ծանրութեամբ, ձեռքովը պատի տակ դրուած բազմոցը ցոյց տալով։ Ես էլ առաջ գնացի դէմադէմ նստանք։ Նա հազաց, պեխերը սրբեց, ճակատի կաշին վեր քաշեց, գլուխը ցնցեց, բայց շրթունքները չէին շարժւում, ձայնը կոկորդի մէջ խեղդուած, չէր բարձրանում

և միտքը չէր կարողանում պարզել։ Զգացի, որ կերածըն ուզում էր մարսել, բայց դեռ չէր որոճացել, ժամանակի պէտք ունէր։ Մի բան ուզում էր խօսել, բայց յառաջաբան չունէր, չէր պատրաստել։ Հանգիստ տեղս նստա, աչերս չռեցի վրան և անհամբեր հարցին էի սպասում։ Ալայ-բէյին մատը քթին դրած, աչքերը գրասեղանին յառած մի քանի ժամանակ էլ լռեց և ինձ դառնալով ասաց։

—Գիտե՞ս քեզ ինչի եմ կանչել տուել այս ժամին։

Ուսերս վեր բարձրացրի, ուզենալով ասել, թէ
—Ես ի՞նչ գիտեմ, խօ գուշակ չեմ, որ սրտիդ խորհուրդը կարդամ։

—Յայտնի բան է, չես կարող իմանալ։ Բայց միտքս պարզեմ։ Ես քեզ կարող էի ցերեկն էլ հրաւիրել, բայց դա ձեռնտու չէր ո՛չ ինձ, մանաւանդ ո՛չ էլ ձեզ համար։ Աշխարհ է, մարդիկ են, ա՛յնքան հայեր կան այս քաղաքում, պիտի հետաքրքրուէին և, ո՛վ գիտէ, ամէնքն էլ մի կերպ էին բացատրելու մեր յարաբերութիւնը։ Գուցէ այդպիսի դէպքում դուք էլ ամաչէիք, քաշուէիք, երկիւղ կրէիք ցեղակիցներից և չկարողանայիք այնպէս պարզուել, ինչպէս վայել է քեզ նման մի խելացի և վաճառական մարդուն։ Այո՛, վաճառականը ամէն տեղ յարգուած մարդ է, քանի որ անխելք մարդու գործ չէ առուտուրը, որին արհամարհել կարողանան պաշտօնակալները։ Ես էլ հաւատացած եմ, որ դու էլ հասկանում ես խօսքերս և սառնութեամբ դատում ասածներս։ Հա՛.... ինչ էի ուզում ասել....։ Է՞հ, այնքան գործերով ծանրաբեռնուած ենք,

որ մարդ ուշքը, յիշողութիւնը կորցնում է,…: Հա՛, յիշեցի, Նարիման քեզ կեղեքել են ու տանջել, ապրանքդ բաժանել, ցրւել, առնելիքներդ կորել է, փչացել և այս բոլորը կատարւել է շնորհիւ այն ագահ Հաջի-էֆէնդիի։

Այս խօսքերը ասելով աչքերը յառեց բիբերիս, պատասխանի սպասելով։ Ես սառնութեամբ ասացի.

—Այո՛, էֆէնդի՛, շատ ճշմարիտ է ձեր լսածները։

—Ասա, խնդրում եմ, քեզանից կամ քո խանութից ու պահանջներից որքա՞ն է գանձել ու իւրացրել Հաջի-էֆէնդին.

—Ինձ անյայտ է, բայց Ռուսաստանից վերջին օրերը բերածս երկու հազար րուբլիի ապրանքը բաժանել են. առնելիքներիցս բռնութեամբ և խաբէութեամբ քիչ բան գանձել են։ Ես Նիխախի բանտի դռներում և դատարանում միայն այսքան բան կարողացա հասկանալ։

—Կարող ե՞ս ցուցակ տալ, թէ ինչ ապրանք էիր բերել Ռուսաստանից և ո՞ւմ էիր յանձնել դրանց վաճառքը։

—Անմիջապէս, բայց ինչ օգուտ այդ բոլորից.

—Օգուտ կլինի, ամբողջ գոյքդ ետ կստանաս, դեռ թօշակի, տաւիճանների էլ կարժանանաս, եթէ խոստովանես ընկերներիդ անունը և յանձնես մեզ նրանց ծրագիրը….:

—Շատ սխալւել էք, բէյ էֆէնդի, ասացի ծիծաղելով. զգալով որ ուզում էին ինձ լրտեսի պաշտօն յանձնել. մենք իրար հետ չենք կարող համաձայնել։

VIII

Ալայ-բէյին անչափ բորբոքւած սպառնալիքներով ինձ դուրս արաւ իւր առանձնարանից։ Կախաղանի վճիռը չէր կարող ինձ ահաբեկել, ես բորբոքւած էի այն մտքով, թէ ինչի կօնսուլը չի ստիպում վալիին, որ գործս քննեն իւր լիազօրի ներկայութեան և ինձ ազատեն դահիճներիս ճիրաններից։ Անշուշտ մտածում էի, թէ կօնսուլատին անյայտ էր, իմ Արզրումի բանդում գտնւելս, ապա թէ ոչ նա վաղ միջոցների պիտի դիմէր ինձ ազատելու։ Թուրքերի ռուսներից անչափ վախենալը, առանց նրանց ներկայութեան գործը քննելու ձգտելը, նրանց միջամտութիւնից խուսափելը և իմ պնդումներից բորբոքւելը ինձ հաւատացնում էին, թէ նրանք ինձ դատապարտելու դրական փաստ չունէին և չպիտի կարողանային իրենց կեղծիքները հաստատել։ Երեք չորս անգամ քննութեան տարին մի շաբաթւա ընթացքում և ոչ մի որոշ եզրակացութեան չհասան։ Ինքս էլ չէի կարողանում մակաբերել, թէ ինչ էր նրանց միտքը։

Մի գիշեր դարձեալ ինձ որջիցս հանեցին և տարան դատապարտեալների սրահը պառկացրին։ Ինչպէս լսեցի այդ գիշեր նոր մարդիկ էին կալանաւորել և իմ առանձնարանը յատկացրել էին մի ուրիշի։ Դա մի ընդարձակ սրահ էր, որի յատակի վրա թաւալւած էին

երկու հարիւրից աւելի ոճրագործներ, մեծ մասամբ քուրդեր ու թուրքեր, որոնք իրենց կատարած արիւնռուշտ սխրագործութիւնների համար արժանացել էին այդ կապանքներին։ Կային նոյնպէս հայեր, որոնք մեծ մասամբ քաղաքական յանցաւորներ էին, մի քանի էլ սնանկ ու անկարող պարտատէրներ։ Առաստաղից կախած մի աղօտ ճրագ փլփլում էր այդ ընդարձակ սրահի մէջ, որի տարածած լոյսը այնքան նւաղ էր, որ չէր կարելի յատակի վրա բաց տեղերը քնած մարդերից զանազանել։ Յատուկ առաջնորդներս լապտերներ էին բերել և անցքերը լուսաւորեցին, որպէսզի ազատ խշտեակ գտնեն ինձ համար։ Քուրդ ըմբոստ ու անզուսպ կալանաւորները ազատ խշտեակները իւրացրել, իրենց տակ երկու-երեք խշտեակ էին դարսել, իսկ քաղաքական յանցաւորներից շատերը պարտաւորւել էին մեծամեծ կաշառներ տալ գարղինանի, որպէսզի իրենց թոյլտուութիւն շնորհեն տներից մինդար և վերմակ բերելու։

Վերջապէս մի քրդի զարթեցրին, տակից մի խշտեակ հանեցին, ինձ ստիպեցին այդ շալակել տանել սրահի այն անկիւնը, որտեղ զետեղւած էին հայ քաղաքական յանցաւորները։ Քուրդը քիչ քրթմնեց, հայհոյեց, որ նրան նեղութիւն էին տւել, զարթեցրել, բայց նրա տրտունջները լսելու ոչ ոք հակամէտ չէր։ Քաղաքական յանցաւորները գրեթէ բոլորն էլ սթափւեցան մի անակնկալ այցից, գաղտագողի զննեցին ոստիկաններին և երբ վերջինները հեռացան, ինձ նրանց մօտ թողնելով, սկսան խեղդւած ձայնով հարցեր տեղացնել դէպի ինձ.—Ո՞ր տեղացի ես, ինչի ես բռնւել, ինչ է յանցանքդ ևն, ևն. իսկ ես պարտաւորւած էի

նրանց բաւականացնել։ Անչափ տարօրինակ էր նրանց սարսափը, շղթաների մէջ անգամ դողում էին ոչ միայն գործիէնից, ոստիկանից, այլ նոյն իսկ շղթայակապ քուրդերից ու թուրքերից։ Սուտ քուն ու հանգստութիւն ձևացրած, առանց շրթունքներն անգամ շարժելու փսրտոցի ձայնով հարցերն ուղղում էին և ամբողջովին ուշադրութիւնները լարած լսում էին պատասխաններս, խնդրելով ինձ, որ կամաց խօսեմ։

Այդ միջոցին մէկը սողալով մօտեցաւ ինձ և ականջումս ասաց.

—Զգուշացի՛ր, լրտեսներ կան, կարող են շրթունքներից աւելորդ խօսք կորզել և ինքդ քո դատապարտութեան առիթ կտաս։

—Ծածկելու բան չունիմ, ասացի, որ դատապարտւիմ։

—Յամենայն դէպս, ես պարտ զգացի ձեզ զգուշացնել, ասաց ու հեռացաւ։

Ուզեցի իմանալ, թէ Նարիմանցիները խո՞ սրանց մէջ չէին, բայց դրական պատասխան չստացա, նրանց մասին ոչինչ յայտնի չէր, կամ չուզեցին պատասխանել, վախենալով որ ես կարող էի մի լրտես լինել և նրանց մատնել։ Հարցերիս պատասխանները այնպէս երկդիմի ձևով էին տալիս, որ ես մնում էի շւարած և երբ հետամտում էի մթութիւնները պարզել, բացասական պատասխաններ էի միայն ստանում։ Այս վերաբերմունքը այնպէս վիրաւորեց սիրտս, որ ես ակամա լռեցի և մինչև լոյս խոհերիս անձնատուր եղա, քանի որ քունս խպաւ փախաւ։ Լուսադէմին բանտի դռները բացին և երկու լապտեր ձեռքերին երեք հր-

կողներ գարդիէնի հետ եկան ու կալանաւորներին անւանական ցուցակով մէկ-մէկ զննեցին և երբ համոզուեցան, թէ մեռնող փախչող չկան, հեռացան։

Երբ քննութիւնը վերջացրին յատուկ վերակացուներ եկան և բանտարկեալներից հայերին ու մի քանի քրդերի դուրս տարին բանեցնելու։ Համդի անունով մի վերակացու ինձ մօտեցաւ, առաջարկեց գնալ աշխատելու։ Ես չգիտէի, թէ ուր էին տանելու։ Երբ իմացայ, որ տանում են քաղաքի փողոցները մաքրելու կամ հասարակական շինութիւնների վրա աշխատելու, բակի մէջ ընդդիմացայ և ասի, որ նրանք իրաւունք չունէին ինձ դատեցնելու, նախ՝ որ ես օտարահպատակ էի, երկրորդը, որ քաղաքական կալանաւորներին աշխատեցնելու օրէնքը չէր թոյլատրում և երրորդը՝ ամենագլխաւորը, որ քննութեան տակ եղածներին, մինչև նախնական քննութեան աւարտը աշխատեցնելը խստիւ արգելուած է։ Բայց օրէնքները ո՞վ էր կարդում, որ դրանք գործադրելու մասին խորհեն, ամէն մի ոստիկան ու վերակացու թուրք օրէնսդիր է հայի գլխին ամենաստոր ծառայողի-վարձկանի կամքը օրէնք է քրիստոնեայի համար։ Երբ կտրական կերպով մերժեցի Համդիի առաջարկը, նա կատաղած սուրը քաշեց և մի քանի հարուած իջեցրեց գլխիս։ Մի հայ կալանաւոր յանդգնի բանտային հսկողին դիմադրել....։ Միայն թուրքահայը կարող է ըմբռնել, թէ այդ ի՛նչ սոսկալի ոճիր է և ինչպէս են տուժում ըմբոստները։ Հարուածներն այնքան խիստ էին, որ ես կորցրի յիշողութիւնս, այնքան միայն գիտեմ, որ արիւնը շատրուանի նման հոսում էր կրծքիս, ուսերիս և ներկում էր շորերս։

Ինձ ինչպէս էին տարել բանտի սրահը, որքան ջանք էին գործադրել արիւնի հոսանքը դադարեցնելու, ինչպէս էին ընկերակիցներս կապկպել գլուխս, ոչինչ չեմ յիշում։ Նրանք պատմում էին թէ այնքան արիւն էի կորցրել, որ իրենց յոյսը կտրուել էր և պատրաստուել էին ինձ գերեզմաննոց ուղարկելու։ Այնքան սառը ջուր էին ածել գլխիս, որ վիզս, շապիկս, բաճկոնս բոլորը թրջուել էր։ Երբ սթափուեցի և ինձ գտա շրջապատուած վիճակակիցներով, որոնք կարեկից մօր նման ինձ խնամում էին, չկարողացայ բացատրել, թէ ի՛նչպէս գաւթից ու բակից ինձ ներս էին բերել որ ես ոչինչ չէի յիշում։ Աչքս շուրջս յառած դահիճիս էի որոնում, բայց ինձ ասացին, թէ Համդին գլուխն առել, հեռացել էր բանտից, որ եթէ մեռնեմ, կարողանա սուտ վկաներով պատասխանատուութիւնից ազատուել։

Յուսահատութիւնը բոլորովին ինձ տիրեց, երբ նկատեցի, որ գլուխս բարձր պահելու կարողութիւնս անգամ կորցրել էի։ Անչափ ինձ թոյլ էի զգում և շուտ-շուտ ուշքս գնում էր մի քանի վայրկեանով։ Վիճակակիցներս շրջապատած ամէն ջանք գործադրում էին ինձ հանգստացնելու համար, թուրք սպասաւորի միջոցով զանազան դեղեր և ուտելիք բերել տուին, որպէս զի ես կազդուրուիմ։ Նրանց անձնուիրական ընթացքը ինձ վերակենդանացրեց և ես շուարել էի, թէ ինչպէս նախորդ գիշերուան վախկոտները, փորտացողները այդպէս յանդգնաբար աշխատում էին ինձ փրկելու։ Նրանց ընթացքը այնքան ինձ հետաքրքրեց, որ չկարողանալով զսպել կրքերս, հարցրի։

—Միթէ ձեզ աշխատելու չտարի՞ն։

—Մենք կանխիկ վճարում ենք Համդիին և ընկերներին, որպէս զի տանջանքից ազատւենք։ Զուններրը, օտարականները գնում են աշխատելու, ճար չունին։

—Ուրեմն վճարելով կարելի է ազատւել տանջանքից։

—Անպայման, եթէ կարողանաս վճարել, Համդին պատրաստ է անձամբ ծառայութիւններդ կատարելու։

—Գաղմնը, ես նրան ցոյց կտամ, թէ Բաշարաթը, ինչպէս է վճարում կաշառքը։

—Արդարութիւնը չկա այս երկրում, զուր է, որքան դիմադրես, այնքան պիտի տանջանքներդ աւելանան։ Համդին ինչ մեղք ունի, երբ նրա ոճրագործութիւնները նորանոր նւէրներով և պարգևներով է խրախուսւում։

—Ախ՜, եթէ ես մի կօնսուլատ մտնէի, նրան ցոյց կտայի, թէ ինչ է նշանակում ռուսահպատակի ծեծելը։

—Դուք ռուսահպատակ էք, հարցրին մի քանի կողմից։

—Այո՛, անցագրով։ Բայց հնարաւորութիւն չունիմ վիճակիս մասին կօնսուլատը զեկուցումն ուղարկելու։

—Կարող էք գրել, մենք ձեր խնդրագիրը անմիջապէս կարող ենք յանձնել տալ Գեներալ-Կօնսուլին։

—Եթէ թուղթ ու գրիչ լինի, իսկոյն կգրեմ։

—Մի՛ զայրանաք, պարոն, մենք մինչև այժմ կասկածում էինք ձեր վրա, թէ մի՛ գուցէ դուք էլ այն լրտեսներից էիք, որոնք եկել շաբաթով մեզ հետ տալրել, գաղտնիքներս տեղեկացել ու հեռացել էին։ Համդիի վարմունքից յետո մեր կասկածը ցնդեց, բայց քանի որ ռուսաստանցի էք, խնդրագիր պիտի գրէք կօնսուլին, այլևս մենք համարձակ կարող ենք ձեզ անձնատուր լինել։ Այստեղ թանաք, գրիչ ու թուղթ ունենք, գրեցէք աներկիւղ և ձեր խնդրագիրը մեր մարդը նոյն իսկ այսօր կարող է կօնսուլին անձամբ ներկայացնել և ձեզ էլ կարևոր պատասխանը բերել։

Գրիչը ձեռքս առի և վիճակս բացատրեցի մի յայտարարութեամբ, որտեղ թէև տառասխալներն անպակաս էին, բայց միտքս չէր կարող չըմբռնել Գեներալնի-կօնսուլը։ Խնդրագիրը գրելիս վիճակակիցներս ինձ այնպէս էին շրջապատել, որ ո՛չ թուրքերը, ո՛չ էլ քուրդերը չնկատեցին։ Խնդրագիրս ծրարի մէջ դրի և տւի նրանց որ հասցէին հասցնեն։ Երեք օր յետո քննիչը ինձ կանչել էր։ Այնտեղ էր կօնսուլի դրօգօմանը, որի ներկայութեան առաջին անգամ քննեցին իմ գլուխս պատռելու գործը։ Կանչւած էր բժիշկ, որ քննի գլխիս վէրքերը, բայց էսկուլաբի աշակերտը պաշտօնից չզրկւելու համար, չեկաւ։ Կօնսուլատի դրօգօմանի պահանջների համաձայն քննիչը արձանագրեց, թէ բանտային վարչութիւնը իրաւունք չունէր ինձ աշխատանքի տանելու։ Բայց քննութիւնն ու դատավարութիւնը չկայացաւ, քանի որ թուրքերը պնդում էին, որ ես ռուսահպատակ չեմ։ Կօնսուլատի բերած փաստերը բաւարար չհամարեցին, ինձ ռուսահպատակ ճանաչելու,̄ պահանջում էին անցագիրս, որն յափշտակել էր

Հաջի-Էֆէնդին։ Որոշեցին դէպքի մանրամասնութիւնը Կ. Պոլիս գրել և պատասխանը ստանալուց յետոյ շարունակել քննութիւնը։

Այս դէպքի երկրորդ օրը Թէրս-խանէ բանտից ինձ դուրս հանեցին, տարան «Արխա-Ղուլլուղի» «Զուխուր-Օդան»։ Յայտնի բան է, ինձ դատապարտուածների մօտ բանտարկելու նպատակը տանջանքներս սաստկացնելն էր, որպէսզի վրէժ լուծեն։ Ինձ մեղադրում էին, թէ ինչ պատճառով ես դիմել էի կօնսուլին և թէ ինչպէս կարողացել էի Թէրս-խանէի պատերից բողոքս կօնսուլատ հասցնել։ Սա մի գետնափոր որջ է, որտեղ բանտարկում են դատապարտեալներին, որոնք աւազակութիւններով և մարդասպանութիւններով արժանացել են այդ կոչման։ Աղտեղութիւնը, գարշելի հոտերը, միջատներն ու սարդերը, մանաւանդ խօլերի, հարինքի, թոքախտի բացիլները այդտեղ լաւ սնունդ են գտնում։ Անընդհատ անկողնին են ծառայում բանտարկեալներից մի նշանաւոր մասը, ոչ բժիշկ կա, ոչ դեղ, ոչ օգնութիւն և ոչ էլ կարեկցութիւն։ Զուխուր-Օդան դասուածները զրկուած են ոչ միայն մարդկային ամէն իրաւունքից, այլ ստորադասուած են կենդանիներից ու բոյսերից։ Նրանց գոյութիւնով հետաքրքրուող չկա, իսկ մեռածները չորս-հինգ օրով մնում են յատակի վրա, նեխւում և ապականում ամէն ինչ։

Այդ ընդարձակ սրահում լցրած էին աւելի քան երեք հարիւր դատապարտեալներ, որոնցից շատերը արիւնարբու քուրդեր էին, որոնց պինդ կազմուածքը հազիւ դիմանում էր այդ դժոխային կեանքին։

Այդտեղ կային հայեր, լազեր և թուրքեր էլ, որոնք ակամա ստրկացած էին քուրդերին, քանի որ վերջինները թւով մնացորդի քառապատկից աւելի էին։ Անչափ ուրախացայ այդտեղ գտնելով Շէփէկցի Պօղոսին, Կարօին և ընկերներին. միայն Տէր-Գրիգորը և ծերուկը գտնւում էին «Թէրս-խանէ»։ Հրճւանքս սաստկացաւ նրանց գտնելով, գոնէ վստահ էի, որ կարող էի մխիթարւել ծանօթների շրջանում։ Ամբողջ օրը զբաղւեցայ դրանց հետ, լսեցի նրանց տուած ցուցումները իմ մասին, գործի արկածները, Նարիմանից գալողների պատմածները և Արզվինից հասած տեղեկութիւնները։

Էլի շրջապատեցին ինձ մռայլ ամպերը, նորից հոգիս թռաւ ծննդավայրս մօրս ու Մարգարտիս մօտ, մրրկեց սիրտս, ալէծուփ թափառում էի ենթադրութիւնների և երևակայութիւնների աշխարհում։ Այնպէս էի յուզւել, որ լռեցին վիճակակիցներս, տխրեցին նրանք էլ, նրանց հոգուն էլ տիրացաւ վիշտը։ Քանի՜ քանիները փորձեցին այդ օրը ինձ մխիթարել, բայց հնար չկար, ես կարծում էի, թէ ինձ ծաղրում էին՝ զուր յոյսեր ներշնչելով։ Է՛լ ի՞նչի ապրել, երբ պիտի տառապի մարդ այս արիւնռուշտների շրջանում, հեռու հարազատներից, սիրելիներից, որոնք գաղափար անգամ չունեն իր բնակութեան վայրի մասին։ Եթէ մայրս մճճորած չլինէր և քաջասիրտ լինէր, ինչի՞ նա այժմ չպիտի զօր-գիշեր բոլորւէր Արխա-ղուլլուղի շրջապատի փողոցները, ի՞նչի պիտի չբաղխէր պաշտօնակալների դռները, կօնսուլատը և չպիտի պահանջէր իսկոյն ինձ ազատել ամէն մի կապանքից։ Ինչի՞ չպիտի բողոքներ գրել տար և իրար պիտի չանցկացնել տար

բոլոր պաշտօնակալներին, բայց ի՞նչ օգուտ, նրա երակներում Բաշարաթների անվախ արիւնը չէր եռում, խեղճ էր թշւառը և միայն արտասուքն էր նրա զէնքն ու մխիթարութիւնը։

Երբ յուսահատ ու տխուր քաշւած էի մի անկիւն մտածում էի դառն վիճակիս մասին, մի ինչոր ոստիկանական պաշտօնակալ եկաւ շրջեց բանտը և հեռացաւ։ Նրա հեռանալուց անմիջապէս յետոյ մի քանի քրդեր սկսեցին քրթմնջել, հեռուն առանձնացած խորհրդակցել, անդադար աչքերը մեզ վրա յառած։ Ամէն կողմից շշուկներ բարձրացան, ամէնքն էլ լուռ ու մունջ զննում էին շուրջը կատարւածները, բայց ոչ ոք չէր կարողանում որոշ եզրակացութեան հասնել։ Ամէն մարդ դողում էր իւր կեանքի համար, ամէն մէկը մտածում էր իւր գլուխն ազատել և ո՛չ ոք չէր կարող ուրիշ բանի մասին խորհել։ Պարզ էր, որ պաշտօնակալը քրդերի գլխաւորներին որոշ պատւէր էր տւել, գործ էր յանձնարարել, թէ ինչ, այդ գուշակելու համար գրաւած էին կալանաւորների մտքերը։ Դրա վրա տխրութիւններս էլ սաստկացաւ և ամէն մարդ խորասուզւեց թախծալի երևակայութիւնների անդունդը։ Ամէն մէկը գուցէ տարբեր ձևերով էր մտածում, բայց ամէն մի հայի գանկում մեխւած էր միայն այն միտքը, թէ իւր դատավճիռը որոշւած էր, իրեն սպանելու, խեղդելու հրամանը յանձնւած էր քրդերին։ Այլևս ուրիշ բանի մասին մտածել անհնար էր, կեանքի և մահի տագնապը ծանրացել էր բոլորի սրտի վրա, ճնշում էր, շնչասպառ անում, կարծես ամէն մէկի կրծքի մի մի գորշ առջ նստած

և թաթերը վզերին ճխտած լինէր։

Տասը-քսան հայը ի՞նչ կարող էր անել երեք հարիւրի չափ քրդի դէմ։ Մի ուժեղ տղամարդ էլ չկար, որ ոգի ներշնչէր, յուսադրէր մեզ։

Էլ ո՛չ ոքից ծպտիւն չէր բարձրանում, ամէն մէկի նւաղած ու հանգած աչքերում կարելի էր յուսահատութիւն կարդալ։

Դրութիւնս այնտեղ հասաւ, որ ես չհաւատալով աչքերիս, չհաւատալով զգացումներիս, դարձա Տիփէկցի Պօղոսի կողմն և ասացի.

—Ի՞նչ պատահեց, ինչի չես խօսում, այս ինչի էք մնջել.

Նա ուսերը թօթւեց, ունքերով քրդերին ցոյց տւեց, կարծես, թէ ուզում էր ասել, միթէ չնկատեցիր ինչ պատահեց, կամ մի՞թէ չե՞ս տեսնում, թէ ինչ պատրաստութեան մէջ են։ Բայց այդ շարժումները չգոհացրին իմ հետաքրքրութիւնը, ես աւելի դրական, աւելի հաստատուն բան էի ուզում իմանալ, այդ պատճառով վրդովւած ասի.

—Ի՞նչի ես մնջել. լեզուդ խո՛ չէ՞ բռնւել, խօսի՛ր,

—Այդ պաշտօնեաները լաւ բանի համար չեն այցելում դաժանակիրների որջը. էլի տեսնես ո՞ւմ կեանքն են վերցնելու։ Երբ չեն կարող հրապարակով մէկին սպանել, երբ փաստեր չեն գտնում մէկին կախաղան բարձրացնելու, իրենց կամքը դաժանակիրների ձեռքով են կատարում։ Երեք գիշեր առաջ այս քրդերը խեղդեցին Դաւթեանին....

—Ուրեմն գիշերս էլ մէկին խեղդելու են։

— Գուցէ երկուսին, երեքին, ասաց հառաչելով Պօղոսը:

Եւ պապանձւեցինք բոլորս մինչև կէս գիշեր: Ո՞վ կարող էր քնել մահի ճանկերի մէջ: Ես այդպիսի գազանութիւն չէի տեսած, այդ պատճառով այնքան էլ սոսկում չազդեց իմ վրա Պօղոսի բացատրութիւնը, բայց և այնպէս ենթադրում էի, որ քննիչն ու դատախազը կօնսուլատի պահանջներից ազատւելու համար, անպայման կեանքիս պիտի վերջ տային. ինչքան մտածում էի, այնքան ենթադրութիւնս հաւանական էր թւում: Այս մտքից արդէն ուշքս թռցրած անթարթ հայեացքս դրան կողմը յառած պառկածս տեղը անշարժ մնացել էի, առանց ըմբռնելու շուրջս կատարւածները: Շատ ժամանակ էր անցել, թէ քիչ, չեմ յիշում, միայն սթափւեցի երբ երեք չորս քուրդ վրաս ընկած ինձ ծեծում էին, և մատները վզիս ճխտած, ուզում էին խեղդել: Որը շղթայով էր խփում, որը քարով, որն էլ փայտով և ջանում էին մի բոպէ առաջ հոգիս առնել ու պրծնել: Այնպէս անգթաբար էին խփում, որ կարծես ես նրանց զաւակը, կամ սիրեկանները սպանած լինէի և բոպէ առաջ վրէժներն էին կամենում լուծել:

Այդ խառնաշփոթութեան ժամանակ չգիտեմ ով էր մօտեցաւ այդ արիւնռուշտներին և ասաց.

— Սխալ էք, սա չէ, սրա համար չպատւիրեց բէյը, այլ նրա համար ասաց, նրան պիտի խեղդել.....

— Սա և նա ի՞նչ տարբերութիւն ունեն, ասաց քուրդերից մէկը, սա էլ է անհաւատ հայ և ջանֆիդա նա էլ, թո՛ղ սա էլ սատկի, նա էլ: Նրանք որ իրենց

կեանքից ձեռ են վերցրել, թո՛ղ էլ չապականեն մեր օդը: Զարկէ՛ք այս՛ շանը, թո՛ղ շունչը տա, պրծնի:

— Բայց դրա համար կտրող ենք տուժել. դրան դեռ չեն քննել, չեն ձաղկել, որ գաղտնիքներն իմանան և ապա սատկեցնեն: Թողէք առայժմ սրան, նրան խեղդեցէք: Թողէք եմ ասում, ասաց և քրդերին քաշեց տարաւ Կարնեցի մի բանտարկեալի մօտ. որին էլ սպանեցին......

IX

Կարնեցին թիւրիմացութեան զոհ գնաց: Իսկապէս դատապարտւածը ես էի, բայց բախտն ինձ ազատեց, օրհասը նրան տարաւ: Միայն իմ վիճակս էլ սոսկալի էր, այնպիսի տաքութեան մէջ էի, որ ողջ գիշերն ու հետևեալ առաւօտը դէլին էի տալիս: Տեղիցս չէի կարողանում շարժւել լեզուս բերանումս չէր դառնում, ո՛չ կարող էի խօսել և ո՛չ ըմբռնում էի շուրջս կատարւածները: Հետևեալ առաւօտն մինչև անգամ չնկատեցի, թէ ինչպէս դուրս տարին խեղճ Կարնեցու դիակը: Ընկերներս դիմել էին բանտապետին և խնդրել որ ինձ հիւանդանոց ուղարկեն, իսկ նա հրամայել է.

— Թողէք այդ շանը, օր առաջ չորանա:

Ամբողջ քանը մի օր ո՛չ ուտելիք եմ կերել,

ոչ էլ յիշում եմ, թէ ինչ է կատարուել շուրջս: Ընկերակիցներս թէեւ ոչ մի խնամք չեն խնայել, բայց բոպէ առ բոպէ սպասելիս են եղել մահուանս: Յոյսի նշոյլ բոլորովին չի եղել: Երբ ուշքս հաւաքեցի, անցաւ ճգնաժամս, աչերս բացի և շուրջս հաւաքուած ընկերակիցներիս տեսա, ես կարծելով, թէ նրանք հաւաքուել էին գնելու, քննելու քրդերի արարքը, ասացի նրանց.

—Մի վախենաք, անվնաս եմ, հանգիստ եմ: Շներն ուզում էին խեղդել, բայց նպատակներին չըհասան:

—Տեսնես էլի երազում է, թէ դէլին է տալիս, ասաց մէկը միւսին:

—Ո՛չ երազում եմ, ասացի աչքերս նրա կողմը շրջելով, ոչ էլ դէլին եմ տալիս, այլ խօսում եմ ճըշմարտութիւնը: Անգութ գազաններ, ես նրանց ի՞նչ եմ արել, որ ուզում են ինձ խեղդել:

Հետզհետէ ըմբռնեցի, որ անչափ թոյլ էի, տեղիցս շարժուելու անընդունակ: Ամենայն խնամքով ինձ պահպանեցին ընկերակիցներս: Երբ ախորժակս բացուեց, ուտել էի ուզում, նրանց թելադրութիւնով զսպում էի ցանկութիւններս և քիչ քիչ սնունդ առնում, այնպէս որ քառասուն օրից հազիւ կազդուրուեցայ: Ինձ համար այնպէս էին զեկուցել, թէ այդ հիւանդութիւնից չեմ ազատուելու: Այդ պատճառով որպէսզի կոնսուլատի երկար թղթակցութիւններին վերջ տան, Յունուարի 17-ին ինձ տարին դատարան, որ քննիչ-խորհուրդը յայտարարեց, թէ ես բոլորովին անմեղ էի և բանտից արձակման վճիռ տալով, ուղարկեց Վալիի մօտ,

որ ազատէ:

Երզրումի փաշան այդ օրը զբաղուած էր, վիլայէթ-մէջլիսին (նահանգական-խորհուրդը) հնարաւորութիւն չունէր թողնել և կալանաւորների խնդրով զբաղուել, ուստի հրամայեց մեզ կրկին բանտ տանել և հետևեալ օրը իրեն ներկայացնել: Վեց ամսի տանջանքներս, քաշածս նեղութիւնները, ծեծը և նախատինքը այնքան չէին ճնշել հոգիս, որքան ընկճուեցա այդ գիշեր: Ընկերներս ինձ շրջապատած մխիթարում և խրախուսում էին, բայց նրանց խօսքերն ըմբռնելու ոյժ չունէի: Ամէնքը աչքալոյս և բարեմաղթութիւններ էին կարդում, ինձ թւում էր, թէ նախատում, հայհոյում էին: Դատարանը, դատախազը ինձ արդարացնէ, իսկ փաշան ժամանակ չունենա երկու տողով դատաստանական արձանագրութիւնը վաւերացնել և հրամայել, որ ինձ ազատեն: Այս մի հանելուկ էր թւում, ես արդէն հոռետես էի դարձել: Քսանը չորս ժամը քսանը չորս ամսից երկար թւաց և հետևեալ օրը նոյն ժամին դարձեալ ինձ առաջնորդեցին Վալիի առաջ:

Գնում էի դողալով: Կեանքս, գոյութիւնս կախուած էր Վալիի քմահաճոյքից. կարող էր կեանք տալ, կամ դարձեալ անդունդը գլորել: Մտքումս ասում էի, -էլ ինչ դատ ու դատաստան, եթէ ամէն վճռի վրա «վէթօ»ի իրաւունքը մնում էր դարձեալ մի ինչ որ փաշայի քմահաճոյքին: Հասանք սարայը, բարձրացանք սանդուխներից երկար նրբանցքը և կանգնեցրին ինձ Վալիի գրասենեակի դրան առաջ: Ներսից լուր տուին, որ սպասեմ և սպասեցի ամբողջ երեք ժամ: Մի քանի անգամ ձանձրացած թիկնապահներս ներսը լուր ու-

ղարկեցին և նախատւեցան գրագիրներից ու սենեկապաններից: Անմռունչ սպասում էի կատակերգութեան աւարտին: Վերջապէս ինձ կանչեցին մէքթուբջիի (Վալիի քարտուղարի) գրասենեակը, որտեղ նահանգի գործերի ընթացք տւողն հարցրեց անունս ու ազգանունս: Պատասխանս ստանալուց յետո, սկսեց ղայրանալ ուղեկից բանտային առաջնորդիս վրա, որ նա սըխալմամբ՝ Բարգէն Արշակունու փոխարէն՝ Բագրատ Արշաֆեանին էր ներկայացրել Վալիին:

—Բարեկամ, ասաց ծանրութեամբ քարտուղարը, աչքերը ակնոցի տակից աչերիս յառելով, բանտային վարչութիւնը սխալւել է, այստեղ ներկայացրած վճռում արդարացրած են Բարգէն Արշակունուն և ոչ թէ ձեզ, Բագրատ Աշրաֆեան ռուսահպատակից: Ձեր գործը պիտի Ռուսական կօնսուլատի միջնորդութիւնով քննւի և վճռւի, ինչպէս կարող են առանց կօնսուլատի լիազօրի ներկայութեանը ձեզ համար վճիռ արձակել: Դուք գնացէք բանտ, սպասեցէք մի քանի օր մինչև որ ամէն բան կարգադրւի, կքննւի և հաստատւած եմ, ինշալլահ (Աստուծով) ձեզ էլ կազատեն:

— Էֆէնդի, ասացի յուզւած, մի՞թէ կատակերգութիւն էր երէկւա քրէական ատեանի որոշումն ու վճիռը: Այնտեղ և ոչ մի Բարգէնի հարց չկար, սկզբից մինչև վերջը իմ գործն էր, Նարիմանի-Նիխախի ժողովի արձանագրութեան համաձայն: Այնտեղ խօսեցրին իմ վկաներին, կարդացին իմ ցուցումները և ամէն բան քննելուց յետո որոշումն արձանագրեցին.....

— Այո՛, այդպէս է խօսքս ընդհատեց քարտուղարը, ճիշտ էք ասում, բայց նրանք սխալւել են սկզ-

բից մինչև վերջը: Նրանց հրամայւած էր քննել Բարգէնի գործը, իսկ նրանք սխալւել և քննել էին քո գործը, որը մենք անպայման իրաւունք չունենք առանց կօնսուլատի գիտութեանը քննելու: Սխալը սկզբից շարունակւել է, բայց այլևս անհնար է դադարեցնել առանց օրինական կարգերին: Գնացէք, մինչև որ թիւրիմացութիւնը պարզւի:

—Էֆէնդի, ախա՛ր քիչ առաջ ասածներիդ հակասում էք, ասացիք թէ վճիռը իմ անունովս չէ գրւած, իսկ այժմ ուրիշ բան էք ասում.....

— Այստեղ բացատրութիւններ լսելու ժամանակ չունիմ, նորից ընդհատեց խօսքս քարտուղարը, տարէք դրան բանտ, մինչև թիւրիմացութիւնները պարզւին, սխալն ուղղւի....:

Ձինւորներից մէկը մշտեց կողքս, միւսը հրացանի կոթով թիկունքիս խփեց և ինձ ետ դարձրին բանտ: Ամէն բանի մասին խելքս հասնում էր, բայց թիւրիմացական վճռից բան չէի հասկանում: Անպայման այստեղ մի չար ինդրիգան իւր դերն էր խաղում, բայց ես ինչպէս իմանայի, թէ ո՞վ էր այդ գազանը և ինչից ստիպւած ուզում էր ինձ տանջել: Այս սոսկալի մտքից ընկճւած երեք օր ոչ կարողացա մի բան ուտել, խմել կամ խօսել: Ընկերակիցներիս բոլոր ջանքերըն ապարդիւն անցան, ես կորցրել էի խօսելու ընդունակութիւնս անգամ: Բոլորն ապշել էին, թէ ինչպէս Վալին քրէական ատեանի վճռի հակառակ ինձ չէր արձակում բանտից և մտածում էր նորից դատաստանի մատնել: Այս վիճակս այնքան խիստ ներգործութիւն ունեցաւ, որ հիւանդութիւնս կրկնեց, ես բա-

նուեցի նորից հարինքով։

Ինչպէս ինձ յետոյ պատմեցին, Վալիի վրայ խիստ ճնշում էր դրել կոնսուլատը և պահանջել անպայման դրօգօմանի ներկայութեամբ քննել տալ գործը, որպէսզի արդարացած դէպքում վնասներս հնարաւոր լինի գանձել Օսմանեան կառավարութիւնից։ Այս բանից անչափ զայրացած Վալին ոչնչացրել էր հիէթի-իթամի (քրէական-ատեանի) որոշումը և հրամայել էր անպայման քննել կոնսուլատի ներկայացուցչի հսկողութեամբ և խիստ պատժել։ Երբ Վալիին յայտնել էին իմ հիւանդութիւնս, նա հրամայել էր անյապաղ ինձ հիւանդանոց փոխադրել և այնպէս խնամել, որ ազատւիմ այդ ախտից, որպէսզի դատավարութեան ատեանում ինձ դատապարտել տայ և չպարտաւորւի վնասներս վճարելու։

Ինձ փոխադրեցին բանտի հիւանդանոցը, որտեղ տասներկու օր յետոյ, Յունուարի 29 ին, ստացայ քրէական ատեանի մեղադրական թերթը, որով ինձ յայտնում էին, թէ ինձ մեղաւոր էին գտել և գործս քննուելու էր համաձայն 63 յօդուածի, քրէական օրէնսդրութեան։ Իբր թէ ես յեղափոխական էի և ձգտել էի Օսմանական եօթը վիլայէթները պետութիւնից բաժանելու և դրանցից Հայկական իշխանութիւն կազմելով, անկախ իշխել դրանց վրայ։ Զայրութիցս չգիտէի, թէ ինչ անէի։ Կարողութիւնիցս ընկած ո՛չ կարող էի դուրս գալ, ո՛չ էլ երկու տող բան գրել։

Քրէական ատեանի արձանագրութիւնը ստանալուց յետոյ, իմ հանգստութիւնս կորւեց, քանի որ կոնսուլատն ինձ որպէս Ռուսահպատակի թէև պիտի

ձգտէր պաշտպանել, բայց տաճկական դատարանը պիտի պնդէր իւր ասածի վրայ և չպիտի ճանաչէր ինձ օտարահպատակ։ Թէև սահմանային ատեանները հաստատել էին անցագրով անցնելս, բայց դա դեռ կատարեալ փաստ չէր։ Քանի՛ քանի՛ անգամ դիմել էի Նիխախ ծանօթներիս մեզ կերակրող գիւղացիների միջոցով, որոնք անընդհատ յարաբերութեան մէջ էին գիւղացիների հետ, բայց հնար չէին գտել Հաջի էֆէնդիին համոզելու։ Վալին խիստ սպառնալիքով Նիխախի այս գաւառապետից նոյնպէս պահանջում էր անցագիրս և դատաւորները՝ գոյքս, այնպէս որ Հաջի-էֆէնդին զայրացած, չէր իմանում, թէ ինչպէս լուծէ վրէժը այդ բարձր պաշտօնակալներից։ Վերջապէս տանուտէրս և Շիփէկցիները տասը ոսկի տալով Հաջի էֆէնդիից ստացել էին անցագիրս և խոստացել էին, որ նրան երբէք չմատնեն։ Անցագիրս բերին բանտի հիւանդանոցը։ Ես խնդրեցի, որ տանեն կոնսուլատ, պարագաները պատմեն, բայց նրանք Հաջի էֆէնդիի հրամանի համաձայն ասել էին, թէ իմ թղթերի մէջ են գտել։ Անցագիրս կոնսուլատին յանձնելու պէս պաշտօնական թղթով իրերի դրութիւնը գրել էին վալիին և դեսպանատուն։

Փետրուարի 10 ին դեսպանատան և Բաբը-Ալիի մէջ համաձայնութիւն էր կայացել ինձ յանձնել ռուսական Էրզրումի կոնսուլատին։ Մի քանի օրից ինձ այնտեղ փոխադրեցին, որտեղ ապրելու էի մինչև գործիս աւարտը։ Այդտեղից նախ բողոքեցի ապրանքներիս գրաւելու և բաժանելու մասին։ Կոնսուլն անմիջապէս Ալէքսանդրապօլից ստացածս ցուցակների և մաքսատան արձանագրութիւնների համաձայն վնասներս և

կորուստներս պահանջեց Վալիից, բայց դեռ մինչև օրս որոշ պատասխան չեմ ստացել, թէև այդ օրից անցել էր մօտ երեք տարի։ Ապա բողոքեցի Նիխախի և Էրզուրումի բանտերում կրածս տանջանքների և կեանքիս դէմ կատարուած փորձի համար, դեռ մինչև օրս կօնսուլատը պատասխան պիտի ստանա։

Փոխանակ կօնսուլատի հարցերին պատասխանելու ինձ հրաւիրաթերթ ուղարկեցին, թէ Մարտի 2-ից իմ գործիս քննութիւնը պիտի կատարուի քրէական դատարանում հիւպատոսարանի թարգմանի ներկայութեան։ Որոշուած ժամին ներկա էինք։ Ինձ խօսեցնելուց յետո, առաջին անգամ հրաւէր կարդացին վկա Մօլլա Արիֆին, որը քննուած էր նոյնպէս Նիխախը։ Վկան ասաց որ ինձ առաջին անգամն է տեսնում, իսկ նրա եղբօրը և Ալի օնբաշիին սպանող աւազակները բոլորովին ինձ նմանութիւն չունին։ Քննիչը կատաղած գոռաց վկայի վրա — թէ նա սուտ է խօսում և կարդաց Նիխախի ատեանում արձանագրուած նախկին ցուցումը, որտեղ իբր Մօլլա Արիֆը ցոյց է տուած եղել, թէ ես էի եղբօրն ու Ալի-օնբաշիին սպանողը։ Վկան բողոքեց, թէ նա երբէք այդպիսի ցուցում չի տուել, երբէք Նիխախում իմ երեսը չի տեսել դատարանում, կամ ուրիշ տեղ և հաստատ գիտէ, որ այդ արկածի ժամանակ ես Ռուսաստանում՝ Օլթի էի։ Թէև այս ցուցումները չէին ուզում արձանագրել, բայց ես բողոքեցի և թարգմանի պահանջի համաձայն Մօլլա Ահմէդի խօսքերը լիովին արձանագրեցին քննութեան թերթում։

Երկրորդ վկան Շիփէկցի մի ծերունի հայ էր՝

Մադօ անունով։ Որպէսզի Մադօին բռնադատեն իրենց քմքի համաձայն ցուցում տալու, բռնել կալանաւորել և տանջել էին Արխա-Դուլլուղի բանտում։ Քննութեան ժամանակ նա չկարողացաւ որոշ բան խօսել, սարսափելի երկիւղից նա միայն մի խօսք էր կարողանում կրկնել. — «Զըգիտեմ, չեմ տեսել»։ Սրան էլ սպառնալիք կարդաց դատախազն ու ոստիկանապետը, որի համար արձանագրութիւն չկազմեցին։ Էլ միւս վկաներին քննելու հնարաւորութիւն չունեցան նոյն օրը և երբ դարձանք հիւպատոսարան ես բողոքեցի կօնսուլին դատաւորների անիրաւ ընթացքի դէմ, որն իսկոյն մի յայտարարութիւն նորից գրեց։ Հետևեալ օրը ներկայացրած սուտ ու կեղծ վկաների ցուցումները այնքան իրար հակասական էին, այնքան իրար ներհակ, որ դատաւորները նրանց խօսքերի ստութիւնը պարտաւորուած էին արձանագրելու և նրանց յանդիմանելով վռնդելու։

Հիւպատոսարանը պահանջում էր ինձ արդարացնելու վճիռ, իսկ մենք դատարանից և դատախազից թուղթ ստացանք, թէ օրէնքի համաձայն այսպիսի քրէական գործի քննութեան միջամտելու իրաւունք չունէր Արզուրումի քրէական ատեանը, անհրաժեշտ էր գործը ուղարկել Կ. Պօլիս զինուորական դատարանի քննութեան։ Այս քննութիւնների ժամանակ ինձ մի օր զինուորական դատախազը կալանաւորեց, խլեց կօնսուլատի թարգմանի և ղաւազների ձեռքից, ուղարկեց զինուորական բանտ։ Այս կամայականութեանը չհանդուրժեց կօնսուլը և անվերջ հեռագիրներով ու բողոքներով ստիպեց թուրքերին, որ ինձ վերադարձնեն

հիւպատոսարան։ Ութ օր տանջելուց յետոյ, երբ մտա կօնսուլատ, բողոքեցի այս բոլոր արարքների դէմ և պահանջեցի, որ անպատճառ ապօրինի վարւող բանակալ զինուորական դատախազին և դատաւորներին դատաստանի յանձնեն,.... բայց ո՞վ լսեց իմ բողոքը։

Բողոքիս հետևեալ օրը ստացա զինուորական ատեանի որոշումը, որով զինուորական դատարանին առաջադրում էր ինձ կախաղան բարձրացնել։ Հիւպատոսարանում կուշտ կուշտ ծիծաղեցին, թէ առանց քննութեան առանց բացատրութիւններ լսելու, ինչպէս յանդգնում էին մարդու մահւան դատապարտել։ Ծիծաղում էին թուլանալու աստիճան, ծաղրում էին թուրքերին, նրանց կապկի տեղ ընդունելով, բայց ոչ ոք չէր ուզում լրջութեամբ հետամտել խայտառակել հակառակորդներիս և ինձ ազատել։ Ամբողջ ինն ամիս բանտերում տանջւել ու մորմոքացել էի, իսկ իմ վարձատրութիւնը հիւպատոսարանի պաշտօնեաների ծաղրն ու արհամարանքն էր. ո՛չ ոք չէր մտածում ճնշում գործ դնել և բաւարարութիւն պահանջել։

Այս սոսկալի վիճակում չգիտէի, թէ ինչպէս վարւէի, կօնսուլատը թոյլ ու անտարբեր, իսկ զինուորական դատարանը աշխատում էր ինձ դուրս կորզել հիւպատոսարանից և կախել։ Այս մտքերն այնպէս յուզեցին, այնպէս մրրկեցին սիրտս, որ ես ամբողջ երեք օր տանջւում էի, մտածում էի, բայց բանելիք ընթացքիս համար որոշ եզրակացութեան չէի հասնում։ Այնքան էի ցերեկը մտածում վիճակիս ու ապագայիս մասին որ երազում արդէն կախաղանի վրա էի ինձ տեսնում։ Այնքան յուսահատւած էի, հիւպատոսարանի

— 272 —

վիճակը այնքան ստորացած էր թուրքերի աչքում, որ ես ենթադրում էի, որ մի օր կարող էին ինձ բռնել, կախել, սպանել և մինչև կօնսուլատի օգնութեան հասնելը, արդէն իմ դիակը կարող էր ապականւել։ Այս պատճառով վճռեցի թողնել Երզրումը և հեռանալ։

Այդպէս էլ արի։

Ինձ համար Դէվէ-Բօյնի ձի էին պատրաստել, այնտեղ նստա և սլացա Նարիման։ Վէքիլխասում տեսա տան տիրոջս, մի երկու Արդվինցի, տեղեկութիւններ հաւաքեցի և առնելիքներս առանց մի փող ստանալու անցա Օլթի։ Էլ չհամբերեցի, ձիս մտրակեցի դէպի Արդվին։ Բանտից հիւպատոսարանից հեռանալուս չորրորդ իրիկունը անցա Չորոխի կամուրջը և սկսեցի համր քայլերով բարձրանալ դէպի քաղաք։ Գիշերից մի ժամ անցած հասա մեր տան դռանը։ Հեռուից շատ զննեցի, բայց ճրագի նշոյլ չկար։ Զա՛ք-չա՛ք, խփեցի դռան թակը, բայց պատասխան չկար։ Նորից խփեցի, նորից թակեցի, ո՛չ մի ձայն, ո՛չ մի կենդանութիւն։ Յուսահատւած թակեցի երրորդ անգամ, դռան հայեացքս դռան ճեղքերից ներս ուղղելով, բայց ո՛չ մի կենդանութիւն, գերեզմանական լռութիւնը չխանկարեց։ Զգիտէի ինչպէս բացատրել, մայրս ողջ էր, խնամինց տուն էր գնացել, թէ նա վշտից մեռել էր . . . ։

Վերջին միտքը ուղեղիս մէջ այնպիսի բուն էր դրել, որ ես զգացի թէ անպայման մի մեծ փորձանք էր պատահել և մօրս կորցրել էի։ Այս մտքից ճնշւած թակը վերցրի և իրար վրա հինգ տասն անգամ թակեցի ոյժս պատածի չափ և կանչեցի, Աքա՛հ, աքա՛հ, որտե՞ղ ես . . . ։

—Որտե՞ղ ես . . . արձագանք միայն ստացա, իսկ տնից ձայն չկար։

Այս միջոցին դրացի տան պատշգամբից մի կին հարցրեց.-Այդ ո՞վ է։

Ձայնը ծանօթ էր, մեր դրացի Անախասն էր։ Իսկոյն պատասխանեցի.

—Քոյրի՛կ, մայրս ո՞րտեղ է.

—Վա՜յ իմ գլխին, ասաց Անախասն ու ներս փախաւ գոռալով,-Մամա՛, Բագրատը յարութիւն է առել։

Քիչ յետո պատշգամբը բարձրացան երեք չորս տղամարդ, մի քանի պառաւ և հարցերն ինձ ուղղելով ասացին։

—Այդ ո՞վ է.

—Ես եմ, Բագրա՛տը, չէ՞ք ճանաչում։ Ասացէք խնդրում եմ, ո՞րտեղ է մայրս։

—Բագրատի ձայնն է, Բագրատն է, հառաչեցին պատշգամբից և ճրագները դուրս հանեցին։

—Բագրա՛տ, դու՞ն ես, հարցրեց կօնջալ բիձէն և վազէվազ ցած իջաւ ինձ գրկեց։

—Բիձա՛, ասա՛, ինձ հերի՛ք տանջէք, ո՞րտեղ է մայրս։

—Եօթը շաբթներին նրան թաղեցինք, որդի՛, նա չդիմացաւ։ Լուր բերին, թէ Երզրում բանտի մէջ քեզ սպանել են։ Այդ կսկծին խեղճը չդիմացաւ, կաթուածի հարուածից թուլացաւ, քսանը չորս ժամից ընկաւ։

—Տանս դուռը կողպած մնաց։

—Զգիտեմ, հօրեղբօր որդիքդ ինչ կար, չկար տարին, բաժնեցին։ Տունն էլ ուզում էին ծախել գա-

ւառապետը չթողեց, չհաստատեց։ Արի գնա՛նք մեր տունը գիշերս հանգստացիր, առաւօտը ամէն բան կարգի կբերես։ Փառք տիրոջը, դու առողջ հասար, մնացած ամէն բան կուղղուի։

—Խե՜ղճ մա՛յր, մի՞թէ այդ օրով պիտի մեռնէիր, ասի յուսահատ և բարկութիւնից չէի կարողանում շրթունքս շարժել, երկու բառ խօսել։-Ա՜խ, մամա ջա՛ն, ի՞նչ զարհուրելի վշտով գերեզման իջար . . . .

Այդտեղ ինձ ինչ պատահեց, չեմ յիշում, միայն թևերս մտած ներս տանելու ժամանակ զգում էի, որ ամէնքն էլ արտասւում էին։ Թէ ինչպէս լուսացուցի, բառերով բացատրել չեմ կարող։ Գիշերը մինչև լոյս արտասուքից ու հառաչից խեղդուած մարդը միայն կ՚կարողանա այդ մասին գաղափար կազմել։ Կօնջալ-բիձի յորդորներն ու խրատները, փաղաքշանք ու մխիթարութիւնը չէի էլ կարողանում լսել, ուր մնաց ըմբռնել։ Թաւալւեցի անկողնում, լացի երեխայի նման, արտասուքովս թրջեցի բարձս, հառաչանքներովս դադարեցրի հիւրընկալիս խաղաղութիւնը, փոթորկեցի հոգին և առանց մի րոպէ անգամ հանգստանալու վեր կացա շորերս հագնելու։ Վազեցի եկեղեցու բակը մօրս հանգստարանի վրա մի քանի կաթիլ արտասունք թափելու, բայց այնտեղ չգտա նորա գերեզմանը, ինձ ասացին թէ քաղաքից դուրս նոր յատկացւած գերեզմանոցում են թաղել։

Քահանային փող չունէի տալու որ „հոգւոց“ ասէ, իսկ ժամկոչից երեսս պահեցի։ Այդտեղից քայլերս ուզեցի ուղղել աներանցս տունը, որտեղ մտածում էի Մարգարտիս ներկայութեամբ մոռանալ վշտերս, բայց չէի

մտածում, թէ այնտեղ ի՜նչ սոսկալի վիշտ էր պատրաստուած ինձ համար։ Կօնջալ-բիձէն, որ գաղտագողի ինձ էր հետեւում ճանապարհս կտրեց, խորամանկութիւնով ինձ շփոթեց եւ ասաց։

—Ո՞ւր ես գնում, որդի՛, ես գիշերը լուր եմ տուել. որ այսօր հանդիսաւոր պատարագ ու հոգեհանգիստ կատարեն մօրդ համար։ Դարձի՛ր, գնանք ժամ, պարտքդ կատարի՛ր։ Այսօր բարեկամներդ բոլորն էլ եկեղեցի են գալու, քու բացակայութիւնդ անարգանք կհամարեն։

Անճարացած ետ դարձա եւ ամբողջ երկու ժամ եկեղեցուց չկարողացա դուրս գալ։ Հոգեհանգստից յետո Կօնջալ-բիձէն քահանաներին եւ բարեկամներին տուն տարաւ, որտեղ հոգու հաց էր պատրաստել։ Ամէն կողմից ազգականներս ու բարեկամներս ինձ մխիթարում եւ յորդորում էին քաջութեամբ տոկալ վշտի դէմ եւ երբէք չընկճուել։ Թէեւ այդ յորդորներն ու խրատները երկդիմի եւ ծանր-ծանր շեշտերով էին կրկնւում, բայց ես ոչինչ չէի ըմբռնում։ Երբ հացից յետո վերջին հոգոցի ժամանակ քահանան յոգնակի կարդաց աղօթքը եւ մօրս անուան հետ յիշեց Մարգարտիս անունը, ես թուլացայ . . . . ։

Դուք սպասում էք, որ ես ձեզ պատմեմ սրտիս խոր խոր խոցերը. վշտիս անծայր, անսահման ովկեանը, բայց դուք այդ ինձնից չէք լսելու. այլեւս ույժ չունիմ խօսելու անգամ, ուշքս կորցնում եմ, կարողութիւն չունիմ, որ աղօտ կերպով յիշածս պատմութիւնները ձեզ կրկնեմ։ Ի՞նչ ասեմ, որ մէկն ասեմ։ Երբ զօքանչս լսում է մահս, շատ ցաւելուց ու արտասուելուց յետո,

ամէն միջոց գործ է դնում, որ նոր փեսա գտնի Մարգարտիս համար։ Թշուառ մանուկին նշանում են Շփշփի որդուն են տալիս։ Մարգարիտս չի կարողանում այս մտքի հետ հաշտուել, նա բողոքում է, բայց նորա խօսքը չեն լսում . . . ։ Երբ Շփշփի որդին առանձնապէս այցելում է Մարգարտիս եւ առանձնարանում ուզում է նորան գրկել, հրեշտակս չի կարողանում կրքերը զսպել, դուրս է գալիս եւ պատշգամբից ինքն իրեն փողոց է գցում . . . . . . ։

Ահա՛, այս բոլոր մանրամասնութիւնները լսելուց յետո, էլ ի՞նչի էր պէտք կեանքն ու աշխարհի գոյքը, էլ ո՞ւմ համար պիտի ձգտէի, էլ ի՞նչի համար պիտի մեռնէի . . . ։ Բայց սրտիս վրա մի ծանր բեռ էր դրուած, մաղձ էր կուտակուած, ժահր էր լճացած, որը խղել էր խաղաղութիւնս, կտրել էր անդորրութիւնս եւ ինձ մղում էր այնտեղ, որտեղ ահա կանգնած եմ . . . ։ Երբէք, ես ծնուած չէի մարդկային արիւն ողողելու, ես երբէք սնուած չէի զէնքը ձեռիս թշնամիներիս հետամտելու համար, բա՛յց . . . բայց ոստիկան Շէրիֆը, գաւառապետ Հաջի Էֆէնդին, քննիչն ու դատաւորները, վալին ու դատախազները ինձ մղեցին այստեղ, որտեղ ահա՛ երեք տարի է, որ միասին թափառում ենք։

ՎԵՐՋ

21 Դեկտեմբերի 1893 թ.

Թաւրիզ։

ՀԵՂԻՆԱԿԻ ԵՐԿԵՐԸ ԾԱԽՈՒՈՒՄ ԵՆ

ՎԻՊԱԿԱՆ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

ԳԱՑԿԵՐՆԵՐ Ցասը Պատ. Թրքահայերի կեանքից	1 ր.	5 ղռ.
ՎԻՓՔԵՐԻԱՅԻ ԳԱՂՏՆԻՔԸ " "	1 ր.	5 ղռ.
ԱԼՄԱՍՏ, 1 հատոր, " "	1 ր.	5 ղռ.
ԱԼՄԱՍՏ 2 » " "	1 ր.—	5 ղռ.
ՋԱԽՐԱՀԻՐ 77. 78 թ. Ռուս-Թուրք. կռւից արկած	1 ր.	5 ղռ.
ՎԻԳՊԱՆՆԵՐ Երկու վէպ. Թրքահայերի կեանքից	1 ր.	5 ղռ.
ԲԺԺԱԾՆԵՐԸ պատկերներ Տաճկահայոց կեանքից	1 ր.-	5 ղռ
ԿԱՐԵԼԻ՞ Է ՍԻՐԵԼ պատմական վէպ	1 ր.	5 ղռ.
Ընտիր թղթի վրա իւրաքանչիւր հտ.	2 րբ.	10 ղռ.
ԳԻՄԱԿՆԵՐ	50 կ.	3 ղռ.
ԽԵՒ - ԿԱՐԱՊԵՏ. Թրքահայ. կեանքից "	1 ր.	5 "
ՔՅԻ - ԵՂԻԿ " " "	30 կ.	30 շհ.
ՑԽՆՈՑ " " "	30 կ.	30 շհ.
ՃՐԹԱՆԳՆԵՐ " " "	30 կ.	30 շհ.
ԲԵՐՍԱԻ ԱՌԱՔԵԼԸ " " "	25 կ.	25 "
ԹՈՒԼՍԱՄԲԱՋԻՆԵՐ " " "	10 կ.	10 "

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ

ՑՈՒՑԱՆ Երեք արարուած. Թրքահայ կեան.	1 ր.	5 ղռ.
ՄԱՐԻԱՓ Հինգ " " "	30 կ.	30 շհ.

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԽՈՒԼԱՓԱԹ Պատմական ուսութիւն.	30 կ.	30 "
ԻՄԱՄԱԹ Պատմ. ուս. շիիզմի մասին	1 ր.	5 ղռ.
ՀՕՂԱՏԻՐՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ	10 կ.	10 շհ.

Գտնել Թիֆլիսի Գուտտենբերգ գրավաճառանոցը։

Գրավաճառները կարող են դիմել նոյնպէս.

ALEXANDROPOL CAUCASE ATRPET

Որոնց կը լինի սովորական 20 % զիջում։

ԹԱՒՐԻԶՈՒՄ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅԵՐԻ ԹԵՄԱ-

ԿԱՆ ՏՊԱՐԱՆՈՒՄ ՏՊԱԳՐՈՒԱԾ ԵՆ

---

1. Կ. Կաուցկի Կոլոնիական Քաղաքականութիւնը
թարգ. Ռ. Խանազատեանի 2 ղռ. 40 կ.
2. Ռ. Խանազատ Իդէալի՞զմ թէ Մատերիալիզմ
Ուսումնասիրութիւն 10 շհ. 10 կ.
3. Լ. Տոլստոյի Մարդիկ ի՞նչի են ապրում
թարգ. Ե. Ծ. Վ. Մուրադեանի 1 ղռ. 20 կ.
4. » » Կարմա - Բուդդայական պատմուածք
թարգ. Ե. Ծ. Վ. Մուրադեանի 10 շհ. 10 կ.
5. Օսկար Վայլդեր Ա. Հեք. Ձկնորսից,
թարգ. Մ. Վ. Մագսուդեանի, 1 ղռ.
6. » » Բ. Հեք, Հաֆըզից
թարգ. Պարսկերէնից Մ. Վ. Մագսուդեանի գին 1 ղ. 50 25կ
7. Դիմակներ Երգիծական զրոյցներ Ա. Տ—Տ.
1904 թ. գինն է—3 ղռ. կամ 50 կպ.
8. Օ. Շրէյների Անուրջներ թարգ. Ռ. Խ. եւ Տ. Տ
1904 թ. գինն է—15 շահի կամ 15 կպ.
9. Ֆ. Կոպպէի Տիցիէնի որդին վէպ Թարգ. Ռ. Խանազատ.
գինն է 1 ղր. 20 կոպ

Դիմել Թիֆլիս, Կենդրոնական եւ Գուտտենբերգ
գրավաճառանոցները։

Ер МАГ 43 № 2505 КОМИССИОН

ՀՀ Ազգային գրադարան
NL0313239

21161